



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



龙须与蓝图-中国现代文学论集，萧乾著

XIAO QIAN

The Dragon Beards Versus the Blueprints

Symposium on Contemporary Chinese Literature

/Armenian version/

Translator - Khoren Gasparyan

Stepanakert 2017

ՍՅԱՈ ՑՅԱՆ

**ՎԻՇԱՊԻ ՄՈՐՈՒՔՆԵՐՆ
ԸՆԴԴԵՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ԷՍՍԵՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՉԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Թարգմանիչ՝
Խորեն ԳԱՄՊԱՐՅԱՆ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 821.581.0
ԳՄԴ 83.3(52)
Ց 705

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Ցյան ՍՅԱՈ
Ց 705 **Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի:**
Թարգմ. անգլերենից՝ Խ. Գասպարյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 200 էջ:

Չին հայտնի էսեիստ, գրող, խմբագիր, լրագրող և թարգմանիչ Սյաո Ցյանի «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի» գիրքը էսսեների ու դասախոսությունների ժողովածու է, որ ներկայացնում է 20-րդ դարի առաջին կեսի չինական գրականության համապատկերը: Հեղինակը խոսում է ժողովրդական նոր ոճով ստեղծված՝ հանրապետական Չինաստանի գրականության՝ արձակի, դրամատուրգիայի, չափածոյի, էսսե-խոհագրության մասին, չնոռանալով շեշտել նաև թարգմանական, մասնավորապես անգլալեզու ստեղծագործությունների կարևորությունը նոր Չինաստանի գրականության կայացման գործում:

Գրքի վերջին մասը վիպակ է, որ պատկերում է չին գյուղացիների կյանքը կալվածատիրական դասակարգի տապալման և հողային բարեփոխման ժամանակաշրջանում:

ISBN 978-9939-1-0666-3

ՀՏԴ 821.581.0
ԳՄԴ 83.3(52)

Armenian Translation © Foreign Language Teaching and Research
Publishing Co., Ltd. (FLTRP)
All rights reserved.

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2017

**ՏԱՌԱՊԱԼԻՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐ.
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՉԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐ**

1. ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՊԱԿ

1911 թվականից հանրապետական Չինաստանի բնակիչների կյանքը ենթարկվեց պատմության մեջ թերեւս եզակի փոխակերպման: Հնագույն Չինաստանի քաղաքակրթությունը նման էր կուսական ու անմատչելի լեռների միջեւ ընկած հովտով հանդարտ եւ անաղմուկ հոսող մի մեծ գետի: Եղել են ինչ-ինչ փոփոխություններ, բայց ոչինչ չի ազդել եւ չի շեղել այդ գետի ընթացքը: Այն հանգիստ ու մեկուսի հոսել է իր համար միևնույն անցած դարավերջ, քանի դեռ, իր կամքին հակառակ, չի հանդիպել համաշխարհային մշակույթի օվկիանոսին: Սոսկալի իրարանցումը հանգեցրեց այն բանին, որ գետն ալեկոծվեց, հորձանք տվեց՝ վերածվելով խռովահույզ սահանքների, որ հայտնի են Գրական հեղափոխություն անվամբ: Մանչուրական կայսրության կործանմանը գրեթե անմիջապես հաջորդեց իրաժարումը դարերով սրբազործված դասական ոճից: Դրա փոխարեն ընդունվեց տեղական լեզվածը: Մինչ այդ կիրառվող միակ պաշտոնական եւ ակադեմիական լեզուն դասական ոճով էր դրսևորվում: Ոչ ոք հույս չունեւ, թե առանց այս ոճի մեջ հմտացած լինելու կհանձնի կայսերական քննությունները՝ ցանկացած կարիերայում նպատակին հասնելու միակ միջոցը եւ ուղին: Բայց դասական լեզուն անչափ տարբեր էր խոսակցական լեզվից: Եվ դրա նախահիմքերին տիրապետելու համար կյանքիդ առնվազն մեկ քառորդն էր պահանջվում: Հետեւաբար, դա գրեթե անհասանելի, անմատչելի մի բան էր շարքային տեղաբնիկների համար: Այս իրողությունը միայն ինքնին անհանդուրժելի էր հանրապետական Չինաստանի համար: Դա նշանակում էր, որ Չինաստանի հսկայական զանգվածները կրթության խղճուկ հեռանակար ունեին մոտ ապագայում, միևնույն Հանրապետությանը խիստ անհրաժեշտ էր կրթված ու խելացի մարդկանց աջակցությունը: Դա նշանակում էր, որ Չինաստանը ստիպված էր նավարկել գունազեղ ջրակա առագաստանավերով, մինչ ուրիշներն անընդմեջ շարունակում էին հզոր գեւք ու զինամթերքի նորանոր տեսակներով համալրել իրենց գծանավերի տախտակամաձևերը: Ոչ մի գիտություն զարգացման հնարավորություն չունեւ, եթե մարդիկ ստիպված էին շարունակաբար հավերժական կապանքներով կապված մնալ սպիտակ փղին: Արագ զարգա-

ԱՅՊՈՑԱՆ

ցող եւ արդիականացող որեւէ հարեանի կողմից ստացած սպառնալիքներին երիտասարդ չինացիներն ավելի շուտ ողջամիտ բանականությամբ էին արձագանքում, քան հուզականորեն:

Բայց նոր ոճը ոչ միայն ավելի ողջամիտ էր: Լինելով առօրյա խոսքում գործածական՝ այն ավելի արտահայտիչ էր եւ ինքնաբերիչ: Հանրապետությունում հորդող տրամադրությունն իսկապես համակել էր բոլորին: Գեղագիտական եւ լեզվական նկատառումներից զատ՝ այն իրողությունը, որ տվյալ նորամուծությունը համապատասխանում էր երիտասարդ չինացիների պահանջներին, բավական էր, որպեսզի արդարացներ դրա գոյությունը: Անհնազանդությունն ըստ էության սկսվեց 1917-ին եւ իր զագաթնակետին հասավ 1919-ի մայիսի 4-ի ուսանողական շարժման ժամանակ: Այդ նույն թվականին նոր լեզվաոճով շուրջ չորս հարյուր լրագիր ու ամսագիր ի հայտ եկան: Հաջորդ տարի կրթության նախարարության հրամանագրով որոշվեց, որ տարրական դպրոցների բոլոր դասագրքերը պետք է լինեն մայրենի լեզվով: Մեծապես հաջողված այս բարեփոխումը հպարտորեն անվանեցին Չինական վերածնունդ: Քանի որ դա գրավոր լեզուն ժողովրդայնացնելու մի փորձ էր՝ որպես հետեւանք անհատական զարթոնքի, ուրեմն Վերածնունդ էր: Եվ առաջինն էր հինգ հազար տարվա մեջ:

Շատերը կարծում են, թե Արեւմուտքի գիտական հայտնագործությունների ներդրումը փոխեց Չինաստանի զարգացման հեռանկարը: Բայց արեւմտյան գրականությունից կատարած թարգմանությունները լայն առումով՝ Ռուսոյից, Միլից, Դարվինից, Սպենսերից մինչեւ Բերտրան Ռասել, ըստ էության ավելի դրական ազդեցություն ունեցան բարեփոխումների վրա: Դրանք չին մտավորականությանը սովորեցրին Գիտություն եւ ժողովրդավարություն. դրանք բացահայտեցին մարդ արարածի հիմնարար իրավունքները:

Կայսերական վարչակարգի տապալումը քաղաքական ազատագրման մեծագույն հաջողությունն էր: Գրական ընդվզումը հրաժարվում էր հների գրածներն ընդօրինակելուց եւ պատճենելուց: Դոկտոր Հու Շիի խոսքերով՝ ամեն դարաշրջան իր գրականությունն ունի: Նոր գրականության նախակարապետների՝ որպես իրենց շարժման նպատակ առաջադրած երեք սկզբունքներն էին.

1. Վերացնել սակավաթիվ ազնվական դասի գունազարդված, շարված, շինծու եւ շողոքորթ գրականությունը եւ ստեղծել ժողովրդի պարզ, հասկանալի ու արտահայտիչ գրականություն:

2. Վերացնել դասական ոճի կարծրատիպային ու միօրինակ գրակա-

նությունը եւ ստեղծել ռեալիզմի թարմ ու անկեղծ գրականություն:

3. Վերացնել ճգնափոքների ու մենակյացների մանրախնդիր, անհասկանալի ու դժվարամատչելի գրականությունը եւ ստեղծել կենդանի հասարակության պարզ խոսակցական, հասկանալի լեզվով ստեղծված մատչելի գրականություն:

Ինչո՞ւ էր Չինաստանը, մշակութային փառահեղ անցյալ ունեցող մի երկիր, որ մինչեւ անցյալ դարն ապրում էր աշխարհի մնացած երկրներից հպարտ մեկուսացման մեջ, այդքան պատրաստակամ տրվելու նման կտրուկ փոփոխությունների: Որպես ժողովուրդ՝ մենք ամենեւին գերծ չենք մոլեռանդությունից: Ընդամենը կես դար առաջ մենք դեռ նախընտրում էինք ստորագրել մեծաթիվ անհավասար պայմանագրեր, քան դիմակայել աշխարհի մերկ ու դաժան իրողություններին: Բայց տասնիններորդ դարը մեզ համար մղձավանջային եղավ: Դա մի ժամանակաշրջան էր՝ արտերկրից պարտադրված նվաստացումներով եւ ներքին այլասերվածությամբ, որ ուղեկցվում էր աղքատությամբ, անգրագիտությամբ, վարակիչ հիվանդությունների բռնկմամբ, թունավոր ու վնասակար այն ամենով, որոնցով լի է քայքայվող կայսրությունը: Օտարերկրյա պետությունները սրում էին իրենց դանակները: Դա նման էր բարակ սառույցի վրայով քայլելուն. ոչ միայն մեծ կայսրությունը, այլեւ նրա բոլոր բնակիչները պատրաստ էին սուզվելու եւ մոռացության գիրկն անցնելու:

Հնդկաստանի եւ Կորեայի ճակատագրերը ցնցել էին երիտասարդ չինացիներին: Պատմությունն առաջ էր գնում հաստատուն քայլերով: Գիտակցելով վերահաս վտանգը՝ նրանք, բնականաբար, անհանդուրժող էին դարձել ավանդույթների հանդեպ, որոնք կապանքներ էին դնում կանանց ոտքերին եւ կորացնում էին տղամարդկանց թիկունքները: Դեղին կայսեր օրոք հաստատված եւ ընդունված հասարակական սովորույթները հանկարծ դարձան անընդունելի: Քաղաքական, հասարակական եւ մշակութային աննախադեպ մի հեղաշրջում տեղի ունեցավ: Նոր գրականությունն առաջնորդում, արտացոլում եւ արձանագրում էր այդ հեղաշրջումը:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ «նոր» ոճն իրականում նոր չէր: Դա ժողովրդի նույն դարավոր մայրենին էր, որով խոսում էին մանդարինից մինչեւ գյուղական աղախին: Բացառությամբ հարավարեւելյան ափի մի անկյունի, այդ լեզվով է միշտ խոսել բնակչության մեծ մասը: Ըստ էության, տասներորդ դարից սկսած, այդ ոճով գրվել եւ ստեղծվել է մեծաքանակ հոյակերտ գրականություն, ինչպես, օրինակ, Սուն թագավորական տոհմի Յու-լուի ստեղծագործությունների որոշ նմուշներ եւ, իհարկե,

ԱՅՊՈՑԱՆ

մեր բոլոր լավագույն վեպերը: Այն, ինչի համար պայքարում էին շարժման առաջնորդ, դոկտոր Հու Շին եւ նրա հետետորդները, ուղղափառություն էր: Եվ դա ամենեւին էլ հեշտությամբ ձեռք չբերվեց: Այնպես չէր, որ մայրենի-ի հաղթանակը տեղի էր ունենում առանց դիմադրության եւ առարկության: Համառ պահպանողական Լին Ցզին-կանը դաժան ու կատաղի քննադատություններ էր գրում դրա դեմ՝ սուր երգիծանքից, որով նա չարամիտ ծաղրուծանակի էր ենթարկում դոկտոր Հուին եւ մյուս բարեփոխիչներին, մինչեւ վրդովմունք ու զայրույթով լի մի շարք նամակներ: Նա գրում էր հանգուցյալ Ցայ Յուան-պեյին՝ այն ժամանակ Պեկինի համալսարանի նախագահին եւ նոր շարժման պահապան հրեշտակին, զգուշացնելով վերջինիս, որ «մարդկային գործերի բնականոն ընթացքին դեմ բան է՝ թույլ տալ, որպեսզի նպատակահարմարությունն անտեսի եւ ոտնատակ տա գլխավորն ու հիմնականը: Արեւմտյան քաղաքակրթությունն առավելություններ ունի, բայց եկեք մեզ նրա արատներով վնաս չհասցնենք»: Վան Ցզին-սյուանը՝ մեկ այլ ծեր գիտնական, երիտասարդ չինացիներին համեմատում էր դյուրափոփոխ, անկայուն կանանց հետ, որ լքում են իրենց ամուսիններին, հենց որ հանդիպում են նոր սիրեկանների: Նա բարեփոխիչներին մեղադրում էր, որ վերջիններս ստրկամիտ են, քանի որ ընդունում են արեւմտյան կետադրական նշանները: Բայց փաստացի ճնշումը գալիս էր պահպանողականներից, որոնք մի քանի անգամ վերահսկողություն ձեռք բերեցին պեկինյան կառավարության վրա: Տարբեր պատրվակներով նրանք արգելեցին մի շարք նոր գրքեր, ինչպես, օրինակ, 1924-ին՝ Հու Շիի «Երկերի ժողովածուն»: Դրա հետ մեկտեղ, շահարկելով «ընդունելության քննությունները» քաղաքացիական ծառայության անցնելու կամ վարժարանի համար, նրանք փորձեցին մատաղ սերնդին պարտադրել դասական ոճը:

Վերջին քսանհինգ տարում այս նոր, ժողովրդական ոճով գրվել էին հարյուրավոր վեպեր եւ հազարավոր բանաստեղծություններ ու ակնարկներ: Սա պերճախոս կերպով ցույց էր տալիս, որ լեզվի այս նոր ոճն ի գործու է արտահայտելու մարդկային զգացմունքների բոլոր նրբերանգները եւ պատկերելու երկրի վրա գտնվող ամեն բան՝ ջրվեժից մինչեւ միջատի դողդոջուն ոտքերը:

Չինացիները դեռ սիրում են տեսնել Յանցզիի կիրճերը կամ սրբազան Տայշանի գլխապտույտ ժայռերից տարածվող սոճիները պատկերող հիւնավուրց փաթույթները: Բայց այսօր Յանցզիի հոսանքն ի վեր սլացող մոտորանավեր են, եւ ինքնաթիռներ՝ Տայշանի վերելում: Պահատելով հիւնավուրց փաթույթները՝ նրանք գիտակցում են այն անհրաժեշտությունը,

ՎԻՇԱՊԻ ՄՈՐՈՒՔՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ

որ վերջիններս ավելի համարժեք միջոցներ են՝ ժամանակակից Չինաստանը պատկերելու համար: Հետեաբար՝ նույն կերպ էլ այս կենդանի լեզուն դարձել է ժամանակակից չին գրողների հաղորդակցման բնական միջոցը: Թսանհինգ տարին, իհարկե, շատ կարճ ժամանակամիջոց է հապճեպ դատավճիռ կայացնելու համար: Չինական ժամանակակից գրականությունը նորատունկ մի ծառ է, որ դեռ պիտի աճի: Այստեղ ես կփորձեմ պատմել այդ ծառի մասին:

2. ՎԻՊԱՍԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲԱՐԵՓՈՒՄԻՉՆԵՐ

Չինական ժամանակակից գեղարվեստական արձակում թրիլերները եւ զուտ հումորիստական արձակը խիստ աննշան դեր են խաղում: Վիպասաններն անպատիվ ու խայտառակ բան են համարում սոսկ հանրությանը զվարճացնելու համար գրելը: Թեեւ դա կարող է տեխնիկական լուրջ թերություն լինել, բայց ցույց է տալիս, թե որքան բարեխիղճ են մեր գրողները: Իրականում մեր վիպասանների մեծ մասը հոգով սոցիալական բարեփոխիչներ են: Երբ հետամուտ ենք լինում նրանց գրելու շարժառիթներին, տեսնում ենք, որ ակնհայտ է կոռումպացված հասարակությունը բարելավելու ցանկությունը: Ճապոնացիները կարող են իմանալ հին չինական ճեւապակու եւ բրոնզի արժեքը, բայց նրանք ճակատագրական կերպով թերագնահատել են ինքնահաստատման նոր ոգին, որ ունեն պարզ ու հասկանալի արտահայտվող բոլոր երիտասարդ չինացիները, եւ չեն ըմբռնել, թե քաղաքականապես որքան գիտակից են դարձել նրանք: Ազգային արատների անողոք վերլուծությունը եւ անհատի իրավունքների հետեւողական պաշտպանությունը ժամանակակից չին գրողների ստեղծագործության գլխավոր խթանն էին հանդիսանում: Վերցնենք հանրահայտ Լու Սինին՝ «Ա Քյուի իրական պատմությունը» ստեղծագործության հեղինակին: Ըստ էության, նա իր գործունեությունն սկսել է որպես բժշկական ինստիտուտի ուսանող: Պատճառն այն է, որ նա երեխա ժամանակ շատ էր տառապել գյուղական հեքիմների ձեռքին: Լու Սինն ուզում էր տիրապետել իր նմաններին բժշկելու գիտությանը: Սի օր Տոկիոյում, հոգեցուցիչ անատոմիական դասախոսության վերջում, դասախոսն իր ուսանողներին զվարճացնելու համար մի քանի ոչ բժշկական դիպուկահիվ ցուցադրեց: Դրանցից մեկը պատկերում էր մի խումբ չինացիների, որոնք ռուս-ճապոնական պատերազմում ռուսների համար հանդես էին գալիս որպես լրտեսներ: Նրանց ձերբակալել էին եւ գլխատել ցնձացող ամբոխի առջեւ: Լու Սինը մինչեւ հոգու խորքը խոցվեց դրանից: Նրա համար պարզ դարձավ, որ իր հայրենակիցների հիվանդությունը հոգեկան է, ոչ թե ֆիզիկական: Լու Սինը հրաժարվեց բժշկի իր հեռանկարից, որպեսզի գրող դառնա: Նրա գրվածքներում Չինաստանը պատկերված է մոայլ զույներով: Իր բոլոր պատմվածքներում հաճախ արդյունավետ կերպով կծու ծաղրի են ենթարկվում չինական ծույլ ու անտարբեր տիպերը:

Անկասկած է, որ ժամանակակից մեր լավագույն գրական հունձքը գեղարվեստական գրականությունն է: Եվ այստեղ է, որ գրական նոր ուղու-

թյունն առավել մեծ թափով է հակադրվում հինն: Չեղարվեստական գրականության մեջ տեղի ունեցած փոփոխությունը Չինաստանում ևույնքան զարմանալի է, որքան չքավորից իշխան դառնալը: Երեսուն տարի առաջ Սյաոշոն (չինական «զեղարվեստական գրականությունը», որ նշանակում է «փոքրիկ գրույց») համարվում էր գրության ցածր եւ գոեհիկ ծեւ: Տասներորդ դարից մինչեւ տասնիններորդ դարն ընկած ժամանակաընթացքում գրված սակավաթիվ վեպերը հիմնականում ստեղծվել էին այն գրագետների կողմից, որոնք գրված էին կայսերական բարեհաճությունից կամ չէին կարողացել հանձնել կայսերական քննությունները: Հետեւաբար, որանց հեղինակային պատկանելությունը հաճախ եւթադրելի է: Կայսերական քննությունների վերացումը 1904 թվականին եւ կրթական ծրագրում Արեւմտյան գրականության ընդգրկումը կատարելապես փոխեց իրավիճակը: Դրանից հետո զեղարվեստական գրականությունը դարձավ գրավոր խոսքի համար ընդունված ծեւ: Նախահանրապետական ժամանակներում վեպերը պատահականություն էին, մինչդեռ ներկայումս դրանք գրվում են գիտակցաբար եւ կանխամտածված վարպետությամբ:

Նոր Չինաստանի գրողները շատ են հպարտանում կյանքի դժվարություններով ու փոփոխականությամբ: Նրանք գիտակցում են հմուտ վիպասանի համար անձնական փորձառության արժեքը: Հասարակության ստորին խավերի կյանքի եռուզեռը կարող է գրական նյութի հարուստ աղբյուր լինել: Նրանցից ոմանք ծնվել են այդպիսի համեստ պայմաններում, ոմանք էլ ամեն ինչ անում էին այդ պայմանները որոնելու եւ ուսումնասիրելու համար: Այսպիսով, ռեալիզմը միանգամայն բնական դարձավ ժամանակակից չին գրողների համար: Նրանք միայն կոռումպացված հասարակության բարեփոխիչները չեն. շատերն այդ հասարակության զոհերն էին: Տիկին Ցաո Մինն այսպես է սկսում իր «Խոստովանությունները». «Կյանքիս իններորդ տարվա առաջին կեսում իմ բարձր հազվադեպ էր չոր լինում: Հայրս շատ կանայք ուներ, եւ ես նրա քսաներեքերորդ երեխան էի, իսկ մայրս նրա հարճն էր: Երբ տասը տարեկան էի, այնքան նիհար էի եւ հյուծված, ասես վեց տարեկան աղջնակ լինեի: Հաճախ էր մայրս ինձ ամուր գրկում, խաղում մազերիս հետ եւ նիհար, ոսկրոտ կզակս շոյելով ասում. «Ծանր բան է կին լինելը, իսկ երբ այսքան նիհար ես...»: Տիկին Պայ Վեյն ինքնակենսագրական գրվածքներից մեկում պատկերել է իրեն, թե ինչպես, ծնկի իջած իր կոնֆուցիական հոր առջեւ, վախվորած հեկեկում է՝ աղաչելով. «Հայրիկ, ինձ հնարավորություն տուր, որ սովորեմ: Այդքան շուտ մի՛ ամուսնացնիր ինձ»: Նրան պետք է ամուսնացնեին մի տղայի

ԱՅՊՈ ՑՅՊՆ

հետ, որին երբեք չէր տեսել եւ որն արդեն մահվան մահճում էր: Աղջկա տառապանքներն իրոք դաժան էին: Սկեսուրը սրան մերկացրել էր, ծեծել էւ տառացիորեն խոշտանգել: Հետո նա փախել էր եւ կարողացել էր դպրոց ընդունվել առանց ծնողների իմացության: Բայց շուտով գտել էին սրան:

Այ Վուփ պարագայում թափառաշրջիկի կյանքն ավելի շուտ ընտրված է, քան հանգամանքների կողմից պարտադրված: Նա կտրել անցել է Սիչուանից Յունասան, այդտեղից էլ՝ Բիրմա ընկած ամբողջ ճանապարհը: Աշխատել է որպես ծխապան սահմանամերձ վայրի լեռներում ճամփեգրին ընկած իջեանատանը: Անգամ վանականի խոհարար է եղել Ռանգունում: Հաճախ սրան դուրս են շարտել կացարանից՝ վարձ չվճարելու պատճառով: Բայց նա մշտապես իր հետ ունեցել է Գոգոլի «Շինելը», գրիչ եւ պարանից կախված թանաքաման: Լեռներով ճամփորդելիս կամ ծիերի ու ջորիների թրիքը մաքրելիս նա ամենայն ուշադրությամբ ուսումնասիրում էր իր շրջապատի կյանքը: Գիշերը, նավթի ճրագի աղոտ լույսի տակ, գրի էր առնում ցերեկվա դեպքերը: Ըստ էության, նրա ստեղծագործություններում արտառոց մի բան կա, որ անհասանելի է ավելի բարեկեցիկ կյանքով ապրողներին:

Ժամանակակից չինական գեղարվեստական գրականությունը կարելի է ուսումնասիրել մի քանի տեսանկյունից: Տարածաշրջանային վեպը երբեմն լիովին զարգացած չի եղել Չինաստանում, մասամբ այն պատճառով, որ խառն, անկազմակերպ կյանքն երբեք որեւէ գրողի հնարավորություն չի տվել խաղաղ ու հանգիստ բնակություն հաստատել մեկ վայրում: Բայց շատ չին գրողներ, բնականաբար, կապված են մնում երկրում իրենց համար ամենասրտամոտ վայրին: Չժոու Վենի, Շա Տինի եւ Լո Շուփի ստեղծագործություններում կտեսնեք Սիչուանի կյանքի բոլոր կողմերը՝ գազրելի կալվածատերեր, գյուղացիների անօգնական կանայք, աղի առետրով զբաղվող վաճառականներ եւ ափիոնի առետուր կատարող մաքսանենգներ: Լու Ֆենն արտահայտիչ կերպով պատկերել է իր հայրենի Հոնանի գյուղերը, ժողովրդական աշխարհագորը, հարբեցողներին կամ միսիններական հիվանդանոցները: Սյաո Չյունը՝ «Գյուղն օգոստոսին» ստեղծագործության հեղինակը, եւ նրա նախկին կին Սյաո Հունը որպես միջավայր ընտրում են ամբողջ Մանչուրիան՝ Խարբինից մինչեւ Ռայյան: Երկրի այդ մասում մարտնչող պարտիզանների մասին գրող Սյաո Չյունն ինքը նրանցից մեկն է եղել: Տուան-մու Հունյանի վեպերի միջավայրը, բնականաբար, պատկերում է Ներքին Մոնղոլիայի արեւելյան մասը, որտեղի ծնունդ էր նա ինքը: Վու Յու-սյանի պատմվածքներում տեսնում ենք հարստահարված

վարձակալ-կենսավորների տանջահար դեմքերն ու Անհույի գյուղական ազնվականության ազահությունը: Լու Սինի ստեղծագործությունների գրեթե բոլոր կերպարները վերցված են Վեյ Չժուանից՝ այն քաղաքից, որտեղ ծնվել, ապրել եւ տառապել է անմահ Ա Քյուն: Կան գրողներ, որոնք որպես միջավայր ընտրում են օտար երկրներ՝ կա՛մ դրանց տարաշխարհիկ կոլորիտի պատճառով, ինչպես Սյու-տի Շանի Հնդկաստանի, Բա Յզինի Ֆրանսիայի, Այ Վուի Բիրմայի պարագայում է, նաեւ Խարբիում սպիտակգվարդիական ռուսական գաղութի պարագայում, ինչպես նկարագրված է Չժին Իի գործերում, կա՛մ այդտեղ հեղինակների երկար ժամանակ պանդխտած լինելու պատճառով, ինչպես Գո Մո-ժոյի Ճապոնիայի պարագայում է:

Գրողներին աշխարհագրորեն դասակարգելու վտանգն ակնհայտ է: Սկսենք այն բանից, որ գավառականությունը խստորեն դատապարտվել է ժամանակակից չին գրողների կողմից: Թեեւ Լու Սինը եւ Չժոու Յո-ժենը եղբայրներ էին, բայց կյանքի հանդեպ բոլորովին այլ մոտեցում ունեին: Չժոուի մոտ տեսնում ենք մեղմ հոսանքների թեթեւ ծփանքը եւ բամբուկի պուրակների օրորվող ստվերները: Լու Սինի մոտ տեսնում ենք դեկադենտական, անկումային ավանդույթի դեմ պայքարող Չինաստանի ճակատը: Այնուամենայնիվ, այն մնում է իբրեւ նոստալգիկ հիշողությունների մի պարտեզ: Որպես գրողի բնավորության ձեւավորման բաղադրամաս՝ սա եւս կարելու է: Շեն Յուն-վենն, օրինակ, խոստովանում էր, որ իր ողջ գրական գործունեության վրա ազդեցություն է ունեցել արեւմտյան Հունանի Չեն գետը: Նա գրել է.

«Իմ ստեղծագործությունը չի հիմնավորվել օգտակար գրքերի խմբաքանակի վրա, այն կառուցվել է ջրի վրա: Զիվերից թափվող անծրեւի մանրիկ կաթիլները, փոքրիկ առուն կամ անհատակ խորությունը՝ սրանք բոլորն ինձ համար մեծ ուսուցիչներ են: Փոքրիկ ուղեղս օգտագործելու իմ ունակությունն ամբողջովին ջրի ազդեցությամբ էր պայմանավորված: Տրին եմ պարտական՝ մակերեսային Ներքեւ տեսնելու իմ առանձնահատկության համար:

Երբ մանուկ էի, գետն էր իմ ապաստանն ու ապավենը: Տասնհինգ տարեկանից սկսած՝ հաջորդ հինգ տարին կյանքս անցել է Չեն գետի մոտ: Հիմա, ամեն անգամ երբ մտաբերում եմ անցյալս, ամենաերջանիկ հիշողություններս ջրի հետ են կապված: Ժամանակիս առնվազն մեկ տասներորդը վատնել եմ մայր գետի եւ նրա վտակների ափերին: Մարդկային աշխարհի մասին շատ բան եմ սովորել հոսող ջրից: Գետը թեւեւ է տվել իմ

ԱՅԱՈ ՑՅԱՆ

երեակայությանը:

Հինգ տարի անց հեռացա այդ գետից: Արդեն տիրապետում էի վրձնին ու գրչին եւ սկսեցի գրել: Հաճախ էի գրում գետի, գետամերձ տարածքների մասին: Գրում էի սիրով: Իմ կերպարները Լույսպես գետափնյա, գետով երթեւեկող ծանոթ դեմքերն են: Եթե տխրություն կա իմ գրվածքներում, գուցե պատճառը տասնհինգ տարի առաջ Չինաստանի այդ անկյունում իշխող մռայլ եղանակն էր: Եթե իմ աշխատանքի մեջ ուշադրության արժանի մի բան կա, դա Լույսպես այդ գետով երթեւեկող մարդկանց հարուստ, վառ եւ կենդանի լեզվի պատճառով է:

Պեկինում հինգ տարի մալուց հետո գևացի ապրելու ծովի մոտ, շլացուցիչ եւ անձայրածիր ծովի: Մեծ հնարավորություն ունեի՝ տեսնել կյանքը հեռավոր անկյունից: Ինչ միայնակ էր ծովը: Այն սևում էր մենության իմ զգացումը, ընդլայնում հոգիս եւ հզորացնում անհատականությունս...» («Գրականությունը եւ ես», 1934, Շանհայ):

Իր տարբեր ձեւերով ջուրը միշտ հմայել է մեր գրողներին: Պին Սինը՝ առաջիններից մեկը մայրենիով ստեղծագործող մեր կին գրողներից, խորապես ազդեցություն է կրել ծովից: Չլինելով Լավարկության երկիր՝ մենք Տոգեֆ Քոնրադ չենք տվել: Չին գրողի համար ծովն ավելի հաճախ քաղաքական խորհրդանշան է: Պին Սինի համար այն խորհրդանշան է մայրական սերը: Եւ իր մանկությունն անց է կացրել Յգյաո Չոու թերակղզու վրա գտնվող մի սքանչելի ձկնորսական քաղաքում, որտեղ հաճախ Լավակով ծով էր դուրս գալիս: Ամերիկայից գրած իր «Եւրոպայի երկրամասերը ընթերցողներին» ստեղծագործության մեջ Լա անընդհատ փառաբանում է ծովը: «Երբ շոգ ամռան կեսօրին լեռներին ես Լայում, - գրում է Լա,- ասես Լայում ես հսկա, անճոռնի մի հիվանդ եզան, եւ խավարի շերտերը վարագուրում են մեր աչքերը: Բայց ծովը միշտ կենդանի է, վառ ու շողջողուն՝ լի արծաթափայլ հազարավոր ծաղիկներով: Ծովն իմ մայրն է, իսկ լիճն իմ ընկերն է»:

Ընտանեկան համակարգի բարեփոխման անցումային շրջանում սեռերի միջեւ հարաբերությունը պետք է սուր հետաքրքրություն եւ հակասություն առաջացներ: Ամեն երիտասարդ իրագեկ էր դառնում կյանքում իր համար ուղեկից ընտրելու իր բնածին իրավունքներին: Բայց խնամախոսությամբ ամուսնանալու ավանդույթը դեռ անխախտ էր: Քիչ հեղինակներ էին, որ զերծ էին ամուսնական խնդիրներից ու հոգսերից, եւ գրական խոստովանություններն այդ մասին՝ մողայիկ դարձան: Այդ խոստովանությունների առավել երոտիկ տեսակը, ինչպես Յույ Դա-ֆուի գրվածքներն

են, այնքան հեռուն գնաց, որ արտահայտում էր նրա «սեռական քաղցը»: Ավստրալոստրեն, երիտասարդ չինացիների սրտերում բնագոյային մի տենչանք կար, որ երկար ժամանակ զսպվել էր եւ ճնշվել սոցիալական ու բարոյական վարքականոններով: Այդ տենչանքն առավել անկեղծորեն արտահայտվեց Յույի կողմից, որն ընդհանուր շատ գծեր ունի Ռուսոյի եւ Դոստոևսկու հետ: Իր «Գրողի վերհուշերում» նա ասում է, որ գրական բոլոր գործերն ինքնակենսագրական բնույթ ունեն: Դա անկասկած ճշմարիտ է իր պարագայում: Իր հանրահռչակ «Ինն օրագրերում» նա ներկայացնում է բոլոր այն մեղքերը, որ գործել է: Յուրաքանչյուր մեղքի վերջում նա թուրքական բաղնիք էր ընդունում, որպեսզի լվա մաքրի այն: Նրա հանրահայտ ստեղծագործությունը «Հորձանուտ» վեպն է («Չեն Լուս»), որ անառողջ երիտասարդության կյանքի վերլուծություն է: Հատվածներից մեկում նա այսպիսի բնութագրական տողեր ունի.

«... Օ՛, քայքայված իմ կյանք քսան տարեկանում: Քսան տարեկան մեռած իմ աճյուն: Ես ավելի շուտ կուզեի վերածվել անօրգանական մի հանքաքարի: Ես երբեք չեմ ծաղկի այս մարմնավորմամբ: Գիտելիք չէ իմ փափագածը, ոչ էլ փառք ու համբավ: Լոկ «սիրտ» եմ տենչում, քնքուշ ու հասկացող մի սիրտ, որ ջերմ է, ըմբռնող եւ կարեկից: Սեր է իմ ուզածն ու փափագածը: Թե չքնաղ մի կին լիներ, որը կհասկանար իմ ցավն ու տառապանքը, անմիջապես իմ մահն անգամ ուզեր, պատրաստ եմ դրան: Միայն թե մի կին լիներ, գեղեցիկ կամ տգեղ, հենց որ սիրեր ինձ անկեղծ սրտով, ես կյանքս կզոհաբերեի հանուն նրա: Այն, ինչ տենչում եմ, մյուս սեռի սերն է...»:

Որքան պարզ ու միամիտ եւ, այնուամենայնիվ, որքան արտահայտիչ է տրված ճնշված հոգիների տրամադրությունը:

Չի կարելի ասել, թե Յույը դրական ազդեցություն է գործել երիտասարդ սերնդի վրա: Բայց նրա զգացմունքներն անկեղծ էին: Ազնվորեն եւ անարգել, առանց կաշկանդվելու նա արտահայտում էր ժամանակի երիտասարդությանը բնորոշ թախիծը: Բայց մեկ այլ վիպասանի մասին, որը գրեթե նույն թեման է ընտրել, չի կարելի նույն կերպ դատել: Չան Յու-պի-նը պետք է որ խորապես զղջացած լինի իր պատեհապաշտության համար: Թերեւս նա անիծում էր իր ընթերցողների ապերախտությունը: Ընդամենը տասնհինգ տարի առաջ սիրային եռանկյունիների ու քառանկյունիների մասին նրա վեպերը թողարկվում էին մեծ քանակությամբ: Ամբողջ երկրում երիտասարդ տղաներն ու աղջիկներն ազահաբար կլանում էին դրանք: Գրելը պետք է որ նրան զգալի շահույթ բերած լիներ: Նրա սյուժե-

ԱՅՊՈՑԱՆ

ները սիսեռի երկու հատիկի պես նման էին իրար: Իր կերպարները, թվում էր, մեկ ընդհանուր արժանիք ունեն` կրքոտ էին: Ստեղծագործությունների ավարտն անփոփոխ կերպով ողբերգական էր` կամ ինքնասպանություն` որպես ամուսնացած անձնավորությանը սիրահարված լինելու հետեանք, կամ հղիության հանկարծակի հայտնաբերում ծնողների կողմից: Այս կարծրատիպային իրավիճակները շուտով դատապարտելի համարվեցին բոլոր գրաքննադատների կողմից և հիասթափեցրին նույնիսկ նրա ամենամոլի սիրահար ընթերցողներին:

Բայց «ընտանեկան ճնշումների» հարցն ամբողջությամբ չի լուծվել և չի դադարել հետաքրքրել չին ընթերցողներին: Բա Յզինի վեպերի հաջողությունը դրա վառ ապացույցն է: Նա անարխիստ է, որի անզիջում ոգին շատ բան է ասել իր սերնդի դժգոհության մասին: Բա Յզինը շատ վեպեր է գրել հանքագործների և հեղափոխականների կյանքից: Իր վերջին եռագրությունը` «Գարուն», «Աշուն», «Ժողովուրդ», պատկերում է ևահապետական ընտանիքի այլասերումը Սիչուանում և երիտասարդության ընդվզումը: Բա Յզինը մեղադրանքի և դատապարտման գրող է: Ֆրանսիայում եղած ժամանակ ևս դարձավ Ֆրանսիական հեղափոխության կրքոտ հետետորդ: «Ես մեղադրում եմ»-ի ոգին է իշխում նրա ստեղծագործություններում: Նա գրում է բողոքելու, այլ ոչ թե զվարճացնելու համար: Բայց երբեք արվեստագետ լինելու հավակնություն չի ցուցաբերում: Իր «Էլեկտրական աթոռի» առաջաբանում ևս գրում է.

«Ես ո՛չ ազատություն ունեմ, ո՛չ ուրախություն, քանի որ մտրակն անընդհատ ձողկում է ինձ: Ես չեմ կարող հանգստանալ: Դա մարդկության և իմ դժբախտությունն է: Երբ կիրքն այրվում իմ ներսում, սիրտս դառնում է անհանգիստ, ես պետք է ինչ-որ բան գրեմ: Երբ գրում եմ, այլևս գոյություն չունեմ: Սոսկալի պատկերներ են ինձ հալածում: Դրանք ստիպում են, որ սիրտս ու ձեռքս դողան միաժամանակ: Ի՞նչ է արվեստն, ի վերջո, եթե այն չի կարող ավելի շատ լույս բերել մարդկությանը, եթե չի կարող վերջնական մի հարված հասցնել չարին: Ողջ Դումպեյ քաղաքը մի անգամ թաղվեց մոխիրների տակ: Մի օր արվեստի փողոսկրն աշտարակը նույնպես կփլուզվի: Ոչ, ես ուզում եմ անմիջականորեն դիմել իմ ընթերցողներին, ստիպել նրանց` ատել խավարը և սիրել լույսը: Իմ գրվածքները ոչ մի մասնագետի կարիք չունեն...»:

Այս հարձակումը «արվեստն արվեստի համար» խմբավորման դեմ առավել ցայտուն կերպով է արտահայտված «Հուշեր իմ կյանքից» ստեղծագործության մեջ.

«Չեմ ստում, երբ ասում եմ, որ իմ գործերի մի զգալի մասն արցունքի ու արյան խառնուրդ է: Ես արվեստագետ չեմ: Գրածս իմ գոյության մասնիկն է ընդամենը: Կյանքս ցավագին, տառապալից մի պայքար է եղել, գրածս ևույնպես: Ես գրում եմ միայն մարդկային ձգտումների մասին: Մինչ տառապում եմ, կանխատեսում եմ ևսեւ վարդագույն մի արշալույս ողջ մարդկության համար: Այո, կյանքը կարճ է, իսկ արվեստը՝ հարատեւ: Բայց կա, այնուամենայնիվ, ավելի տեսական մի բան, քան արվեստն է, եւ դա է ինձ առաջնորդում»:

1927 թվականից սկսած, Հեղափոխական բանակի հյուսիսային արշավանքից հետո, չին գրողները քաղաքականապես ավելի գիտակից դարձան: Անձնական ինքնադիտարկումն հետզհետե քիչ պահանջարկ սկսեց ունենալ, եւ վիպասաններն անցան ավելի մեծ կտավի գործերի: Մաո Դունն առաջինն էր, որ փորձեց մոնումենտալ վեպ ստեղծել՝ պատկերելով հեղափոխությունը, որի համար շատ արյուն էր թափվել: Նրա «Հիասթափությունը», «Փոփոխականությունը» եւ «Փետրտուրը» այդ ճակատագրական տարվա մասին գրված եռագրությունն են: Ինչպես Անդրե Մալրոն՝ «Մարդկային կեցության» (անգլերեն թարգմանվել է՝ «Փոթորիկը Շանհայի վրա» վերնագրով) հեղինակը, Մաո Դունը կուսակցության ակտիվ անդամ էր Ուհանում, որ այն ժամանակ ձախակողմյան կառավարության նստավայրն էր: Լինելով նատուրալիզմի եռանդուն հետետորդ՝ նա իր կյանքը քաղում էր իրականությունից: 1930-ին դրան հետևեցին նրա «Մթնշաղը», «Չինաստանի ռոմանտիկան», որտեղ նա ներկայացնում է եւ՛ գյուղական, եւ՛ քաղաքային Չինաստանի մեծակտավ համայնապատկերը: Այս վեպի զարմանալի առանձնահատկությունը Շանհայի ֆոնդային բորսայի գրաֆիկական նկարագրությունն է: Նրա որոշ ստեղծագործություններ վավերագրական լինելու միտում ունեն, բայց նա սովորեցրել է երիտասարդ գրողներին ուսումնասիրել իրական կյանքը:

Հանրապետական կյանքի անհրապույր կողմը պատկերելը համընդհանուր թեմա է: Յե Շաո Չունը վառ եւ կենդանի գրչով գրում է դպրոցի ուսուցիչների ու միջին տարիքի մարդկանց մասին, Չժան Յյան-յին՝ քաղաքացիական ծառայողների ու երեխաների մասին: Նրա «Յան Յզին Պան ասպետը» մեր լավագույն պիկարոյական՝ խաբեբայապատում վեպերից է: Տիկին Դին Լինի ստեղծագործությունները լայնորեն հայտնի են: Նրա «Խավարի գրկում» եւ «Մայրը» գործերը շատ բարձր են գնահատվել: Լին Շու-հուան մի շարք սքանչելի պատմվածքներ է գրել: Լինելով գեղանկարիչ եւ պրոֆեսոր Չեն Սի-հնի՝ գիտուն, բայց ոչ բժախնդիր քննադատի կինը՝

ԱՅՊՈՑԱՆ

Նա գիտության միջոցով ավելի է ընդլայնում իր ստեղծագործական տաղանդը: Ես չեմ ցանկանում տարաբնույթ հաճոյախոսություններ շռայլել մեր կին գրողների հասցեին, բայց հարկավ չեմ կարող անտեսել Լին Հույինին՝ «Իննսունինը աստիճան» եւ այլ սքանչելի պատմվածքների հեղինակին: Նա բազմակողմանի արվեստագետ եւ փորձարարական գործեր ստեղծող գրողների, ինչպես, օրինակ, Վիրջինիա Վուլֆի ստեղծագործությունների սիրահար էր եւ ստատիկ «փաստերի» փոխարեն գեղարվեստական գրականություն է դարձրել կյանքի արագընթաց բունկումների արձանագրությունը: Նա ծուլ է որսացել գիտակցության ծովի ընդերքում եւ այդպիսով խորացրել իր գրվածքի ուժն ու ազդեցությունը:

1916-ից մինչեւ Չախակոդյան գրողների լիգայի ձեւավորումը 1930-ին՝ ժողովրդական ոճով գրված ցանկացած բան թվում էր ընդունելի: Որպես չափանիշ՝ ավելի շատ հակված էին լեզվական կողմն ընդունել, քան գեղարվեստական արժանիքը: Հեղափոխական գրականության ժամանակաշրջանում ձախակոդյան քննադատներն առավելապես գաղափարախոսությամբ էին տարված: Վան Շու-մինը՝ այդ ժամանակվա առաջատար քննադատներից մեկը, գրել է, թե ինքն ինչպես է դարձել գրաքննադատ. «Ես հրաժեշտ տվեցի կապիտալիստական հասարակության բոլոր գեղագիտական տեսություններին եւ ուշադիր ուսումնասիրեցի սոցիալիզմը»: Արվեստն այն ժամանակ քամահրանքով մի կողմ էր նետված՝ որպես «տեխնիկա»: Հետեւաբար շատ պատմություններ ի հայտ էին գալիս որպես հեղափոխական հեքիաթների մերկ կմախքներ կամ քաղաքական որոշակի գաղափարների բեմականացումներ:

Շեն Ցուն-վենը հաճախ բնութագրվել է որպես ոճավորող: Ճիշտ է, որ նա միտումնավոր ընտրում է այնպիսի բառեր, որոնք փայլում են: Նրա պատմվածքներում գերիշխում է բանաստեղծի տրամադրությունը: Նա խոստովանում է, որ ինքը միշտ փորձում է ակնթարթային, վաղանցիկ զգայություններ ու պատկերներ որսալ: Դրանք հաճախ տպավորիչ են ու թարմ: Օրինակ, երկչոտ պատանուն նկարագրելիս, ասում էր, որ նա ամաչկոտ էր, ինչպես ծիրանի փոքրիկ ծառը: Բայց Շենի հիմնական արժանիքն այն է, որ նա գրում է ամբողջովին իրեն պատկանող աշխարհի մասին՝ զինվորների, ներքին շրջանների քաղաքացիական ծառայողների, արեւմտյան Հունանի գյուղացիների եւ սահմանին ապրող գունազեղ ցեղակիցների: Իր վառ գրչով նա կենդանացնում է բոլորին՝ ներկայացնելով նրանց հարուստ երկխոսությունը, պատկերելով նրանց գունեղ կյանքն ու ողբերգությունը: Նա ծնվել է հասակ է առել այդ մարդկանց միջավայրում:

Որպես զինվոր, ապա հարկահավաք՝ ոտքի տակ է տվել այդ հողի ամեն մի թիզը: «Սահմանամերձ քաղաք» վիպակի առաջաբանում ևս բացատրում է իր ստեղծագործական դիրքորոշումը.

«Ես աննկարագրելի սեր եմ տաճում գյուղացիների և զինվորների հանդեպ: Այդ զգացմունքն արտահայտվում է իմ գրած բոլոր գործերում: Երբեք չեմ թաքցնում դա: Ես ծնվել եմ այն փոքրիկ քաղաքում, որի մասին գրում եմ: Պապս, հայրս և եղբայրներս բոլորը եղել են բանակում: Բոլորը մահացել են գործուն ծառայության մեջ: Ապրողներն էլ իրենց կյանքը նույն կերպ են ավարտելու: Սա կյանքի այն կողմն է, որին ես առավել ծախոթ եմ: Ես գրում եմ նրանց սիրո և ատելության մասին, նրանց ուրախությունների և տխրությունների մասին: Որքան էլ գրիչս իմ անտաղանդ ու անշնորհք լինի, չի կարող շատ բան աղավաղել, քանզի այդ մարդիկ ազնիվ են, շիտակ, սովորական, բայց մեծ սրտի տեր: Բնավորությամբ՝ երբեմն շատ լավն ու գեղեցիկ, երբեմն շատ մանր ու ճղճիմ: Ամմիտ ու անսիրտ քաղաքացիական պատերազմներում, որ տևեցին գրեթե քսան տարի, այդ գյուղացիներն ամենաառաջին և հիմնական տուժողներն էին: Նրանց հոգիները մեծապես ճնշվել են, ինչը խիստ մեծ ազդեցություն է գործել՝ ավերելու նրանց նախնական պարզությունը, աշխատասիրությունը, չափավորությունը, խաղաղասիրությունն ու ազնվությունը: Նրանք վերափոխվել են բոլորովին այլ արարածների՝ ծուլ ու չքավոր: Ես փորձում եմ արձանագրել այդ սոսկալի փոխակերպումը»:

Պատերազմը քողարկված օրհնություն է եղել չինական գրականության համար ընդհանրապես և գեղարվեստական գրականության համար հատկապես: Նախկինում գրեթե բոլոր պատմվածք գրողների մոտ երկու ցավալի ախտանիշ գոյություն ուներ: Նրանք կամ չունեին ազգային կյանքի հիմնավոր փորձ, կամ մտքերն արտահայտելու նրանց կերպն ու ոճը չափազանց տարբեր էր ժողովրդի ոճից ու մտածելակերպից: Պատերազմը շատ գրողների ցուցանեց ճիշտ ուղին: Առաջին անգամ նրանք ներշնչեցին բրնձի դաշտերի բուրմունքը և տեսան նարնջի սքանչելի պուրակներն ու գյուղական վայրերի հոյակապ տեսարանների հրաշքը: Բայց ամենից առաջ նրանք ուղղակի անմիջական շփման մեջ մտան ժողովրդի հետ, այն մարդկանց հետ, որոնք գերծ էին եվրոպական ազդեցությունից, որոնք ապրում էին ծովափնյա նավահանգիստներից շատ հեռու: Այս ամենի հետ մեկտեղ բոլոր այդ մարդիկ տեսել էին պատերազմը, նրա ողբերգությունն ու հերոսությունը: Հետևաբար, մենք շատ բան կարող ենք հուսալ ետպատերազմյան չին վիպասաններից:

3. ԴՈՒՅԻԱ. ԽԱՉՈՒԴԻՆԵՐՈՒՄ

Ժամանակակից չին բանաստեղծը շատ անհանգիստ է երեսում: «Ձեռի» մասին հարցը հավերժական պարադոքս է եղել: Երբ բանաստեղծն իրեն սոխակի նման է զգում, կա ձգտում է ազատվել իրեն կաշկանդող կաղապարներից: Բայց երբ կա գիտակցում է, որ պոեզիան, գեղանկարչության պես, շրջանակի կարիք ունի, այդպիսի շրջանակ ձեռք բերելու նրա ցանկությունը նույնպես ուժեղ է: Շատ բանաստեղծական ձեռք են հորինվել եւ փորձարկվել կամ անհատների, կամ գրողների խմբերի կողմից: Բայց դեռ որեւէ եզրահանգման չեն եկել:

Դոկտոր Հու Շին կարող է համարվել ժողովրդի լեզվով գրող առաջին բանաստեղծը: Նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն վերնագրված էր «Փորձեր»։ այն լույս տեսավ 1920 թվականի սկզբին: Վաղ շրջանում գրված բանաստեղծությունները գրեթե բոլորն էլ փորձարարական էին: Հաճախ դրանք արտահայտում էին ամենամակերեսային ու անկայուն զգացմունքներ եւ ձեռով անհարթ էին ու կոպիտ: Ամեն բան արվում էր պոեզիան ժողովրդականացնելու համար, բայց այն ազնվացնելու համար գրեթե ոչինչ չէր արվում: Սակայն դրանց արժանիքը ոչ այնքան բանաստեղծական արվեստի եւ տաղաչափության մեջ է, որքան հեղափոխական հանդեպության: Բացառությամբ մեծ հանճարի տեր անծանց՝ չինական տաղաչափությունը դարեր շարունակ մյուսների համար եղել է անհաղթահարելի ծանր լուծ: Դրա մետրիկան դարձել է մեխանիկական մի բան, իսկ պատկերները՝ ծեծված: Փորձարար բանաստեղծներն ազատագրեցին չինական պոեզիան ավանդական կապանքներից: Բայց դրա հետ մեկտեղ նրանք նաեւ վերացրին սահմանագիծը պոեզիայի եւ արձակի միջեւ:

Փորձարարների մյուս ձեռքբերումն այն էր, որ ընդլայնեցին բանաստեղծական թեմաների շրջանակը: Նախկինում չինական պոեզիան կարծես միայն «քամին, ծաղիկները, ձյունը եւ լուսինը» գովերգելու համար գոյություն ուներ: Թեեւ բնության վրա այս կենտրոնացումը հասկանալի է դարձնում, թե ինչու մեր շատ դասական բանաստեղծներ այսօր էլ դեռ պահանջարկ են վայելում, նույնիսկ Չինաստանից դուրս, դա, իհարկե, չէր բավարարում հանրապետական չինացիներին, որոնք ուզում էին, որ գրականությունն իր դերն ունենա հասարակական շարժման մեջ: Կար նաեւ նոր անդաստաններ ուսումնասիրելու բուռն ցանկությունը: Իրենց արձակաման պոեզիայով նրանք վերացրին թեմայի ավանդական սահմանափա-

կումները՝ այդպիսով ազատություն տալով ապագա բանաստեղծներին՝ գրել իրենց ոգու թելադրանքով: Բանաստեղծներից մի քանիսը, ձգտելով հանրահայտ դառնալ, իրենց տողերը լցնում էին քաղաքական կամ տարփալից դատարկաբանությամբ: Բայց ընդհանուր առմամբ՝ բնության ազդեցությունը մարդկային բանականության վրա դեռ մնում է չին բանաստեղծների սիրած թեման:

Շուտով պարզվեց, որ ձեւից այս լիակատար ազատագրումն անկատակահարմար է: Պոեզիան, պրիմադոնայի՝ առաջին դերն ունեցող երգչուհու պես, պետք է իրազեղ եւ վեհաշուք հագնվեր: Այն սկսել էր ամաչել իր մերկությունից: Հանդերձի պահանջարկն ակնհայտ էր: Սյույ Չժի-մոն՝ Կիսալուսնի ընկերակցության առաջատար բանաստեղծը, որ քաջատեղյակ էր թե՛ անգլիական, թե՛ չինական պոեզիային, սկիզբ դրեց բանաստեղծության մեջ երաժշտական առանձնահատկությունները վերականգնելու շարժմանը: Նա զանազան համարձակ փորձեր ձեռնարկեց՝ անգլիական տաղաչափական ձևերը՝ եղիսաբեթյան սոնետներից մինչև բայրոնյան ստանսներ, ներմուծելու չինական պոեզիա: Հարող Էքթոնը չինական ժամանակակից պոեզիային նվիրված իր անգուգական ուսումնասիրության մեջ (1936) գրել է.

«Երբ Սյույը գիտակցաբար արեւմտյան ռապսոդիան էր ներմուծում, շտապեց ներկայացնել դասական չինական պոեզիային հակոտնյա տարրեր՝ տարվելով չափազանցություններով ու կրկնություններով եւ ծանրաբեռնելով իր տողերը ճոխ ու գունազեղ պատկերներով, որոնք տեղ-տեղ կեղծ են հնչում, իսկ տեղ-տեղ՝ իրաճաշակ են: Նրբաճաշակ ասելով՝ նկատի ունենք, որ դրանք ունեն զուտ չինական իրազեղության այն կատարելությունը, որ այլազգիներին կարող է հաղորդվել միայն տեսողական միջոցներով, ինչպես, օրինակ, հատած նեֆրիտի լավագույն նմուշները: Սյույը տիրապետում էր ռիթմական կենսունակության, բայց, ցավոք, չուներ կարգապահ կանոնավորություն»:

Կիսալուսնի ընկերակցության բանաստեղծների շարքում, Վիլյամ Բլեյքին, Պոլ Վալերիին եւ արտասահմանյան այլ մեծերի թարգմանող պոետներից բացի, կային նաեւ ինքնատիպ գործերի հեղինակներ, ինչպես, օրինակ, Վեն Ի-դոն՝ «Մեռած ջրի» հեղինակը, Չժեն Մեն-չժիան եւ Պյեն Չի-լի-նը: Բայց նոր հարմարեցված շրջանակը դարձավ մեխանիկական մի բան, նախքան լավ կծեավորվեր: Համաչափ ստանսներին հեգնական մակա-նուն տվեցին՝ «սոյայի թխվածք»: Չին բանաստեղծների համար հատկապես անախորժ էր թվում խիստ կանոնիկ սոնետը: Եվ սկիզբ առավ մեկ այլ

ԱՅԱՈ ՑՅԱՆ

խոռվություն: Այս անգամ խթան հանդիսացան Ուլլթ Ուլթները եւ ֆրանսիացի սիմվոլիստները: Գո Մո-ժոն՝ Ստեղծագործական ընկերակցության առաջնորդը, ընդվզեց դրա դեմ, որովհետեւ նրա ինքնարտահայտումը ճնշվում էր այդպիսի խստականոն ձեւերից: Համաչափ տողեր գրելու, ամեն մի բառի լսողական եւ տեսողական պատկերները ծանրութեթեւ անելու փոխարեն նա թողնում էր, որ իր հույզերն ու զգացմունքները հորդեն կրքոտ հորձանքով: Օրինակ՝ նա ժամանակակից մեծ քաղաքը, մետրոպոլիսն նկարագրում է այսպես.

Ո՛վ զարկերակ մեծ քաղաքի:

Կյանքի տրոփներ:

Բաբախյուն, փչոց-հնչոց եւ ճիչ-աղաղակ,

Հորձանք, թռիչք եւ ցատկ:

Հորիզոնը մշուշով է վարագուրված:

Սիրտս դուրս է թռչում իմ բերանից:

Ստեղծագործական ընկերակցությունն սկզբում ռոմանտիզմ էր ազդարարում, ապա՝ սոցիալիզմ: Գործունեության բոլոր ձեւերում բազմակողմանի ձիրք ունեցող Գոն գլխավոր մասնակիցն էր: «Ռոմանտիզմի» շրջանում նա փութաջանորեն բանաստեղծական թարգմանությամբ ներկայացրեց «Ռուբայաթը», «Ֆաուստը» եւ Շելլիին: Նա գրեց պատմվածքներ, թատերգություններ, բանաստեղծություններ, հանդես եկավ գրական քննադատությամբ: Չափազանց բուռն զգացմունքայնությունը նրա բանաստեղծություններում հաճո չէր անգլոամերիկյան դպրոցի քննադատներին, ինչպես, օրինակ, պրոֆեսոր Լյան Շի-չիուին, որը զուսպ եւ վայելուչ տողերը գերադասում էր ոգեշնչվածությունից: Բայց դա չխանգարեց, որ Գոն դառնա հանրահայտ ու սիրված: Նա, ըստ էության, հերոս էր համարվում: Այն, ինչի դեմ նա ընդվզում էր, միայն կարծրացած ձեւը չէր, որը պարտադրվում էր ազատ ոգու տեր անձանց: Լու Սիւնի պես նա ընդվզում էր Փղոսկրե աշտարակի խառնախմբի չափազանց քնքշության ու պճնամուտության դեմ: Բայց երբ փղոսկրը փոխարինվեց ավելի էժան կյուբով, թեեւ շարունակում էր աշտարակ մնալ, ժողովրդական աջակցությունն աստճանաբար վերացավ: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, «Բանաստեղծություններ ասմունքի համար» գործերը, որոնք չին-ճապոնական պատերազմի այրքան հանրահայտ արգասիքն են դարձել, Գոյի բանաստեղծությունների վերածնունդն են հանդիսանում քսանական թվականներին:

«Ձեզի» դեմ ընդվզողների մեկ այլ խումբ ազնվականական տիպի էր: Նրանք, թվում է, ծեւն այնքան էին ատում, որքան պարզությունը: Փարիզում ուսանած քանդակագործ Լի Չին-Ֆան ֆրանսիական սիմվոլիստների ջերմեռանդ հետետորդ էր: Իր մոգական մատներով ևս փորձում էր մի քանի բանաստեղծություն քանդակել: Արդյունքն այն եղավ, որ Լի Չին-Ֆան ստեղծեց բանաստեղծության մի նոր տեսակ, որը լի էր տարաշխարհիկ պատկերներով, հեռավոր եւ արտառոց փոխաբերություններով եւ եվրոպական դիցաբանության հաճախակի ակնարկումներով: Ժողովրդական լեզվի հաջողություններից հետո ևս առաջին գրողն էր, որ հնարավոր ամեն բան արեց, որպեսզի խոսակցական լեզուն միախառնի դասականի հետ: Վերջին հաշվով, Լիի ներգործությունը շահավետ էր: Նա համալրեց «հասարակ լեզվի» բառապաշարը: Բայց ընթերցողներին առավել ապշեցնում էին նրա պատկերները: Հաճախ դրանք ցանկասիրական էին, ինչպես «Քնքշանք» բանաստեղծության մեջ.

*Իմ ինքնավստահ մատով
Զգում եմ մաշկիդ ջերմությունը:
Տառել եղնիկը մոլորվեց անտառում,
Միևջրեռ մեռած տերեւների բույրն է մնում միայն:*

Երբեմն նրա բանաստեղծությունները մեծ հակում էին ցուցաբերում հայեցողական լինելու՝ հիվանդագին նրբերանգներով: Նա սեր ուներ հնության հանդեպ՝ ի տարբերություն վաղ շրջանի ընդվզողների: Սակայն հնությունը, որի մեջ խորասուզվում էր, ավելի շատ եվրոպական էր, քան չինական: «Երբեք չվերադառնալ» բանաստեղծությունն այսպես է սկսվում.

*Չնա, տղաս,
Դեպի քաղաքները վաղնջական:
-Նրանք քնած են գիշերում դարերի:
Գետերը երգում են միայն երգեր,
Ինչպես հառաչանքներն Արեւելյան բանաստեղծի:
Նրանց սրտերն ասես ժայռեր լինեին՝
Մամուռի հաստ շերտով ծածկված...*

Թեեւ Լին ինքը վերադարձավ քանդակագործությանը, բանաստեղծության այս տեսակը շարունակեց զարգանալ: Պոլ Վալերիի եւ Թ. Ս. Էլիոթի

ԱՅՊՈՑՆԵՐ

ավելի ուշ ազդեցության հետ համակցված՝ այն ծաղկում ապրեց Ռայ Վան-շուի, Պյեն Չի-լիսի եւ Հե Չի-Ֆանի գործերի շնորհիվ: Նրանք պահպանեցին ազատ բանաստեղծությունը՝ որպես իմպրեսիոնիզմի ձեռնարկ: Եւ ավելի անորսալի դարձավ: Պրանք երբեմն այնքան են ենթադրելի, որ միայն շատ տարողունակ ասոցիատիվ ունակություններով օժտված ընթերցողներն էին կարողանում կարդալ խորհրդավոր գրերի տողարանքներում արտահայտվածը: Իմպրեսիոնիստական քննադատ Լյու Սի-վեյը շատ խորն է ուսումնասիրել ժամանակակից հեղինակներին՝ նրանց հոգու հետ համադրելով սեփական հոգու դեգերումները: Իր վերամբարձ ոճով ևս փորձել է մեկնաբանել Պյենի «Կլոր գանձատուփը»: Վերցնելով հետեյալ տունը՝

*Երբեք մի՛ մտնիր ժամագործի կրպակ՝
Լսելու մանրապատառ կեր դարձած պատանկությունը:
Երբեք մի՛ զնն հնաոճ իրերի կրպակ՝
Գնելու պապիղ մանր զարդերը...*

այդ հոգեխույզը կարծում էր, թե «գանձատուփը» խորհրդանշում է ներկան՝ անցյալից ապագա ձգվող մի կամուրջ: Երբ հասնում էր հետեյալ տանը՝

*Լուսինը զարդարեց լուսամուտը,
Իսկ դու՛ երազը ինչ-որ մեկի,*

հանգում էր այն եզրակացության, թե բանաստեղծը կյանքը զարդարանք է համարել: Բանաստեղծները սովորաբար չափազանց ինքնամոլի են մեկուսի են, որպեսզի խոսեն քննադատների հետ: Բայց Պյենը չկարողացավ զսպել իրեն: Քրտնաջան այդ քննադատին գրած բաց ևամակում ևս ասաց, որ վերջինս «կատարելապես սխալվում է»: Բանաստեղծը մտածում էր հարաբերականության մասին:

Որ չին ընթերցողները դժգոհում էին նոր պոեզիայի հետզհետե աճող երկիմաստությունից, միանգամայն բնական էր: Երբեմն նրանք մեղադրում էին Պոլ Վալերիին, երբեմն Էլիոթին: Ճապոնական ռազմական ինքնաթիռները ոչնչացնում էին մեր մարդկանց եւ ավերում մեր շենքերը: Նրանք ավերել էին ևս փողոսկրե այն աշտարակը, որ կառուցում էին Չինաստանի առավել արտոնյալ մտավորականները: Շատ առումներով գե-

ղագեսներն օգնել էին հարստացնել ժողովրդական գրականությունը, որ հիմնադրվել էր ավելի շատ սոցիալական, քան գեղարվեստական ուղղվածության եւ համոզմունքների տեր մարդկանց կողմից: Գրականությունը հարստացնելու եւ գեղարվեստորեն խորացնելու փորձը որոշակիորեն օգտակար էր եւ ձեռնտու: Բայց նկատի ունենալով հսկայական չափերի հասնող անգրագետ բնակչությանը, դա անկասկած, մի օազիս էր: Պատերազմը մեծապես կործանարար էր եղել գրականության համար՝ ներհայեցողական մարդկանց տեսանկյունից, բայց այն ընդլայնել էր հորիզոնը եւ կենսունակ ու թարմ շունչ բերել բերրի հողից:

4. ԴՐԱՄԱ. ԽՈՍԱԿՈՂ

Չափազանցություն չի լինի ասել, որ ժամանակակից դրաման ամբողջովին հեռացել է ավանդական դրամայից: Առօրյա խոսակցական լեզվով ներկայացվող ռեալիստական տեսարաններ ու երկխոսություններ ունեցող թատերգություններն իրենց ձեռով այսօր բոլորի կողմից ընդունված են, բայց լիովին օտար էին մոտ երեսուն տարի առաջ: Ավանդական բեմական արվեստը օպերայի եւ բալետի ընդհանրական համարժեքն էր: Ի տարբերություն ազգային գրականության մյուս ձեւերի, ժամանակակից չինական դրաման առաջացել է եվրոպական գործերի թատերական վերամշակումից: Առաջին փորձը «Կամելիազարդ տիկինն» էր 1907 թվականին, որին հաջորդեց «Քեռի Թոմասի խրճիթը»: Դժվար չէր բացատրել այդ ընտրությունը: Երիտասարդ չինացիներն այն ժամանակ մեծապես տուժում էին ծնողների ճնշումներից, հատկապես ամուսնության հետ կապված, միևնույն ստիպված էին համակրել հարստահարված սեւամորթներին: Երբ օտարերկրյա թատերգությունը, իր ողջ տարաշխարհիկ գրավչությամբ, շատ ավելի լավ էր արտացոլում մեր սեփական մտքերը, քան մեր հայրենի թատերական գործերը, դա, բնականաբար, ոգեւորություն էր առաջացնում: Նույնը կարելի է ասել Լեդի Գրեգորիի «Լուսնի ծագումը» գործի ժողովրդայնության մասին՝ ճապոնացիների՝ Մանջուրիա ներխուժումից հետո: Բայց հատկապես Իբսենի թատերգություններն էին, որ երիտասարդ չին դրամատուրգներին դուրս բերեցին մայրուղի՝ սոցիալական բարեփոխումների ճանապարհ:

Իբսենի ազդեցությունը միայն մեր դրամատուրգներով չէր սահմանափակվում: Որպես սոցիալական քննադատ, սովորույթների դեմ անզիջում պայքարող՝ ևս նվաճել էր յուրաքանչյուր չին գրողի սիրտը: Մի որոշ ժամանակ «հիմնահարցային թատերգությունները» վայելում էին նույնքան ժողովրդայնություն, որքան «հիմնահարցային վեպերը»: Նորվեգացի այս դրամատուրգից չին գրողները սովորեցին, որ դրամայի մեծագույն առաքելությունը ներկա հասարակության արատները մատնանշելն ու անհեթեթությունները բացահայտելն է: Դրամատուրգներից մեկն իր գործի վերջաբանում ասես ներողամտություն հայցելով արդարանում է. «Այս պիեսը թեւ տեխնիկայի առումով արժեք չունի, բայց ուրախ եմ ասելու, որ պայքարել է օրախնդիր երկու հիմնական հարցերը՝ ամուսնական խնդիրները եւ զեղջկական սնանկության հիմնահարցերն արձարծելու համար»: Այն օրերին դա բավականին համոզիչ էր հնչում: Ժողովրդական թատրոնը

1921 թվականին իր բացման ծանուցման մեջ հայտարարում էր. «Հաստատապես անցել են այն ժամանակները, երբ դրամատիկական ստեղծագործությունն ու թատրոնը դիտարկվում էին որպես հանգստի եւ զվարճանքի միջոց: Ժամանակակից թատրոնը սոցիալական առաջընթացին նպաստող անիվ է եւ մեր շրջապատի արատավոր հիվանդությունները հայտնաբերող մանրադիտակ: Դա մի անողորմ հայելի է, որի մեջ պետք է արտացոլվեն մեր հասարակական կյանքի բոլոր կնճռոտ ու անհրապույր կողմերը»:

Վերափոխման ընթացքում երկվությունն անխուսափելի էր: Ժողովրդական լեզվով գրված վաղ բանաստեղծություններից շատերն իրականում դասական չափաձոյի փոխադրություններ են: Ակնարկագիրներն իրենց նույնիսկ նեղություն չէին տալիս՝ արտահայտչաճոճ հիմնավոր փոխելու համար: Դասականների գործերում օգտագործվող ծեծված արտահայտությունները ժամանակ առ ժամանակ ի հայտ էին գալիս՝ մատնելով մարդկային իներցիայի համառ բնույթը: Ժամանակակից չինական դրամայի առաջին շրջանում, մոտավորապես 1907-ից մինչեւ 1915-ը, նոր թատերգությունները հայտնի էին որպես «բարեփոխված թատերգություններ» (վեն մին սի): Դա ընդամենը դարավոր ավանդույթից խզման սկիզբն էր: Այդ շրջանի էական նշանակություն ունեցող ուժը Գարնանային ուռնետու ընկերակցությունն էր, որ ստեղծվել էր չին ուսանողների կողմից Տոկիոյում, 1907 թվականին: Հետագայում նրանք շրջագայեցին Ցանցզիի հովտում եւ ամբողջ երկրում անթիվ դրամատիկական ընկերակցություններ առաջացան:

Այդ ընկերակցությունների մեծ մասը ծգտում էր նպաստել նոր դրամայի հաջողությանը: Միաժամանակ նրանք ուզում էին այն ծառայեցնել որպես ազատագրական շարժման խոսափող: Այս երկու տրամադրությունների խառնուրդը մի տեսակ չէր ստացվում: Ցավոք, օպերային ավանդույթին վերջ տալով՝ միակ արժանիքը, որ նրանք ձեռք բերեցին նոր դրամայի համար, պարզ երկխոսության կիրառումն էր: Բացի թատերական որոշ բարելավումներից, ինչպես, օրինակ, արգելելը ներկայացման կեսին «բրավո, բրավո» բղավել, որը հնարձ հանդիսականների սովորույթն էր, վեն մին սիի ներդրումը թատերարվեստում չնչին էր: Փաստորեն, նրանք երբեմն նույնիսկ ազատվում էին ցանկացած գրավոր տեքստից: Դերասաններին ու դերասանուհիներին պարզապես ասում էին սյուժեն եւ թե ինչ համապատասխան դերեր պիտի մարմնավորեն: Դա հանգեցրեց գրականությունից վեն մին սիի բաժանման, եւ առավել բարեխիղճ ան-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

դամները հեռացան խմբից ու դարձան դրամայի լուրջ ուսումնասիրողներ, ինչպես, օրինակ, Օու-յան Յու-ցյանը, որը հետագայում դարձավ դերասան, ռեժիսոր եւ դրամատուրգ: Մյուսներն անցան էստրադային ներկայացումների եւ զավեշտախաղերի, որ դեռ պահպանվում են ժամանակակից Շանհայում, բեմադրելով անվերջ «սերիալներ», ինչպիսին «Հրդեհ Կարմիր շուշանի արբայության վրա» սերիալն է՝ բեմի շուրջ ճախրող կիսաստվածներով: Այդ ժամանակահատվածում չին դրամատուրգները, թվում էր, տատանվում են խաչմերուկներում: «Ազգային դրամա» դպրոցը պնդում էր, որ մեր ավանդական օպերային երգեցողությունն ու խորհրդանշական բեմանկարը աշխարհում, իրոք, եզակի էին: Դրանք տպավորիչ էին եւ ռիթմիկ, մինչդեռ արեւմտյան ռեալիստական թատերգությունները պարզապես նմանակող ցուցադրություններ էին: Մյուս բեւեռում նրանք էին, ովքեր հին ծելը վերացնելու կողմակից էին: Նրանք պնդում էին, որ երգեցողության միջոցով հնարավոր չէ արտահայտել ժամանակակից մարդու բարդ զգացմունքները, եւ որ չափազանց շատ ֆեոդալիզմ կա ավանդական ընդունված դրամայում: Խորագետ մի քննադատ կտրուկ նշում էր, որ հանրապետություն հիմնելուց առաջ մենք պետք է տապալեինք կայսրությունը: Հետեւաբար, նոր դրամա ստեղծելուց առաջ երկրի բոլոր օպերային թատրոնները պետք է անհապաղ փակվեն: Բայց կար նաեւ երրորդ մի խումբ: Այդ խմբի անդամները, ընդունելով հանդերձ, որ ավանդական օպերաները հակասում են ռեալիզմի ոգուն, որը ժողովրդական գրականության ողնաշարն է, կարծում էին, որ ավանդական դրաման պետք է պահպանվի՝ որպես որոշակի հանդիսատեսի համար ժամանցի ձեւ եւ որպես պատմական արվեստ՝ ուսանողների համար: Այս տեսակետն առաջին անգամ արտահայտել է հանգուցյալ պրոֆեսոր Լյու Ֆուն, ով պետք է որ տեսած լիներ արեւմտյան օպերայի փառահեղ նվաճումները Փարիզում: Academia Sinica չինական ակադեմիան եւ մշակութային այլ հաստատություններ շատ բան են արել պահպանելու եւ զարգացնելու համար ավանդական այս արվեստը: Մեյ Լան-ֆանի այցելություններն Ամերիկա եւ Մոսկվա եւ Չեն-ցյուի այցելությունները Եվրոպա՝ մեծ իրադարձություններ էին: Բայց ժամանակակից գրական դրամայի հեղինակավոր հաղթանակը որոշակիորեն հաստատվել է:

Վեն մին սիի մայրամուտը երկրին արժեքավոր դաս տվեց: Որպեսզի նոր դրամայի համար ամուր հիմք կառուցվեր, մեզ անհրաժեշտ էին դրամատուրգներ: Չախողումը հաղթահարելու մեկ այլ միջոց էր դրաման ամբողջովին ոչ պրոֆեսիոնալ դարձնելու փորձը, այնպես, որպեսզի զատվե-

ին էստրադային բեմից: «Մենք հրաժարվում ենք ղեկավարվել դրամարկ-դից», - հանդիսավոր հայտարարեցին նրանք: Շատ պիեսներ գրվել են Սյուն Ֆու-սիի, Չեն Տա-պեյի և Հուն Շենի կողմից: Մեծ ձեռքբերում էր Գո մո-ժոյի «Երեք ապստամբ կանայք» գործը, որ համատեղում էր ժամանակակից գաղափարները պատմական թեմաների հետ: Հանգուցյալ Սյույ Չժի-մոն իր կնոջ հետ համատեղ հանդես էր գալիս մի հրաշալի խորհրդանշական պիեսում «Պյեն Կուն լեռը»: Տին Սի-լիսի կատակախառն երգիծական թատերգություններում զգացվում է Ա. Ա. Սիլիի ազդեցությունը: Իսկապես, թատերգակների մեծ մասը, մտադրված լինելով «հիմնահարցային պիես» ստեղծել, իրենց հանդիսատեսից միակամայն անկախ էին աշխատում: Սիջավայրը հաճախ ներկայացնում էր սոցիալական դժոխքի անկյուններից մեկը՝ բազմամուսնական մի ընտանիք կամ զազրելի տա-նուտեր ունեցող մի գյուղ: Հաճախ պիես՝ նշանակում էր բողոքի ճիչերի ալիք և դժգոհություն սոցիալական չարիքների դեմ: Այսօր՝ նախադրությունը և տվյալ սոցիալական չարիքի սառը, բայց ոչ դրամատիկ վերլուծու-թյունը, որ հաճախ քարոզի ձեռքում: Ամենապարզունակները շատ հա-ճախ ավարտվում էին այսպես. հայտնվում էր մի իդեալիստ՝ ձեռքին վառ-վող ջահ, ասես իր փայլող աչքերով նայում էր հեռու, բայց վարդագույն ապագային:

Այդ չհասունացած փուլում դրամատիկական կրթությունն արդեն առա-ջընթաց էր ապրում: «Նոր Չինաստանի դրամատիկական ընկերակցու-թյունը» Պեկինում երկու հազար անդամ ուներ՝ քառասունութ մասնաճյու-ղերում: Պեկինի Գեղարվեստի ուսումնարանը իր թատերական բաժինը հիմնադրեց 1925 թվականին, և ժեն Յի դրամատիկական դպրոցը թեև տասն ամսվա կարճատև էր կյանք վայելեց, բայց թերևս առաջին դպրոցն էր, որ հատուկ դրամատիկական և թատերական արվեստին էր նվիրված: Այս արժանավոր փորձերը սերմեր ցանեցին ապագա Փոքր թատերական շարժման համար: Այդ ժամանակ կրթվեցին ֆիլմերի մի շարք հաջողակ դերասաններ: Մեկ այլ հետաքրքիր իրադարձություն էր տղամարդկանց հետ բեմում կանանց հայտնվելու զանգվածայնությունը: Դա հավանաբար սկսվեց այն ժամանակ, երբ Հուն Շենը 1924-ին վերամշակեց «Լեդի Ուին-դերմիրի հովհարը»: Մինչ այդ Իբսենի «Տիկնիկների տան» Նորայի դերը միշտ տղամարդ էր խաղում, և մեծ պատիվ էր դերասանի համար, եթե նրան ընտրում էին այդ դերը խաղալու: 1926-ին Տեյմս Բարրիի «Սիրելի Բրուտոսը» հաջողության հասավ: Յգանսու նահանգի Կրթության խոր-հուրդն այնքան էր գոհ, որ հատուկ գովեստ հղեց բեմադրիչին՝ ընդունելով,

ԱՅԱՌ ՑՅԱՆ

որ դա «շատ արժեքավոր թատերգություն է՝ փիլիսոփայական նուրբ ենթատեքստերով, որը սովորեցնում է մարդկանց պահպանել իրենց ինքնատիպ անհատականությունը»:

Միտոպոլիսի թատերագիտներին հաջողվեց թատրոնն ազատել իր շահադիտական բնույթից, բայց նրանք նաև գրկեցին այն՝ ժամանցի ու զվարճանքի միջոց լինելու հնարավորությունից: Հարկ է ասել, որ միանման թատերախաղերի միապաղաղությունը ձանձրացնում էր նույնիսկ դրանց ամենախանդավառ պաշտպաններին: 1921 թվականին Վան Չժուսյանը տիաճ հարված ստացավ: Նա Շանհայում բեմադրեց «Տիկին Ուորենի մասնագիտությունը» ոչ ուսանողական հանդիսատեսի համար: Ներկայացումն ակնհայտորեն զովագրվում էր թերթերում, բայց նախնական վաճառքը հազիվ սովորական վարիետեի ներկայացման տոմսերի նախնական վաճառքի կեսի չափ էր: Եվ երբ երկրորդ գործողության մեջ տիկին Ուորենն սկսեց իր կյանքի պատմությունը պատմել Վիվիին, առջեի շարքերում նստած՝ շքեղ հագնված կանանցից մի քանիսը դուրս եկան թատրոնից, այն էլ՝ ոչ առանց դժգոհ քրթմնջոցների: Հումորի զգացումով օժտված բարեհոգի բեմադրիչը հետագայում այսպես էր վերլուծում իր հանդիսատեսի նման պահվածքը.

«Ոմանք ընդհանրապես չէին հասկանում, թե ինչ է տեղի ունենում բեմի վրա: Ոմանք հասկանում էին, բայց սյուժեն համարում էին անակնկալից զուրկ: Նրանց մի մասը բարոյական առարկություններ ուներ իր՝ տիկին Ուորենի դեմ, եւ կային ուրիշներ, որոնց դուր չէր գալիս, որ չափից դուրս շատ էին կրկնվում այնպիսի արտահայտություններ, ինչպես, օրինակ, սեռերի հավասարությունը: Նրանք, ովքեր տեսել էին պիեսը արտերկրում բեմադրված, մեր բեմադրությանը մաղթելու շատ բան ունեին»:

Որպես հետետություն՝ Վանն առաջարկում էր փոխգիջում: Նա ցանկանում էր ներկայացնել թատերախաղեր՝ «պարզ, բայց առաջադեմ գաղափարներով, բեմականացված բավականին բարդ սյուժեներով: Այդ կերպ կկարողանանք մտավորականությանը հավաստիացնել, որ ճիշտ ուղու վրա ենք, միաժամանակ ոչ մտավորական հանդիսատեսին էլ զերծ կպահենք ձանձրույթից հորանջելուց»:

Երբ 1926 թվականին Հեղափոխական բանակն իր Հյուսիսային արշավի ժամանակ հասավ Յանցզի, Գո Մո-ժոն եւ ուրիշ շատ դրամատուրգներ միացան հետետողականորեն աճող այդ ուժին: Դրաման կրկին ծառայեց որպես խոսափող: Դա ուղեկցվում էր Նան Գո շարժման անսահման ժողովրդայնությամբ: Դրա առաջնորդ Տյեն Հանը տասնյակ պիեսներ գրեց,

երբ Յանցզիով վեր եւ վար իրենց երթուղու ժամանակ ներկայացումներ էին տալիս: Դրանք հիմնականում շատ սենտիմենտալ թատերգություններ էին: Օրինակ՝ «Ողբերգություն լճի վրա» պիեսը խորտակված սիրո մասին էր: Հաճախ լուրեր էին պտտվում, թե այն մի շարք ինքնասպանությունների պատճառ է դարձել: Օսկար Ուայլդի «Սալոմեի» բեմադրությունը, խիզախ եւ տաղանդավոր դերասանուհի Յու Շանի խաղի հետ մեկտեղ, բացառիկ հաջողություն էր: Դրա խիստ երոտիկ շեշտադրումը յուրահատուկ գրավչություն ուներ այդ ժամանակի հակակոնֆուցիական երիտասարդ սերնդի համար: Բայց եւս մեկ օտարերկրյա թատերգություն կար, որը լայն ժողովրդականություն էր վայելում: Դա խորհրդային ռուսական «Սոնչա՛, Չինաստան» պիեսն էր Վան Սյանի կոտորածի մասին:

Ճապոնացիների ներխուժումը Մանչուրիա 1931 թվականին մեծ դեր ունեցավ Չինաստանում դրամայի զարգացման գործում: Հակաճապոնական ամեն ինչի հանդեպ կառավարության խիստ արգելքի ներքո՝ թատերագիրներն այդ ժամանակ ստիպված էին իրենց հայրենասիրությունն արտահայտել քողարկված ձևով: Շանհայի ինքնագործ թատրոնը բոլոր առումներով մեծ հաջողություններ ունեցավ բեմում: Չեն Բայչենի «Տայպիկների ապստամբությունը» միանգամայն բացառիկ էր: Բեմադրվում էին ևս եւ արեւմտյան մի շարք պիեսներ, ինչպես, օրինակ, Գոգոլի «Ռեվիզորը» եւ Ա. Օստրովսկու «Փոթորիկը»: «Ումեո եւ Տուլիետ»-ի նրանց բեմադրությունը նույնպես ուշագրավ էր: Անցած տարիներին մի շարք չինացիներ մեկնել էին արտերկիր՝ ուսումնասիրելու բեմական ձեւավորում եւ թատերական տեխնիկայի այլ ճյուղեր: Ինքնագործ թատրոնը համախմբվեց ու կայացավ նրանց ջանքերով: Նրանց հաջողության մեջ ամենազարմանալիս այն էր, որ պիեսները հիմնականում բնագրով էին ներկայացվում, բացառությամբ երկխոսության, որը չինարեն էր մատուցվում: Համեմատած «Տիկին Ուորենի մասնագիտությունը» ներկայացման հանդիսատեսի հետ՝ թվում էր՝ չին թատերասերները շատ ավելի ընկալունակ էին դարձել օտարերկրյա ձեւերի նկատմամբ:

Բայց ամենահիմնավոր առաջընթացն, այնուամենայնիվ, դրամատուրգիայում է: Այս առումով անկասկած է, որ Յաո Յույը հասավ զագաթնակետին: Լինելով նշանավոր ինքնագործ դերասան Հյուսիսային Չինաստանում եւ գրականության դասախոս՝ նա կարողանում էր հաջողությամբ համադրել դրամատուրգ-ռեժիսորի վարպետությունը գիտնականի իմացության հետ: Բացի այդ, նա իր ժամանակի ամենաինքնատիպ եւ կարկառուն գրողներից մեկն է: Պեկինի Ցինհուա համալսարանում նա հիմնավոր գի-

ԱՅՊՈՑԱՆ

տելիքներ ձեռք բերեց Եվրոպական դրամատիկական ավանդույթների վերաբերյալ՝ հունական ողբերգություններից մինչև Յուզին Օ'Նիլի քնարական ռեալիզմը: Նրա «Ամպրոպը», որ լույս տեսավ եւ բեմադրվեց 1936 թվականին, հիշարժան իրադարձություն էր: Տեխնիկապես այն առաջին լիաձավալ թատերգությունն էր՝ նախաբանով ու վերջաբանով: Բայց այդ անսովոր ողբերգության դրամատիկ ուժն էր, որ աննախադեպ ժողովրդականություն բերեց նրան: Այդ պիեսի հարյուրավոր բեմադրություններ ներկայացվեցին Թափառող դրամատիկ ընկերության կողմից, եւ այն շատ շուտով հարմարեցվեց Ֆիլմերի համար: Դրան հաջորդեցին «Արեւածագը» եւ երկու այլ պիեսներ: Ցառ Յույը խորապես բարեխիղճ դրամատուրգ էր: Նա ցույց տվեց, թե ինչպես կարելի է օգուտ քաղել Եվրոպայից առանց Եվրոպացվելու: Այդուհանդերձ նրան լիովին չէր հաջողվում համատեղել իր գեղարվեստական գիտակցությունը հասարակական գիտակցության հետ: «Ամպրոպ»-ում ճակատագրապաշտ լինելու համար մեղադրվելուց հետո նա արդյունավետ կերպով ընդգծում էր իր լավատեսությունը «Արեւածագի» վերջին գործողության մեջ, որտեղ բանվորները երգում են, երբ արեւը ծագում է: Բայց կերպարակերտման մեջ անգամ նա անգերազանցելի հնարագիտություն է ցուցաբերել:

Երբ 1937 թվականին պատերազմ բռնկվեց ճապոնական ագրեսիայի դեմ, դրաման շուտափույթ կերպով ընդգրկվեց հրապարակախոսության առաջնադիրքերում եւ կրկին գործածվեց որպես խոսափող: Հայրենասիրական խաղացանկ ունեցող ընկերությունները եւ Չինաստանի Ներքին գործերի նախարարության քաղաքական բաժանմունքի դրամատիկական բաժինը շրջագայում էին թիկունքի գյուղերում եւ քաղաքներում: Բեմարվեստում փորձարարություն կատարելը սահմանափակվեց, իսկ մաքուր դրամա գրելն այնքան էլ չէր խրախուսվում: Դրաման որպես արդյունավետ զենք էր կիրառվել նաեւ Չինաստանում ազգային ճգնաժամի շրջանում 1911 թվականի հեղափոխությունից հետո: Պատերազմի օրերին դրամայի գործառույթն էր՝ արթնացնել եւ ուղքի հանել մարդկանց: Զանի որ մեծ մասամբ բացօթյա ներկայացումներ էին տեղի ունենում, գործնական պատճառներով նախընտրելի էին ավելի քիչ բեմական զգեստներով եւ առանց բեմական ձեւավորման թատերախաղերը: Դա հանգեցրեց փողոցային թատերախաղերի ստեղծմանը, որոնցից ամենահայտնին «Մտրակո ցա՛ծ դիր» պիեսն է: Այդ բախտորոշ պահին երկրին ծառայելու համար դրամատուրգները ոչ միայն զոհաբերում էին իրենց տեխնիկական միջոցները, այլեւ հաճախ ստիպված էին կյանքները վտանգի ենթարկել՝ ճապոնացի-

ների հետ ռազմաճակատի գծից անդին հյուրախաղերի ժամանակ: Բայց գիտակցում էին, որ իրենցից է կախված՝ երկրի պարտիզանական տարածքներում ապրող շինացիների հետ կապ պահպանելու գործը: Չին գյուղացիների համար գրված՝ տիկին Դին Լինի այդպիսի մի պիես թարգմանվեց անգլերեն եւ բեմադրվեց Սանտիսիկետանում, Բենգալիայում Թագորի կողմից հիմնադրված Խաղաղության համալսարանում: Պիեսը կոչվում է «Վերամիավորում»: Պրոֆեսոր Աարոնսոնը՝ պիեսի բեմադրիչը, ներկայացումից հետո մի հողված գրեց, որտեղ ասում է. «Մենք այս պիեսն ընտրել ենք ոչ միայն իր քաղաքական բովանդակության համար: Պիեսն ունի մարդկային խիստ մեծ հետաքրքրություն: Դա մի դրվագ է ժամանակակից Չինաստանի կյանքից: Դա կարող է տեղի ունենալ ամեն օր՝ ճապոնացիների կողմից գրավված տարածքներում: Մենք չենք ուզում ատելություն հրահրել ճապոնացիների հանդեպ, բայց հույս ունենք այս կերպ բոլորի համար ակնհայտ դարձնել, թե ինչպես ագրեսիան կարող է կործանել մարդկության բարօրությունը»:

5. ԷՍՍԵ. ՀԱՏԻՉ ԿԱՄ ԹՈՒՐ

Ժամանակակից գրական ստեղծագործությունների բոլոր ձևերից չինական գրական ավանդույթին ամենամոտը Էսսեն է: Այս դիտարկումն ամենեւին էլ հաճոյախոսություն չէ: «Էսսե» բառը չինարեն կոչվում է կամ *սան վեն*, որ նշանակում է ազատ, արձակ, ոչ չափաժողովրդական ստեղծագործություն, կամ *սյաո պին վեն*, որ նշանակում է փոքր գնահատանք. երկուսն էլ ենթադրում են ճշգրիտ ձեւի բացակայություն: Չինական պոեզիայում Էպիկական ժանրի պոեմներ չկան, եւ մեր ազգային երաժշտությունը հաճախ բնութագրվել է որպէս մեղեդի առանց հարմոնիայի: Մեր վեպերից շատերը հակված են փաստագրական լինելու. դրանք ավելի շատ արձանագրում են կյանքը, քան վերարտադրում այն: Չինական գրականության մեջ ճարտարապետական գեղեցկության հստակ պակաս կա. գուցե մեղավորը մեր երկրի հարթ տարածությունն է, գուցե ստոիկյան կոնֆուցիականությունը: Էսսեն, սակայն, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է անհատապաշտության այն տեսակին, որ դարեր շարունակ մասամբ ուսուցանվել է դաոսականության կողմից: Մեր առաջատար Էսսեիստներից մեկը ժամանակակից Էսսեն սահմանում է որպէս «անձնական գրականության բուն էության խտացում՝ ստեղծագործողի հոգու խորքում ընկղմված բոլոր տարրերով»: Այնպէս որ՝ չին գրողն Էսսեում իրեն լինովին զգում է ինչպէս տանը:

Գրական ստեղծագործության այս ազատ ձեւը երբեմն համարվում է «այբբենարան» սկսնակ գրողի համար: Երբ Տյանցզինում, Շանհայում եւ Հոնկոնգում «Տակունպաո» թերթի գրական հավելվածն էի խմբագրում, ամեն օր մեծ թվով ձեռագրեր էի ստանում: Այդ ձեռագրերի կեսից ավելին սովորաբար Էսսեներ էին, կարճ ակնարկներ կամ «ռեպորտաժներ», ինչպէս հետո մոդայիկ դարձավ անվանելը: Դրանք հիմնականում օրվա դեպքերի եւ իրադարձությունների նկարագրություններ էին, իրենց բնույթով՝ հաճախ հիշողություններ: Հավակնոտ վիպասանի համար դրանք ոտք դնելու հոյակապ հենարաններ էին, ինչպէս մանրանկարչությունն է՝ լայնածավալ կտավի վրայի նկարի համար: Բայց երբ մոդայիկ դարձան, արդեն մղում էին պարապ դատարկաբանության: Հիմա, պատերազմական ժամանակ, քիչ գրողներ կարող են նստել եւ կենտրոնանալ վեպի վրա, որը մարմնավորելու համար պահանջվում է խորաթափանցություն եւ երեւակայություն: Հետեւաբար, ռեպորտաժը կարծես թէ գրելու ամենատարածված ձեւն է ներկայումս: Դա ոչ միայն հարմար ձեւ է գրողի համար,

այլ նաեւ հեշտ ընթերցվող է հասարակ մարդկանց համար: Երբ էստեն պետք էր կրճատել, առաջացավ «պատի գրություն» տերմինը:

Դասական գրականության մեջ էստեի առավել տարածված ձեւը «նութեր» կամ «գրառումներ» տեսակն է եւ այն այսօր էլ մնում է սիրված: «Ձանազան նութեր լեռնային ճամփորդության մասին» գործում գրողը կարող է ազատ գրառումներ կատարել իր թափառումների, իր հետազոտած քարանձավների մասին, որոշ չկանխամտածված դիտողություններ անել իր կարդացած գրքի կամ մտամփոփ քայլերիս իրեն համակամ ինչ-ինչ հպանցիկ գաղափարների ու մտապատկերների մասին: «Նամակները» զանազան գրվածքների մեկ այլ տեսակ էին, քանի դեռ տիկին Պին Սինը չէր գրել «Նամակներ իմ երիտասարդ ընթերցողներին» գործը: Դրանք հայեցողական էին ու քնարական եւ գրված էին կանխամտածված պլանով: 1924 թվականին Յոյ Տա-ֆուն արտառոց ու ոչ ստանդարտ ձեւով գրեց «Բաց նամակ գրական երիտասարդությանը», որն իրականում նուրբ երգիծանք էր: Նա բանիմացորեն վերլուծության էր ենթարկել ուսումնական հաստատության շրջանավարտի վիճակը, որը չէր կարողացել աշխատանք գտնել, ինչն այն օրերին շատ սովորական տհաճ իրվիճակ էր: Հատվածներից մեկում նա պերճախոս կերպով հորդորում էր թալանով զբաղվել, քանի որ «այն, ինչ ներկա հասարակության համար կողոպուտ է, քո արդար բաժինը կլինի ապագա հասարակության մեջ»:

Նույնիսկ հայրենական այս արվեստում Արեւմուտքից ստացած ազդեցությունը ամբողջությամբ չպետք է անտեսել: Հանգուցյալ Լյան Յոյ-չունը՝ «Անգլիական ընտիր էստեների» թարգմանիչը, փոխառել էր Ֆերոմ Զ. Ֆերոմի «Պարապ մարդու պարապ մտքեր» վերնագիրը եւ այդպես վերնագրել իր սեփական էստեների ժողովածուն, որոնք ակնհայտորեն կրում էին «Էլիայի» ազդեցությունը: Լի Կուան-տիենը Վ. Հ. Հադսոնի երկրպագուն էր եւ «պարզ ու մտերմիկ աշխարհի» սիրահար: «Արձակ բանաստեղծությունների» նորամուծությունը միանշանակորեն Տուրգենեւն էր կատարել: Նույնիսկ Լու Սինը, որը չափազանց ինտելեկտուալ էր թվում քնարական ստեղծագործություններ գրելու համար, չէր կարող չորդեգրել այդ ձեւը իր «Վայրի խոտերի» համար: Բողերի ազդեցությունը երիտասարդ չին էստեիստներին տարավ դեպի ավելի բարդ լաբիրինթոսներ:

Չինաստանում երկու տիպի էստեիստներ կան՝ ճգնավոր եւ թափառող ասպետ: Ճգնավոր էստեիստն իր գրիչը գործածում է այնպես, ինչպես քանդակագործն իր հատիչը: Նա հաճախ եսակենտրոն է եւ դյուրագագ: Հոգու խորքում հավանաբար նարցիսիստ է: Նա զգացմունքայնորեն է

ԱՅԱՌ ՑՅԱՆ

ներկայացնում բամբուկե խրճիթը, ուր ապրել է մի քանի տարի առաջ, կամ սգում է այն թռչնի մահը, որն իրեն հաճույք է պարգևել: Թեմայի կյուրժը հաճախ պարզունակ անձնական հիշողություններն են, քնարականորեն հյուսված, մարդկային կարոտախտի բուն պտուղն ու շարժիչ ուժը: «Ժեն Յգյան Շի»-ի առաջին համարում, ամսագիր, որ հիմնականում էստեներ է ներկայացնում, խմբագիրը՝ դոկտոր Լին Յույ-տանը հայտարարում էր, որ իր ամսագիրը կընդգրկի բոլոր թեմաները՝ «անձայրածիր, ինչպես տիեզերքը եւ անշան, ինչպես ճանճը»: Մի քննադատ նկատել էր, որ նրանք ճանճը բռնել էին, բայց տիեզերքն ամբողջովին բաց թողել: Թափառող ասպետի համար էստեն մի պարզ միջոց է: Այն թուր է, երբ թշնամին մոտ է, եւ սիգակ, երբ նա հեռու է: Մինչ հատիչով լավ տաշում են ու փորագրում, թրի գլխավոր արժանիքը սուր լինելն է: Քննադատական էստեները, սոցիալական թե գրական թեմաներով, միշտ հեզկոտ-ճաղրական բնույթ ունենին: Գոյություն ունեն գնահատող էստեներ, բայց երբ էստեն գործածվում է որպես զենք, այն պետք է թիրախ ունենա: Հետաքրքրական է, որ էստեների այս երկու տիպերը լավագույնս ներկայացված են այն գրողների կողմից, ում վիճակված էր եղբայրներ լինել, այն է՝ Չժոու Յզո-ժենի եւ Լու Սինի :

Լինելով Հեյոք Էլլիսի երկրպագու, տքնաջան թարգմանիչ եւ հրաշալի գիտնական՝ Չժոու Յզո-ժենն սկսեց որպես ժամանակակից խոովարար՝ մանդարինի թիկնոցով, հանգիստ, հանդարտ, բայց սկզբում լիովին աջակցում էր առաջադեմ ամեն բանի: Նա մեծապես նպաստեց, որպեսզի Չինաստանում ծանոթանան քիչ հայտնի երկրների գրականությանը՝ Բալթիկայից մինչեւ Բալկաններ: Բայց շուտով անհատապաշտությունը նրան մղեց դեպի կատարյալ ճգնաժամի կենսակերպ: Իր հանրահայտ «Դառն անձրեւի արվեստանոցից» նա գրում էր որպես հնությունների սիրահար, գինու, թեյի եւ հնագույն մանրանկար-ձեռագրերի գիտակ: Այն ժամանակ, երբ ամբողջ ազգը սաստիկ զայրացած էր ճապոնացիների՝ Մանջուրիա ներխուժումից, նա իր համար փոքրիկ մի օագիս կառուցեց՝ անցյալի բույր ու շնչով շրջապատված: Նրա համար կյանքի կարեւորությունը դարձել էր պարզապես հուշանվերներ հավաքելը: Նա մեկն է այն ընդգողներից, ովքեր, ցավոք, հնագանդվեցին բիրտ իրականությանը: Միջին տարիքի մարդու համար դա կարող էր հանգիստ ու հարմարավետ կահանջ լինել, բայց դրա ազդեցությունը չին երիտասարդության վրա ծայրաստիճան վնասակար էր ու անտաճիկ:

Լու Սինի՝ հեռմահու լույս տեսած երկերի լիակատար ժողովածուում

գեղարվեստական գործերը չորս հատոր են կազմում, մինչդեռ քննադատական էսսեները՝ տասնչորս հատոր են: Որոշ քննադատների կարծիքով Լու Սինն իր հանճարը զուր վատնել է այդ էսսեները գրելու վրա: Եվ քանի որ դրանց մեծ մասի թեման անցողիկ հետաքրքրություն ունի, կասկածելի է, թե որքան կապրեն դրանք: Բայց Լու Սինը երբեք էլ անմահության չէր ձգտում այդպիսի ստեղծագործություններում: Լինելով իր ժամանակի հոգեւոր շարժիչ ուժը՝ նա չէր կարող զապել իրեն եւ չհարձակվել բոլոր այն երեւոյթների ու մարդկանց վրա, որ համարում էր փտած ու գարշելի: Քննադատական էսսեների իր առաջին իսկ հատորը՝ «Տաք քամին», մի շարք կարճ, խայթիչ էսսեներ էր պարունակում, որոնք ծաղրի էին ենթարկում սևահավատությունը, մտավոր ճղճիմությունը, հարճեր պահելն ու արտամուսնական կապերը եւ մեր ազգային կյանքի բոլոր մերժելի կողմերը չանրապետության սկզբի տարիներին: Նա դատապարտում էր այն գրողներին, որոնք վարդագույն պատկերներ էին նկարում խավարի մեջ, որոնք «քաջություն չունեն դիմակայելու իրականությանը, գոյություն ունեցող հասարակության մեջ իշխող բարքերին, բայց ամոթխած ողջունում են կաշաղակին (հաջողության չինական խորհրդանշանին) եւ խուսափում են բվից (սպառնալիքից)՝ ընտրելով միայն իրենց համար ընդունելի ու հաճելի բաներ, որպեսզի իրականությունից շեղեն իրենց»: Լու Սինը չին գրողներից պահանջում էր քաջություն՝ «ծիծաղելու, արտասվելու, հայհոյելու եւ հարվածելու: Այս անիծյալ հասարակության մեջ դրանք բոլորը էսսեների թեմաներ են»: Նրա գործերը ներկայացնում են ողջամիտ դատող, վերլուծական եւ երգիծական տեսակները: Դեկորատիվությունն ու քնարակաւությունն այն բաներն են, որոնք նա ամենից շատ էր արհամարհում:

«Այս ժամին, երբ հողմն է շառաչում, եւ վագրերն ու գայլերն ուզում են խլել մեր կյանքը, ո՛վ է տրամադիր՝ գնահատել բուստե ականջօղը կամ գմբուխտե մատանին: Նույնիսկ եթե մեր ժողովուրդը տեսողական հաճույք է ցանկանում, մարդիկ ուզում են տեսնել մեծ, ամուր առանձնատներ՝ հաստատուն կանգնած հողմ ու փոթորկի դիմաց»: Կասկած չկա, որ ինտելեկտուալ ոգով գրված քննադատական նմանատիպ էսսեներն այդ ժամանակից դարձել են գրության շատ սիրված ու ընդունված ձև: Գրական ամսագրերի մեծ մասն առաջին էջում ունի մի քանի այդպիսի «խմբագրական պարբերություն», իսկ Լու Սինի մահից հետո Շանհայում երեւան եկավ երկամսյա մի հանդես, որ կոչվում էր «Լու Սինի քամի»: «Քամի» բառը չինարենում նաեւ «ոճ» բառի փոխաբերական իմաստն ունի:

Էսսեի դասակարգումը կարող է խիստ նման լինել նկարչության դասա-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

կարգման, ինչպես, օրինակ, բնապատկեր, մարդկային կերպարանքներ, ծաղիկներ, թռչուններ եւ միջատներ, բացառությամբ «գաղափարների»։ Այդ թեմաներից շատ սիրված է բնապատկերը։ Չինաստանի չորս անկյուններում եւ գրեթե բոլոր լճային շրջաններում շատ սրբազան լեռներ կան։ Հրաշալի շատ էստետներ են նվիրված այդ լեռներին՝ կամ չինական թանաքով, ինչպես, օրինակ Յե Շաո-ցյունի եւ Չժու Յգե-ցինի գործերը, կամ արեւմտյան ջրաներկով, ինչպես, օրինակ, Սյույ Չժի-մոյի, Լու Լիի եւ Լի Նիի գործերը։ Չին-ճապոնական պատերազմի բռնկվելուց առաջ էստետները հակում ունեին դեպի «սյուրռեալիզմը»։ Այդպիսին էր Հե Չի-ֆանի «Գունավոր երազը», որը 1936 թվականին արժանացավ «Տակունպաոյի» գրական մրցանակին։ Բայց ընդհանուր առմամբ՝ դրանց մեծ մասը շատ նման է մանրանկարների, այսինքն՝ պարզ ուրվանկարն է այն ամենի, ինչ մարդ տեսնում է հիշում կամ մտածում։

Դեկորատիվ գեղեցկությունը միշտ եղել է ավանդական «բյան» էստետների գլխավոր արժանիքներից մեկը։ Հե Չի-ֆանի «Գունավոր երազում» կարելի է տեսնել ազգային արվեստի եւ արտերկրից ներմուծված «արձակ բանաստեղծությունների» միաձուլումը։ Նա փիլիսոփայության ուսանող էր, եւ իր էստետները բնականաբար խիստ հայեցողական ուղղվածություն ունեն։ «Տակունպաոյի» գրական հավելվածում հրապարակված ինքնակենսագրական մի էստեում, որ վերնագրված է «Էստե եւ ես», նա խոստովանում էր, որ քնարական արձակի մի նոր ձեւ է որոնում ստեղծված մաքուր ներդաշնակությամբ ու գեղեցկությամբ։ «Գունավոր երազի» նրա նախաբանն այսպես էր սկսվում.

«Արդյո՞ք մեր տեսողական եւ լսողական զգայարանները ողորմելիորեն սահմանափակ չեն»։

«Այո։ Ամռան մի օր ազարակում ես քայլում էի գույները չգանազանող՝ դալտոնիկ մի մարդու հետ։ Մեկ էլ ճանապարհից կարմիր մի ծաղիկ քաղեցի նրա համար եւ ասացի, որ կապույտ է»։

«Եվ վշտացա՞ր նրա համար»։

«Ո՛չ։ Իրականում ի՛նձ համար ցավ ապրեցի»։

«Ուրեմն, պետք է հավատաս խորհրդավոր առեղծվածներին»։

«Ես իրոք սիրում եմ անհավանական բաներ երեւակայել՝ գոյություն չունեցող ինչ-որ մարդիկ կամ քարտեզի վրա չգտնվող ազգությունների անուններ։ Օրեր ու գիշերներ շարունակ ես ինձ լիովին կորցրել եմ որմնանակարի մեջ, մտել եմ այնտեղ եւ քայլել նրա միջով։ Պատը ճերմակ էր, բայց նախամուտքը ոսկուց էր։ Չգիտեի՝ դա դեպի Դրա՞խտ, թե՞ դեպի

Դժոխք տանող դուռ էր, բայց մի անգամ այն բացվեց ինձ համար»:

«Ուրեմն, կյանքի հանդեպ քո աշխարհըմբռնումը... »:

«Կյանքում ես միայն նրա արտահայտություններով եմ շարժվում: Ասես երկնքում սահող ամպի մի ծվեն լինեմ: Ես սիրում եմ դա ներկայացնել որպես իմ բոլոր էստետների ծանոթագրություն...»:

Գրաքննադատ Ուլյան Յզինը կոչում էր, որ «Հեի փորձը՝ իր ստեղծագործություններին ստիպել պոեզիայի նման պարել, փոխանակ արձակի պես քայլելու, սխալ էր: Այդ փորձը միայն ստիպում էր, որ դրանք անշնորհք հնչողություն ունենան: «Նա իր էստետներում չափազանց առատորեն է օգտագործում արհեստական տարրերը: Մենք կարող ենք երբեմն հարբել նրա գունանյութերի, զարդանախշերի եւ ակնարկումների բազմազան շարքից: Բայց միայն բառերի հմայքը չի կարող ստեղծագործությանը կենդանություն հաղորդել: Նա ինքն է ընկել բառերի լաբիրինթոսը: Հետեւաբար, չունի այն, ինչ մենք ամենից շատ ենք ակնկալում իրենից, այսինքն՝ կենսունակություն: Նրա գործերը կարդալիս մտածում եմ պրեռաֆայելիտ բանաստեղծների վերաբերյալ մի կենսագրի դիտողության մասին՝ խեղճ շքեղ թեւեր»:

Բայց երկար չտեսեց, որ Հեն ծեռք բերի այդ կենսունակությունը: «Գունավոր երազի» լույս տեսնելուց մեկ տարի անց բռնկվեց պատերազմը: Հեն ստիպված էր լքել Տյանցզինը, որտեղ ուսուցանում էր: Նա վերադարձավ տուն՝ Սիչուան: Նրա «Հարազատի վերադարձը. Օրագիր» ստեղծագործության ոճը առավել պարզ էր ու հասկանալի: «Կյանքի արտահայտությունների» փոխարեն, որ թերեւս միայն վերացական կողմն էր կշռակում, նա տեսավ անգիտակ գյուղական հեքիմներին, անարդարացիորեն շահագործվող գյուղացիներին եւ պարզեց, որ «մարդկանց կողմից ձեւավորված այս համայնքն ըստ էության կիսախավար, կեղտոտ ու ճնշող մի փոքրիկ դժոխք է: Ես պետք է գիրք գրեմ, որպեսզի ապացուցեմ, որ մյուս կենդանիները կարող են ավելի լավ կյանքով ապրել, քան մենք՝ մարդկային արարածներս: Իդեալները, սերը, գեղեցկությունը եւ ուրախությունը գրքերում ենք միայն գտնում: Դրանք մեզ ստիպում են տխուր ժամանակ զգայուն լինել եւ արտասվել, երբ երջանիկ ենք: Բայց դրանք հազվադեպ բաներ են իրական մարդկային աշխարհում: Մանուկ ժամանակ ես սովոր եմ եղել աղքատության ու թշվառության, բայց գրքեր կարդալով պատրանքի ոսկե մի դուռ բացվեց իմ առջեւ: Դրանից հետո անում էի այն ամենն, ինչ կարող էի, որպեսզի խուսափեմ եւ մոռանամ այս աշխարհի իրողությունները: Ես դեզերում էի անգո մի աշխարհում: Ամեն երազից հե-

ԱՅԱՌ ՑՑԱՆ

տո արթնացում է պետք, բայց իմ արթնացումը խիստ կտրուկ ու անսպասելի է գալիս»:

Կարճ ժամանակ անց «Գունավոր երագի» այս հեղինակը ռազմաճակատ էր ուղեկցում քաղաքական աշխատողների մի խմբի: Նրանք ոտքով կտրեցին անցան մի քանի հազար մղոն հյուսիսային Չինաստանի հարթավայրի միջով՝ տեսնելով ավելի շատ թշվառություն, ավելի շատ տխմարություն եւ չին գյուղացիների աննկարագրելի դիմացկունությունը, որոնց հերոսականությունից ու տոկունությունից ոչ մի զգայուն գրող չէր կարող չհուզվել: Նա վերադարձավ մի հատորով, որ կոչվում էր «Նոր Շանսի»: Ոճի եւ աշխարհայացքի փոփոխությունն էլ ավելի ապշեցուցիչ էր, քան նրա «Օրագրում»: Նրա լիակատար վերափոխումը խորապես հատկանշական է ժամանակակից չինական գրականության վրա ճապոնական ներխուժման ազդեցությանը: Պատերազմն ամրապնդեց մեր գրողների ոգին եւ սերտ ու միաձույլ դարձրեց նրանց կապը հարազատ հողի ու ժողովրդի հետ:

6. ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՆՓՈՓՈՒՑ ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹՅՈՒՆ

1919 թվականի սկզբին պրոֆեսոր Լո Յոյա-լունը գրեց, որ գրական հեղափոխությունը արեւմտյան մշակույթի հետ Չինաստանի շփման ուղղակի արդյունքն է: Պատմական հեռանկարում դա անհերքելի ճշմարտություն է: Տասնիններորդ դարի եվրոպական մտածողների գրվածքները Չինաստանում անհատական զարթոնքի խթան հանդիսացան: Արեւմտյան իշխանությունների կողմից մեզ պարտադրված անհավասար պայմանագրերը բորբոքեցին չինական ազգայնականությունը: Սրանք են ըստ էության ներքին եւ արտաքին հիմնական փոփոխությունները, որ տեղի ունեցան Չինաստանում վերջին հիսուն եւ ավելի տարիների ընթացքում: Ավանդական ոճի դեմ ընդվզում հրահրելու գործում կենսականորեն կարեւոր ոգեշնչման աղբյուր էր Վորդսվորդի «Քնարական բալլադների» առաջաբանը: Այն պաշտպանում էր հասարակ ժողովրդի լեզուն, բառուբանը: Բայց ամենից առաջ, Չինաստանի շատ ժամանակակից գրողներ արեւմտյան վարպետների երկրպագուներ են: Նրանցից շատերը որեւէ օտար լեզու չգիտեն: Հետեւաբար, արեւմտյան գրականության թարգմանությունը կոր շարժման սկզբից ի վեր առաջնային կարեւորություն ունեցող մի գործ էր:

Անգլիական գրականության ազդեցության հետ մեկտեղ՝ Չինաստանում անգլերենի անժխտելի ժողովրդայնությունը օգտակար արդյունքներ է ունեցել: Եվրոպական շատ գլուխգործոցներ, որոնք այլ կերպ անհասանելի էին նույնիսկ չին թարգմանիչներին, ինչպես, օրինակ, Իբսենի եւ Անդերսենի գործերը, թարգմանվեցին իրենց անգլերեն տարբերակներից: Հաճախ է ասվել, որ ռուսական վեպերը Չինաստանում բացառիկ ժողովրդականություն են վայելում: Դրանք, անկասկած, մեր գրողների վրա մեծ ազդեցություն են գործել: Դա դժվար չէ հասկանալ: Տասնիններորդ դարի ցարական Ռուսաստանը, իր ողջ սոցիալական հետամնացությամբ՝ ի հակադրություն բարեխիղճ, առաջադեմ մտավոր դասի, նման էր քաղաքացիական պատերազմի ժամանակ նույն իրավիճակում գտնվող Չինաստանին: Ռուսական վեպերը, հատկապես Տոլստոյի վեպերը, մեծածավալ, բնույթով բարոյախոսական, հաճախ ընտանեկան ողբերգությունների մասին պատմող, միշտ առանձնահատուկ գրավչություն ունեին չին ընթերցողների համար: Բայց վերջին երեսուն տարվա ընթացքում միայն երկու կամ երեք մարդ են եղել Չինաստանում, որ ռուս գրականությունը թարգմանել են բնագրից: Դրանց մեծ մասն անգլերեն տարբերակներից վերաթարգմանություններ են եղել, ինչպես, օրինակ, տիկին Կոնստանս Գարնեթի թարգմանություններից կատարվածները:

ԱՅՊՈՑՆԵՐ

Այս համառոտ ակնարկում ես ներկայացրել եմ ժամանակակից Չիլիի գրականության տարբեր բնագավառների վրա արեւմտյան ազդեցության մոտավոր ուրվագիծը: Մեր առանձին գրողներ կատարելապես կարողացել են սովորել եւ յուրացնել: 1935 թվականին լույս տեսած «Գրականությունը եւ ես» ինքնակենսագրական էսսեների ժողովածուում ներկայացվող հեղինակների գրեթե կեսը արեւմտյան որոշ վարպետների ինքնակոչ հետետրոդներ դուրս եկան: Սյաո Մո կեղծանունով հանդես եկող հայտնի թարգմանիչն արեւմտյան գրականության հետ իր առաջին շփումն այսպես է նկարագրել.

«Դա նման էր տարօրինակ, արտառոց մի աշխարհ այցելելուն կամ մի բաժակ կյուրասառ լիկյոր համոտեսելուն: Բացառիկ համն ու բուրմունքն ինձ գայթակղեց: Իմ առաջին շփումը Վաշինգտոն Իրվինգի «Ակնարկների գրքի» հետ էր: Ինձ շատ դուր եկավ նրա արտասովոր երեւակայությունն ու նուրբ եւ ճկուն հնչերանգը»:

Արձակագիր, պատմվածքների հեղինակ Սի ժուի առաջին շփումը արտասահմանյան գրականության հետ Տուրգենևի «Հայրեր եւ որդիներ» գիրքն էր: «Այն գրեթե անմիջապես հետաքրքրություն արթնացրեց իմ մեջ: Ես գիրքը կարդացի նորից ու նորից՝ այդտեղ տեսնելով ցարական Ռուսաստանի «հայրերի» սերնդի անկման չարագուշակ նշանը եւ «որդիների» սերնդի խիզախ թերահավատությունը: Պատմությունն այնքան կենդանի էր ու վառ եւ այնքան կյանքով լի, որ ես այս անգամ մեկնեի գիտակցեցի արվեստի մեծությունը»:

Բավականին տարօրինակ է, որ արեւմտյան գրականության մեր ամենավաղ թարգմանիչը ծանոթ չէր արեւմտյան որեւէ լեզվի: Էին Յին-նանը մեկն էր այն հին պահպանողականներից, ովքեր համառորեն հանդես էին գալիս գրական հեղափոխության դեմ: Նա ինքը դասական կրթություն ստացած գիտնական լինելով՝ իր թարգմանությունները, թեւեւ հաճախ ոչ ճշգրիտ, խիստ լավ էր կարդում չինարեն: Էին Յին-նանը մի գործընկեր ուներ, որը նրա համար բառացի էր թարգմանում: 1890 թվականից մինչեւ իր մահը՝ 1924 թվականը, նա թարգմանել էր շուրջ հարյուր երեսուն արեւմտյան ստեղծագործություններ, ներառյալ «Կամելիազարդ տիկինը», Սքոթի «Այվենհոն», ինչպես նաեւ «Ռոբինզոն Կրուզոն» եւ «Պիկվիկյան գրառումները»: Էինելով հատվածային եւ մեղանչումներով լի՝ դրանք եվրոպական գրականության առաջին տրեյներն էին Չիլիաստան: Էնի «Շեքսպիրյան պատմությունների» Էնի թարգմանություններն այնքան մեծ հետաքրքրություն առաջացրին երիտասարդ չինացիների շրջանում, որ շատերն

շտապում էին անգլերեն սովորել, որպեսզի բնագրով կարողային հենց Շեքսպիրի թատերգությունները: Փաստը, որ չին ընթերցողները, առանց Անգլիայի մասին չնչին գիտելիքներ ու պատկերացում իսկ ունենալու, այն օրերին արցունք էին թափում Դավիթ Կոպերֆիլդի դժբախտությունների համար եւ ծիծաղում էին զվարճալի Սեմ Վելլերի վրա, ապացուցում է, որ մեծ գրականության համար արգելքներ չկան: Այդ ժամանակից ի վեր մենք դադարեցինք Եվրոպային վերաբերվել որպես սպառազինությունների մի մեծ գործարանի:

Կարող ենք վստահաբար ասել, որ ընդհուպ մինչև 1932 թվականը թարգմանությունների մեծ մասը կատարվել է խանդավառ կերպով, բայց անփոյթ: Համաշխարհային գրականության պատմության մեր իմացությունը նույնպես սահմանափակ էր: Այն ժամանակ միայն անձնական հետաքրքրությունն էր դեր խաղում, եւ հաճախ արված գործը կրկնվում էր: Որպես հետեւանք՝ որոշ գրքեր ունեին մի քանի թարգմանություն, մինչդեռ շատ դասականներ մնում էին չթարգմանված: Որոշակիորեն հայտնի հեղինակների ամբողջական ստեղծագործությունները թարգմանելը միշտ էլ փառասիրական ձգտում է եղել, ինչպես, ասենք, Գո Սո-ժոյի դեպքում Գյոթեի եւ Ջ. Մ. Սինգի, Չժան Ցզին-շենի դեպքում Չեխովի, եւ Լի Ցին-յայի դեպքում՝ Մոպասանի գործերը: Այդուհանդերձ, անձնական ջանքերը որոշակի սահմաններ ունեն, եւ քչերը հասան իրենց նպատակին: Հետագայում միտում կար դիմել պահի հեղինակներին, ինչպես, օրինակ, Էփթոն Սինքլերին՝ որոշ ժամանակ, իսկ ավելի ուշ՝ տիկին Փերլ Բաքին:

Հասկանալի էր, որ գործունեության այս բնագավառը հեռու է գոհացուցիչ լինելուց: 1918 թվականի սկզբին դոկտոր Հու Շին խորհուրդ էր տալիս արեւմտյան գրականության դասականներին թարգմանել պարբերաբար: Նա առաջարկում էր յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հատկացնել հինգ տարի, որի ընթացքում մի շարք հատուկ ընտրված ստեղծագործություններ, ասենք՝ 100 վեպ, 500 պատմվածք, 300 թատերգություն եւ 500 էսսեիստների գործեր պետք է թարգմանվեին: Սակայն գանազան հանգամանքներ խանգարեցին այս հոյակապ ծրագրին ընդհուպ մինչև պատերազմի սկսվելուց մի քանի տարի առաջ: Անցած տասնամյակի սկզբում երկու ծրագիր մեկնարկեցին: Դրանցից մեկը Չինաստանի՝ Անգլիական գրականության շարքի հիմնադրամն էր, որի ղեկավար խմբագիրը դոկտոր Հու Շին էր: Այն ընդգրկում էր Թոմաս Հարդիի «Թեպը Դ'Էրբերվիլների տոհմից» եւ «Վերադարձ հայրենիք» վեպերը՝ պրոֆեսոր Չժան Գե-ժոյի թարգմանությամբ, Տոգեֆ Զոնրադի վեպերի՝ Լյան Յույ-չունի եւ Յու-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

ան Ցզյա-հուայի թարգմանությունները, Լիթթոն Սթրեչիի «Վիկտորիա թագուհին»՝ Բյան Չժի-լինի թարգմանությամբ, ևաե Շեքսպիրի լիակատար երկերի հրատարակումը՝ պրոֆեսոր Լյան Շի-ցյուի թարգմանությամբ, որն ընդհատվեց պատերազմի պատճառով: Սյուս ձեռնարկումը պրոֆեսոր Չժեն Չժենդոյի «Համաշխարհային դասականներ» շարքն էր, մի ընտրանի, որ ընդհանուր առմամբ ընդգրկում էր եվրոպական գրականությունը: Առաջին շարքն, օրինակ, ներառում էր Տոլստոյի «Աննա Կարենինան», Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը», Գոգոլի «Մեռած հոգիները», Դոստոևսկու «Կարամազով եղբայրները» եւ Շարլոտ Բրոնտեի «Ջեյն Էյրը»: Ի տարբերություն ևախորդ թարգմանությունների, դրանք թարգմանվել էին լավագույնս ընտրված գիտակ մասնագետների կողմից, որոնք իրենց առջեւ դրված խնդիրն ստանձնել էին ոչ միայն ևախանձախնդիր ևվիրվածության, այլ ևաե երկու լեզուների իրենց լավ իմացության շնորհիվ: Գրեթե բոլոր գործերին ևախորդում էր ծավալուն ներածություն, իսկ գրքի վերջում ներկայացվում էր ինևամքով կազմված բառարան: Օրինակ՝ Հարդիի «Վերադարձ հայրենիք» վեպի թարգմանությունը հրապարակելիս պրոֆեսոր Չժանը երկու սովարածավալ հատորների գրեթե մեկ քառորդը ևվիրել էր այնպիսի բաների մանրամասն ծանոթություններին, ինչպիսին վեպում ներկայացվող ևնգլիական վայրի ծաղիկներն են: Եւ ևաե հնարամիտ մի փորձ կատարեց՝ Ուեսեքսի բարբառը թարգմանելով իր հայրենի արեւմտյան Շանդունի բարբառով:

Վիկտորիական եւ Գեորգյան ժամանակաշրջանի դասականներին թարգմանելուց հետո մեր թարգմանիչներն ևնկասկած կօգտվեն առաջին իսկ հնարավորությունից՝ ժամանակակից ևնգլիական գրականության լավագույն ծաղիկները չինական ծաղկանոցում ներկայացնելու համար: Մենք գիտենք, որ այլեւ ոռբին հուդեր չկան Բրիտանական կղզիների բաևուկ ճանապարհներին, եւ երեխաների հանդեպ շատ ավելի հոգատար են, քան Դիքենսի օրոք էր: Բայց մենք ուզում ենք այս ամենն իմևևալ ավելի խորությամբ եւ առավել մանրամասնորեն: Մենք պետք է կարդանք ժամանակակից Անգլիայի այսօր ևպրող գրողներին: Եվ հակառակը՝ մեժ փոփոխություններ են տեղի ուևեցել Չինաստանում ևույնիսկ վերջին հինգ տարվա ընթացքում: Կա ևզգային կյանքի մի կողմ, որն ևնշարժ է, եւ կա մեկ այլ կողմ, որ շարժուն է ու փոփոխական՝ ժողովրդի տրամադրությունը, վերաբերմուևքն ու ներքին ձայնը: Այդ փոփոխական կողմը սովորաբար արտահայտվում է տվյալ ժողովրդի ժամանակակից գիր ու գրականության մեջ:

Պատերազմը, որը ճապոնացիների ակնկալիքով շահավետ էր լինելու, քիչ օգուտ է բերել նրանց: Բայց այն ծանր հարված է հասցրել Չինաստանի ընդհանուր մշակութային գործունեությանը: Ծագող արեւի ռմբակոծիչները ոչնչացրին Շեքսպիրի գրքի վերջին օրինակը համալսարանական մի գրադարանում: Թղթի պակասությունը տպագրությունը գրեթե անհնարին էր դարձրել: Եվ անպաշտպան քաղաքների վրա մշտական օդային հարձակումները հազիվ թե նպաստում են վեպի խաղաղ տեսարանները թարգմանելուն: Պատերազմն ամեն ինչ ծաղրի առարկա է դարձրել: Բայց այն մեզ ստիպել է նաեւ գիտակցել, որ կարիք ունենք ավելի լավ հասկանալու ազգերի հարաբերությունները, փոխադարձաբար գնահատելու յուրաքանչյուր ազգի տառապանքները, խնդիրներն ու ձգտումները: Չինացիներն այլեւս չեն կարող հասկանալ Անգլիան «Ռոբինզոն Կրուզոյի» կամ «Լիր արքայի» միջոցով նույնքան, որքան անգլիացիները չեն կարող հուսալ, թե կճանաչեն գործող Չինաստանը, եթե շարունակեն խորհրդածել միայն մեր Տան դարաշրջանի պոետների մասին, որոնք մահացել են շատ ավելի վաղ, քան Ալֆրեդ Մեծը կայրեր իր կարկանդակները: Այստեղ ավարտում եմ այս կարճ հաշվետվությունը` թույլ բողոքով եւ վառ հույսով լի:

**ՎԻՇՆԱԴԻ ՍՈՐՈՒՔՆԵՐՆ ԸՆԴՊԵՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ.
ԱՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՇԱԿՈՒՅՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. ՄԻ ԶԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՄԵՔԵՆԱՅԻՆ. ԴՐԱ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ
ԱՆԳՆԻՎԿԱՆ ՎԵՊՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՉԻՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱ

Գրողը եւ մեքենան բնական հակառակորդներ են: Մեքենան իր բնույթով մշտական սպառնալիք է արվեստի ամեն մի ստեղծագործության համար, իսկ գրականությունը, ինչ «ամառընթացի» էլ որ հասնենք, պետք է մնա ձեռակերտ: Ուստի չպետք է զարմանանք, երբ տեսնում ենք, որ գրողները դատապարտում են մեքենան. մենք պետք է պարզենք՝ արդյո՞ք դա անշահախնդիր ատելություն է, եւ հետեւաբար ազնիվ, թե՞ պարզապես եսասիրական բնույթ ունի: Առաջինը բխում է բանականությունից, մինչդեռ երկրորդը կարող է միայն զգացմունքային լինել:

Ոչ շատ վաղուց բանավեճ ունեցա մեկի հետ, որը տևային տևտեսության գործում ավելի քիչ փորձ ունի, քան ես: Մեր վեճի թեման փոշեկուլի գյուտն էր՝ արդյո՞ք լավ բան է այն, թե՞ ոչ: Զանի որ այդ կինը թշնամի էր բոլոր մեքենաներին, անվերապահորեն դատապարտում էր փոշեկուլը: Բայց երկու զարուն եւ երեք աշուն շարունակ ես տեսել եմ Զեմբրիջի իմ հավաքարարին՝ բարեհոգի մի կնոջ, թե ինչպես է ժամերով հատակին ծնկի իջած, փոշուց խեղդվելով, գորզը մաքրում: Դրա համար էլ հանդես էի գալիս ի պաշտպանություն փոշեկուլի, ինչպես որ կպաշտպանեի այն ամենը, ինչը թեթեւացնում է իմ եղբայրակիցներին՝ անընդհատ կրկնվող կամ ծանր, կեղտոտ ու տհաճ աշխատանքը: Բայց ես պետք է, իհարկե, մյուս կողմի փաստարկները ներկայացնեմ: Ընկերս ասաց, որ եթե այդ կինն իր սեփական տունն ունենա, նա դրա հանդեպ կունենա կապվածություն եւ ջերմ զգացում՝ խորապես կսիրի ամեն ներկ ու գույն, անգամ փայտե ամեն առարկա: Իսկ նա ասաց, որ մեքենայի ներմուծումը կվնասի արժեքավոր ամեն բանի: Ես նրան հարցրի, թե ինչ կաներ, եթե Օռլանդոյի նման ունենար 365 սենյականոց մի տուն, որը տանտերն ու տանտիրուհին չէին կարող հույս ունենալ, թե իրենք կմաքրեն, ինչքան էլ շատ սիրեին այդ տունը: Կինը, բավականին ինքնավստահ, ասաց, որ ինքն սպասուհուց կակնկալեր, որ վերջինս սիրեր տունը՝ որքան կարող է: Այս ամենն այնքան էլ համոզիչ չէ, բայց ցույց է տալիս, որ արդյունավետությունն ու մտերմությունը երկուսն էլ հարաբերական են...

Արդյունաբերական հեղափոխությունից ի վեր անգլիացի գրողներին հետաքրքրում է մեքենայի ազդեցությունը մարդկային կյանքի վրա: Սեմյուել Բաթլեր, Ուելս, Քիպլինգ, Բեննեթ, Ֆորսթեր, Հաքսլի, Դ. Հ. Լորենս, Վիրջինիա Վուլֆ... բոլորին էլ հետաքրքրել է դրա ներգործությունը:

Մեքենայի հանդեպ կասկածն ու անվստահությունը հավանաբար առաջացան Արդյունաբերական հեղափոխությունից անմիջապես հետո: Անգլիական գրականության իմ ոչ բավարար իմացությամբ ես չեմ համարձակվում մանրամասն անդրադարձ կատարել պատմությանը: Իհարկե, մարդ սարսափ է զգում Դիքենսի պատկերած արդյունաբերական թշվառությունից, չնայած նա չափազանց ողջամիտ գրող էր, որպեսզի փիլիսոփայեր մեքենայի մասին: Նույնիսկ նրբակիրթ Քրենֆորդի մոտ կարելի է նշմարել մեքենայի հզորությունը: Ինչքան խոր հուսախաբություն պատճառեցին ծեռներեց միջնորդները տիկին Մեթթին: Բայց մեքենայի առաջին բացեփբաց դատապարտումներից մեկը անգլիացի վիպասանի կողմից 1872-ին եղավ, երբ Սեմյուել Բաթլերը լույս ընծայեց իր «Էրեհոն» վեպը (ուտոպիական սատիրա է, անգլերեն՝ «Erewhon», որ nowhere - ոչ մի տեղ բառի շրջված ձևն է - ծ. թ.): Այդ գրքում, որ գրվել է չինական «Ցզին Հուա Յուան» ուտոպիական վեպից քառասուն տարի հետո, ճակատամարտ է մղվում մեքենաների կողմնակիցների եւ հակառակորդների միջև, որին զոհ է զևում բնակչության կեսը: Դժվար չէ կռահել, որ հաղթանակ է տանում մեքենաների հակառակորդների խմբավորումը: Էրեհոնցիները շատ ավելի բարեհոգի են մեքենաների հանդեպ իրենց ատելության մեջ եւ շատ առումներով շրջահայաց, քան Օլդոս Հաքսլիի կանոնակարգված աշխարհի բավականին հիստերիկ քաղաքացիները: Այդուհանդերձ, էրեհոնցիները խորապես անհանգստացած են մեքենայի տիրապետությունից, եւ այն բանից, որ հնարավոր է՝ մի օր դրանք դասակարգվեն ըստ ձիաուժի: Բաթլերի առարկությունները ոչ այնքան մեքենայի դեմ էին, որքան որ մարդկանց՝ մեքենայի հանդեպ ունեցած աղետալի վստահության դեմ...

Պարոն Ուելսի գիտական վեպերը մեքենային անկեղծորեն հավատացող մարդու նախագծեր են: Դրանք կարդալիս մենք հասկանում ենք, որ աշխարհի անկանոն թափթփվածությունը զայրացրել է նրան. նա ուզում էր կարգի բերել այն, թեկուզ մարդ անհատի հաշվին: Հնացած լիբերալիզմը նա անվանում էր «չար ժամանակ ծեռք բերված մտավոր սովորույթներ»: Եվ իր ավետյաց երկրում, իր «ժամանակակից Ուտոպիայում», նա ուզում է, որ մարդ անհատը «Ոչ միայն առողջ լինի, այլ նաեւ կրթված»... Նրա իդեալական աշխարհում ամեն մեկը պետք է լինի «անվերապահ եւ

ԱՅՊՈՑԱՆ

որոշակի կազմակերպված... եւ ով կորչի, կարելի է փնտրել ու գտնել»...

Բայց քչերն են Ուելսի ժամանակակիցներից, որ նույնն են զգացել, եւ նրա կրտսեր ժամանակակիցները հակառակ տեսակետն են ունեցել: Պարոն Ուելսը շատ երեւելի բացառություն է: Կարդալով ժամանակակից անգլիական գրականությունը՝ ես այն տպավորությունն եմ ստացել, որ յուրաքանչյուր լուրջ գրող այստեղ քսաներորդ դարի մի Ռուսո է, որ անմիջապես, եթե ոչ ամբողջովին, բնության գիրկը վերադառնալու կողմակիցն է: Կարծում եմ, սա առավել հետաքրքրական է, հատկապես, երբ նկատի ենք ունենում, որ Բրիտանիան Արդյունաբերական հեղափոխության օրրանն է եղել:

Պրն Է. Ս. Ֆորսթերի հավատամքի անկյունաքարը մարդկային հարաբերություններն են: Սա նրա ինտերնացիոնալիզմի մեկնարկային կետն է, քաղաքացիական ազատության համար նրա պայքարի ոգեշնչման աղբյուրը: Նախեւառաջ, անձնական հարաբերությունները նրա վեպերի հիմնական թեման են: Եվ անձնական հարաբերությունների գլխավոր թշնամին մեքենան է, որն անդեմ է, ավտոմատ, զգացմունքներից զուրկ: Նա առում է խաբեության ու կոպտության այս աշխարհը, բայց նույնիսկ պրն Վիլքոքսը՝ «Հովարդս Էնդ» վեպում, կարող է փրկվել հրեշտակային Սարգրեթի կողմից: Բայց նրա «Մեքենան կանգ է առնում» պատմվածքում մեքենան կարեկցանքի կամ փրկության հետ կապ չունի. այն կանգնած է մարդկային ամենասրբազան հարաբերություններից մեկի՝ Կոմոյի եւ նրա մոր միջեւ: Մեխանիկական այս աշխարհում դասախոսությունն ընդամենը տասը րոպե է տեւում, չկան գրքեր, Մեքենայի գրքից բացի: Մարդկային ականջները զրկված են իրենց զգայունությունից, ծնողների պարտականությունները դադարում են ծննդյան իսկ պահին: Ամեն ինչ ստանդարտ ու միօրինակ է, եւ ճամփորդությունը դառնում է անօգուտ մի բան, որովհետեւ Պեկինն այնպիսին է, ինչպիսին Շրուսբերին: Մարդիկ խուսափում են բնությունից եւ վախենում են լուսաբացից, նրանք կորցնում են տեսնելու եւ հասկանալու ընդունակությունը: Նրանք երկրպագում են մեքենային, հնազանդվում են մեքենային եւ հարմարվում են մեքենայի պահանջներին: Շատ առումներով՝ մղձավանջն այստեղ ավելի սոսկալի է, քան պրն Հաքսլիի մոտ է, եւ վերջում մեքենայի դեմ ապստամբությունը նույնքան հուզիչ է, որքան հոյակապ:

Ոչ մի կասկած չկա, որ Վիրջինիա Վուլֆը հակակրանք ուներ մեքենայի հանդեպ, թեեւ դա միայն ենթադրվում է: Նրա ստեղծագործություններում կարելի է հիմնավոր հակակրանք նկատել արդի դարաշրջանի հան-

դեպ, որի բնորոշ առանձնահատկությունը երկնքում գովազդ գրող ինքնաթիռն է, երկրի խաղաղ ձայներն ընդմիջող նրա դժժոցը: Տիկին Վուֆը քարոզիչ չէր, ինչպես պրն Հարսին, ոչ էլ ինքնակոչ մարգարե, ինչպես պրն Լորենսը: Նա չի դատապարտում: Այդուհանդերձ, «Օռլանդոյում» նա հստակ տարբերակում է դնում անազնիվ ու տենդագին ժամանակակից դարաշրջանից ստացած իր տպավորության եւ եղիսաբեթյանների փառքի, տասնութերորդ դարի ազնվական բարքերի միջեւ: Մենք տեսնում ենք Օռլանդոյին, որին ապշեցրել է ժամանակակից աշխարհը: «Աստված մեզ օգնի,- ասաց Օռլանդոն՝ լուսամուտի մոտ կանգնած նայելով աղավախների խաղին:- Այս ի՞նչ աշխարհում ենք ապրում: Ինչպե՞ս վստահենք այս աշխարհին»: Դա տասնիններորդ դարն էր, բայց արդեն «Ամեն ինչ թվում էր նեղացած, փոքրացած», եւ «Մեկ հպումով ամբողջ սենյակը լուսավորվեց, հարյուրավոր սենյակներ լուսավորվեցին, եւ բոլոր սենյակներն իրար շատ նման էին: Կարելի էր ամեն ինչ տեսնել քառակուսի այդ տուփերում, գաղտնի ոչինչ չկար...»: Ի տարբերություն Գ. Հ. Լորենսի, որն ավելի ու ավելի էր դառնանում, նա մեղմ էր իր քննադատություններում, նույնիսկ ինքն իրենից ներում հայցող: Նա սգում է այսօրվա համար, ոչ թե դատապարտում այն: Իր շրջիկ թատերաբեմում, ճիշտ այնպես, ինչպես ժամանակակիցները պիտի հանդես գան բեմում, «տեղատարափ եղավ, հանկարծակի, առատ: Ոչ ոք չէր տեսել մոտեցող ամպը: Այդտեղ էր ամպը՝ սեւ, փքված, բոլորի վերեւում: Հեղեղի պես հորդում էր, ասես աշխարհի բոլոր մարդիկ արցունք էին թափում: Արցունքներ: Արցունքներ: Արցունքներ»: Եվ ապա, նոր տեմպին համահունչ՝ «Մեղեղին փոխվեց, շառաչեց, խախտվեց, կտրտվեց: Ֆոքստրոփ էր: Տա՞գ: Բոլոր դեպքերում, ռիթմը թռչկոտում էր, ծառս լինում, շաչում... Օ՛, անհարգալից վարմունք այն սերնդի, որ միայն վայրկենական է, վաղանցուկ, - լավ է գոնե, - «երիտասարդ սերնդի»: Երիտասարդություն, որ չի կարող ստեղծել, այլ միայն ավերել, ծվեն-ծվեն անել հին մտապատկեր-տեսիլքը, ատոմների բաժանել այն, ինչ ամբողջական էր»: Եվ ապա գալիս է հանրահայտ հայելին, որի մեջ լսարանի յուրաքանչյուր անդամ տեսնում է իր արտացոլումը, եւ անանձնական ձայնը (որը կարող ենք տիկին Վուֆինը համարել) արտաբերում է. «Խախտե՛նք ռիթմը եւ մոռանա՛նք հանգը: Եվ հանգիստ ընդունենք ինքներս մեզ: Ինքներս մեզ: Ոմանք ոսկրոտ: Ոմանք՝ գեր: (Ապակիները հաստատեցին սա): Սուտասաններ են մե՞ծ մասը մեզից: Գողեր նաեւ: (Ապակիները դրան ոչ մի մեկնաբանություն չտվեցին): Աղքատները նույնքան վատն են, որքան հարուստները: Թերեւս ավելի վատը... Նկատի առե՞ք զինված մար-

ԱՅԱՌ ՑՅԱՆ

դասպաններին, ռուբ գոողներին այստեղ կամ այնտեղ: Նրանք բացեի-բաց են անում այն, ինչ մենք անում ենք թաքուն...»: Մինչ պրն Հաքսլին զայրույթով երգիծանք ու ծաղրի է ենթարկում արդի դարաշրջանը՝ իր պայմանական ռեֆլեքսներով, սինթետիկ երաժշտությամբ եւ սոմայի չափաբաժիններով, մինչ Լորենսը դատապարտում է առնական հասունության աճի կասեցումը, տիկին Վուլֆն այդ դարաշրջանի համար տանջող խղճահարություն է զգում:

Մեր այս մեխանիզացված աշխարհի վրա հարձակման գործում ոչ ոք այնքան դաժան չի եղել, որքան երեսնականների մազոտ մարգարեն՝ Դ. Հ. Լորենսը: Այն փաստը, որ նա սերում է Լոթինգեմցի հանքափորի ընտանիքից, նրա հարձակումն ավելի հետաքրքիր է դարձնում. Այլոց համար մեքենան խորհրդանիշ էր, Լորենսի համար՝ այն ամենօրյա իրականություն էր: Ինչ-որ իմաստով նա այդ իրականությանն էր պատկանում, եւ Միդլենդի նրա նկարագրություններում մի յուրահատուկ, ինքնըստինքյան ուշադրության արժանի մթնոլորտ կա: Օրինակ՝ «Ծիածանում», երբ Ուրսուլան առաջին անգամ մտնում է իր հորեղբայր Թոմի հանքահորը, իսկական ցնցում է ապրում:

«Բայց այս վայրն այդպես սարսափելի է, ինչպես երեսում է», - լարված հայացքով հարցրեց աղջիկը:

«Այն է, ինչ երեսում է, - ասաց նա: - Եվ ոչինչ չի թաքցնում»:

«Ինչու՞ են տղամարդիկ այդքան տխուր»:

«Տխու՞ր են», - պատասխանեց նա:

«Նրանք խիստ, անասելի տխուր են թվում», - ասաց Ուրսուլան չզսպված հուզմունքով:

«Չեմ կարծում: Նրանք դա պարզապես բնական են համարում»:

«Ի՞նչն են բնական համարում»:

«Այս հանքահորերն ու ընդհանրապես շուրջն ամեն բան»

«Ինչու՞ չեն փոխում դա», - կրքոտ բողոքեց աղջիկը:

«Նրանք հավատում են, որ պետք է իրենք իրեց փոխեն, որպեսզի հարմարվեն հանքահորերին ու շրջակայքին, քան թե փոխեն հանքահորերն ու շրջակայքը՝ իրենց հարմարեցնելու համար: Դա ավելի հեշտ է», - ասաց նա:

...

«Ամեն մարդ իր փոքրիկ շրջապատին է տիրապետում, իր տանը, բայց հանքահորը տիրապետում է ամեն մարդու... Ի՞նչ է տղամարդը տանը: Անիմաստ մի գոյացություն, կանգնած մի մեքենա, մեքենա, որ չի աշխատում»:

Տպավորությունը շատ ավելի սարսափելի է ու համոզիչ, քան ցանկացած գիտական վեպ, իր ողբերգական հուսահատության պատճառով: «Որդիներ եւ սիրեցյալներ» վեպում Պոլը բացատրում է Քլերին.

«... Ես սիրում եմ հանքահորերը: Սիրում եմ բեռնատարների շարքերը, մեքենաների մասերը, գոլորշին ցերեկով եւ լույսերը գիշերով: Երբ փոքրիկ տղա էի, միշտ կարծում էի, թե ամպի սյունը ցերեկով եւ կրակի սյունը գիշերով՝ հանքահորն էր իր գոլորշիներով ու լույսերով ու այրվող ափով: Եվ մտածում էի՝ Տերը միշտ հանքահորի վերեւում է»:

Սա, իհարկե, այն բանաստեղծություններից մեկն է, որ լիքն են նրա վեպերում: Սա չի նշանակում սեր ինդուստրիալիզմի հանդեպ, ընդհակառակը, Լորենսը հակակրանք ուներ դրա հանդեպ, բայց հարձակվում էր առանց հիստերիայի: «Լեդի Չաթթերլիի սիրելեկանը» վեպում որսորդ Սելլորը տալիս է Լորենսի վերաբերմունքի բանալին, երբ խորհրդածում է լեդիի հետ իր հարաբերությունների մասին: «Դա կնոջ մեղքը չէր, ոչ անգամ սիրո մեղքը, ոչ էլ սեռի մեղքը: Մեղքն այնտեղ էր, դրսում, այն չարագույժ էլեկտրական լույսերում եւ շարժիչների դիվային դրոզոցում»: Վերջապես, ամբողջ մեղքը մեքենայի վրա բարդելով, Լորենսն ամբողջովին ազատվում էր դրանից եւ երգում իր Մեքսիկական օրհներգերը:

Մեքենայից, ավելի շուտ՝ ընդհանրապես գիտությունից Դ. Հ. Լորենսի հեռանալը հիանալու չափ հերոսական բան է, բայց խելամիտ չէ: Բայց Լորենսն այն ժամանակ երբեք չէր մտածում. նա իր ուղին վեճերով էր հարթում: Նրա մեթոդն ամփոփվում էր երեք կարճ նախադասության մեջ. «Դուք ինձ ասում եք, որ սխալ եմ: Ո՞վ եք դուք, ո՞վ է ցանկացած ոք, որ ինձ ասի, թե սխալ եմ: Ես սխալ չեմ»: («Նուռը»): Նա չի վիճում Դարվինի կամ Հաքսլիի հետ. պարզապես մի կողմ է նետում նրանց: Իր «Անգիտակցականի ֆանտազիա» ստեղծագործության մեջ նա հայտարարում է.

«Ես չեմ հավատում զարգացմանը, բայց հավատում եմ մշտապես նորոգվող եւ ծիածանի պես փոփոխվող ստեղծագործ քաղաքակրթության զարմանահրաշ բնույթին»:

Գրքի վերջում նա կրկին հայտարարում է.

«Հիմա իդեալիստի եւ գիտնականի ժամանակն է (դրանք իրականում միեւնույն բանն են), որպեսզի վերջ տրվի դրա կապկային ժարգոնին՝ ատոմի եւ կյանքի ծագման եւ տիեզերքի մեխանիկական բանալին գտնելու մասին: Չկա նման բան... Ես չեմ հավատում արեւի մասին գիտության ասածի մեկ հինգերորդին իսկ: Մեկ վայրկյան իսկ չեմ հավատում, թե լուսինը մեր երկրագնդից դուրս ժայթքած մեռած մի աշխարհ է... Գիտեմ, որ

ԱՅԱՈ ՑՅԱՆ

արելը տաք է: Բայց մի՛ ասեք ինձ, թե արելը բոցավառվող գազի մի գունդ է, որ պտտվում է ու թշնամ: Ո՛չ, շնորհակալ եմ»:

Ես շատ ուրախ եմ, որ չեմ վիճում պրև Լորենսի հետ, բայց եթե այնպես պատահեր, որ լսեի նրան ինչ-որ մեկի հետ այսպես լարված վիճելիս, հոգուս խորքում կհիանայի նրանով, եթե նույնիսկ համաձայն լիսեի իր հակառակորդի հետ: Լորենսն ամենապարզ ու հասկանալի ծեով արտահայտում է ժամանակակից մարդու վրդովմունքն ընդդեմ մեքենայի: Նա հանքահորերից է եկել, ինչպես Պոլը «Որդիներ եւ սիրելիներ» վեպում: Նա «Օթելլոյի» պոեզիան չի տեսնում որպես անհոգի մեքենայի հակադրություն, որովհետեւ, ի տարբերություն պրև Հաքսլիի եւ տիկին Վուլֆի, անցյալն առանձնապես չի սիրում: (Անցյալի կարոտախտը փախուստի հեշտ ձեւ է): Լորենսը հանդես է գալիս որպես առանձին, ռոմանտիկ մի անհատ, որ ընդդիմանում է ստանդարտ-միօրինակացմանը, եւ իր վերջին տարիներին նա նույնիսկ մարտահրավեր էր նետում կյանքի օրենքներին՝ պաշտպանելով մարդ անհատին եւ մնալով անհատականություն: Նա ամբողջովին հավատում է ներքմբռնմանը եւ արհամարհում է վերլուծությունը:

Իր բանաստեղծություններից մեկում (չեմ կարող ասել, թե երբ է գրել), որ կոչվում է «Մեքենայի հաղթարշավը», Լորենսը կանխատեսում է մեքենայի անկումը: Որովհետեւ «որոշ մարդկանց սրտերում դեռ սրբավայր կա, որտեղ արտույտներն անվտանգ բույն են հյուսում»:

*«Եվ վերջապես բոլոր արարածները,
որ չեն կարող մեռնել, քանի դեռ մեկ սիրտ պատսպարում է նրանց,
կլսեն իջնող լռությունը
մեքենաների անկման եւ վախճանի:
Նրանք կլսեն ասֆալտե ճանապարհների ճաքճքոցի ձայնը թույլ,
երբ բոխին վեր կմղի իր ընծյուղները:
Կլսեն, թե ինչպես հեռու հեռվում գործարանի վերջին շչակը
հուսահատության իր վերջին վայրի ճիչը կարծակի,
երբ մեքենան վերջնականապես կխորտակվի»:*

1932 թվականին Օլդոս Հաքսլին աշխարհին զգուշացրեց ինդուստրիալիզացիայի վտանգի մասին իր «Հրաշալի նոր աշխարհ» հակաուտոպիական վեպում: Այս վեպում նա պատկերացնում է ամբողջովին մեխանիզացված աշխարհի սարսափները: Երեխաները ծնվում եւ մեծանում են Կենտրոնական Լոնդոնի ինկուբացիայի եւ վերականգնիչ դաստիարակչական

կենտրոնում: Նրանք սևվում են դեղահաբերով եւ լսում մեքենայից ստացվող սինթետիկ երաժշտություն, իսկ Վեստմինստերյան Աբբայությունը դառնում է մի տեսակ կաբարե՝ բուրմունք եւ գույն արծակող երգեհոնով: Բոլորից ակնկալվում է, որ կերկրպագեն Ֆորդ անունով աստծուն: Ապա գալիս է Տոն Վայրենին, որը, կարծում եմ, իրականում Հովհաննես Ակրտիչն է՝ անապատից եկած մարգարեն: Ահա նրա բանավեճը Վերահսկիչի հետ, որը խոսում է մեքենայի անունից, մինչդեռ Վայրենին ներկայացնում է բնության զավակին:

Երբ Վերահսկիչն ասաց.

«Մենք գերադասում ենք ամեն բան հարմարավետ անել»:

«Բայց ես հարմարավետություն չեմ ուզում» (ասաց Վայրենին): «Ես Աստված եմ ուզում, պոեզիա եմ ուզում, իրական վտանգ եմ ուզում, ազատություն եմ ուզում, ես բարություն եմ ուզում, մեղք եմ ուզում»:

«Փաստորեն,- ասաց Մուստաֆա Մոնդը,- դուք պահանջում եք դժբախտ լինելու իրավունքը»:

«Շատ լավ ուրեմն,- ընդվզումով ասաց Վայրենին:- Ես պահանջում եմ դժբախտ լինելու իրավունքը»:

«Էլ չենք խոսում ծեր եւ տգեղ եւ անզոր դառնալու իրավունքի մասին, սիֆիլիս եւ քաղցկեղ ունենալու իրավունքի մասին, ուտելու շատ քիչ բան ունենալու իրավունքի մասին, ոջլոտ ու զարշելի լինելու իրավունքի մասին, մշտապես այն մտավախությամբ ապրելու իրավունքի մասին, թե ինչ տեղի կունենա վաղը, տիֆով վարակվելու իրավունքի մասին, ամեն տեսակի անասելի ցավերով տառապելու իրավունքի մասին»:

Երկար լռություն տիրեց:

«Ես պահանջում եմ այդ բոլորը»,- վերջապես ասաց Վայրենին:

Մուստաֆա Մոնդն ուսերը թոթվեց: «Խնդրեմ,- ասաց նա:

Այս խոսակցությունից տպավորություն է ստեղծվում, թե Վայրենին այնքան էլ խելամիտ չէ: Արդյո՞ք դա նրանից է, որ մեքենայի դեմ պրն Հաքսլիի հակակրակնքը զգացմունքային է ավելի, քան գիտակցված: Եթե Վայրենին (կամ տվյալ դեպքում պրն Հաքսլին) հանքափոր լիներ, որ մթան մեջ հարյուրավոր ֆուտ խորությամբ գետնի տակ փորած լիներ, կամ նավաստի, որ մարտնչած լիներ ալիքների, հողմ ու փոթորկի դեմ, նա թերեւս հաստատ կցանկանար վտանգը փոխել մեքենայի առաջարկած անվտանգության հետ: Նա ուրախ կլիներ ցանկացած սարքավորման համար, կողմնացույց լինի թե փորող մեքենա, որն անվտանգ եւ ապահով կդարձներ իր կյանքը: Անկասկած, պրն Հաքսլին իր Վայրենիին ներկայացնում է

ԱՅԱՈ ՑՅԱՆ

որպես վառ հակադրություն իր ստեղծած Ուտոպիայի մղձավանջում: Վայրենին միայն մանանեխ եւ տաք ջուր է խմում եւ կանոնակարգված ու պատվիրված ժամանակակից աշխարհից փախչում է դեպի փարոս, որ գտնվում է Գիլդֆորդում, Սուրբեյ կոմսությունում: Նա հայտարարում է, որ իր համար մեկ է, թե ուր գնա. «Ուր պատահի, միայն կարողանամ մենակ լինել»:

Եթե մեքենայից փախուստն այնքան հեշտ լիներ, որքան Հարավային երկաթուղու գնացքով Գիլդֆորդ մեկնելը, կարող եմ ձեզ հավաստիացնել, որ առաջին ուղեւորներից մեկն ինքս կլինեի, եւ առանց ետդարձի տոմսի: Ցավոք սրտի, այս միտքը նույնքան ապարդյուն մի բան է, որքան Չիկաստանի փորձը տասնիններորդ դարում՝ իր դուռը փակ պահել աշխարհի առջեւ:

Չիկաստանում մենք գիտության առավելություններն զգացել ենք եվրոպացիներիցդ տարբերվելով: Նախեւառաջ, մեքենան առաջացել է ձեր սեփական Վերածննդից, բայց Արեւելցիներս երբեք հոգ չենք տարել այդ մասին: Գիտությունը խորթ է մեզ, եւ մենք այն ընդունել ենք իր կիրառական ձեռով միայն՝ հարմարավետության եւ անվտանգության իր ակնհայտ առավելության պատճառով: Այսօրվա լոնդոնյան ավտոբուսները ձիեր լծած ձեր վիկտորիական օմնիբուսների զարգացած տեսակն են, եւ ո՛վ գիտե, գուցե հաջորդ զարգացումը կլինի Լոնդոնի վրայով թռչող օդային տրանսպորտը՝ ուղեկցորդուհիներով, որ ձայն են տալիս. «Կապեք ամրագոտիները, մենք թռչում ենք»: Բայց շարժիչով աշխատող ավտոբուսները Հոնկոնգում կամ Շանհայում ոչ մի ավանդույթ չունեն անցյալի հետ կապված: ...Բայց մեր հաջորդ սերունդը մեքենայացված ժամանակի սերունդ կլինի եւ ամեն ինչ կընդունի որպես ինքնըստինքյան բնական մի բան: Չին մտավորականների խնդիրն է տեսնել նաեւ այն, ինչը բնական չեն համարում: Նրանք պետք է քննեն գիտության առավելություններն ու նրա պոտենցիալ վտանգները: Մեքենան Ճապոնիա ներմուծվեց մի թռիչքով. այստեղից էլ՝ նրա ներկա ողբերգությունը: Չիկաստանը խուսափեց մեքենան ամբողջությամբ ներմուծելուց միայն իր ավանդական մոլեռանդության պատճառով: Այժմ, տանկերի կատաղի թրթուրների եւ ինքնաթիռների ավերիչ հարվածի ներքո արյունաքամ եղած, նա սկսել է լրջորեն, թեեւ չէի ասի՝ անկեղծ սրտով ընդունել մեքենան: Եթե մեքենան ընդունվում է Չիկաստանի կողմից առանց որոշակի «կառավարող անջատիչի», ոչ մի պատճառ չկա, թե ինչու այն պիտի նույն արդյունքը ցուցաբերի, ինչ Ճա-

պոնիայում: Կառավարող անջատիչի տեղակայումը ևսույնքան կարևոր է, որքան մեքենայի ներմուծումը:

Ի՞նչ ուժ ունի այդ անջատիչը: Պա հասարակ հարց չէ: Առաջին հերթին կարող ենք դա տեսնել իր ազգային առումներով: Մեծ Բրիտանիայում այդ անջատիչն, ինձ թվում է, ձեր ավանդական հարգանքն է անհատի հանդեպ: Այդ երկիրը մարդկային էակների համար պատշաճ մի վայր է՝ անկախ Արդյունաբերական հեղափոխությունից, որովհետև որոշակի բաներ կան, որ մարդիկ պարզապես թույլ չեն տա: Այդտեղ ազատականությունը մինչև հիմա ձեռավորել է մի տեսակ պաշտպանական երաշխիք ընդդեմ մեքենայի գերիշխանության: Ինձ թվում է, թե անգլիացիք միշտ, պրն Ֆորսթերի կամ մեկ ուրիշի միջոցով, ասում են. «Մեքենան օգտագործեք զգուշորեն... զգուշորեն...»:

Խորհրդային Միությանը հաջողվել է մեքենան կառավարել միանգամայն այլ համակարգով: Այդտեղ չեն առարկում, որ այն ամբողջ արագությամբ առաջ սլանա, միայն թե չլինի անհատների հսկողության ներքո: Այլ կերպ ասած՝ կարծում են, որ մեքենան անվտանգ գործիք է Պետության ձեռքերում, երբ անհատի կողմից անհատի շահագործման խնդիր չկա, ինչը սոցիոլոգներն անվանում են կապիտալիզմ:

Չինաստանն իրականում դաս է քաղել ժամանակակից Ճապոնիայի տրագիկոմեդիայից. նա շատ է ուզում մեքենան հսկողության տակ պահել: Բայց ո՞ր ուղին կընտրի:

Թվում է՝ ազատական ուղին անջատիչ վահանակի վերահսկումն է, մինչդեռ սոցիալիզմը՝ ձեռքի վերահսկումն է: Որոշ իմաստով՝ ձեռքի վերահսկումն ավելի լիարժեք է եւ հուսալի, բայց ո՞վ պետք է վերահսկի ձեռքը: Դեռ մնում է որոշել: Սա է, ահա, մեր ժամանակի գլխավոր պարադոքսներից մեկը:

Մեր խնդիրներից շատերը կլուծվեին, եթե բոլոր գործարանատերերն իրենց բնույթով արդարամիտ եւ բարյացակամ լինեին, բայց դա պատրանք է, որին չենք կարող տրվել: Այդ պատճառով էլ ինձ թվում է՝ ամենեւին անվտանգ չի լինի գործը թողնել ոյուրագրգիռ անհատի ձեռքերում:

Պրն Հաքսլիի գլխավոր դժգոհություններից մեկը ամեն բան մեքենայացված դարձնելու ներկայիս միտումի դեմ է: Որպես չինացի, որի երկրում սոցիալական ծառայությունները բավարար չափով զարգացած չեն, ես առանց վարանելու կպաշտպանեի «մեքենայացված» սոցիալական ծառայությունը: Ի վերջո, հարցը հարաբերական է, եւ կասկած չկա, որ ինչքան ավելի «քաղաքակրթված» ենք մակերեսային եւ աշխարհիկ իմաս-

ԱՅՊՈՑԱՆ

տով, այնքան ավելի շատ բաներ պետք է համակարգել: Թեև տիրեթյան մի երաժիշտ կարող է պատվավոր ապրելակերպի արժանանալ՝ վրանից վրան անցնելով, երգելով եւ վին նվագելով, նա անսխորժություն կպատճառեր, եթե փորձեր այդ բանն անել Լուդոն քաղաքում, որտեղ ամեն մեկն զբաղված է իր գործերով ու թղթապանակներով: Բժշկական ապահովագրության սխեմաներն անհրաժեշտ չեն եղել եղիսաբեթյան օրերին, որովհետեւ այն ժամանակ դեռ կային բավականին ազատ ժամանակ ունեցող մարդիկ, որպեսզի բարեգործ լինեին: Մեր օրերում բոլորս զբաղված ենք: Այն սահմանակարգերը, որ ընդունված են Անգլիայում, ասենք՝ տարիքային կենսաթոշակի ստացման հետ կապված, Չինաստանում դեռ կախված են մարդասիրական մղումներից, այսինքն՝ բարեգործությունից: Այդտեղ քչերը կարող են հիվանդանոց ընդունվելու հնարավորություն ունենալ պարզապես այն պատճառով, որ հիվանդ են: Նրանք պետք է ֆինանսապես ապահովված լինեն կամ էլ կախված են բուժհաստատությունների դեկավարների ողորմածությունից: Եթե մեքենայացումը մեզ համար ավելի շատ իրավունքներ է բերում, ապա, ի սեր Աստծո, թող այն կանխի իմ մուրացկան դառնալը:

Չինաստանում երեք տարբեր վերաբերմունք կա մեքենայի հանդեպ. ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ դրանք նույն արձագանքի երեք աստիճաններ են: Եղել է բռնի ընդդիմանալու փուլ, ապա զիջման փուլ, եւ վերջապես՝ կույր հիացմունքի փուլ: Բայց պետք է ձեզ զգուշացնեմ, որ միևնույն վերջերս այդ արձագանքների վրա հիմնականում ազդել են, եթե ոչ ամբողջությամբ իշխել, ներքին եւ արտաքին իրադարձությունները:

Տասնյոթերորդ դարում գիտության դեմ չինական ընդվզումը զուտ ազգային ամբարտավանությունից էր: Մենք մերժում էինք ընդունել արեւմուտքից եկած ցանկացած բան, որովհետեւ պարզապես մտածում էինք, որ եթե որպես ժողովուրդ բավականին լավն ենք, ապա ուրեմն մեր բոլոր հաստատություններն էլ պետք է որ բավարար չափով լավը լինեն: Այդ պատճառով էլ, երբ գերմանացի աստղագետ Շալլը փորձեց արեգակնային օրացույցը ներմուծել Չինաստան, նախ նրան հանդիմանեցին ու հակադրվեցին տեղի գիտնականները, իսկ հետագայում նա մեռավ բանտում կոտրված սրտով: 1640 ականներին էր, որ ժամանակի գիտնականներից Յան Գուան-սյանը, գրեց. «Մենք ավելի շուտ կգերադասեինք ապրել առանց ճշգրիտ օրացույցի, քան ընդունել օտարիներ: Առանց ճշգրիտ օրացույցի մենք կարող ենք սխալ հաշվել լուսնի շրջափուլը կամ չնկատել խավարումը, բայց Կայսրությունը ճիշտ նույն կերպ կբարգավաճի: Հենց

որ օտարերկրացիները խառնվեն մեր գործերին եւ խառնեն դրանք, վախենում եմ, որ դա նման կլինի կրակը գերաններին մոտ բերելուն»: Այլ գիտնականներ փորձում էին վարկաբեկել մեխանիկական գյուտերը զուտ սովետությամբ: Վան ժեն Յզյուն (1832-1916) գրում էր.

«Ի՞նչ է շոգենավը, եթե ոչ նավերից ամենաանճոռնին, եւ դաշտային թնդանոթները, եթե ոչ հրանոթներից ամենաանճոռնիները: Նավի առավելությունը նրա արագության մեջ է, իսկ լավ հրանոթները պետք է հեշտությամբ տեղափոխվող լինեն: Մինչդեռ այդ բարբարոսական նավերը չեն կարող մեկ մատնաչափ իսկ նավարկել առանց քարածխով ապահովված լինելու, իսկ նրանց թնդանոթները չեն կարող բարձրացվել կամ շարժվել առանց մի քանի մարդկանց ձեռքերի օգնության: Եթե մարտադաշտում հանդիպում ենք քաջ զինվորի, որը մեզ վրա է նետվում արյունոտ սրով, չենք կարող չսպանվել»:

Բայց իրադարձությունները ցույց տվեցին, որ շոգենավն անճոռնի չէ. ընդհակառակը՝ շոգենավը հեղաշրջող փոփոխություններ բերեց թե՛ տնտեսական, թե՛ ռազմական տեսանկյունից: Մի որոշակի տեսական ժամանակ Չինաստանը շփոթմունքի մեջ էր. դեռեւս հակակրակնք տածելով արեւմտյան գիտության հանդեպ՝ նա վախենում էր այդ գիտության նվաճումներից: Երբ մեծամիտ ամբարտավանությունը խառնվում է վախի հետ, հետաքրքիր վիճակ է ստեղծվում: Այսպիսի մի պատմություն կա թայպիների ապստամբության շրջանի չին հայտնի գեներալ Հու Լին-Իի (1812-1861) մասին: Անցին քաղաքի պաշարման ժամանակ նա ծիով ուղեւորվեց դեպի Վիշապի լեռը՝ տեղանքն ուսումնասիրելու: Հասնելով Յանցզի գետի ափ՝ տեսավ օտարերկրյա երկու շոգենավ, որ դեպի արեւմուտք էին նավարկում քառատրոփ սլացող ձիերի պես արագ եւ քամու պես թեթեւ: Հու Լին գունատվեց եւ երկար ժամանակ բառ իսկ չէր կարողանում արտաբերել: Ապա տիրապետեց ինքն իրեն, հավաքեց ծիու սանձերն ու գնաց զորանոց՝ իր զորքի մոտ: Ետդարձի ճանապարհին արյուն էր թքում եւ քիչ էր մնում ընկնի ծիուց: Մինչ այդ նա հիվանդ էր եղել որոշ ժամանակ, բայց այս դեպքից հետո հիվանդությունն ավելի խորացավ, եւ մի քանի ամիս անց նա մահացավ:

1900-ականներին ամբողջ ազգը հասկացել էր, որ քանի դեռ փոխզինում չի գտնվել չինական ավանդույթի եւ եվրոպական տեխնիկայի միջեւ, ազգի գոյությանը վտանգ է սպառնում: Եվ բարձրաստիճան պաշտոնյա Չժան Չժի-դունը քաջությունն ունեցավ գրելու.

«Իմանալ Արեւմուտքն առանց Չինաստանն իմանալու՝ նշանակում է

ԱՅԱՈ ՑՅԱՆ

սրտաբեկ լինել: Իմանալ Չինաստանն առանց Արեւմուտքն իմանալով՝ նշանակում է խուլուհամր լինել»:

Նա ուզում էր հստակ հասկացնել, որ Արեւմուտքը պետք է ընդունվի պարզապես որպես «տեխնիկա»: Չժան Չժի-դունը գրում էր. «Քանի դեռ մարդ պահպանում է կոնֆուցիական միտքը, հետեւում է կոնֆուցիական վարքականոնին, քանի դեռ հնազանդվում է Կայսրին ու պաշտպանում ժողովրդին, ինչ վնաս կարող է տալ երկաթուղով ճամփորդելը կամ շոգենավով նավարկելը»: Այս դիտարկումը հենց այնպես չէր. դրանից ոչ շատ առաջ Ցզեն Ցզի-ցզեն՝ մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյա, երկրի բնակչության կեսի զայրույթն էր հարուցել՝ շոգենավով ճամփորդելով դեպի իր հայրենի Հու-նան: Սանջուրների գահատոհմի նշանաբան-կարգախոսն էր (տարբեր պարտություններ կրելուց հետո)՝ «Ընդունել Արեւմուտքի մարմինը, սակայն պահպանել մեր չինական հոգին»: Նա, ով Չինաստանում եղել է 1937 թվականից առաջ, տեսած կլինի այս գաղափարի բազմաթիվ մարմնավորումներ: Օրինակ՝ շատ ընդունված էր Արեւել-Արեւմտյան ճարտարապետությունը: Կարելի էր տեսնել հնագույն չինական կառույցների արտաքին վեհաշուք գծերով օժտված շենքեր՝ ջնարակված բարձր տանիքներով եւ փարագրանկար կամ ներկված ձեղուններով, իսկ ներսում՝ էլեկտրական լուսավորման, ջրազիծ-կոյուղագծերի եւ կենտրոնացված ջեռուցման արեւմտյան համակարգեր...

Պրն Լեոն Անդերվուդն իր «Արվեստն Աստծո համար» գրքում (1934) ողջամտրեն ասում է. «Ինչ էլ որ լինի, թող մեքենան մաքրի մեր կոշիկները եւ լցնի մեր մառանները, բայց ո՛չ մեր երազանքները: Եթե հարկ է, հանքահոր փորեք ձեր դիմացի այգում, բայց ձեր տան ետեւի այգում պահպանեք մի անկյուն, որտեղ կարող եք հեռու մնալ ամեն աղմուկից եւ լսել կեռնեխի երգը: Ձեզ համար անհրաժեշտ հինգ աթոռները թող մեքենայի ստեղծածը լինեն, բայց ո՛չ վեցերորդը. ինքներդ ստեղծեք այն ձեր իսկ հաճույքի համար: Տպագրեք ձեր շրջաբերականները, բայց գրիչ պահեք ձեր սիրալին նամակների համար»: Համեմատաբար ավելի հեշտ է հասնել այսպիսի հարմարվողականության միատարր մշակույթի ներսում, բայց տարասեռ մշակույթի միանմանեցումը բոլորովին այլ մի խնդիր է առաջացնում:

Բայց երբ այդ խառնուրդը ներմուծվում է երաժշտության կամ նկարչության մեջ, մենք զգում ենք որոշակի անհամապատասխանություն, եթե ոչ փաստացի անհամատեղելիություն: Կարելի՞ է արդյոք բրնձի թղթի վրա ավանդական չինական թեմաներով նկարել հոլանդական դպրոցի կամ վենետիկյան ոճով... Արվեստը փխրուն ու գերզգայուն մի բան է. այն ավելի

բարձր աստիճան է պահանջում միաձույլ եւ ամբողջական լինելու համար եւ չի կարող կատարելության հասնել ժամանակավոր սարքովի մեթոդներով:

Մինչ չինական դիվանագետներն աշխարհի խնդիրներն էին քննարկում Վերսալում, չինացիներն իրենց երկրում կատաղի փլիսոփայական պայքարի մեջ էին ներքաշվել մի կողմից՝ հակազիտական իդեալիստների հետ, ինչպիսին Լյան Շոու-յանն էր, մյուս կողմից՝ մատերիալիստների հետ՝ դոկտոր Հու Շիի, պրո Չժեն Դու-սյուի եւ Լի Դա-չժաոյի գլխավորությամբ: Պրո Լի Դա-չժաոն հետագայում դարձավ կոմունիստ եւ կյանքը զոհեց որպես իր համոզմունքներին նվիրված նահատակ: Այս համազգային տարածայնության առարկան գիտության եւ կյանքի հարաբերությունն էր: Եվրոպական պատերազմը մշտապես հիշեցնում էր դա, բայց մատերիալիստը պնդում էր, որ այդ պատերազմը ամբողջովին պայմանավորված էր անգրգերմանական շուկայական բախումներով եւ ոչ մի կապ չունեի գիտության աղետալի հետեւանքների հետ: Տարածայնությունն իր գագաթնակետին հասավ 1922-ին, երբ երկու կողմն էլ պարզեցին, բավականին տեղին, թե կկարողանա արդյոք չինական քաղաքակրթությունը գոյակցել արեւմտյան քաղաքակրթության հետ, եւ եթե ոչ, ինչպես եւ որտեղ կարող էին կարգավորումներ կատարել: Երկու կողմն էլ մտահոգ էին, որպեսզի չինական քաղաքակրթությունը գոյատևի, բայց մատերիալիստներն է՛լ ավելի շահագրգռված էին, որ այն դառնար համաշխարհային քաղաքակրթության մի մասը:

Մտածող չինացիները երբեք չեն ձերբազատվել մեքենայի հանդեպ ունեցած իրենց խոր անվստահությունից: Ամեն անգամ, երբ Արեւմուտքն աղետի մեջ է հայտնվում, նրանք իրենց ձայնն են բարձրացնում: Վերջին պատերազմի ավարտին չին գիտնականներից մեկը գրել է.

«Մարդկային գործերի բնականոն ընթացքին դեմ է՝ թույլ տալ, որ նպատակահարմարությունը ոտնակոխ անի Էականը: Արեւմտյան քաղաքակրթության մեջ կան առավելություններ, բայց եկեք մենք մեզ վնաս չհասցնենք նրա արատներով: Եթե Կոնֆուցիուսը վերահսկողություն ունենար ինքնաթիռների ու սուզանավերի նկատմամբ, համոզված եմ, որ նա դրանք չէր գործածի անմեղներին վնասելու համար»:

Գու Հուև-մինը՝ հրաշալի չին մի ուսանող Անգլիայում, որ անգլերեն էր թարգմանել չինական մի շարք դասականների, նույնպես մեքենայի մոլեռանդ հակառակորդ դարձավ վերջին պատերազմի ժամանակ: Նա գրել է.

«Երբ արեւմուտքցին ձեզ սովորեցնում է հուսալի լինել, նա ձեզ ստի-

ԱՅՊՈՑԱՆ

պում է կա՛մ Աստուծուց վախենալ, կա՛մ վախենալ օրենքից: Առանց այս երկուսից մեկի վախի նույնիսկ եղբայրներն ու մոտ հարեանները չեն կարող վստահել մեկմեկու»:

Երբ թնդանոթները որոտացին եվրոպական մայրցամաքում, Չինաստանում գլուխ բարձրացրեց հանրային բողոքը հանուն «Հոգեւոր քաղաքակրթության», եւ շատ մարգարեներ պնդում էին, որ արեւմտյան քաղաքակրթությունն արդեն կործանվում է: 1919 թվականին Լյան Ցզի-չժանոն գրեց իր «Եվրոպական տպավորությունները», որտեղ ևս Մեծ պատերազմը բնորոշում էր որպէս «Արեւմուտքի ծավալած՝ կյանքի հանդէպ զուտ մատերիալիստական, զուտ մեխանիստական հայացքների վրեժխնդիր պատիժ»:

Կասկածոտ այս ձայները դեռ կարելի է լսել նույնիսկ երեսուն տարի անց: 1939-ից ամբողջ երկրագունդը մեկ անգամ էլ է հայտնվել թնդանոթների արձակած կրակների բոցերում ու պայթող ռումբերի կուրացուցիչ բռնկումներում, եւ պրոֆեսոր Յզյան Սուն՝ մեր հայտնի պատմաբանը, վերջերս գրեց.

«Աշխարհը հիմա նոր փորձության միջով է անցնում: Եվրոպացիները հասել են գիտությունն ուժի վերածելու եւ երկրագնդի հարստությունը զավթելու իրենց ձեռնարկման գագաթնակետին: Մեքենան արդեն քանիցս ցույց է տվել իր սոսկալի ժանիքները՝ պատրաստ կլլելու ամբողջ մարդկությանը: Նրանց հասարակության անհավասարությունը նույնպէս հասել է ծայրահեղ աստիճանի: Այլեւս հայտնաբերելու Նոր Աշխարհ չկա, չկան այլեւս նոր հնարավոր գաղութներ, որպեսզի բաժանվեին հզորների միջեւ: Հարյուր միլիոնավոր կյանքեր են զոհաբերվում յուրաքանչյուր պատերազմում: Քանի դեռ այս պատերազմն ամբողջությամբ չի հանգցրել արեւմտյան քաղաքակրթության կանթեղը, նրանք պարտավոր են անհապաղ հրաժարվել իրենց որդեգրած ուղուց՝ նոր ուղի ընտրելով: Նրանք կարող են կա՛մ վերադառնալ Հունական կենսակերպին, կա՛մ ձեռավորել Նոր Թրիստոնեական կենսակերպ, կա՛մ նույնիսկ դառնալ դեպի Արեւելք՝ փրկության համար: Չինաստանը դասեր է քաղել այնպիսի վիթխարի կորուստների գնով, որ այլեւս աներեւակայելի է, թե կկրկնի այդ աղետալի գործընթացը»:

...Ոչ շատ վաղուց պրոֆեսոր Յան ժենբյանը մի հողվածում նշել է, որ առայսօր գիտության նկատմամբ Չինաստանի վերաբերմունքը եղել է չափազանց օգտապաշտական, չափազանց հակված դեպի գործնական շահը: «Արեւմտյան քաղաքակրթությունը,- գրում էր նա,- հիմնված է տեսա-

կան գիտության ամբողջ մի շարքի վրա: Թեև Նյուտոնը մեծ գիտնական էր, բայց իր կյանքի ընթացքում մեքենա չհորինեց: Ձգողականության օրենքն այսօր ժամանակակից գիտության կարեւոր հիմնասյունն է հանդիսանում, բայց Նյուտոնի ժամանակ այն զուրկ էր գործնական արժեքից: Եվ ավելի ետ գնալով՝ պիտի ասենք, որ եթե չլիներ Վերածննդի ժամանակ հումանիզմի ազատագրումը, ինչը հնարավորություն տվեց մարդկանց բացել իրենց աչքերը բնության երեւոյթների հանդեպ, ևսյնիսկ Նյուտոնի հանճարը չէր կարող այդ հայտնագործությունը կատարել: Պարվիլը ժամանակին ափսոսանք է հայտնել, որ անկարող եղավ գնահատելու Շեքսպիրին: Մենք չենք կարող վայելել գիտությունը՝ առանց ձեռք բերելու այն հսկայական գանձարանը, որ դրա նախադրյալն է»:

Այս սթափ մոտեցումը բավականին նոր հայացք է, եւ իմ կարծիքով ներկայացնում է Արեւմուտքի հետագա արժեւորումը:

Ես հաճախ եմ մտածել երթեւեկությունը կարգավորող լուսացույցների գյուտի մասին: Այդ լուսացույցները տեսանելի կերպով տեղադրված են այնպես, որ հնարավոր չէ դրանց չնայել, եւ ինձ համար դրանք ունեն կրկնակի խորհրդանշականություն: Նախ՝ ներկայացնում են ժողովրդավարության լավ եւ վատ կողմերը: Մտածեք հապա ձանձրոյթի եւ ժամանակի կորստի մասին, երբ կարմիր լույսը ձեզ ետ է պահում, թեւ երթեւեկություն չկա, եւ կարող էիք անցնել մյուս կողմը: Եվ եթե դա տեղի է ունենում գիշերը, երբ շուրջը շատ ուստիկաններ չկան, մեկնումեկը կարող է գայթակղվել ու փորձել աննկատ անցնել փողոցի մյուս կողմը: Բայց երբ երթեւեկությունը ծանրաբեռնված է, մտածեք, թե ձեզ որքան անվտանգ կզգաք՝ հեծանվով համարձակորեն անցնելով փողոցի մյուս կողմը, երբ կողքովդ ողջ արագությամբ բեռնատարներն են անցնում աղմուկ-շառաչով: Կարծում եմ, որ 1940-ին շատ մարդիկ կորցրին իրենց հավատը ժողովրդավարության հանդեպ: Նրանք կարդում էին Պառլամենտի երկարաշունչ բանավեճերի մասին եւ մտածում Կալեի ափերին սպասող խիստ մեխանիզացված զինված ուժերի մասին: Մեզնից շատերն այն ժամանակ անհամբեր էին՝ կարմիր լույսի պատճառով: Իսկ ոմանք փորձում էին ևսյնիսկ թաքուն անցնել այդ լույսի տակով՝ հաջող կամ անհաջող կերպով: Բայց վերջնադրյունքում հաղթանակ տարավ ժողովրդավարական ուղին, որովհետեւ գերմանական ուղին, թեւ արդյունավետ, սակայն միակողմանի է: Իսկ երբ միակողմանի փողոցը ծանրաբեռնվում է եւ խցանվում, այնժամ Աստված փրկի մեզ բոլորիս:

Երթեւեկությունը կարգավորող լուսացույցի երկրորդ նշանակությունը

ԱՅՊՈՑԱՆ

մեքենային վերահսկելու նրա գործառույթն է: Ռա մի հակազուտ է, որը նախատեսված է սանձահարելու արագությունը եւ սրընթաց ուժը: Պատկերացնենք, թե էլեկտրաէներգիայի գյուտարարը մոռանար անջատիչի գյուտն անել: Այսօր մեզնից քչերը կլինեին այստեղ: Երբ քսանական թվականների սկզբին Պեկինում սկսեցին գործել տրամվայները, ես դեռ երեխա էի, եւ տրամվայն իրական վտանգ էր ներկայացնում: Միշտ մտածում էի, թե ինչ սարսափելի կլիներ, եթե դրանցից մեկը փոխեր իր ուղղությունը եւ մխրճվեր տների նեղ շարքի մեջ՝ ջարդուփշուր անելով փոքրիկ տներն իրենց կարմիր փայտե կահույքով: Երբ առաջին անգամ ինձ տրամվայով զբոսնելու էին տանում, ընդդիմանում էի, չէի ուզում գնալ, որովհետեւ լսել էի տարածված խոսակցությունները, որ եթե վթար լինի, եւ տրամվայը հոսանքահարվի, ապա բոլոր ուղեւորները կզրկվեն տեսողությունից: Ես տարօրինակ երեխա էի եւ որոշեցի, որ չէի կարող ինձ այդքան վտանգել պարզապես մի զբոսանքի համար: Երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի պարզեի, որ տրամվայի վարորդը տարբեր լծակներ ունի, որոնցով կարող է վերահսկել իր փոխադրամիջոցը: Նույնն էր նաեւ ավտոմեքենաների պարագայում. մենք դրանց անվանում էինք փողոցային վագրեր: Նույնիսկ այսօր, երբ խիստ մեխանիզացված ինչ-որ բանի հետ առնչություն եմ ունենում, ամենից առաջ խիստ մտահոգ եմ տեսնել, թե ինչպես է դա վերահսկվում: Մեքենաների մասին բոլոր մոճավանջները վերահսկողությունը կորցնելու վախի վրա են հիմնված: Հիշու՞մ եք Չառլի Չապլինի «Արդի ժամանակներ» ֆիլմում ուտելիք մատուցելու համար ստեղծված մեքենան, երբ մարդը կորցրեց գրեթե իր բոլոր ատամներն ու քիչ էր մնում գլխի կեսից զրկվի: Պրն Ֆորսթերի մեքենան վերահսկողությունից դուրս էր եկել, նույն վիճակում էր նաեւ պրն Հաքսլի մեքենան: Չինաստանում մենք ասում ենք, որ մարդ չպետք է ուտելուց հրաժարվի շնչահեղծության նոպայի պատճառով: Մեզ անհրաժեշտ են պարզապես հզոր եւ արդյունավետ անջատիչներ յուրաքանչյուր հզոր եւ արդյունավետ մեքենայի համար, երթեւեկության կարգավորման անողոր լուսացույցներ՝ անողոր արագությամբ սլացող բեռնատարների համար:

Եթե ինչ-որ բան արդեն ստեղծվել է, անօգուտ է փորձել ազատվել դրանից: Ռա պարզապես անհնար է: ... Ուստի ես համոզված եմ, որ երաշխիքն է՝ խրախուսել հակազուտները, որպեսզի գյուտերը պահենք վերահսկողության ներքո: Այդ կերպ, կարծում եմ, կարող ենք խուսափել անհատի կործանումից եւ միեւնույն ժամանակ տեսնել, որ այս անհաղթահարելի առաջընթացը տանելի է: Այնպես որ, մինչ գյուտարարներն զբաղված են արա-

գության նոր ձեւերով, թող շրջահայաց կերպով արտադրվեն նաեւ երթելեկությունը կարգավորող ավելի շատ լուսացույցներ: Մենք պետք է ունենանք քաղաքական երթելեկությունը կարգավորող լուսացույցներ՝ լուսավորող սահմանադրության տեսքով, կամ քաղաքական երթելեկությունը կարգավորող լուսացույցներ՝ վերահսկելով մասնավոր կապիտալը: Կամ մեկ հիմնական երաշխիք, որում պետք է համոզված լինենք. ազատական կրթությունն եւ սոցիալական ծառայության համապատասխան համակարգ: Առաջինը պետք է վստահեցնի, որ ժամանակակից աշխարհի այս հսկայական մեքենայում անհատն ավելին է, քան ատամնանիվը, իսկ վերջինը պետք է հետեւի, որպեսզի ոչ մի անհատ մեկ ուրիշի ողորմաճությունից կախված չլինի...

Մինչ այժմ մենք դիտարկում էինք մեքենայի հանդեպ ունեցած չին գրողների վերաբերմունքը: Այժմ մոտենում ենք Չինաստանի մշակույթի ապագայի վերաբերյալ հարցին: Պետք է խոստովանեմ, որ ես ձանձորալի անձնավորություն եմ եւ շքեղ անուրջներին տրվելու ո՛չ երեսակայությունը, ո՛չ էլ համարձակությունն ունեմ: Գիտեմ, որ ես ավելի լավ քարոզիչ կլինեի, իսկ դուք էլ՝ ավելի ոգետրված լսարան, եթե կարողանայի ձեզ ներկայացնել ետպատերազմյան չինական մշակույթի վարդագույն պատկերը: Բայց նախեւառաջ մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ինչի՞ց է կախված մշակույթը»:

Չինական մշակույթի հեռանկարների մասին խոսելիս չպետք է մոռանանք տնտեսական ապագան եւ քաղաքական կայունության խնդիրը: Բոլորս գիտենք, որ ազատական կրթության համակարգը ծաղկող մշակույթի հիմքն է, իսկ քաղաքական վայրիվերումներն ու հեղաշրջումները եւ սոցիալական անապահովությունը կրթության թշնամիներն են: Աղքատությունը Չինաստանում մեծապես խոչընդոտել է գանգվածային կրթության առաջընթացին: Մյուս կողմից, եթե ուշադրություն դարձնեք այն առարկաներին, որոնցում մասնագիտանում են չին ուսանողներն արտասահմանում, կտեսնեք, որ 1931 թվականից, երբ ներխուժում կատարվեց Մանջուրիա, տեխնիկական առարկաներն ավելի ու ավելի մասսայականություն վայելեցին, այնքան, որ գործնականում ընդհանուր մշակույթի առարկաներ սովորող ուսանողներ չկային արդեն... Բանն այն չէ, թե այդ երիտասարդ չինացիները մշակույթի հանդեպ ընդհանրապես անտարբեր են: Ես գոնե բժշկություն սովորող առնվազն մեկ ուսանողի գիտեմ, որը դասական երաժշտության իր ձայնագրությունները շատ ավելի է սիրում, քան անտոմիայի իր նմուշները: Բացատրությունն այն է, որ այդ երիտասարդներն

ԱՅՊՈՑՆԵՐ

ավելի ու ավելի են իրազեկ դարձել ժողովրդի հրատապ կարիքներին եւ շատ դեպքերում զոհաբերել են իրենց սեփական հակումներն ու նախասիրությունները:

Մանջուրական ներխուժման մեկ այլ անուղղակի արդյունք էր (մի բան, որ նույնիսկ լորդ Լիթթոնը չի բացահայտել) Չինաստանի դպրոցներում եւ ուսումնական հաստատություններում ռազմական պատրաստվածության ուսուցման ներմուծումը... Արդյո՞ք ռազմական պատրաստվածությունը դպրոցների համար դեռ անհրաժեշտություն կլինի այս պատերազմից հետո: Կարծում եմ կհամաձայնեք, որ դրա պատասխանը պետք է պետական գործիչները տան, ոչ թե դպրոցի ուսուցիչները:

...Երբ փոթորիկը դադարի եւ խաղաղությունը վերականգնվի, հոգևած, ուժասպառ երիտասարդ չինացիները, երիտասարդ բրիտանացիների նման, կվերադառնան պատերազմից մեծապես վնասված իրենց տները: Ցավի եւ թշվառության մասին տխուր ու խեղձ հիշողությունները կխամրեն, եւ նրանց մտքերը կսկսեն պարզվել ու հստականալ:

Եթե հավատում ենք, որ մեր դարավոր, հարուստ քաղաքակրթության ժառանգությունը որեւէ իմաստ ունի, ապա կարող ենք վստահել ապագայի նրանց տեսլականին:

[Դասախոսությունը ներկայացվել է Լոնդոնում, Չինաստանի ինստիտուտում:]

2. ԻՔՍԵՆԸ ՉԻՆԱՍԱՆՈՒՄ

- Եվ չինացիների վրորվածությունը Բեռնարդ Շոուից

Չինաստանում Իքսենն ավելի շատ դիտվում է որպես սոցիալական վիրաբույժ, քան որպես դրամատուրգ: Ամբողջ մի տասնամյակ ևս գրեթե կուռքի էր վերածվել չինական մտավորականության կողմից: Ոչ թե որ մենք ընտրեցինք նրան, այլ ավելի շուտ ևս արտահայտում էր երիտասարդ չինացիների տրամադրությունը, երբ սկսվեց գրական հեղափոխությունը: Այդ օրերին Չինաստանն այնքան անհույս հիվանդ էր, որ խիզախ մի բժշկի կարիք էր գգում, որը կկարողանար նշանակել ամենահանդուզն ու ծայրահեղ դեղամիջոցները: Իքսենն այն ժամանակ մեզ համար հանդիսացավ ընդվզող ամենակրքոտ առաջամարտիկը: Արեւմուտքի ներկայացուցչի համար դժվար է պատկերացնել մեզ վրա գործած այն ազդեցությունը, երբ հայտնաբերեցինք մի դրամատուրգի, որ հրահրում էր կանանց փախչել իրենց եսասեր, բայց օրինական ամուսիններից եւ հերոս էր դարձնում խենթ մի բժշկի, որը դեմ է դուրս գալիս ամբողջ մի քաղաքի միաձայն որոշումներին: Դեղին կայսեր ժամանակներից սկիզբ առած սոցիալական համաձայնագրերն սկսեցին վիճարկվել: Անհատներն սկսեցին հանդես գալ մտածելու եւ գործելու իրենց իրավունքների պաշտպանությամբ: Չինաստանը՝ հավերժության հովտում քնած հսկան, հանկարծ արթնացավ հոգեվարքային տանջալի մղձավանջից: Քանի որ տասնիններորդ դարը զուգորդվում էր աղքատության, կաշառակերության եւ «օվկիանոսային դեերի» սպառնալիքների հետ: Չինական մեծ կայսրությունը ցանկացած պահի կարող էր կործանվել: Ճակատագիրը պարզապես սպասում էր բաժանարար ուժերի համաձայնությանը: Երիտասարդ չինացիները կարդացել էին Տոկաստանի եւ Կորեայի չարագույժ պատմությունները: Գիտակցելով վերահաս վտանգը՝ նրանք բնականաբար սարսափած էին, անհամբեր եւ խորապես գայրացած հայրենի ավանդույթների դեմ, որ իրենց երկրում շղթայում էին կանանց ոտքերը եւ խոնարհում տղամարդկանց թիկունքները: Նրանք ապստամբություն բարձրացրին, եւ կայսերական դահիճը խելացի շատ գլուխներ կտրեց Պեկինի Քովենթ Գարդենում: Բայց ապստամբությունը շարունակվեց: Չինական մամուլն ինքը բոցերի մեջ էր: 1909 թվականին թերթերից մեկի խմբագիրը դատապարտվեց մեկ տարվա բանտարկության՝ հետեյալ վերնագրով հրապարակում տպագրելու համար՝ «Չինաստանը փրկելու համար մեզ բռնի հե-

ԱՅՊՈ ՑՅՊՆ

դաշրջում է պետք»: Եվ 1909-ից իսկապես հեղաշրջում եղավ: Թուրքացի զինվորական հրամանատարների միջև թշնամանք, ուսանողների, անարխիստների եւ կոմունիստների ցույցեր: Անվրդով, ստոիկյան հանդարտությամբ կոնֆուցիական Չինաստանը հանկարծ դարձավ եռացող մի կաթսա, որի մեջ բարու եւ չարի աննախադեպ խառնուրդով մի կերակուր էր եփվում:

Ապստամբության բուռն շրջանում երիտասարդ չինացիները, հատկապես նրանք, ովքեր սովորել էին արտասահմանում, իրենց գաղափարներն արտահայտողներ գտան Եվրոպայում: Դրանցից ամենագլխավորը նորվեգացի դրամատուրգ Իբսենն էր: Իբսենի ստեղծագործությունները կարծես արտահայտում էին նրանց դժգոհությունն ու վրդովմունքը գոյություն ունեցող հասարակության դեմ եւ ապստամբության նրանց բուռն ձգտումը: Եվ այնքան հուզախոռով վիճակում էին, որ Իբսենի թատերարվեստի մանրամասների քննությանը հետամուտ լինելու փոխարեն ձայն տվեցին նրան իրենց հուսահատ մենության խորքից. «Սիրելի՛ ուսուցիչ, վերջապես գտել ենք քեզ»: Երիտասարդ Չինաստանը նրան ողջունեց որպես գաղափարակից ապստամբի, մարդու իրավունքների առաջամարտիկ պաշտպանի: Այսպես արեւելյան տաճար կառուցվեց սկանդինավյան իմաստունի համար: Բայց, հնչպես բոլոր տաճարները, այն, իհարկե, հարատւ է չէր: Այդուհանդերձ, խոռվահոյզ Չինաստանի ապստամբ մտավորականներն Իբսենին երկրպագեցին ավելի քան մեկ տասնամյակ, շատ երիտասարդ, բայց հիշարժան մի տասնամյակ, որի ընթացքում հիմնախնդիրների մասին գրված թե՛ թատերգությունները, թե՛ արձակը վայելում էին ժողովրդի համընդհանուր համակրանքը:

Մայրենիի աճող ժողովրդականության հետ ոչինչ չէր կարող ավելի շատ ավանդույթից հեռանալ, քան ժամանակակից չինական դրաման: Առաջինը դա փորձարկվեց չին ուսանողների մի խմբի կողմից Տոկիոյում, եւ ամենաառաջին եվրոպական վերամշակված պիեսներն էին «Կամելիա-գարդ տիկին» ու «Քեռի Թոմասի խրճիթը»: Երկուսն էլ խիստ գրավում էին չինացիներին, որոնք տառապում էին ռասայական ճնշումներից եւ ամուսնական օրենքների սահմանափակող կապանքներից: Բայց միևնույն ժամանակ Իբսենը ոչ մի եվրոպացի դրամատուրգ լրջորեն եւ կանոնավոր կերպով չէր ներկայացվել Չինաստանում: Սոտավորապես 1917 թվականին նրա թատերգությունների թարգմանություններն սկսեցին հայտնվել շարժման առաջատար օրգան «Նոր երիտասարդություն» հանդեսում: «Տիկնիկների տանը» հաջորդեցին «Ժողովրդի թշնամին» եւ այլ գործեր, այդ թվում՝ «Կի-

նը ծովից» պիեսը: Չինական բեմում դեռ սեռային խտրականություն էր, եւ այդ ժամանակ տղամարդիկ հպարտ էին, որ խաղում են խոռվարար Նորայի դերը: 1918-ին շարժման առաջատար ոգին՝ դոկտոր Հու Շին (1938-1942-ին Վաշինգտոնում Չինաստանի դեսպանը) հրապարակեց իբսենիզմի վերաբերյալ իր հոդվածը: Նա իբսենին ներկայացնում էր որպես Չինաստանի համար ամենահուսալի սոցիալական բժիշկ, «անցյալ դարի առողջ անհատապաշտության մարմնացում: Հասարակությունը բարելավելու համար մենք պետք է նախեսառաջ ստեղծենք առողջ անհատականություն, ազատ եւ անկախ անձնավորություն, որը քննադատաբար կվերաբերվի մեր գոյություն ունեցող միջավայրին: Մենք պետք է ճշմարտության մասին խոսելու քաջությունն ունենանք, հարձակվենք հասարակության վրա, երբ այն դառնում է կաշառված եւ այլասերված, ինչպես դա անում էր հոգով աննկուն դոկտոր Սթոքմանը»:

Իբսենի ժողովրդականությունը Չինաստանում 1917-1921 թվականներին շատ մեծ էր: Որոշ ժամանակ այս կամ այն պիեսի թեման կոպիտ կերպով մեկնաբանվում էր որպես «հասարակական խնդիր, որի մասին խոսվում է»: Այնուհայտ էր, որ քննադատների համար նույնպես դա ընդունելի մոտեցում էր համարվում: Ումանք մեղադրել են մեր բարոյախոսող քննադատներին մի շարք մոդայիկ տերմիններ, ինչպես, օրինակ, «սով» եւ «շահագործում» բառերը գործածելու համար, որոնք կան հեղինակի գործում, փոխանակ մինչ այդ վերջնականորեն վճռելի, թե արդյո՞ք գործը «ծանրակշիռ» է: Բայց թատերագիրներն իրենք նույնպես ձեռավորել են այն սովորույթը, որ իրենց գործերը նկարագրվեն «հիմնահարցերի» հետ կապված: Մի հեղինակ ներում հայցող տոնով գրում էր. «Թեւ պիեսը գեղագիտորեն անկատար է, ուրախ եմ ասել, որ անդրադարձել եմ ամուսնությանն ու գյուղական սնանկությանը՝ մեր առջեւ ծառայած երկու այժմեական սոցիալական խնդիրներին»: Ժողովրդական թատրոնը 1921թվականին իր բացման հայտարարության մեջ ազդարարում էր. «Պրն Բեռնարդ Շոուն մի առիթով ասել է, որ թատրոնը քարոզչության վայր է: Թեւ մենք ամբողջովին համամիտ չենք դրան, համենայն դեպս կարող ենք ասել, որ դրաման ժամանցի ձեւ համարելու դարաշրջանը հաստատ անցել է: Ժամանակակից թատրոնը սոցիալական առաջընթացը շարժող ակիվ է: Այն նաեւ մանրադիտակ է, որով հայտնաբերում ենք մեր միջավայրի ախտերը: Անողորմ մի հայելի է, որի մեջ արտացոլվում են մեր հասարակության բոլոր արատավոր կողմերը»:

Սոցիալական անարդարության եւ չարիքի մերկացումը մշտապես չի-

ԱՅՊՈՑԱՆ

Լական գեղարվեստական գրականության սիրված թեմաներից է եղել: Դարերի ընթացքում բազմաթիվ վեպեր ու պատմվածքներ են գրվել, որոնք ծաղրի են ենթարկել չար մանդարիններին և ազահ ու գիշատիչ կալվածատերերին: Դա, ըստ էության, հասարակական տրամադրությունների դրսևորման միակ ելքն էր իմպերիալիստական ռեժիմի ներքո: Մեր գրականության այս գլխավոր գործառույթը շարունակվում է մինչև այսօր առանց ընդմիջման՝ Լու Սինի «Ա Քյուի իսկական պատմությունից» մինչև Չժան Տյան-Իի «Պրև Հուա Վեյը»: Շնորհիվ Իբսենի՝ այդ ձեռնարկումը դարձել է ավելի գիտակցված և կանխամտածված: Բասնական թվականների չիսական թատերգություններում գործողությունները հաճախ ծավալվում էին արատավոր մթնոլորտում, սյուժեն զարգանում էր ընտանիքում, որ լի էր հարճերով, իսկ գլխավոր հերոսը թվացյալ կոնֆուցիական էր, բայց ներքուստ փչացած հասարակական գործիչ: Այս դժոխքում կարելի է լսել պոռնիկների արատավոր քմծիծաղներ, միլիոնատերերի հորանջներ և ճնշվածների փնթփնթոց-տրտունջներ: Անտվոր մի բան չէ՝ գործողությունների զագաթնակետին այրվող ջահը ձեռքին լրջմիտ երիտասարդի հայտնվելը, որը դատապարտում ու մերկացնում է «անիժյալ հասարակության բոլոր արատավոր կողմերը» և գրկաբաց ողջունում մշուշապատ ու անորոշ ևոր աշխարհը: Ինձ հետաքրքրում է հատկապես այն փաստը, որ Իբսենը երիտասարդ տարիքում անարխիստ է եղել: Ժամանակակից չիսական գրականության վաղ շրջանն իր բնույթով խիստ անարխիստական էր: Այն բուռն վրդովմունք էր արտահայտում այս անկատար ու անարդար աշխարհի հանդեպ և կարոտագին ձգտում դեպի վարդագույն այն դրախտը, որտեղ մարդն ազատ է ու ինքնիշխան:

Վստահորեն կարելի է ասել, որ գրեթե յուրաքանչյուր չին գրողի գործում իբսենիզմի մի երակ կա: Գո Մո-ժոն՝ մեր ամենաբեղմնավոր և բազմակողմանի գրողներից մեկը, 1922-ին գրված իր երեք պատմական թատերգություններում, որ «Երեք ապստամբ կանայք» վերնագիրն են կրում, սոցիալիզմի և ֆեմինիզմի մի խառնուրդ էր քարոզում: «Չժո Վեն-չժունն», օրինակ, պատմություն է Քրիստոսի ծննդից առաջ մոտ 100 թվականին ապրող այրի մի կնոջ մասին, որը փախել էր իր սիրեցյալի՝ գիտնական Սիմա Սյան-ժուի հետ, որ սիրահետել էր նրան՝ վին նվագելով: Դարեր շարունակ այս միջադեպը ցնցող մի խայտառակություն էր համարվում: Գո Մո-ժոն ընտրել էր այս թեման, որպեսզի պաշտպաներ կրկին ամուսնանալու կնոջ իրավունքը: 1923 թվականին Չեցյանի Լահանգի մանկավարժական ուսումնարանի աղջիկների կողմից այս պիեսի բեմադրությունը

պատճառ դարձավ այդ հաստատության ղեկավարի՝ աշխատանքից ազատման: Ավելի ուշ այն խստորեն դատապարտվեց տեղի Կրթության խորհրդի կողմից՝ որպես անվայել արարք:

Որոշ ժամանակ անց հիմնախնդրային պիեսների բեմականացումը չէր գոհացնում ո՛չ մաքուր դրամատուրգին, ո՛չ գաղափարախոսին: Եվ մեղավորն այստեղ Իբսենը չէր, այլ երիտասարդ Չիլաստանի անհանգիստ ոգին: Ետադարձ հայացք զգելով այն ալիքներին, որ ողողում էին ժամանակակից չինական գրականության ափերը, կարելի է տեսնել, ի մեծ դժգոհություն մարքսիստների, որ Իբսենի անհատապաշտությանն անմիջապես հաջորդող մակընթացությունը ռոմանտիկ բնույթ ունեւորող անկումային՝ դեկադանսի շեմին: Երբ լուրջ Իբսենի հանդեպ մոլուցքը մարեց, երիտասարդ չին գրողների երեակայությունը գրավեցին Օսկար Ուայլդը եւ Բողերը՝ իրենց տարաշխարհիկ զանազան դրսեւորումներով ու՝ Լրբերանգներով: Պոեզիայում «հրո ծաղիկը» (այն էլ՝ զլխատառերով) չափազանց շատ գործածվող պատկեր էր: Դրամայում մասսայականություն վայելող հիմնահարցային պիեսներն իրենց տեղը զիջեցին հանրահայտ Նան Գո շարժման հիմնադիր Տյան Հանի զգացմունքային պիեսներին: Որոշ ժամանակ բեմը գրեթե ողողված էր չին թատերասերների արցունքներով: Երբ տեղեկացան, որ Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» ստեղծագործությունը Գերմանիայում շատ ինքնասպանությունների պատճառ էր դարձել, մի քանի գերզգայուն հոգիներ առանց հապաղելու իրենց կյանքերը զոհաբերեցին՝ Տյան Հանի «Ողբերգություն լճի վրա» պիեսի բեմադրությունը դիտելուց կամ Գո Մո-ժոյի «Թափված տերեւները» կարդալուց հետո: Սակայն այս հիվանդագին վիճակը երկար չտևեց: 1925 թվականին, երբ մի միջադեպ տեղի ունեցավ, որի ժամանակ Շանհայի ոստիկանությունը պաշտպանում էր ճապոնացի գործարանատերերի շահերը եւ զնդակահարեց չին ուսանողների ու բանվորների, ամբողջ երկիրը, բնականաբար, հայտնվեց խռովահույզ վիճակում: Ստեղծագործական ընկերությունը՝ ազդեցիկ գրական մի խմբավորում, որ հիմնական պատասխանատվությունն էր կրում անկումային տրամադրության համար, հանկարծ դարձավ պրոլետարական գրականության կրքոտ ջատագով: Այդ ժամանակվանից սկսվեցին գրական քաղաքացիական պատերազմները, որոնք շարունակվեցին մինչեւ չին-ճապոնական պատերազմի բռնկումը 1937-ին, երբ չին գրողները միասնական ճակատ կազմեցին:

Տեխնիկական առումով հիմնախնդրային գործեր ներկայացնող թատերագիրները լուրջ բացթողում էին անում: Նրանք կառչել էին Իբսենի սո-

ԱՅՊՈՑԱՆ

ցիալական ավետարանից եւ քարոզում էին այն ամենայն լրջությամբ: Բայց անտեսել էին հանրային ժամանցի գործառույթը: Հետեւաբար, հիմնախնդիրներ ներկայացնող թատերգությունները միջնադարյան դիդակտիկ թատերգություններին համարժեք մի բան էին դարձել: Իբրևսի բոլոր հայտնի «հետնորդներից» Բեռնարդ Շոուն ամենահանրահայտն է Չիկաստանում... Բայց որքանով է նա կապված հիմնախնդրային թատերգության հետ՝ դժվար է ասել: Միջին ընթերցողի վրա, ամենայն հավանակալությամբ, առավել տպավորվություն են գործում նրա սպանիչ հումորը եւ արտառոց ու բազմաբովանդակ իրավիճակները: Որ ժամանակակից թատերագիրների մեջ նա ամենահաջողված քարոզիչն է, կասկածից դուրս է: Շատ փորձեր են արվել Չիկաստանում նրան կուռք դարձնելու: Սակայն տեղի ունեցավ ցավալի մի դեպք, որն ասես նախագուշացում էր հիմնախնդրային թեմաներ շոշափող բոլոր թատերագիրներին: 1921 թվականի գարնանը չին հանդիսատեսը բավականին սառն ու կոպիտ ընդունեց «Տիկին Ուորենի մասնագիտությունը»: Մինչ այդ՝ եվրոպական պիեսների հարմարեցումը չինական բեմերին հիմնականում արժանանում էր ուսանողական խավի աջակցությանը: Հավակնոտ մի բեմադրիչ՝ Վան Չժուն-սյանը, ուզեց ընդլայնել իր լսարանը եւ այդտեղ ներգրավել նաեւ Շանհայի սովորական թատերասերներին: Նրանից երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի համոզեր մի քանի սիրված դերասան-դերասանուհիներին՝ մասնակցելու Շոուի պիեսի չինական տարբերակի բեմականացմանը: Սովորաբար այն թատրոնը, որտեղ պետք է դա ներկայացվեր, իր ծրագրերի մասին հայտարարություն եւ գովազդ էր տալիս միայն երկու լրագրերում: Պարոն Վանն այս անգամ որոշեց հայտարարություն տալ հինգ լրագրում: Բայց այս «հիմնախնդրային թատերգության» ամենահաջողակ օրը սովորական ժամանցային ներկայացման ամենաանհաջող օրվա միայն 60 տոկոսի չափ հանդիսատես հավաքվեց: Նույնիսկ ավելի ցավալի բան եղավ. երկրորդ գործողության ժամանակ, երբ տիկին Ուորենն սկսեց Վիվիին պատմել իր կյանքի պատմությունը, առջեւի նստարաններին նստած մի քանի մոդայիկ տիկին ոտքի կանգնեցին, որպեսզի հեռանան, այն էլ դժգոհ փնթփնթալով: Այս ծանր հարվածից հետո բեմադրիչը բարեմտորեն այսպես էր բացատրում իր անշնորհակալ ու անհասկացող հանդիսատեսի արարքը. «Նրանցից ոմանք ընդհանրապես ոչինչ չէին հասկանում պիեսից, ոմանք հասկանում էին, բայց կարծում էին, թե սյուժեն գուրկ է անսպասելիությունից: Ոմանք բարոյական առարկություններ ունեին իր՝ տիկին Ուորենի դեմ, իսկ ոմանք էլ դուր չէր գալիս հաճախակի չարաշահվող

այնպիսի արտահայտությունների կրկնությունը, ինչպես, օրինակ, «կնոջ ազատություն» եւ «տնտեսական հավասարություն»: Իհարկե, նրանց համար, ովքեր դիտել են պիեսի բեմադրությունն արտասահմանում, մեր ներկայացումը եվրոպական չափանիշներից շատ ցածր էր»: Որոշ բռնկուն քննադատներ անմիջապես առաջարկեցին քնդհանրապես առանձնացնել «թատերախաղը» «իզմից»: Պարոն Վանը, սակայն նախընտրեց փոխզիջումը: Նա ուզում էր պարզ, առաջադեմ գաղափարներով եւ ինտրիգային, խարդավանքով լի սյուժեով թատերգություններ ներկայացնել: Այդպիսով մենք կարող էինք երկրի մտավորականությանը հավաստիացնել, որ այնուամենայնիվ դեռ ճիշտ ուղու վրա ենք՝ միաժամանակ գերծ մնալով ոչ մտավորական հանդիսատեսի ծանծրայթից:

«Շտկման» այս սխեման լրջմիտ շատերի կողմից հավանության չարժանացավ: Չին թատերական քննադատները միահամուռ կերպով սկսեցին հարցականի տակ դնել հիմնահարցը թատերախաղի միջոցով ներկայացնելը: Պրոֆեսոր Վեն-Ի-դոն՝ «Մեռյալ ջրի» հեղինակը, կարծում էր, որ ամբողջ այս հարցը սխալների կատակերգություն է: «Ժամանակակից դրաման Չինաստան եկավ պատահաբար: Առաջին դրամատուրգն Իբսենը եղավ, եւ Իբսենին վիճակված էր դրաման օգտագործել որպես միջոց՝ իր սոցիալական գաղափարները քարոզելու համար, այնպես որ՝ մենք դրանից հետո պատկերացրել ենք, թե գաղափարը դրամայի ամենակարեւոր տարրն է: Երբ Ուայլդը, Շոուն, Հոֆմանը եւ Գոլստորդին մեզ ներկայացվեցին, նրանց գաղափարները միշտ իրենց արվեստից առաջ էին»: Պրոֆեսոր Չժաո Դայ-մոյի բողոքն առավել քան անկեղծ էր: Նա զգուշացնում էր դրամատուրգներին, որ վերջիններս իրավունք չունեն դերասաններին օգտագործել որպես խոսափողներ՝ արտահայտելու համար սոցիալական եւ քաղաքական հիմնահարցերի նկատմամբ ունեցած իրենց հայացքները: «Կարծում եմ՝ մենք ամբողջությամբ սխալ ենք պատկերացնում արվեստի եւ կյանքի տեղը: Արվեստի քնազավառը մարդկային էության խորքերում որոնում կատարել է եւ կյանքի հիմնական ուժն արտահայտելը»:

Հանուն արդարության ասենք, որ ամբողջ գրական շարժման հիմնական շարժառիթը սոցիալական բարեփոխումն էր: Ձեռնարկվող միջոցառումն սկզբում իսկապես «հոգեբանական վերակառուցում» էր: Գրականությունը միջոց էր: Արվեստի մասին, թվում է, հետո են մտածել: Դրանից հետո չին քննադատներն ավելի ու ավելի փորձառու են դարձել: Բայց Հանրապետական դարաշրջանի սկզբում երիտասարդ չինացիների սերունդը, որի ամենաձեւավորված ու խելամիտ ներկայացուցիչները գրող-

ԱՅՊՈՑՆԵՐ

ներն էին, նման էր դեռահաս պատանու: Արտաքին աշխարհի անսահմանության հանկարծակի գիտակցումը շլացնում էր նրան, բայց անիմաստ քաղաքացիական պատերազմներն ու հայրենի երկրի թշվառ պայմանները հուսահատության էին մատնում: Նրան տանջում էին եւ՛ անցյալը, եւ՛ ներկան: Իսկ ապագան ոչինչ չէր խոստանում անորոշությունից զատ: Նա շատ էր ցանկանում մյուսների նման առողջ եւ ազատ լինել, բայց չգիտեր, թե ինչպես: Դեռ զինված չէր հեղափոխության միջոցներով, ոչ էլ տիրապետում էր սարկազմի զենքերին: Բայց գիտակցում էր, որ սոսկ հոռետեսությունը լուծում չէ: Այս անօգնական, անբացատրելի զայրույթն իր զագաթնակետին էր հասել լիակատար մեկուսացվածության եւ մեկության պայմաններում: Նա նման էր դժգոհ մի տղայի, որ արեւոտ կեսօրին ձեռքերը գրպաններում քարշ է գալիս կեղտոտ ետնափողոցով: Եվ թքած ուներ ամեն ինչի վրա: Նույնիսկ իր հետ խաղալ շտապող շնիկի վրա էր բղավում. «Հեռացի՛ր եւ մենա՛կ թող ինձ»: Թվում էր՝ Իբեսեն ըմբռնումով թփթփացնում է այդ մռայլ ու ինքնամփոփ, հուսալքված երեխայի թիկունքին: Երբ «Ժողովրդի թշնամին» ստեղծագործության մեջ դրկտոր Սթոքմանն արիաբար եզրափակում էր. «Երկրի վրա ամենաուժեղ մարդը նա է, ով ամենից միայնակն է», թվում էր՝ արտահայտում է երիտասարդ Չինաստանի հոգեվիճակն այդ հիշարժան ժամանակաշրջանում շատ ավելի, քան Կոնֆուցիուսն իր ցանկացած ասույթում:

3. ՎԻՇԱՊԻ ՄՈՐՈՒՔՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ

- Ի պաշտպանություն ժամանակակից Չինաստանի

Քսաներորդ դարը հաճելի ժամանակաշրջան չէր, եւ բոլորս մեր դառը փորձառությունն ենք ունեցել...

Չինաստանը 19-րդ դարի կեսերից հուսահատ պայքար է մղում ոչ միայն ռազմական ներխուժման, ոչ միայն տնտեսական շահագործման, այլ նաեւ խորթ ու օտար կենսակերպի, իրեն պարտադրվող մտածելակերպի դեմ: Մինչեւ 1900 թվականը Չինաստանը հսկայական ջանքեր էր գործադրում՝ դիմակայելու Արեւմուտքի մշակութային ներթափանցմանը: Բոլոր գյուղատնտեսական երկրների նման Չինաստանը մոլեռանդության աստիճանի պահպանողական էր: Եվ ուզում էր պահել իր սեփական հմայիչ, հնարավոր է նույնիսկ ծույլ ու ալարկոտ կենսակերպը: Նա թիկունքով շրջվեց դեպի մեքենան եւ այրեց իր հողի վրա կառուցված առաջին երկաթուղին: Ուզում էր ի հեճուկս գրամեքենաների աշխարհի պահպանել իր հնագույն գեղագրություն-ձեռագրչությունը, ուզում էր իր ջոկակ առագաստանավերով նավարկել ավիակիր եւ ականակիր հսկա նավերի աշխարհում: Ամենից առաջ ուզում էր հեռու մնալ գյուտերի աշխարհից, որ ջանադրաբար շահագործում էր բնության ուժերը, փոխանակ պարզապես գնահատեր դրանք: Թույլ կտայի՞ն սրան այդպես վարվել: Պարտություն պարտության ետեւից, 1940-ից սկսած, տալիս էին արտաքին աշխարհի պերճախոս եւ արդյունավետ պատասխանը: 1900 թվականից Չինաստանը լրջորեն պայքարում էր վերականգնվելու համար, ոչ առանց թերաբժեքության զգացման, որ երբեմն արտահայտվում էր Արեւմտյան արժեքների հանդեպ ստրկահաճությամբ, երբեմն էլ բացահայտ ինքնահավանությամբ:

Ժամանակակից Չինաստանի մտավորականների տրամադրությունը շատ տարօրինակ է, եւ ես համոզված չեմ, թե Արեւմուտքում երբեւէ հասկացել են դա, քանի որ եթե հասկացած լինեին, չէին փորձի անցյալի հանդեպ կարոտախոտ արթնացնել: Եթե աշխարհը նմանեցնեմ դպրոցի դասասենյակի, ապա Չինաստանն այդ դասասենյակ է մտել, կամ ավելի շուտ՝ ներս հրվել տասնիններորդ դարի սկիզբներին՝ որպես նոր մի աշակերտ, ամաչկոտ, բայց եւ ինքնահավան, անտաշ ու արտասովոր, հնաոճ փոքրիկ հյուսով եւ չորս դույմ երկարությամբ եղունգներով: Մինչ այդ՝ այս աշակերտը շրջել էր բարձր լեռնաշղթաներով ու լայնարձակ օվկիանոսներով պաշտպանված տարածքներում, էլ չենք խոսում Մեծ պարսպի մասին,

ԱՅԱՌ ՑՅԱՆ

բայց հենց որ մտավ դասասենյակ, տեսավ, որ պարտավոր է ստանալ իր վկայականը, նկատի ունեմ «ազգային գոյությունը», կամ կործանվել: Թեև այս անտաշ մեծ տղան մյուսներից շատ ավելի տարիքով էր եւ բավականին հիմնավոր դասական կրթություն ուներ, բայց դարոց էր եկել շատ ավելի ուշ, քան մյուս բոլորը: Նա այնքան ինքնահավան եւ այնքան անշնորհք տեսք ուներ, որ ոչ մի պատշաճ աշակերտ չէր կարող իրեն զսպել եւ չձաղրել նրան: Մեկն ականջն էր քաշում, մյուսը քիթն էր կսմթում, մեկ ուրիշն էլ հյուսն էր ոլորում: Դա նրան այնքան էլ դուր չէր գալիս, բայց այն անծը, որն իսկապես վրդովեցնում էր, իրեն խեղդել փորձող տղան էր: Այդ աշակերտի անունը, ինչպես հավանաբար կռահեցիք, Ճապոնիա էր: Երբեք չէր մտածել, որ այդ փոքրիկ երիտասարդն ընդունակ է այդպիսի չարության, եւ դա իսկական ցնցում էր իր համար: Ուսուցչի առջեւ նա պարզապես հուսահատ վիճակում էր:

«Նանրահաշիվ գիտե՞ք», - հարցրեց ուսուցիչը:

«Ոչ, պարոն: Բայց ես կարող եմ տարբերել խոլորձի ութուն տեսակ»:

«Դուք մեխանիկական գծագրո՞ղ եք: Կարո՞ղ եք ջրահեռացման եւ ոռոգման համակարգ նախագծել»:

Այս անգամ մեծ տղան որոշեց փորձել: Նա մանրացրեց իր թանաքը եւ թափահարեց դարերով սրբագործված իր վրձինն ու մի քանի ևուրբ գիծ քաշեց թղթի վրա, որ նման էին ամպի ետեւից երեւացող՝ վիշապի բարակ մորուքների:

Ուսուցիչը գայրացած նրա ձեռքից խլեց վրձինը:

«Ջրահեռացումն ու ոռոգումը գործնական բան են: Դուք ուսումնասիրում եք ջրի դինամիկան եւ կիրառում ոռոգման համակարգի կարիքների համար: Այս ի՞նչ գրողի տարած բան եք փորձում անել: Հո երագի մեջ չե՞ք»:

Ամբողջ դասարանը պայթեց ծիծաղից, եւ մեծ տղան շրթունքները կծեց: Ուզում էր լաց լինել, բայց արցունքները կոպ տվեց եւ քթի տակ փնթփնթաց. «Գրողը տանի բոլորիդ»: Բայց ուսուցիչն անհամբեր էր դարձել:

«Իսկ սպորտի մասին ինչ կասեք: Ֆուտբոլ խաղու՞մ եք: Իսկ թենիս: Իսկ սքվոշ: Իսկ քրիքե՞թ»:

«Ես բամբուկե սրինգ եմ նվագում եւ յոթ լարանոց տավիղ», - ասա այն ամենն, ինչ կարողացավ ասել մեծ տղան: Տեսնում եք, սակայն, որ չնայած իր այդքան ձեռքբերումներին, նրան որակավորում չտվեցին, որպեսզի վկայական ստանար, իսկ այդ վկայականը նա պետք է ունենար: Այդ օրվա-

ևից դպրոցում սովորույթ դարձավ՝ ուղղով հարվածել մեծ տղային եւ ամեն կերպ ծաղրել նրան: Այսպիսի հանգամանքներում, ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ արեց նա: Կարծում եք վիշապի մորուքները նկարեց: Ոչ, եթե այդպես աներ, վկայական ստանալու հնարավորություն չէր ունենա: Կարող եք համոզված լինել, որ նա անգիր սովորեց իր հանրահաշիվը, ևույնիսկ եթե ընդվզում էր դրա դեմ: Անկողնուց ուղղով դուրս էր գցում տաք ջրով լի իր շիշը՝ պատկերացնելով, թե ֆուտբոլ է խաղում: Ձեռքը վարժեցնում էր ջրահեռացման եւ ոռոգման համակարգ նախագծելուն, որն ի վերջո այդքան դժվար չէ, որքան վիշապի մորուք նկարելը: Որքան էլ տարօրինակ է՝ դպրոցում որոշ ժամանակ անց սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել վիշապի մորուքների նկատմամբ,- թեեւ դա, իհարկե, պարզապես ժամանց էին համարում,- եւ զարմացած էին՝ տեսնելով, որ մեծ տղան նախագծեր է անում, որքան որ ուժը պատում է, ու նաեւ կարեցածին չափ ֆուտբոլ է խաղում: Եվ նրանք, ովքեր հոգնել էին արդեն տղայի քիթը քաշելուց, սկսեցին պաշտպանել նրան:

«Ի՞նչ սքանչելի վիշապի մորուքներ ես նկարել: Ինչու՞ ես այս կոպիտ նախագծերն անում հիմա, որոնք դու այնքան անխմաստ էիր համարում», - հարցնում էին նրան կամ ասում էին. «Ափսոս, որ քեզ նման նրբագեղ պատանին ֆուտբոլի պես կոպիտ խաղ է խաղում: Դու պետք է շարունակես հազնել քո երկար զգեստը... իսկ ու՞ր ես քո գեղեցիկ եղունգները: Ի՞նչ, քո փոքրիկ հյո՞ւան էլ չկա»:

Եվ ամբողջ ժամանակ մեծ տղան, լինելով լավ դաստիարակված, քմիծաղ էր տալիս ու քրթմնջում ինքն իրեն. «Վիշապի մորուքների համար մի՛ անհանգստացեք: Դրանք ի ձեռն եմ ժառանգել: Բայց ես չեմ պատրաստվում զրկվել դպրոցի վկայականից: Թողեք ստանամ այդ վկայականը, հետո ձեզ համար կնկարեմ բոլոր վիշապի մորուքները: Եվ ձեզ համար էլ վատ չի լինի»: Այսօր այդ մեծ, անվարժ տղան համարյա պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ է՝ սպիներով ու վիրակապերով, նաեւ փորձված նախագծող է դառնում: Ի՞նչ եք կարծում, տրամաբանական է ակնկալել, որ այս տրամադրությամբ ստեղծված գրականությունը կլինի նրբակիրթ ու հոգեւոր, ինչպես Տան գահատոհմի ժամանակ ստեղծված խաղաղ գործերը:

Չինաստանի պատմության մեջ ոչ մի ժամանակաշրջան չի եղել ավելի անկայուն, քան անցած քառասուն տարին: Վերցնենք Մագի պատմությունը: Մինչեւ 1911 թվականի հոկտեմբերի 10-ը ով կտրում էր իր հյուսքը, համարվում էր ապստամբ եւ, հետեւաբար, ենթակա էր գլխատման: Հաջորդ առավոտյան Հեղափոխական բանակն արշավեց եւ հայտարարեց, որ

ԱՅՊՈՑՆԵՐ

հյուս կրելը վերացվում է, ու միանգամից հյուս կրող ամեն ոք համարվեց հակահեղափոխական, հետեւաբար՝ գլխատման ենթակա: Երեսուն տարի առաջ հարսնացուն պատկերացում իսկ չունեւ, թե ով է իր փեսացուն, մինչեւ հարսանեկան գիշերը, եւ այդ մասին իմանում էր միայն, երբ հաջողացնում էր իր աղախնուն կաշառք տալ: Այսօր, եթե մայրը համարձակվում է դստերը հարցնել, թե նա ինչպիսի՞ հարաբերություններ ունի իր ընկերոջ հետ, կարող է այսպիսի պատասխան ստանալ. «Ու ըստ իմանալու բանը չէ, ամեն ինչ հրաշալի է»: Ամռանը ժամանակակից չին աղջիկը հաճախ շրջում է բաց սրունքներով եւ ձգտում է կամ խորհրդարանի անդամ դառնալ, կամ լողի ազգային չեմպիոն (Խոսքս, բնականաբար, քաղաքական աղջիկների մասին է):

Միանգամայն աննկատ կերպով Չինաստանում շատ մեծ փոփոխություններ են կատարվում: Անցյալում ծնողների հանդեպ որդիական հարգանքն ու հնազանդությունը հիմնական առաքինությունն էր համարվում, իսկ ընտանիքը՝ հասարակության միավորը: Այսօր անհատը փոխարինել է ընտանիքին, ճիշտ անպես, ինչպես արդյունաբերությունն է գրավել արհեստագործության եւ գյուղատնտեսության տեղը: Գրականությունը, նման փոփոխությունների առկայությամբ, չի կարող մնալ նույնը: Այն ավելի քիչ է հավասարակշռված եւ ավելի քիչ փորձառություն ու նրբություններ ունի եւ մեր դարաշրջանի սպիներն է կրում: Բայց ժամանակակից Չինաստանի կյանքի ազնիվ արձագանքն է:

Եվրոպական գրականության ուժեղ, բայց ճկուն ավանդույթից էական հեռացում չկար, եթե այն Չինաստանի նոր շարժման հետ համեմատենք: Ճիշտ է, որ նրանք ժամանակակից գրողներ ունեն, որոնք փորձարկումներ են կատարում բառերի հետ, ինչպես «Ֆիննեգանի հոգեհանգստի» հեղինակը, բայց նրանց գրականությունն իր հիմնական մասով այսօր ձեռով եւ արտահայտչառճով էականորեն չի տարբերվում վերջին 300 տարում ստեղծված գործերից...

Երբ խոսում ենք գրականության մասին, խոսում ենք առնվազն չորս տեսանկյունից՝ նրա լեզվի, ձեւի, բովանդակության եւ՝ թե ինչու է գրվել: Եթե մեկն ուսումնասիրել է չին որեւէ գրողի ստեղծագործություն, ասենք՝ Յոյ Յուանի՝ «Լի Սաոյի» հեղինակի գործերից մեկնումեկը, կտեսնի, որ մինչեւ տասնիններորդ դարի վերջը բոլոր այդ առումներով միեւնույն բանն է: Բոլորը գրել են ավանդական «վեւի» ոճով, որ հայտնի է որպես չինական դասական ոճ: Եթե արձակ էին գրում, նրանց համար որպես օրինակ էին ծառայում մ.թ. ութից իններորդ դարի հայտնի հեղինակները: Եթե

գրում էին չափածո, ապա հետեւում էին այն տաղաչափությանը, որ փոխանցվել էր մ.թ.ա. երկրորդ դարից: Եթե բանաստեղծին հարցնեին, թե ինչու է գրել իր բանաստեղծությունները, կա հավանաբար կատարյալ պատասխան: «Ես ուզում եմ խոսել ամպերի հետ, ուզում եմ գրուցել ծաղիկների հետ եւ հիացմունքի իմ տուրքը մատուցել տարվա սքանչելի այս եղանակին»: Նրանք բանաստեղծություն էին գրում, երբ ընկերներից մեկը նոր պաշտոն էր ստանում, բանաստեղծություն էին գրում, երբ ընկերը երեխա էր ունենում, եւ ամենից առաջ՝ գրում էին, երբ գտնվում էին գիտնականության ու սթափության սահմանագծին: Եթե նրանց հարցնեիք, թե ինչու են գրում, նույնն էր՝ ինչ հարցնեիք, թե ինչու են կակաչները գարնանը ծաղկում կամ ինչու է ձմռանը ծյուն գալիս:

Նրանք գրում էին ներշնչանքով՝ ըստ ավանդական կաղապարների ու նմուշների:

Եթե մեկը հարցնի այսօրվա չին գրողին, թե ինչ լեզվով է նա գրում, կսկսի լեզուն բաժանել երկու տեսակի՝ կենդանի եւ մեռած: Մեռած լեզուն նշանակում է դասական լեզուն, որ հասկանալի է միայն քիչ արտոնյալների, միևնույն կենդանի լեզուն՝ խոսակցական մայրենին, փողոցի մարդու լեզուն է:

Եթե մեկը նրան հարցնի, թե ինչ ձև է գործածում, կասի՝ Լու Սիլը վեպեր է գրում, ես միայն պատմվածքներ եմ գրում, բայց Սյույը բանաստեղծություն է գրում, իսկ Յզանը՝ թատերգություններ: Գրականությունը դասակարգվել է եւ անցումային փուլում է: Բայց երբ մեկը հարցնի, թե գրողն ինչու է գրում, պատասխանը նույնիսկ շատ ավելի սովորական կհնչի, քան որ գրողների մեծ մասը բողբոջաբան հայացքով կպատասխանի. «Գրում եմ, որպեսզի քննադատեմ ժամանակակից կյանքը»: Մեկը կգտնվի է աղքատությունը, մյուսը հիվանդությունը, մի երրորդը՝ քաղաքային բնակչության անտարբերությունը, եւ նրանց մեծ մասը նույնիսկ ակնկալում է որոշակի արդյունք տեսնել այդ բողբոջներից:

Այդքան հապճեպ ու չմտածված, բայց այդքան անխուսափելիորեն բաժանվելով իրենց նախնիներից՝ ժամանակակից չին գրողները որոշ ժամանակ մոլորված էին: Բայց, վերջիվերջո, կուռքերի որոշակի պաշտամունք է անհրաժեշտ: Պատկերամարտության այս կատաղի պոթեկումի հետ մեկտեղ ստեղծվել էր կենտրոնախույս մի ուժ, որ ոգեշնչում էր փնտրում արտերկրից: Հակակոնֆուցիական տրամադրությունը Հանրապետության սկզբնական շրջանում նման էր պուրիտանիզմի հանդեպ անգլիացիների հակազդեցությանը: Դա մի բան է, որ օտարի համար դժվար է հասկանալ,

ԱՅԱՈ ՑՅԱՆ

որովհետեւ հակազդեցությունը ոչ այնքան իրողության դեմ էր, որքան ավելի քան 2 000 տարի հետո դրա սոցիալական հետեւանքների դեմ: Երբ չափազանց երկար ենք մնում մի սենյակում, բոլորս էլ ձգտում ենք մի կողմ քաշել վարագույրը, բացել լուսամուտն ու դուրս ձգվել, որպեսզի թարմ օդ շնչենք: Վերջին երեք տասնամյակում Չինաստանում ամեն մի գրող ջանք է թափում ուժով բացելու ամուր փայտից պատրաստված այդ փակոցափեղկը՝ փորձելով դուրս կայել դարավոր պատերի միջից: Դա նման է դեպի հունական մշակույթ եւ հեթանոսական աշխարհ ձգտելուն՝ անգլիացի գրողների դեպքում: «Օ, Աթենք», «Օ, Վենետիկ», «Օ, Բաղդադ»: Բայց մեր երթուղին դեպի արեւմուտք է:

Անցած դարերի ընթացքում շատերն են Չինաստանում դուրս կայել այդ ամուր փակոցափեղկի ետեւից եւ հեռվում տեսել արեւմտյան աստղագիտության ու մաթեմատիկայի փառքի լուսապսակը, բայց միայն տասնիններորդ դարի վերջին էր, որ Լիվերպուլում չինական ռազմածովային ուսանողը բոլորովին այլ բան բերեց իր հետ: Նա բերեց Տոն Սոյուարտ Սիլլի քաղաքատնտեսությունը, Դարվինի տեսությունը՝ էվոլյուցիայի եւ ամենահարմարվողների գոյատեւման մասին: Մյուսները ներկայացրին Դիքենսի պաթոսը, Սքոթի ռոմանտիկ վեպերը եւ առաջին հերթին՝ սոցիալական այդ մեծ ապստամբի՝ Իբսենի թատերգությունները: «Զեռի Թոմասի խրճիթի» պատկերած սեւամորթների տառապանքներից մենք իմացանք, որ բոլոր արեւմուտքիները չեն քարսիրտ, եւ միայն մենք չէ, որ ճնշված ենք եղել: Այդ ժամանակ սկսեցինք գիտակցել, որ Եվրոպան ավելին է նշանակում, քան ռազմանավերն ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, եւ այդուհետ արդեն Արեւմուտքի մասին մեր պատկերացումն ամբողջովին երկակի է եղել: Ճիշտ թե սխալ՝ մենք վրդովվել ենք Արեւմուտքի ռազմական ուժից եւ առետրական ձեռներեցությունից, բայց Արեւմուտքի գրականությունը մեր անկեղծ հիացմունքն է հարուցել:

Լեզվական շարժման սկզբում միտումնավոր փորձ էր արվում ընդլայնելու բանաստեղծական թեմաների շրջանակը, եւ շատ բանաստեղծներ փորձում էին խուսափել այնպիսի ծեծված նկարագրություններից ու հոգեվիճակներից, ինչպես, օրինակ, լացող ուռիին լուսնի լույսի ներքո կամ մենությունը անձրեւտո երեկոյան, փոխարենը ներկայացնելով գենի բարեփոխման, քաղաքականության կամ հողատիրոջ ու վարձակալի միջեւ վիճաբանության մասին թեմաներ: Տղամարդկանց եւ կանանց սեռական աղատագրումը բանաստեղծների համար նոր ու լայնարձակ մի ոլորտ բա-

ցեց: Նոր ազատագրված սիրահարների զգացմունքներն արտահայտվելու առատ ձեւեր գտան՝ մի մասն արժեքավոր, բայց մեծամասամբ՝ ակնահաճ միայն սիրունիկ կանանց համար: Այդ բանաստեղծությունների մեծ մասն անհարթ էր ու անտաշ, միամիտ եւ անզուսպ: Սի բանաստեղծ այնքան հեռուն գնաց, որ գրեց.

*«Երբ քնում եմ, տեսնում եմ քեզ մտղուկներից ինձ պաշտպանող
ցանցի վրա,
Երբ թեյ եմ խմում, քո պատկերն եմ տեսնում զավաթիս հատակին»:
(Ամերիկյան «ջազի» ազդեցություն... դու սերուցքն ես իմ սուրճի մեջ):*

Ինչպես տեսնում եք, զգացմունքներն արտահայտելու ավելի ոգեղեն միջոց դեռ ի հայտ չէր եկել, իսկ հին ձեւերը մի կողմ էին նետվել: Ինչ վերաբերում է սիրո թեմային, նրբագեղությունը չինական պոեզիայում շատ դեպքերում նշանակում է ֆիզիկականի բացառում:

Լեզվական շարժումն իր նախնական փուլերում գրական ետադարձ շարժում էր դեպի բնությունը, ընդվզում զարդարուն ճոխության ու նրբագեղության դեմ: Մեր սխալը ազատությունն անձեռության հետ շփոթելու մեջ էր, եւ վաղ քսանականների բանաստեղծության մեծ մասը շատ դժվար էր տարբերել արձակից, պարզապես արձակն ավելի շատ տպագրական տարածք էր զբաղեցնում: Պոեզիան կանխամտածված աղքատացվում էր: Դա ժամանակակից չինացու բնական հակազդեցությունն էր ընդդեմ դարեր շարունակ մատուցված՝ ինամքով մշակված արտահայտչառճի եւ ծեծված պատկերների. լուսինը վերջապես դադարեց լինել «նեֆրիտե անիվ» կամ «արծաթե սկավառակ»: Այն ժամանակ ավանդական պոեզիայի դեմ ընդվզողների առաջնորդ Դոկտոր Հու Շիի ներկայացրած ութ սկզբունքներից մեկն էր՝ բոլոր «ակնարկումների» վերացումը, որը հետագայում հանգեցրեց բոլոր պատկերների անհետացմանը: Մտածե՛ք պատկերներից զերծ պոեզիայի մասին: Սասամբ որպես արեւմուտքից Թագորի հայեցողական պոեզիայի եւ մասամբ՝ արեւելքից ճապոնական բանաստեղծների ազդեցության արդյունք՝ առաջացավ «փոքրիկ» բանաստեղծության մի տեսակ, որ հիշեցնում է ճանապարհորդի նոթատետրի պատահական մի գրառում:

Քսանականների վերջերին այդ ալիքը ետ էր քաշվել, եւ բանաստեղծներն սկսել էին մշակել իրենց գործերը: Պոեզիան կարող է բարդ լինել՝ տոգորված, մի կողմից, օտար ու անըմբռնելի պատկերներով, մյուս կողմից՝

ԱՅՊՈՑՆԵՐ

Լոր եւ խիստ կայուն ձեւերի փորձարարական կիրառմամբ, ինչպիսին, օրինակ, սունետն է: Այս պահին պետք է խոսեմ թարգմանված բանաստեղծությունների անարժանահավատ, անստույգ լինելու մասին, բացառություն անելով Արթուր Վեյլիին, քանի որ նա ավելին է արել, քան պարզապես թարգմանելը: Պոեզիայի ամենաակնհայտ գրավչություններն են ռիթմը եւ պատկերը: Ռիթմը, ճիշտն ասած, սովորաբար պետք է բացառել թարգմանության մեջ, քանի որ շատ դժվար է վերարտադրել: Ինչ վերաբերում է պատկերներին, դրանք մեզ հիացմունք են պատճառում իրենց թարմությամբ ու անսովոր հմայքով: Հենց այստեղ է ծուղակը, քանզի այն, ինչ սովորական ու ծեծված է դարձել մի լեզվում, կարող է անսովոր իր թարմությամբ ապշեցնել մեզ մեկ այլ լեզվով արտահայտելիս: Եթե երբեւէ հարցրել եք ձեր պարսիկ ընկերոջը, թե ինչ է մտածում Օմար Խայյամի մասին, կհիշեք, թե ինչպես է ուներ թոթվելով ասել. «Պե, իհարկե, անգլիացիների համար շատ տարաշխարհիկ է թվում»: Ժամանակակից չին բանաստեղծները կիրառել են պատկերավորման երկու տեսակի միջոցներ. առաջինը՝ հին, ավանդական պատկերների վերականգնումն է, ինչպես Լին Կենի գործերում է, մյուսը՝ բոլորովին Լոր աղբյուրներից վերցվածը:

Ամբողջ այս խառնաշփոթը պայմանավորված է ժողովրդավարության մեջ գրականության ունեցած տեղի մասին թյուրընկալմամբ: Մենք հանրապետական երկիր դարձանք երեսուներկու տարի առաջ, եւ մեզից երկար ժամանակ պահանջվեց՝ իմանալու, թե որտեղ պետք է ավարտվեն ժողովրդավարական սկզբունքները: Թվում է, մենք ցանկացել ենք, որ Լույնիսկ պոեզիան լինի «ժողովրդավարական»: Ժողովրդավարությունը քաղաքականության մեջ նշանակում է հավասարություն բոլորի համար՝ աղքատների եւ հարուստների, զգայունների եւ անտարբերների: Ինչպե՞ս է պոեզիան բավականություն պատճառելու անտարբերներին: Եվ այնուամենայնիվ, ժողովրդական ալիքի առաջին չին բանաստեղծներն իրոք փորձում էին այդպես անել: Նրանք պոեզիան համարում էին որպես զանգվածային կրթության մաս: Որպես արդյունք՝ ավելի ուշ դրան պետք է հետեւեր խիստ ձեռապաշտության հակադարձ գործող մի չափաբաժին: Հիմնականում Անգլիային ենք պարտական բանաստեղծական ձեւի վերածնունդի համար, որ տեղի ունեցավ հանգուցյալ Սյույ Չժի-մոյի միջոցով. վերջինս Քեմբրիջից Չինաստան վերադարձավ քսանականների վերջին եւ սկիզբ դրեց «Պոեզիա» հանդեսին, որտեղ միաժամանակ եւ՛ բանաստեղծ էր, եւ՛ քննադատ, եւ՛ թարգմանիչ:

Աստիճանաբար բարդ գրության անցնելու շրջանում ժողովրդական

ոճը գործածում էին շատ զգայուն գրողներ, որոնց միակ ուղեցույցն իրենց ստեղծագործական բնագոյն էր: Կարելի է կռահել արդյունքը: Ժողովրդական ոճով գրողների ճամբարում փղոսկրե աշտարակ էր կառուցվել, եւ կենդանի լեզուն, որ ենթադրաբար պետք է լիներ ժողովրդի լեզուն, ավելի անհասկանալի էր դառնում, քան դասականը: Գրողները լեզուն զանգվածների կրթության համար գործածելուց բոլորովին տարբեր կերպ էին գործածում՝ արտահայտելու համար իրենց մշուշապատ հոգիների մուտք եւ անըմբռնելի վիճակը: Գեղարվեստական այս անջատողականությունը վիրավորում էր մյուս գրողների հասարակական գիտակցությունը, եւ այս ամենին հետեւեց գրական քաղաքացիական պատերազմ: Չուտ գեղարվեստական տեսանկյունից՝ այդ աճող հասարակական գիտակցությունը թերեւս կորուստ է, բայց դա մի դրսեւորում է, որի հետ պետք է հաշվի նստենք, ոչ թե դատապարտենք: Կարո՞ղ եք պատկերացնել պատմվածք, որ գրված է սուր քննադատելու համար կանանց ոտքերը հատուկ կոշիկներով կապած պահելը, վեպ՝ ամուսնական ազատության անհրաժեշտության մասին, թատերգություն, որը պատկերում է շահագործվող հանքագործի կյանքը, բանաստեղծություն՝ քաջալերելու համար գյուղացիներին, որպեսզի համագործակցեն բանակի հետ եւ կազմալուծեն թշնամու հաղորդակցության միջոցները: Մեր այսօրվա գրականության մի սովոր մաս այսպիսի թեմաներ է պարունակում: Որոշ գործեր այնքան լավ են գրված, որ կարող են գոյատեւել իրենց անմիջական նպատակին ծառայելուց հետո էլ, բայց մեծ մասի գոյատեւման համար շատ քիչ հույսեր կան: Գուցե, եթե գա այն օրը, երբ երկիրը վերածվի դրախտային պարտեզի, սոցիալիստի դրախտի կամ անարխիստի երազանքի, ամեն գրող կառանձնանա իր սեփական Փղոսկրե աշտարակում: Քանի որ աղքատություն չի լինի, որպեսզի դրա դեմ պայքարենք, չի լինի սոցիալական անարդարություն, որպեսզի բացահայտենք, կլինի միայն հարմարավետություն եւ անվտանգություն, ազատություն եւ հավասարություն: Քանի դեռ չենք հասել այս Ուտոպիային, շատ քիչ հույս եմ տեսնում, թե մեր գրողներն իրենց աչքերը կփակեն ժամանակակից չարիքների դեմ եւ կգրեն Ալեքսանդր Փոփի կամ Ուլթեր Փաթերի, կամ էլ Տան գահատոհմի գեղագետների նման:

Մենք երկփեղկված ենք, ինչպես գրողներն եւ ամենուր երկփեղկված, ամպերին դիմելու գրողի բնական ձգտման ու արտոնության եւ սեփական եղբայրակիցներին օգնելու քաղաքացիական պարտականության միջեւ: Հնարավոր չէ անտեսել գլխավերելումդ թռչող մահաբեր ինքնաթիռները, հրդեհվող տանիքը, ամենուր լսվող տառապանքի ձայները: Ով կկարողա-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

ևս հաշտեցնել այս երկու հակասական բնագոյային մղումները, գլուխգործոց կատեղծի, իսկ ում դա չի հաջողվի, մոռացության կմատնվի: Համեմայն դեպս մենք սկսել ենք գիտակցել՝ գրողը, որը թոյլ է տալիս, որ իր հասարակական գիտակցությունը վեր կանգնի իր գեղարվեստական գիտակցությունից եւ օժտվածությունից, գոյատևելու ավելի քիչ հնարավորություն ունի: Մենք, փաստորեն, սկսել ենք տարբերակել գրականությունը սոցիալական ավետարանից:

Մեր ժամանակների մեկ այլ համընդհանուր հակասություններից մեկն էլ փորձառության եւ տեխնիկայի միջեւ հարաբերություններն են: Որքան թաքնված ոսկի է իրատես գրողը հայտնաբերում տառապանքի, աղքատության ու թշվառության քարակոյտերի մեջ: Սարդկանց խորապես տեսնելու համար մենք պետք է տեսնենք, թե ինչպես են նրանք տառապում Սիբիրի կալանավորները կամ այսօրվա համակենտրոնացման ճամբարների զոհերը: Ռեստավրացիայի շրջանի թատերգություններում սրամտություն եւ հմայք կա, բայց խորությունն ավելի հաճախ հայտնաբերվում է, երբ անձը լարված է, Լիր Արքայի նման ողբերգական կերպարներում: Տխուր եւ ցավալի պարադոքս է՝ եթե գրողը բավարար կրթություն եւ ազատ ժամանակ ունի գրելու համար, կարող է քիչ բան իմանալ այն տառապանքների մասին, որ պետք է պատկերի, մինչդեռ երբ բուն կյանքի հումքն է հասանելի նրան, ևս հավանաբար չափազանց մտահոգ է կյանքի եւ ապրուստի հոգսերով կամ չափազանց զգայուն է, որպեսզի վեր կանգնի սեփական կենսապայմաններից: Ոչ մի ծայրահեղություն լավ գրականություն չի ստեղծում: Հեշտ չէ դիմակայել աղքատությանն ու տառապանքին եւ դեռ արտահայտիչ բառապաշար ձեռք բերել, եւ ես մի քանի օրինակի մասին կարող եմ մտածել Չինաստանի հետ կապված: Բացառություն է Շեն Յուն-վենը, որի վաղեմի երազանքները գեներալ դառնալու մասին գրեթե ավարտվեցին, երբ միացավ Պեկինի ոստիկանական ուժերին: Միաժամանակ, ևս հաջորդաբար դարձավ բանակի շարքային զինվոր, հարկահավաք, գրագիր եւ սրբագրիչ, իսկ վերջին տասնհինգ տարում ևս եղել է մեր ամենակարկառուն վիպասաններից մեկը:

Տխուր ճշմարտությունն այն է, որ գրելը շահավետ մասնագիտություն չէ, բացառություն է թերեւս Ամերիկան: Անհատական հովանավորության ժամանակներն անցել են, պետական հովանավորությունն էլ միայն Խորհրդային Ռուսաստանում է կիրառվում: Գրականությունը ո՛չ երկնապարգեւ ծաղկաբույլ է, ո՛չ էլ սոցիալական մակաբույծ, այն պարզապես ապրանք է, եթե տնտեսագիտության տեսանկյունից նայենք: Մենք չենք

կարող ակնկալել, թե մի գեղեցիկ բան կկարդանք առանց գինը վճարելու։ դա նույնն է, թե մասնագետի մոտ նորոգել տանք մեր ժամացույցը եւ հեռանանք պարզապէս շնորհակալություն հայտնելով, ոչ ավելին։ Բայց ժամացույց սարքողը ձեր փողը վերցնելուց հետո կշարունակի իր աշխատանքը եւ նույն կերպ կկարգավորի մյուս ժամացույցների աշխատանքը, մինչդեռ գրողը միշտ փորձում է ավելին անել՝ ոչ նույնատիպ, սովորականից տարբեր, անսովոր մի բան ստեղծել։ Իրականում եւ միշտ հրաշքի է ձգտում։ Մի՞թե կայուն վարձատրությունը չի զայթակրում նրան, որպէսզի մտածի միայն իր հաճախորդներին գոհացնելու մասին։ Չինաստանում միլիոնատեր շատ գրողներ չկան, բայց եւ գիտեմ մեկի մասին, որը Շանհայում իր համար շքեղ մի տուն է կառուցել՝ «հավերժական եռանկյունու» մասին տարին չորս վեպ թողարկելով։ Հիմա եւ գրեթե մոռացված է, բայց ինչպիսի՞ գայթակրություն է գրողի համար՝ փոխգիջման գնալ եւ հոգալ տան մասին՝ համոզված լինելով, որ այն ավելի երկար կպահպանվի, քան իր գլուխգործոցը։ Սովամահության ենթարկվելու վտանգը եւ հանրաճանաչ ու հաջողված լինելու վտանգը հավասարապէս սպառնում են լավ գրականությանը։

1930-ին Չինաստանի քաղաքային եւ գյուղական կյանքը պատկերող «Կեսգիշեր» հավակնոտ վեպի նյութը հեղինակը հավաքել է 1929 թվականի ընթացքում, երբ տառապում էր աչքի լարվածությունից։ Չկարողանալով գրելը շարունակել՝ Սաո Դունը հաճախում էր Շանհայի ֆոնդային բորսաները, որտեղ եւ խոր գիտելիք ձեռք բերեց կյանքի առանձին յուրահատուկ կողմերի վերաբերյալ։ Նրա եռագրությունը՝ «Հիասթափություն», «Իրարանցում», «Որոնում», հիմնված էր 1927-ին Ուհանի կառավարությունում իր՝ ձախաթեյան քաղաքական գործչի փորձառության վրա։ Թատերագիր Յաո Յույը «Արեւածագի» երրորդ գործողությունը գրելիս այցելել է Տյանցզինի հասարակաց տները, որպէսզի գրի առնի հասարակության վտարանդի այդ խավի կենդանի երկխոսությունը (Այդ գործողությունը թատերգության ամենաբնական եւ ուժեղ հատվածն է)։ Փորձի այս որոնումը տղամարդ գրողներով չի սահմանափակվում։ Դին Լինը բանվորուհի է աշխատել Շանհայի ֆաբրիկայում, որը ներկայացվում է նրա մի քանի պատմվածքներում։ Ձեզնից ոմանք կարդացած կլինեն «Չինական ամազոնուհին»՝ դոկտոր Լին Յույտանի թարգմանությամբ։ Սե Բին-ինը միացավ հեղափոխական բանակին դեռ երեք տարեկան աղջիկ զինվորների գրեթե սովորական երեւոյթ դառնալը։ Որքան էլ որ աղքատիկ գրված լինի, գիրքը կանացի քաջության վկայությունն է։ Պատերազմը Չինաստանում, սա-

ԱՅՊՈՑՆԵՐ

կայն, ստիպողաբար է լուծել այս խնդիրը բոլոր գրողների համար... Վեց տարի շարունակ չին գրողները տեսել են, թե ինչպես է իրենց առջև ընդլայնվում կյանքի հորիզոնը: Նրանք տեսել են թշվառություն, դաժանություն, հերոսություն, ամայացած գյուղեր, եւ մեռնող զինվորներ՝ Հյուսիսային Չինաստանի դաշտավայրում ու Սոկոլովայի անապատում: Նրանք տեսել են Չինաստանի վերածնունդը: Եթե նրանք իրոք գրողներ են ընդհանրապես, ապա պետք է որ այդ ամենն արձանագրած լինեն իրենց հիշողության մեջ, զգացած լինեն իրենց սրտերում եւ արտացոլած լինեն իրենց մտքերում: Մի՞թե չէին կարող կարդացվող ինչ-որ բան ստեղծել այս պատերազմից հետո:

1930-ականներին հետաքրքիր մի նմանություն կար ամբողջ աշխարհի գրական մթնոլորտում: Մեծ պատերազմն ի ցույց դրեց համընդհանուր հիասթափության սկիզբն Արեւմուտքում, այնպես, ինչպես Չինաստանում: Վրա հասավ դեպրեսիան... Չարմանալի չէ, որ հուսահատության, անօգնականության զգացումը անսիրտ ու դաժան աշխարհում պետք է համակեր բոլոր ազգերի երիտասարդներին:

Հիմա տեսեք, թե ինչ տեղի ունեցավ մեզ հետ Չինաստանում: Ի հավելումն այլոց տառապանքները տեսնելուն եւ դրանց դեմ բողոք հնչեցնելուն, ինչն ինքնին բավականին ցավալի էր, մենք նաեւ տեսանք Չինաստանի մի մասը, որ ավելի մեծ էր եւ ավելի հարուստ, քան Ֆրանսիան ու Գերմանիան միասին վերցրած, մի գիշերվա մեջ մեզնից խլված: Զարոգչություն ու ազիտացիա: Տույցեր փողոցներում, հացադուլներ, կրպակատերերի գործադուլներ, հարյուրավոր ուսանողներ Պեկինի երկաթգծերին պառկած, որ հրաժարվում էին վեր կենալ, մինչեւ կառավարությունը չխոստանա դիմակայել Ճապոնիային: Ես աստղերի ներքո պողպատե սառը ռելսերին պառկած այդ ուսանողներից մեկն էի, որ երկու անձանոթի հետ մի կարպետ ունեի: Երիտասարդների շրջանում իսկապես համաշխարհային եղբայրություն էր: Դա այն ժամանակն էր, երբ պրն Օդենը գրում էր իր «Իսպանիա» բանաստեղծությունը եւ Իշերվուդի հետ՝ «Վերելք դեպի F6» ողբերգությունն ու «Նոր գրականությունը», իսկ «Նյու Րայթինգս» իր էջերում ի մի էր բերում միջազգային հեղինակների ընտրանին: Եթե Չինաստանը վերջիվերջո չվճռեր դիմակայել, այսօրվա դրությամբ ոչ միայն ռազմական իրավիճակը տարբեր կլիներ, այլեւ չին մտավորականների երիտասարդական կենսունակությունը եւ քաջությունն ընդմիշտ կտրված կլինեին: Արեւելքում, ինչպես Արեւմուտքում, երեսունականները մարդկության պատմության հեղձուցիչ ու տառապագին ժամանակաշրջան էին:

Երբ դուրս ես գալիս ողբերգական վիճակից, կարող ես հույս ներշնչող մի քանի շող տեսնել: Նախ՝ դա մեզ ցույց տվեց, որ գրողին խիստ բնորոշ է արդարության զգացումը, եւ երբ արդարությունը խախտվում է, գրողը սաստիկ անհանգիստ է դառնում: Դա, ըստ էության, մարդկային ողջամտության ամենահուսադրող հատկանիշն է:

Երկրորդ՝ սահմանները կարող են իրենց խիստ արգելքներն ու խոչընդոտներն ունենալ, գրականությունը չունի: Հայրենասիրությունն ու ազգայնականությունը երբեք գրականության համար ուժեղ եւ կարեւոր առանձնահատկություն չեն եղել, եւ մտավորականները դարձյալ ու դարձյալ ցույց են տվել համաշխարհային եղբայրության հնարավորությունը: Մենք չենք ցանկանում, որ գրողները միջազգային ինքնուրույն արտադրական միավորում ձեւավորեն, բայց շատ կուզեինք ամեն ժամանակակից գրողի մեջ ընդհանրական, ազգայնամոլությունից զերծ տարրեր տեսնել: Ինչ վերաբերում է չինացիներին՝ թվում է վաղ թե ուշ կհասնենք այդ նպատակին, այնպես որ՝ երեւակայությունը կարող է թռչել արիեստական սահմանների վրայով, եւ մտավորական ազնվությունը կարող է մանր հավատարմությունից բարձր գնահատվել:

Եվ այսպես, վերադառնալով իմ փոխաբերությանը, ասեմ՝ Արեւմուտքում մեր բարեկամները չպետք է անհանգստանան այդ վիշապի-մորուքների համար: Դրանք մեր ժառանգությունն են եւ հոսում են մեր երակներով: Բայց Արեւմուտքի բնակիչները մեզ միայն կզայրացնեն, եթե խնդրեն մեզ, որ Ֆուտբոլի գնդակը նետենք Դեղին գետը: Ուժի, վախի եւ հուսալքության աշխարհում ամեն մեկը պետք է Ֆուտբոլ խաղա կամ կործանվի: Բայց երբ իրական խաղաղությունն ու անվտանգությունն ապահովված լինեն, բոլորս կարող ենք վերստին զբաղվել մեր վիշապի մորուքներով:

[Դասախոսությունը կարդացվել է Լոնդոնում, Ուոլլես Թոլեքշընում:]

4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԸ

Տարիներ շարունակ գաղափարական պայքար է ծավալվել աջ եւ ձախ թեւերի գրողների միջեւ հետեւյալ հարցի շուրջ՝ արդյոք գրողը պիտի ազատ գործի՞չ լինի, թե՞ համայնքի ծառայող: Հարցը թերեւս բավականին մանկական թվա, բայց ըստ էության յուրջ խնդիրներ է առաջացնում գրելու տեխնիկայում: Բազմաթիվ դժվարություններից մեկն էլ, որոնց հետ առնչվում են երիտասարդ չին գրողներն այսօր, արտահայտչաճի խնդիրն է: Ճապոնիայի հետ պատերազմի սկսվելուց մի քանի տարի առաջ շատերը, նույնիսկ տեղական շարժման հավատարիմ կողմակիցները, սկսել էին բողոքել, որ ժողովրդական գրողի «գեղարվեստական արձակը» եւ «խորհրդապաշտական բանաստեղծությունները» զանգվածներից էլ ավելի են հեռացել, քան դասական գրողների այդպիսի գործերը: Նախադասությունների կառուցվածքներն աղավաղվել էին առանց հաշվի առնելու դրանց հասկանալի լինելը, պատկերներն ու ակնարկումները կիրառվել էին այնպես, որ երբեմն հիմնված էին հունական կամ եվրոպական այլ սկզբնաղբյուրների վրա: Վեպերի կերպարները հաճախ խոսում էին օտարերկրացիների նման: Նույնիսկ բնապատկերի նկարագրության մեջ շատ տեսարաններ ավելի բնորոշ էին սիբիրյան ստեպաներին, քան Հյուսիսային Չինաստանի տափաստաններին ու հարթավայրերին: Ըստ էության, մեր պրոլետարական գրականության մեծ մասը սովորական ընթերցողի համար նույնքան դժվարընկալելի էր, որքան, ասենք, մեր դեկադենտ սիմվոլիստների գործերը: Դրա համար էլ վաղ երեսնականների շատ քննադատներ եւ գրողներ հրապարակայնորեն «զանգվածների լեզվի» պահանջ էին դնում:

Հիմա ինչպե՞ս ենք մենք բացատրում զանգվածներից այս հեռացումը: Նախեւառաջ՝ մեծապես պատասխանատու էր եվրոպական գրականության թարգմանությունը, երկրորդ՝ թերեւս չինարենի յուրօրինակ շարահյուսությունը բավարար չափով չէր հարմարվում՝ արտահայտելու համար ժամանակակից մարդու ավելի բարդ զգացումները, հատկապես երբ նա սկսում է ուսումնասիրել ենթագիտակցականի աշխարհը: Երրորդ՝ հենց որ մայրենիի կողմակից ժողովրդականների դիրքորոշումն ավելի որոշակի ու հաստատուն դարձավ, հաջորդ սերնդի գրողները նույնպես ավելի իմաստություն ու փորձ ձեռք բերեցին: Երիտասարդ Էսսեիստ Հո Շիֆանս, օրինակ, մի անգամ այսպես է գրել գրելու իր փորձերի մասին.

«Ես իմ առջեւ խնդիր էի դրել՝ նոր ուղղություն փնտրել քնարական արձակի մեջ:

Փորձել եմ, բառերը խնայողաբար օգտագործելով, նոր տրամադրություն ստեղծել: Երբեմն դա երեակայական պատմություն է, երբեմն խորը մտքով ուղեկցվող զգացմունքային պիոն: Ինչպես պոեզիայում է՝ իմ նպատակը մաքուր ներդաշնակությունն ու մաքուր գեղեցկությունն է: Հաճախ մի էսսե մտահղանալն ու գրելը մի քանի օր է տեւում: Գրեթե յուրաքանչյուր բառ փաղաքշել եմ իմ հոգեւոր մատներով...»

Չափազանց դաժան բան կլիներ ստիպել այդպիսի զգայուն գրողին՝ օգտագործել պարզ ու սովորական լեզու: Շեն Ցուն-վենը, որն ըստ իս լավագույն ոճաբանն է վիպասանների մեջ, իր «Ընտիր երկերի» առաջաբանում գրել է.

«Այն ամենն, ինչ փորձում եմ անել, իմ այսրոպեական, տվյալ պահին ունեցած զգացումներն ու պատկերացումները պահպանելն է: Այլ կերպ ասած՝ կարծում եմ, որ գրողը պետք է հնարավորինս մեկուսացված լինի արտաքին աշխարհից: Գրվածքն ամբողջությամբ պետք է անհատականություն ունենա, այն պետք է ներծծված լինի հեղինակի անհատականությամբ ու զգացմունքներով: Դրան հասնելու համար մենք պետք է լիովին հաստատենք ու պաշտպանենք ինքներս մեզ: Կան մարդիկ, ովքեր փորձում են աշտարակներ եւ տաղավարներ կառուցել ժայռերի վրա կամ ջրի մոտ: Ես միայն ցանկանում եմ հունական փոքրիկ մի տաճար կառուցել լավ ընտրված «լեռնային հողի» մի կտորի վրա: Իմ իդեալական ճարտարապետությունը նրբագեղ է, ամրակուռ, համաչափ, փոքրիկ, բայց ոչ խղճուկ: Այդ տաճարում ես պահելու եւ պահպանելու եմ «մարդկային էությունը»: Հպարտորեն թե համեստորեն ասած՝ ես գյուղացի եմ: Եվ որպես գյուղացի՝ ունեմ իմ խոր արմատավորված բնավորությունը. Պահպանողական եմ, համառ, հողը սիրող: Խելք ու սրամտություն ունեմ, բայց շատ խորամանկ չեմ: Մանուկ ժամանակ թափառել եմ գետերի ու լճերի շրջակայքում, աննպատակ դեգերել՝ քաղցից ու ցրտից տառապելով: Թերսուամից մարմինս դանդաղ է աճել, բայց դրա հետեւանքով նաեւ՝ երեակայությունս թեւեր է առել: Ճշմարիտն ասած՝ ես ինձ շատ միայնակ եմ զգում: Իմ գրականության միջոցով ես դեռ իմ հավիտենական սվիրումն եմ արտահայտում մարդկության իմաստության ու գեղեցկության հանդեպ, խոր ակնածանքս այն ամենի հանդեպ, ինչն առողջ է ու ազնիվ, եւ իմ զգվանքը բթամտության ու եսասիրության հանդեպ: Սա է գյուղացու հույսը. ես հույս ունեմ, որ կարող եմ ձեր մեջ արթնացնել այդ զգացումները, ոգեշնչել ձեզ, որ

ՍՅՈՒ ՑՅԱՆ

վեր նայեք դեպի կյանքը եւ կասկածի ենթարկեք ներկան: Ես հավատում եմ, որ սա զուր հույս չէ»:

Այսպիսի բարեխիղճ եւ, ըստ էության, պատվախնդիր գրողի չենք կարող առավել եւս մերժել բանաստեղծական արտոնագիրը՝ բառերի հետ փորձարկումներ կատարելու համար, որպեսզի արտահայտի իր նրբին զգացմունքները, որոնք այլ կերպ հնարավոր չէր լինի արտահայտել: Այնուամենայնիվ, ոչ բոլոր ոճաբաններն ունեն այսպիսի արդարացում, քանի որ բարդ ու ճոխ գրությունն իր վաղ փուլում արտաքին շատ զարդարանքներ է ներառում իր մեջ: Այստեղից էլ՝ հաճախ չարդարացված ու չհիմնավորված անհասկանալի անորոշությունները: Բայց կա եւս մեկ գործոն, որը, թերեւս, հիմնավոր է. նոր գրականությունն ամբողջությամբ Չինաստանի քաղաքային բնակչության արտադրանքն է: Նրանք առաջադեմ էին, բայց դա նրանց չփրկեց Մեծ Չինաստանի ներքին կյանքին անիրազեկ լինելուց, որն իրենց հոգում ունեն գյուղացիները: Սա հենց այն մարտահրավերն էր, որ տիկին Փերլ Բաքը ներկայացրեց չին գրողներին 1933 թվականին, երբ մեղադրում էր Չինաստանին, թե նա ամբողջությամբ ստեղծագործական ոգու է ձգտում: Այսօր պատերազմն ամբողջովին լուծել է խնդիրը, քանի որ բնակչության ապակենտրոնացումը՝ հիմնականում, եւ գրողների կողմից քաղաքական աշխատանք կատարելը՝ մասնավորապես, առաջին անգամ ջնջել են խիստ ընդգծված սահմանները մեծ քաղաքի եւ գավառի միջեւ, կրթվածի եւ անգրագետի միջեւ, կյանքն ապրողի եւ նրա միջեւ, ով պետք է պատկերի կյանքը: Պետք է ասեմ, որ դա մեր գրականության վրա պատերազմի ունեցած ամենամեծ ու ամենից ոգեւորիչ ազդեցությունն է, եւ դա երկխոսության երկընտրանքի արմատական լուծումն է:

Ավելի ուշ՝ վերջին շրջանում ծագած մեկ այլ տարածայնություն էր «նոր սենտիմենտալիզմը»: Չին որոշ քննադատներ դատապարտում էին Ազատ Չինաստանի գրողների շրջանում տարածված՝ իրենց կորցրած տների, փոքրիկ առվակների ու բամբուկե երերուն կամուրջների հանդեպ կարոտախոս անընդհատ վառ պահելու միտումը: Խիստ քննադատները դա անօգուտ ու հիվանդագին բան էին համարում: Նրանք գրողներին հորդորում էին մոռանալ այդ «փոքրիկ եսը» եւ զանգվածներին ընդառաջ գնալով՝ հիշել, թե ինչ ճակատագիր է սպասվում այդ «անաղմուկ Չինաստանին»: Գրողները, սակայն, պաշտպանում էին իրենց՝ ասելով, թե ինքնաբերաբար լինելը եւ անկեղծությունը գրականության գլխավոր արժանիքներն են, եւ եթե կարոտախոս են զգում, ինչու՞ չպիտի գրեն այդ մասին: Այս բա-

նավեճը, թեև ծագել էր պատերազմական ժամանակներում, ըստ էության՝ կապանքներից զերծ լինելու գրողների ցանկության եւ գրողներին համայնքում զուր չվատնված տեսնելու քննադատների ցանկության միջև։ Լույս պայքարի մասն էր կազմում։ Սի քննադատ, օրինակ, գրում էր. «Եկե՛ք երգենք արդյունաբերականացումը։ Իրականությունը արդյունաբերականացում է պահանջում։ Խոսքն այն մասին է, որ գրողը համազգային խանդավառություն առաջացնի մեքենաների, շարժիչների, լծակների, հիդրավլիկայի եւ Լույսիսկ հողմադացների հանդեպ։ Պա անելու համար չպետք է ապավինել մեռած բանաձեւերին։ Գրողը պետք է ամբողջովին տոգորված լինի արդյունաբերական կյանքով, որպեսզի «գրելու այդ կերակուրը» մարսի»։

Իսկ բանաստեղծ Յուան Շույ-բայն, օրինակ, իր «Փուչիկ» բանաստեղծության մեջ ծաղրի էր ենթարկում «գեղագիտական բանաստեղծությունները».

*«Պոեզիա, դեռ շարունակում էք գոյություն քարշ տալ
գեղապաշտների հետ,
Դեռ հեռո՞ւ էք մնում նախարարներից, դիվանագիտությունից,
Ֆոնդային բորսայից ու միջազգային սպանությունից։
Ինչո՞ւ էք այդքան սրբանկատորեն վերաբերվում սոցիալական
բողոքներին։
Իսկապես դուք «դարի եղջերափողն եք», տեսնում եք հեռուն,
Բայց ասում եք մեզ, թե արշալույս է, երբ որ մութ է դեռ։
Այնքան թմրիկ եք, այնքան փափկանուրբ, այնքան հեռավոր։
Սահեք հանգիստ ու հարմար եւ ընկողմանեք կանաչ տերեւների ներքո՝
Հինգերանգանի թելը Ձեր պոչին։
Այգու աթոռին հենված տիկինը ծայրում է խաղացող տղեկին.
«Չգո՛ւյշ, չթողնես փուչիկն այդ թոչի»»։*

Երբ ասում եմ, որ գրողները չեն ուզում հրաժարվել իրենց կարոտախտից, նկատի չունեմ, թե ուրիշ ոչինչ չկա։ Իրականում, Ազատ Չինաստանում շատ գրողներ կենտրոնանում են ավերակներից վեր հառնող Չինաստանի վրա։ Վերցնենք «Արժանի տուրք մայրուղիներին» վերնագրով էսսեն։ Եթե այս թեման նախապատերազմական օրերի չին գրողի հանձնարարած լինեիք, նա վստահաբար խոսելու էր սքանչելի ճանապարհի եւ գեղեցիկ բնապատկերի մասին։ Բայց թույլ տվեք մեջբերել Ցզո Լյանի այս էս-

ԱՅՊՈ ՑՅՊՆ

սեի առաջին իսկ պարբերությունը. կտեսնեք, որ այդտեղ ավելի շատ երիտասարդական խանդավառություն կա որակապես նոր, զարգացող ազգի համար, քան լեռների ու գետերի գովաբանություն.

«Իր երկրի հոգին չիմացող մարդուն սովորեցնելու լավագույն միջոցը նրան հանրային տրանսպորտ նստեցնելն է Ազատ Չինաստանի ցանկացած որեւէ քաղաքի եւ Չունցինի միջեւ ընկած ճանապարհին: Եվ մտայն, ժայռոտ լեռներով ճամփորդելիս նա կտեսնի մյուս ուղեւորների անսովոր վառ աչքերը. կարմրագույն դեմքերով այդ մարդիկ կարող են տևախոս կուպիտ գործվածքից հագուստով լինել: Չափազանց դժվարին ճանապարհ է եւ դաժան բնապատկեր, եւ նա չի կարող նուրբ գեղեցկություն ակնկալել: Բայց նա բավականին շատ փոխհատուցումներ կունենա: Արեւածագից մինչ վերջալույս՝ քամու երգ եւ շունչ, անձրեւի սառնություն եւ շիտակություն. ի՛նչ օր է, երբ նոր ավտոճանապարհին եք: Ռ՛վ կարող է դիմանալ եւ ձեռքը դուրս չհանել, որպեսզի բռնի ճերմակ ամպերն անիվների ներքո, երբ փոխադրամիջոցը լեռնագագաթի մշուշներից վեր է բարձրանում: Հետո շարունակում է առաջ սլանալ, բայց շրջակա լեռների զագաթները մնում են անշարժ ու հեռու: Արեւի ճառագայթները շողում են անձրեւի կաթիլներում, եւ դուք զգում եք, որ աշխարհը վեհաշուք է ու թարմ, ձեր սիրտը թարտում է, դուք հայտնություն եք ունենում: Հենց միայն այդ անմահ պահի համար զգում եք, որ ազատվել եք քայքայիչ կյանքի բոլոր ստրկական կապանքներից: Չգում եք, որ նորածին երեխա եք, որն իր բաց աչքերով ուշադիր զննում է այս անձայրածիր, հոյակապ աշխարհը: Իհարկե, պահն այդ սոսկ անցողիկ է: Դուք վերադառնում եք ձեր աշխարհը: Հիշում եք հյուրանոցը, որտեղ մնացել եք նախորդ գիշերը, եւ լեռները, որ պետք է անցնեք վաղն առավոտ: Ապա բոսորագույն վերջալույսն է իջնում ձեզ վրա: Լսում եք, թե ինչպես է տասնազարամյա հովտի լռության մեջ տրոփում շարժիչը: Անցնում եք մի լեռնագագաթ: Ինչ-որ մեկը բացականում է. «Նայե՛ք, քաղաք է»: Այդ հովտում խմբված հարյուրավոր եւ հազարավոր ընտանիքներ փոքրիկ հոսանքի ծոպերն են զգում: Մշակո՞ւյթ, իմաստություն, արտաքին աշխա՞րհ: Գուցե դրանք գոյություն ունեն, որովհետեւ փոքրիկ հոսանքը հաճելիորեն առաջ է վազում, ուղիղ հորիզոնից դուրս »:

Ես ոչինչ չեմ ասել վեպի կամ թատերգության մասին, որովհետեւ զգում եմ, որ քանի դեռ չեմ կարող որեւէ գաղափար տալ հեղինակների գործի մասին, պարզապես անունները շատ քիչ բան են նշանակում: Լսել եք հավանաբար չին կին գրող Դին Լինի անունը, քանի որ մենք Չինաստանում մեծ հետաքրքրությամբ տեղեկացանք, որ օկուպացված Չինաստանում

ճապոնացիների մասին նրա «Վերամիավորում» թատերգությունը Հնդկաստանում հաջողություն է ունեցել... Դրա բեմադրիչ պրոֆեսոր Ա. Արոնսոնը գրել է. «Մենք այդ թատերախաղն ընտրեցինք, ոչ միայն իր քաղաքական իրականության համար, այլ ևս էլ խիստ մարդկային հետաքրքրության պատճառով»: Թերեւս առաջին անգամ էր, որ ժամանակակից չինական թատերգությունը բեմադրվեց արտասահմանում, եւ դա շատ տեղին էր ներկայացվում: Այդ պիեսը պատերազմի ժամանակաշրջանի մեր դրամայի բազմաթիվ նմուշներից մեկն է: Հուսով եմ մի օր էլ Հնդկաստանում կներկայացվեն Ցաո Յույի թատերգությունները: Նրա «Անձրեամբրիկ» եւ «Արեւածագ» գործերն արդեն թարգմանվել են անգլերեն, բայց հրատարակվել են Չինաստանում: Նա մեր երիտասարդ դրամատուրգների մեջ ամենատաղանդավորներից մեկն է, որ օժտված է եւ՛ ջերմությամբ, եւ՛ խորաթափանցությամբ: Ի հավելումն ասենք, որ նա հասկանում է բեմը: «Արեւածագը», որպես պիես, նման է Սաո Դուսի «Կեսգիշեր» վեպին՝ քաղաքի այլասերված, սևանկ կյանքի անողորմ մի պատկեր...

Սևացած ամեն ինչի նման մեր այս ժողովրդական գրականությունն անցավ երեք փուլով: Այն սկսվեց որպես կատաղի հակակրակնք ընդդեմ գոյություն ունեցող ամեն ինչի: Պատկերամարտության պոռթկումները միշտ չէ, որ ողջամիտ բնույթ են կրում, բայց դրանք սովորաբար կարճ ճակատագրի են դեպի բարեփոխում: Կարելի է նկատել, որ այս շրջանում չին գրողներն ամենաշատն ատում էին ձեռք թե՛ արծակում, թե՛ բանաստեղծության մեջ: Մենք ունենք նաեւ գրողներ, որոնք, Արեւմուտքի որոշ հայտնի գրողների նման, չեն ընդունում կետադրությունը: Հինը բնաջնջելու այս բռնկումից հետո եկավ Արեւմուտքից պարբերաբար նորը ներմուծելու ժամանակաշրջանը՝ Իբսենը, Օ՛Նիլը, Սինգը դրամատուրգիայում, Տոլստոյը, Ռոմեն Ռոլանը, Ֆլոբերը, Դիքենսը, Գոլստորդին, Ուելսը՝ վիպագրության մեջ, Թագորը, Վիլյամ Բլեյքը, Պոլ Վալերին եւ շատ ուրիշներ՝ պոեզիայում: Արեւմտյան այդ գրողների գլուխգործոցները թարգմանվում էին չինական գրողների համար օրինակելի նմուշներ ներկայացնելու գիտակցված մտադրությամբ: Գրելով ճապոնական գեղարվեստական գրականության մասին՝ Չժոու Ցզո-ժենը, այն ժամանակ շատ հարգված մի գրաքննադատ, կարծում էր, որ չին գրողներից ավելի շատ ջանքեր են պահանջվում «արտասահմանյան գործերն ընդօրինակելիս»: Միայն վերջին տարիներին սկսեց ձեւավորվել իսկական ստեղծագործական մոտեցում: Ավերման-ընդօրինակման-ստեղծագործելու այս գործընթացն ամենաբնորոշն է ժամանակակից չինական պոեզիայի համար, որի վրա արտասահմանից ամե-

ԱՅԱՈ ՑՑԱՆ

նաառաջին ազդեցությունն է գործել Թագորը: Առաջին փուլում ժամանակակից չինական պոեզիան նպատակաուղղված էր չափի ոչնչացմանը եւ խոսքի բնական ռիթմը որդեգրելուն: Պա ցնցեց չինական բանաստեղծական ձեւերի՝ դարերով ընդունված սովորույթները, որոնց հիմքի վրա ոչինչ նոր չէր կառուցվել, միաժամանակ հնարավոր եղավ նաեւ ընդլայնել թեմաների շրջանակը՝ բնության եւ սիրո թեմաներից զատ հետաքրքրություն արթնացնելով հասարակական խնդիրների հանդեպ: Երկրորդ փուլի հետ սկսվեց նոր ձեւերի փորձարարությունը: Առաջատար ուղղորդող ոգին Սյույ Չժի-մոն էր, որն Անգլիայից վերադառնալուց հետո սկզբնավորեց երաժշտական առանձնահատկությունները վերականգնելու շարժումը, առանձնահատկություններ, որոնք ի սկզբանե գոյություն ունեին չինական պոեզիայում: Պրն Սյույն ինքը քաջատեղյակ էր չինական դասական պոեզիային եւ միաժամանակ անգլիական բանաստեղծության սիրահար: Նա շատ համարձակ փորձեր է կատարել՝ գրելով նոր գործեր՝ սոնետից մինչեւ երկար պոեմ:

Երրորդ փուլը հակազդեցությունն էր ընդդեմ օտարամուտ տաղաչափական սահմանափակումների, որ պարտադրված էին ազատ հոգիներին, հատկապես ընդդեմ սոնետի, որն անհիմն ու մեխանիկական էր թվում: Հակազդեցությունը գալիս էր հիմնականում երկու խմբից: Գո Մո-ժոն՝ Ստեղծագործական ընկերակցության առաջատար գրողը, ուզում էր, որ պոեզիան ուժի կրող ու միջոց լինի: Նրա բանաստեղծությունները հիմնականում ուղղված էին սոցիալական անարդարության դեմ: Նա փառահեղության հասավ իր գործերում եւ խոսքի սահունության՝ Ուոլթ Ուիթմենի ոգով: Նրա վայրի եւ անզուսպ կիրքը սահմաններ չէր ճանաչում: Իր խոստովանության մեջ նա գրել է.

«Ես ինչ-որ չափով սուբյեկտիվ մարդ եմ, ավելի շատ երեւակայությամբ օժտված, քան դիտողունակությամբ: Նաեւ բռնկուն եմ, հանկարծական մղումով գործող: Նույնիսկ երբ բանաստեղծություն եմ գրում, տրվում եմ մղումին: Ամեն անգամ, երբ մղումն է ինձ համակում, ասես քառատրոփ արշավող նժույգ լինեմ, իսկ երբ մղումը հանդարտվում է, նմանվում եմ հոգևած ծովախոզի»:

Սա ձեզ կասի, թե որքան շատ կարող է ժամանակակից չինացին տարբեր լինել կոնֆուցիական ստոիկ ուսմունքներից: Իր բանաստեղծություններից մեկում Գոն դատապարտել է ժամանակակից քաղաքը: Այն սկսվում էր հետեւյալ տողերով.

*«Ղա պողոտայի ցեմենտը չէ,
Արյունն ու քրտինքն է բանվորների կյանքի:
Արևահոսող կյանքեր, կյանքեր արևահոսող՝
Գլորվող անվաղողների տակ շքեղ շարժիչների»:*

Մեկ այլ հակազդեցություն գալիս էր Լի Յզին-Ֆայից, որն ամբողջ մի դպրոց ձեւավորեց, եւ նրա ազդեցությունը երբեք չմարեց, թեեւ Լին ինքը դարձյալ անցավ քանադակագործության: Ղայ Վան-շուի նման՝ Լին էլ ուսում էր ստացել Ֆրանսիայում եւ հետեւաբար կրել էր ֆրանսիական սիմվոլիզմի ազդեցությունը: Երեւի կարդացած կլինեք ժամանակակից չինական պոեզիան անգլերեն թարգմանությամբ... եւ նկատած կլինեք, որ մեր նոր պոեզիայի որոշ բանաստեղծություններում կարելու է իստորում անըմբռնելի խորհրդավորությունը: Պատերազմից հետո որոշակի փոփոխություն տեղի ունեցավ: Շատ բանաստեղծներ իրենց գործերն ստեղծում են՝ հստակ նպատակ ունենալով դրանք ներկայացնելու ժողովրդի առջեւ: Դրանք հաճախ քնարական գործեր են, բայց հազվադեպ են շատ բարդ, ինչն, իհարկե, լավ է:

[Հեռարձակում Հնդկաստանի համար]

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՏ ՆՎԱՃՈՒՄ ԻՐԵՆՑ ՀՈՂԸ

1. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՐԻԶՈՆԻՆ

«Արագացրեք աշխան հարկի վճարումը եւ պատրաստ եղեք հողային բարեփոխման»: Կոչը տարածվեց Հոյլունի սյանի (նահանգի) Գյուղացիական ընկերության կողմից դեռ օգոստոսի սկզբին: Եվ այդուհանդերձ Սիւլու գյուղի գյուղացիները, Հունանի շատ գյուղացիների նման, տատանվում էին: Նրանք հողային բարեփոխման մասին կոչն ընդունեցին հույսով, բայց նաեւ որոշակի մտավախությամբ: Քչերն էին նրանցից տեղյակ խոր եւ ցնցող այն նշանակության մասին, որ այդ իրադարձությունն ունենալու էր իրենց զավակների ու թոռների համար: Եվ դա զարմանալի չէ: Հազարավոր տարիներ շարունակ ֆեոդալական շահագործումը ցամաքեցրել էր տարածաշրջանի կենսական ավիշը: Քիչ փոփոխություն էր տեղի ունեցել գյուղացիների կյանքում: Միայն 1927-ին, ժողովրդական իշխանության շաբաթների կարճատեւ, բայց փառապանծ պահերին էր շողացել ազատությունը: Ապա կրկին դառն ու դաժան խավար էր իջել: Երեսուցեից ցածր տարիք ունեցող մարդիկ, սակայն, աղոտ հիշողություն ունեին այդ ժամանակի մասին, եւ Չան Կայ-չիի բռնատիրությունը չէր խրախուսում հնարանակների կողմից այդ լուսավոր օրերի մասին թոթովանքն անգամ: Նրանք դեռ հիշում էին գյուղացիների հաղթանակի կարճատեւ օրերը, բայց դրա կողքին մեկ այլ մտապատկեր էր՝ կալվածատերերը վերահաստատել էին նախկին վիճակը, եւ Հոյլունի սյանի շրջակայքի բերրի հողը ներծծված էր քաջարի գյուղացիների արյամբ:

Տարվա եղանակները պտտվում են անվի նման, իսկ Սիւլու գյուղի գյուղացիները մեխանիկորեն եւ անդադար շարունակում էին տքնաջան աշխատել: Ինչպես մեծ բեռ կրող անիվներ, նրանք հառաչում ու տնքում էին Գոմիսդանի պաշտոնյաների նահանգային վարչության «պարոնների», պառ (տասանորդ) հավաքող ղեկավարների եւ կալվածատերերի համատեղ ճնշման ներքո, որոնք հավաքում էին վարձավճարները եւ միաժամանակ զբաղվում վաշխառությամբ: Անիվը պտտվում էր: Գարուն էր: Գյուղացիները պետք է պարարտանյութ շաղ տային, սերմեր ցանեին եւ մատղաշ տնկիներ դնեին: Ամռան կիզիչ արեւի ներքո գործի էին զգում ջրող անիվներ, մոլախոտերից քաղիանում արտերը եւ բրնձի բերքը հնձում: Անիվն արդեն թեքվել էր դեպի աշուն: Լուսադեմից առաջ, մոտավորապես ժամը

երեքին, տղամարդիկ վեր էին կենում, որպեսզի վարեին արտերը եւ մշակեին բանջարեղենը: Երբ լույսը բացվում էր, նրանք հավաքում էին բերքը եւ փռում արեւի տակ չորանալու: Ուտաբոքիկ կանայք, ծծկեր երեխաներին մեջքներին կապած, հենց որ ավարտում էին կերակուր պատրաստելը, դաշտ էին գնում չոր խոտ հավաքելու:

Սիկլու գյուղում բոլորը համաձայն էին, որ ազատությունից հետո գյուղացիների կենսապայմանները բարելավվել էին: Ավագակները ոչնչացվել էին, իսկ հարկերը թեթեւացել: Ավելին, տեղական շտեմարաններ էին տեղադրվել, այնպես որ, հարկ մուծելու հացահատիկը ավելի քան 70 լի (մեկ լին մեկ երրորդ մղոն է) հեռու գտնվող քաղաք տեղափոխելու փոխարեն, այդ ամենը կարելի էր ընդամենը 20 լի հեռավորության վրա գտնվող կուսանոցի մոտակա յոթերորդ պահեստ տեղափոխել: Ամենակարեւորը, սակայն, այն էր, որ կալվածատերերը սակվեցին: Տարվա առաջին կեսին, երբ, կառավարության օգնությամբ, վարձավճարները կրճատվեցին, եւ ավանդները վերադարձվեցին, գյուղացիներին հաջողվեց խոշոր հողատերերի բաժնից մաս ստանալ: Շատ գյուղացիներ դա ետ ստացան հացահատիկի ձեռով, ոմանք էլ՝ կանխիկ փողով: Դա բոլորի համար նշանակում էր շունչը ետ բերել, բացառությամբ ամենաաղքատ հողագործների, որոնք մի թիվ հող իսկ չունեին: Աղքատ ու սևակ դարձած գյուղացիներն իրենց ետ ստացած փողերն օգտագործեցին քաղաքում կրպակներ բացելու կամ նոր հողակտոր գնելու համար: Այսպիսով, անբնական չէր, որ գյուղացիներից ոմանք պետք է նոր պատրանքներ փայփայեին: Չգալով, որ իրենց ուսերին դարերով ծանրացած բեռն ինչ-որ չափով թեթեւացել է, նրանք բարեհոգի եւ ինքնագոհ դարձան: «Կալվածատերն արդեն տապալված է: Կարիք չկա այլևս ընկաձին խփել»: Կամ «Ժամանակներն ավելի լավն են դարձել ու քանի դեռ շարունակում են բարելավվել, կարիք չկա անընդհատ աշխատել»: 1927 թվականի տիպի հիշողություններն անհանգստացնում էին սակայն նրանց՝ ուրվականի նման ներթափանցելով նրանց ենթագիտակցության մեջ: Նրանք վախենում էին հանկարծակի տեղաշարժից:

Ինչ վերաբերում է կալվածատերերին, նույնիսկ այդպիսի փոքր անհաջողությունն, իհարկե, սաստիկ տիպի էր նրանց համար: Բայց փորձում էին ենթարկվել...

Կալվածատերերը նույնպես չէին մոռացել 1927 թվականը: Նրանց էլ էր թվում, թե պատմությունը շրջապտույտ է կատարում: Եվ անհամբեր սպասում էին այն օրվան, երբ հնարավորություն կունենան թիկունքից դաժան հարված հասցնել: Բայց հանգիստ նստած չէին սպասում: Պատրաստվում

ԱՅՊՈ ՑՅՄՆ

Էին՝ համբերությամբ, խորամանկությամբ, անդադար...

Մի առավոտ, Լոյեմբերի սկզբին, 30 սյուներով եւ չորս համազգեստավոր բանվորներով բեռնված մի նավակ լողաց դեպի Սինլու գյուղի Աղավ-նազետի հարավային ափ: Բեն Ֆու-չժուանը, որ գետի ափին վառելա-փայտ էր կտրում, նայեց նավաքթի մոտ կանգնած նավակավարին, որը խիստ լարված էր նավակը վարում: Տեսելով, որ նավակը վերջապես մո-տեցավ ափին՝ նա այլեւս չկարողացավ զսպել իրեն, վազեց թեք ափով եւ հարցրեց. «Շուան-չժուան, Շուան-չժուան, ինչի՞ համար ես այս մարդիկ այստեղ»:

Համազգեստավոր բանվորներից մեկը, որի պայուսակի վրա «Հեռա-խոսային ընկերության» տարբերանշաններ էին կարված, նախքան նավա-կավարը կհասցներ պատասխանել՝ գոռաց.

«Ինչի՞ համար: Հողային բարեփոխման, ահա՛ թե ինչի: Հողային բարե-փոխումը նրա համար է, որպեսզի գյուղացիները հողի տերերը դառնան»:

Այս ասելով՝ բանվորն իր գործընկերներին ասաց, որ սյուները ափ հա-նեն:

Բեն Ֆու-չժուանի ուղեղում աղոտ եւ անորոշ մի պատկեր ուրվագծվեց. այդ հեռախոսային սյուները սերտորեն կապված էին իր եւ իր բարօրու-թյան հետ: Գերանդին ու զամբյուղը ցած դնելով՝ նա, առանց մտածելու, կռացավ եւ սյուններից մեկը դրեց ուսին: Մինչ նա այդպես էր վարվում, բանվորը շարունակում էր խոսել՝ թե որքան են իրենք շտապելու, թե ինչ-պես բարեփոխման աշխատանքային խումբը հասնելու է այդտեղ այն պա-հին, երբ իրենք քաղաքում հանդիպում կունենան կադրերի հետ: Ըստ երեւոյթին նրանց ութ օր էր տրված, որպեսզի ավարտին հասցնեն լարե-րը քաշելու աշխատանքը:

«Չորս հոգի՞ եք ընդամենը», - մտահոգված հարցրեց Բեն Ֆու-չժուանը:

«Չէ, մեկ խմբում ենք չորս հոգի», - ասաց բանվորը: Հույլունի սյանը ինը գյուղ ունի, ճի՞շտ է: Չորս անգամ ինը կանի երեսունվեց»:

Բեն Ֆու-չժուանը տպավորված էր: Պարզ էր, որ այդ մարդը քաղաքից էր եկել, այդքան գործույթ եւ բանիմաց: Բայց չհիմացավ եւ մի վերջին հարց էլ տվեց. «Այս հեռախոսագիծը դեպի ո՞ր է գնում»:

Հենց այնպես տրված հարց չէր դա: Ճիշտ է, նա եղել էր քաղաքում մի քանի անգամ, երբ բերքի վարձն էր մուծում, բայց տասն օրից ավելի չէր մնացել եւ երբեք հեռախոսի ձեռք չէր տվել, անգամ չէր էլ տեսել:

«Ինչպե՞ս թե... Ուղիղ դեպի շրջանային կառավարություն, դեպի Հողա-յին բարեփոխման տեղական կոմիտե, դեպի Հողային բարեփոխման գա-

վառական կոմիտե: Ուղիղ դեպի հենց Նախագահ Սառ»:

Բանվորը համակրանքով աչքով արեց իր գյուղացի ընկերոջը եւ շարունակեց.

«Գոմիւղանի ամբողջ քսան տարիների ընթացքում հեռախոսային համակարգը միայն քաղաքով էր սահմանափակված: Հիմա մենք այստեղ գյուղում ենք, եւ ուզում ենք օգնել ձեզ, որպեսզի վերջ տաք կալվածատերերի դասակարգին»:

Բեն Ֆու-չժուանի գլուխը պտտվում էր: Երբ բոլոր սյուները տեղափոխվեցին ափ, եւ բանվորները պատրաստվում էին դրանք տեղադրել, նա էլ վերցրեց իր գերանին, զամբյուղն ուսը զգեց եւ օրորվելով գնաց: Ճանապարհը ձգվում էր ամբարտակի երկայնքով, ապա մեկ այլ լանջով վար իջնում, եւ նա խոր մտքերի մեջ էր ընկել:

Երբ հասել էր Յոթ աստղ կոչվող զառիթափի ստորոտին, գլուխը վեր բարձրացրեց եւ նայեց Բեն-Չժու դաստակերտին, որ խոյանում էր ծառերի մերկ գագաթներից վեր: Դրա տիրոջ՝ Բեն Երկրորդի առանձնատան տանիքը լայն էր եւ տարածվում էր իր տիրոջ զանգվածեղ ուսերի նման: Իսկ շուրջբոլորը՝ ծայրամասերին հողաշեն խրճիթների խմբեր էին: Վեց տարեկանից Բեն Ֆու-չժուանը հոր հետ ապրում էր այդ խրճիթներից մեկում: Նա ինքն էլ երբեմն ատում էր Բեն Էր-հուին՝ Բեն Երկրորդ Վագրին, հատկապես, երբ վերջինիս վրայից իր մեծ տանը պատրաստված կերակուրների հոտն էր գալիս: Ձկան, մսի եւ էլ ինչի ասես: Իսկ ինքը՝ Բեն Ֆու-չժուանը, տարին բոլոր միայն չորացրած կարտոֆիլի շերտերով կարող էր սնվել: Բայց Բեն Ֆու-չժուանի համար դա «ճակատագրի» հարց էր: «Ունենալ-չունենալը միմիայն ճակատագրից է կախված. մարդկային ոչ մի ջանք ոչնչի չի կարող հանգեցնել»: Նրա ճակատագիրն սկսեց փոխվել երկու ամիս առաջ: Որտեղից որտեղ հանկարծ հողատեր Բեն Երկրորդից հրավեր եկավ. վերջինս նրան առաջարկում էր ազատ մի հողամաս՝ հինգ դոու (դոուն դանի՝ հիսուն կիլոգրամի մեկ տասներորդն է) եւ յոթ շեն (տասը շենը մեկ դոու է) արժողությամբ, ընդ որում լավ, բերրի հող: Նրան առաջարկվում էր նաեւ տեղափախվել հողատիրոջ տանը մերձ կոմիւղորածածկ սենյակներից մեկը: Հը՛մ, իրոք որ իր բախտը փոխվել էր:

Բեն Ֆու-չժուանի համար ասես հարված լիներ, երբ մտածեց, որ ինքն այդ ամենից հետո երեւի չպետք է օգներ սյուները տեղափոխել, որ դա անելով՝ մի տեսակ դավաճանեց իր տիրոջը: Ինչ էլ որ արած լիներ նախկինում, մտածում էր Բեն Ֆու-չժուանը, իր տեր Բեն Երկրորդը ազատություն հաստատվելուց ի վեր ավելի լուսավորյալ էր դարձել: Առանց նրա ին-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

ըն՝ Բեն Ֆու-չժուանը, որտե՞ղ կարող էր սնունդ եւ հագուստ ունենալ:

Հուանսի գյուղերի մեծ մասը բաղկացած է մի քանի դաստակերտից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է մեկ կամ ավելի տոհմա-յին կլաններից: Փոքր դաստակերտներում դրա անդամները արյունակից ազգակցական կապերով առավելագույնը երեքից հինգ պորտ էին հեռու: Այնպես որ, ինչ-որ իմաստով, այդ դաստակերտներից յուրաքանչյուրը ֆեոդալական փոքր մի ամբողջ էր: Սինլու գյուղում երեք աչքի ընկնող դաստակերտ կար՝ Բեն-Չժու դաստակերտը, Լո Մեծ Տուևը եւ Լի Պարտեզը: Ամբարտակից ոչ հեռու, Յոթ աստղի գառիթափի մոտ մեկ փողոցանի քաղաք էր:

Երբ Բեն-Ֆու-չժուանը վերադարձավ, բնականաբար, բոլորին պատմեց հեռախոսասյունների հետ կապված գործի մասին: Լուրը շատ արագ տարածվեց, եւ մինչեւ կեսօր բոլոր երեք դաստակերտներում գիտեին այդ մասին: Տարեցներից ոմանք անտարբեր մնացին: Բայց ևույնիսկ նրանք բարձրացան Ողջախոհության ու Որդիական բարեպաշտության կամարի առջեւ գտնվող հենաքարին եւ ձեռնափայտերին հենված՝ սկսեցին նայել հոգևաբեկ հայացքով: Շատ ևոր բաներ էին տեսել նրանք՝ ճապոնացիներին, Գոմինդանի բանակը... Տարիների դառն փորձը նրանց ասում էր՝ այն, ինչ ևոր է, անպայմանորեն չի նշանակում, թե լավ է:

Երիտասարդ սերունդը, սակայն, չէր կարողանում հուզմունքը զսպել: Մեկը մյուսի ետեփից, շրջանցելով անտառն ու գերեզմանոցը, նրանք վազեցին նեղ դաշտային ճանապարհով դեպի վեր՝ գետափի կողմը: Ամբոխի մեջ էր նաեւ Խենթ տատիկը՝ կապած ոտքերով: Նա հիսուներեք տարեկան էր: Եվ այդտեղ էր՝ իր ձեռնափայտով, շրջապատված մարդկային ծովով, ու բերանը լայն բացած նայում էր գետի այս կողմում՝ ափին վեր խոյացող սյուներին:

Տեղ հասնելուն պես գյուղացիներն սկսեցին բանվորներին հարցու-փորձ անել: Խենթ տատիկը, իր ոսկրոտ մատներով թեթեւակի հավելով բանվորներից մեկի ձեռքին, շնչաց. «Ախ, ինչքան նման ես իմ Դե-մինին: Գիտե՞ս, նա էլ քեզ պես բարձրահասակ էր: Ես ինքս եմ նրան դաստիարա-կել...»: Նրա ձայնը խզվեց, եւ շուտով նա սկսեց հեկեկալ:

«Դե, դե, լաց մի՛ եղեք: Հիմա լացելու ժամանակ չէ, այլ ծիծաղելու», - ասաց բանվորը: Ապա մատիտով ծոցատետրում ինչ-որ բան գրառելուց հետո հայտարարեց. «Այլևս ոչ մի հարց, խնդրում եմ: Հեռախոս ենք քաշում հողային բարեփոխումների համար: Հողային բարեփոխումից հետո կեցցեք դուք, ընկեր գյուղացիներ, եւ կորչեն կալվածատերերը: Հասկա-

ցա՞ք: Եկեք, ովքեր ուժեղ ես, օգնեք տանել սրանք»:

Այս խոսքերից հետո բոլոր գյուղացիներն սկսեցին աշխատել: Ոմանք փոսեր էին փորում, ոմանք էլ օգնում էին արդեն համարակալված սյունե-րը տեղափոխելու: Բանվորները ոգետրված էին: Աշխատանքն ավարտ-վեց ժամանակից շուտ, երբ արեւը դեռ արեւմտյան հորիզոնին էր...

Խենթ տատիկն էլ էր ապրում Բեն-Չժու դաստակերտում եւ երբ ետ էր եկել, ծեծում էր բոլոր դռները, եւ ով բացում էր, ձայն էր տալիս. «Հէ՛յ, հո-ղային բարեփոխում է, հողային բարեփոխում: Որդիս՝ Դե-միւնը պետք է վե-րադառնա»:

Բեն Սին-վուի հղի կինը կոր էր ոտքը դուրս դրել, որ խոզերին կանչի կե-րակրելու, երբ Խենթ տատիկը վազեց ուղիղ կրակի կողմը, ասես հարբած, բախվեց կրակի եւ ընկավ: Տազնապա՛ծ, որ կարող է վնասված լինել, տի-կին Բենն իր զինվոր ամուսնուն ասաց, որ զնա եւ կանչի Խենթ տատիկի դուստր Չժուն-սինին: Եւ օգնեց ծեր կնոջը վեր կենալ, ներս տարավ սեւ-յակ եւ կտրեցրեց աթոռին: Մի քիչ ջուր լցրեց կրակի կողմը եւ ծեծեց բռնե-լով, ասես երեխային ինչ-որ բան բացատրելիս, ասաց. «Լի տատիկ, քո տղան ետ չի գա: Մի՞թե Սին-վուն չի ասել քեզ: Եւ ճշմարտությունն էր ասում: Չուր հոյսեր մի՛ փայփայիր: Չես կարող դիմանալ»:

«Ետ չի՛ գա», - մեքենաբար կրկնեց Խենթ տատիկը: Ապա սուր ճիչ ար-ծակեց եւ ուշաթափ ցած ընկավ աթոռից:

Հարեանները ներս թափվեցին՝ ամեն մեկը մի բան խոսելով միաժա-մանակ: Հորեղբայր Գուան-լինը, բարակ մորուքը մատներով սղալելով, մտախոհ ասաց. «Ավելի լավ է կրակի չափել, որ որդին զոհվել է ճակատա-մարտում: Եւ դուստրը շուտով կամուսնանա: Դրանից հետո ի՞նչ է լինելու խեղճի վիճակը»:

Այդ պահին ներս մտավ Խենթ տատիկի միակ դուստրը՝ Չժուն-սինը, որը դեռ մազերը պոչիկներով կապած երեխա էր: Տեսնելով ծեր կնոջ փոշ-նոտ, մոմի պես գունատ դեմքը՝ կարծես իրեն կորցրեց եւ ողբաձայն գոչեց. «Մայրի՛կ, օ՛, մայրի՛կ»: Բեն Սին-վուն էր, որ գրկելով վեր հանեց Խենթ տատիկին եւ դրեց մահճակալին:

Մի քանի րոպեից տատիկի կուպերն սկսեցին շարժվել: Առաջինը տե-սավ իր աղջկան: Եւ բռնեց Չժուն-սինի ձեռքը եւ մեղմ շոյելով, ասես հրա-ժեշտ էր տալիս, հեզ ձայնով ասաց. «Մի՛ անհանգստանա: Մի՛ անհանգս-տանա»: Ապա կրկին խոր տառապանքով արտաբերեց. «Ուրեմն եղբայրդ գնացել է»: Եվ լռեց՝ անհույս ու վշտաբեկ:

Թեեւ ընդամենը տասնյոթ տարեկան էր, Չժուն-սինն արդեն հինգ տա-

ԱՅՊՈՑԱՆ

րի է, ինչ նշանված էր: Նրա նշանածը՝ Լո ընտանիքի որդին, քսաներկու տարեկան էր, փոցխի պես բարակ էր եւ հաճախակի արևահոսության սուր նոպաներ էր ունենում: Վերջերս նրա ընտանիքն առաջարկել էր հարսանիք անել: Սկզբում Խենթ տատիկն անօգնական չգիտեր ինչ անել: Արդյո՞ք իր դստերը նրա համար չէր ամուսնացնում, որովհետեւ չէր կարող պահել նրան: Եվ մի՞թե մյուսները լիակատար իրավունք չունեին հարսանիք պահանջելու՝ հինգ տարի նրան կերակուր եւ օթեան տալուց հետո:

Բայց հենց որ Բեն Սին-վուն մեկ տարի առաջ բանակից վերադարձավ, այդ օրվանից սկսեց ակտիվ կերպով հետաքրքրվել գյուղի անցուդարձով: Այդ անդադար ակտիվությամբ կարելի է քիչ թե շատ բացատրել, թե ինչու նրան ընտրեցին տեղական Փոքր խմբի ղեկավար: Նրան ստիպողաբար զորակոչել էին Գոմինդանի բանակ Դե-մինի՝ Խենթ տատիկի որդու հետ, եւ նա գիտեր, որ Դե-մինն սպանված է: Դրա համար էլ, լսելով, որ Դե-մինի երիտասարդ քույրը պատրաստվում է ամուսնանալ թոքախտավոր ու թուլակազմ մեկի հետ, նա իր վրա վերցրեց՝ գնալ Լո Մեծ Տուն, որպեսզի քննարկեն ամուսնությունը չեղյալ համարելու հարցը: Լո ընտանիքի պատասխանն այսպիսին էր եղել. «Իհարկե, կարող եք չեղյալ համարել ամուսնությունը, բայց այն ժամանակ, երբ ետ կվճարեք ամբողջ գումարը, որ մենք ծախսել ենք վերջին հինգ տարիներին՝ նրան կերակրելու համար»: Հարցն այդտեղ փակվել էր:

Բեն Սին-վուն խիստ զայրացած էր: Նա գիտեր, որ Դե-մինն սպանված է: «Լի տատիկ, Չժուն-սին, միայն մտածեք այդ մասին,- վառվող հայացքով բացականչեց նա,- Ո՞վ է սպանել Դե-մինին: Արդյո՞ք դա այդ շանորդի Բեն Էր-հուն չի եղել: Մի՞թե նա չէր, որ ինձ նույնպես ուղարկում էր որպես թևահանոթի միս: Որտե՞ղ կլինեի այսօր, եթե չլինեին կոմունիստները: Նրանք կալանավորեցին ինձ, բայց ինձ հետ բանտարկյալի պես չէին վարվում: Նրանք փրկեցին ինձ, ասես իրենց հարազատ եղբայրը լինեի: Հիմա վճռականորեն եմ տրամադրված եւ Բեն Էր-հունի հարցերը լուծելու եմ, այլապես ինձ տղամարդ չեմ անվանի»:

Բեն Էր-հու: Այդ անունը բոլոր գյուղացիների սրտերում սարսափ եւ ատելություն էր հարուցում: Բեն Երկրորդ Վաճրը: Երբ ճապոնացիներն այստեղ էին, նրա եղբայր Ին-դինը, որպես գյուղի կեղծ ավագ, ստանձնեց տղամարդկանց ու կանանց պատժելու գործը: Ճապոնիայի պարտությունից հետո Բեն Երկրորդ Վաճրը նրա տեղը զբաղեց: Ամբողջ չորս տարի նա բռնակալ էր Հույունի սյանում՝ հանդես գալով որպես Չան Կայ-շիի կողմնակից, գյուղացիներին նեղելով շարունակական պահանջներով՝ աշ-

խատունակ տղամարդկանց չարչարելով եւ մյուսներից էլ տարբեր ներդրումներ վերցնելով:

Ազատությունը Բեն Էր-հուին իր տեղը դրեց: Մի որոշ ժամանակ, իր կապերի ու կողմնակիցների միջոցով, նա փորձում էր պահպանել իր նախկին ազդեցությունը: Հանդես գալով որպես մի բարի ու հանգիստ ղեկավար՝ նա հասարակության մեջ գյուղացիներին հետեյալ սպառնալիքները կներկայացներ. «Այդքան ակտիվ մի՛ եղեք: Մենք նստակյաց, պարզ ու հասարակ ժողովուրդ ենք: Մարդ պետք է այնպիսի բաներ անի, որ պապազայում չփոշմանի»: Վերջին մի քանի ամիսներին, սակայն, նա սկսել էր նվերներ տալ նախկին կամ ներկա իր բոլոր վարձակալներին, իր համար աշխատած մշակներին...

Մինչ Մին-վուն բարձրաձայն հայիոյում էր Բեն Էր-հուին, սենյակում գտնվող մյուս գյուղացիներն անխոս իրար էին նայում...

Չժու Յաո-սյանը, որին տեղացիները «Գիտուն» էին ասում, առաջինն էր, որ բարձրաձայնեց մյուսների մտքերը: Խոսելուց առաջ բախտագուշակի նման կոկորդը մաքրեց, ապա քորեց ծոծրակի սպին: Այդ ամենը նրա համար, որպեսզի ցույց տա, որ իր ասածը ինամքով ու զգուշավորությամբ ծանրութեթեւ է արվել:

«Հոյունի սյանը շուտով հողային բարեփոխում կունենա», - ասաց նա հեղինակավոր տոնով: Այդ զարնանը նա քաղաքում ներկա էր եղել գյուղացիական ներկայացուցիչների հավաքին եւ վերադարձել էր սեփական կարեւորության մեծ զգացումով: Դրանից հետո նա միշտ ներկա էր գտնվում նման կարեւոր միջոցառումներին: «Հողային բարեփոխման ժամանակ ամեն մեկն ստանում է, ինչ իրեն հասնում է: Նախագահ Մաոն արդար է եւ անկողմնակալ: Դրանում կասկած չի կարող լինել»: Ապա բարձրաձայն հազաց, ու շարունակեց. «Բեն Առաջին տերը, Բեն Երկրորդ տերը, ի՛նչ է սա նշանակում: Նրանք հենց այստեղ են մեր մեջ: Նրանք չեն կարող հեռու թռչել: Ինչ վերաբերում է նրանց հողին, դա էլ չի կարող վերանալ: Ուրեմն ինչո՞ւ այդքան հուզվել: Ի վերջո բոլորս նույն դասակարգի մարդիկ ենք»:

Գյուղացիները, որոնցից շատերն արդեն նյարդայնանում էին եւ մտածում էին աջակցության մասին, հեշտ համոզվեցին գիտունի խոսքերից: Նրանցից շատերն հիմա այն կարծիքը հայտնեցին, թե պետք է հետաձգեն հաշիվները Բեն Էր-հուի հետ, մինչեւ Աշխատանքային խումբը ժամանի:

Մին-վուն մնաց մենակ կանգնած: Նա հասկացավ, որ գայրոյթն իրեն հեռու էր տարել: Դրա համար էլ ասածը չպնդեց: Վերհիշեց մի հատված մի քանի օր առաջ «Հողային բարեփոխման նախապատրաստական աշխա-

ԱՅՊՈ ՑՑՄՆ

տանքների» հետ կապված՝ Շրջանային կոմունիստական կուսակցության մասնաճյուղի քարտուղարի ասած խոսքից. «Դուք չեք կարող տապալել կալվածատերերին, քանի դեռ գանգվածները լիովին չեն կազմակերպված միասին գործելու: Եթե չեք կարծում, թե կարող եք նրանց տապալել, ոչ մի անխոհեմ քայլ մի՛ արեք, որպեսզի անհարկի չվախեցնեք նրանց»:

Հեռախոսասյուներ տնկելու հետ մեկտեղ Սիևլու գյուղի յուրաքանչյուր գյուղացու եւ յուրաքանչյուր կալվածատիրոջ սրտում հարցական մի նշան էր վեր խոյանում: Ամեն տղ տնկվող սյան հետ այդ նշանն ավելի մեծ ու հստակ էր դառնում:

Քանի որ Հոյլունի սյանի կառավարությունն իր գրասենյակն ուներ Բեն-Չժու դաստակերտի նախնիների տաճարում, եւ Սիևլու գյուղի գյուղական նախագահը՝ Բեն Յույ-դանն ինքը, Բեն-Չժու դաստակերտի անդամ էր, հեռախոսային համակարգը, բնականաբար, կենտրոնացած էր այդտեղ...

Բանվորների գալու հաջորդ առավոտյան Բեն Յույ-դանը փոքր խմբի ղեկավարների հավաք հրավիրեց տաճարի բակում: Ներկայացնելով Շրջանային ժողովրդական կառավարության հրահանգները, նա ասաց, որ Հողային դարեփոխման աշխատանքային խումբը հավանաբար կժամանի մոտավորապես նոյեմբերի 25-ին: Այդ ընթացքում, ավելի քան տասն օր, իրենք պետք է միջոցներ ձեռնարկեին ասեկոսները վերացնելու եւ կալվածատերերի կողմից ցանկացած սաբոտաժի դեմ պայքար մղելու համար: Պետք է կրկնակի զգոն լինեին եւ ուշադիր հետեւեին կալվածատերերի ցանկացած շարժման: Սիւեւոյն ժամանակ՝ ոչ մի գյուղացի չպետք է մեղադրվեր կամ հարձակման ենթարկվեր, եթե վարաներ կալվածատերերի դեմ պայքար մղել կամ խաբվեր նրանց կողմից, քանի որ չէր կարելի ակնկալել, թե գյուղացիները շատ արագ կարթնանան հազարավոր տարիներ ճնշման ու խաբեության ենթարկվելուց հետո: Փոխարենը՝ պետք էր ամեն միջոց կիրառել՝ գանգվածների մեջ դասակարգային գիտակցությունն արթնացնելու համար: Երբ դա արվեր, եւ գանգվածներն իրոք «ոտքի կանգնեին», այն ժամանակ խոշոր շորթողների, ասեկոսների տարածողների դեմ պայքարը եւ կալվածատերերի անօրինական գործողությունները դադարեցնելը շատ հեշտ կլիներ:

Կալվածատերերն իրենք էլ այժմ տեսնում էին, որ սպասվելիք հողային բարեփոխումը կկործանի իրենց իշխանությունը: Դա նույնքան հեշտ չէր լինի, ինչպես «վարձավճարի կրճատման եւ ավանդների փոխհատուցման» քարոզարշավը: Թերթերից ու բուկլետներից նրանք գիտեին, որ ժո-

ղովուրդը ուզում էր ոչնչացնել միայն կալվածատերերի դասակարգը, ոչ թե իրենց՝ կալվածատերերին, որ իրենցից կխլվեն ոչ ամբողջ հողերը, այլ այն որ ապրուստի միջոցներից չէին զրկվի, այլ մնացած բոլորի նման իրենց բաժինը կստանային: Բայց դարեր շարունակ գյուղացիներին հարստահարած կալվածատերերի համար «նույնանման բաժին» ասվածը արհամարհելի բան էր: Սովոր լինելով գյուղերում գերագույն իշխանություն ունենալու՝ նրանք վճռականորեն էին տրամադրված՝ չընկրկել գալիք հարվածի դեմ:

Երբ Բեն Երկրորդ Վագրը իմացավ, որ Բեն Սին-վուն ուզում է իր հետ հաշիվները մաքրել, դեմքը մթազնեց: Աչքերը չռած՝ ևս ծխամորճով թխկթխկացրեց ամուր փայտից պատրաստված սեղանի եզրին եւ դիմելով իր հարճին՝ ասաց. «Աստերուղուրսներն են այսօր իշխում: Եվ ահա ես, որին կատաղած շուն է կծել»...

Բեն Երկրորդ Վագրը մտախոհ կայում էր նախնիների հուշատախտակներին, ասես նախնիների խորհուրդն էր հարցնում այս կոր ճգնաժամին դիմակայելու համար:

Դրսից միապաղաղ ծայներ լավեցին: Դա Բեն Էր-հուի կինն էր, որ բուղդայական սուտրաներ էր կարդում:

«Ուտելիքը պատրաստ է, տեր իմ», - ասաց շեմին կանգնած գունատ դեմքով մոտ տասնհինգ տարեկան մի աղջիկ:

Բեն Երկրորդ Վագրը անհանգիստ հոգոց հանեց: Հանկարծ ևս գլուխը բարձրացրեց եւ ասաց. «Յուե-յան»: Աղջիկը ետ շրջվեց: «Ի՞նչ կասես, ես թեզ ինչպե՞ս եմ վերաբերվել»...

Յուե-յանը որոշ չափով տեղյակ էր անցուդարձին: Եւ պարոն Բենին ծառայել էր ութ տարի: Տնից մի ասեղ կամ թել անգամ գողացած կամ վերցրած չկար: Բայց միշտ ծեծ էր կերել տիկին Բենից ու երիտասարդ հարճից: Մի անգամ դեկտեմբերին հարճի երեխան ընկել էր անկողնուց, եւ իրեն մերկացրին ու ծեծեցին: Այդ երկու կանանց հետ համեմատած՝ Բեն Երկրորդ Վագրը, կարելի է ասել, անգամ բարի էր: Ամենաշատը մեկ կամ երկու աքացի էր տալիս: Դրա համար էլ Յուե-յանն ասաց. «Դուք իմ հանդեպ շատ լավ եք եղել, պարոն»: Բայց խոսքերի հետ թոուցիկ մի հայացք զցեց Բեն Երկրորդ Վագրի կողմը՝ խոհանոցի ծխի ներգործությունից մշտապես արյունով լցված իր աչքերով: Թեկուզ դժկամորեն, բայց աղջիկը շատ լավ դատավճիռ էր կայացրել Բեն Երկրորդ Վագրի համար...

Երեկոյան Բեն Երկրորդ Վագրը ճամփա ընկավ եղբոր տուն: Ճանապարհին ևս անցավ իր մշակ Բեն Ֆու-չժուանի մոտով:

Ամբողջ կեսօրին Ֆու-չժուանը ծեծելով բրինձ էր մանրել: Եվ աշխատելու ընթացքում նրան անընդհատ մի միտք էր անհանգստացնում՝ ի վերջո իր տերը թշնամի՞ է իրեն, թե՞ բարերար: Սին-վուն իրեն շատ վատ բաներ էր ասել տիրոջ մասին, բայց այդ տերն իրեն պահել է եւ ուշադիր է իր հանդեպ, մինչդեռ մյուս չորս մշակներն ազատվել են աշխատանքից: Եթե տեր Բենին տապալեն, ինքն էլ որտե՞ղ կարող է այլ աշխատանք գտնել որպես մշակ: Ո՞վ կկերակրի իրեն: Այդ մասին մի քանի անգամ ինքը՝ տեր Բենն էլ է պարզ ասել: «Հողային բարեփոխում: Հողային բարեփոխումը նշանակում է կոմունիզմ: Այս տարի հողատերեր: Մյուս տարի հարուստ գյուղացիներ: Մեկ տարի հետո միջին խավի գյուղացիներ: Հիւզ տարի անց՝ բոլորը կմնան առանց քոռ գրոշի: Ահա թե ինչ է դա»: Ճշմարիտն ասած, Ֆու-չժուանի համար հեռանկարը դեռ այդքան սպառնալից չէր եղել: Իր ամբողջ ունեցածը բամբակե մի վերմակ էր եւ քուրջուփալաս: Բայց սպասեցեք... Մի՞թե տեր Բենը նրան մի կտոր հող չէր «նվիրել» միայն անցած ամիս: Լավ է հիշում այդ երեկոն, թե տեր Բենն ինչպես կտրուկ մատնացույց արեց սրահում գտնվող նախնիների հուշատախտակներն ու ասաց. «Մենք բոլորս պատկանում ենք Բեն գերդաստանին: Թող ովքեր կարող են, օգնեն մյուսներին: Բայց ո՛չ մի օտար չի գա եւ տիրանա մեր հողերին»:

Բեն էր-հուն դժգոհեց՝ տեսնելով, որ Ֆու-չժուանը բրինձ է մանրում:

«Վերջ տուր,- կարգադրեց: - Ո՞վ գիտե՞ ումն է լինելու բրինձը»: Սա նրա մշտական համոզվածությունն էր այն օրից ի վեր, երբ հեռախոսայուները վեր խոյացան: Նա նույնիսկ մի անգամ ասել էր Ֆու-չժուանին, որ թողնի անասունները միայն խոտ ուտեն, ոչ թե լոբի: Չեռքերը մեջքին՝ Բեն Երկրորդ Վագրը շարունակեց ճանապարհը արեւմտյան կողմնադռնով՝ իր եղբայր Բեն Ին-դինի տան ուղղությամբ:

Գյուղի նախագահը եւ փոքր խմբի ղեկավարներն ամեն ինչ արեցին համոզելու համար գյուղացիներին, որ չլսեն դատարկ ասեկոսները եւ այնպես կատարվեն աշնանային աշխատանքները, որպեսզի ճանապարհի հարթվի հողային բարեփոխման բարեհաջող անցկացման համար: Այդուհանդերձ, չնայած նրանց ջանքերին, չարամիտ բամբասանքները տարածվում էին, եւ ամբողջ Սինլու գյուղը մեծ հուզմունքի մեջ էր:

Օրինակի համար Չժու Սյան-ժույը: Նա Յոթ աստղի գառնիթափի մոտ գտնվող Յզյան Սյան հանրախանութի սեփականատերն էր: Գյուղում իր անունով մեկ թիզ հող իսկ չունենալով՝ նա այդուհանդերձ ապավինել էր վաճառասեղանի ետեւում գտնվող իր հաճախորդներին: «Մենք չենք պատրաստվում այլեւս Սյանտանից ապրանքներ գնել: Ո՞վ գիտե, թե հո-

դային բարեփոխման այս գործում ովքեր են լինելու տուժողները»: Նպարեղենի եւ բանջարեղենի խանութների սեփականատերերը ևույնպես անհանգստության նշաններ էին ցուցաբերում...

Ոչ ոք որոշակի չէր կարող ասել՝ ասեկոսները գյուղում էին ծագում, ապա տարածվում փողոցից փողոց, թե՞ հակառակը: Գյուղացիները զամբյուղներով բանջարեղեն եւ ձու էին տանում քաղաք, եւ նրանց այնտեղ հարցուփորձ էին անում առետրականները, ապա, զամբյուղներն ապրանքից դատարկելով, երեկոյան ետ էին դառնում՝ ասեկոսներով լի զամբյուղներով: Գյուղի նախագահին անընդհատ հարցեր էին տալիս՝ ճի՞շտ է, որ ով ամուսնացած է, հող չի ստանալու, կամ՝ պե՞տք է ամուսնանալ հող ստանալուց առաջ: Այնպիսի մի վիճակ էր, որ ևույնիսկ փոքրիկ հողակտոր ունեցող գյուղացիներն սկսել էին խորապես անհանգստանալ:

Դու Յույ-չժեն անունով մի կին Չժու Յաո-սյան ընտանիքի համար երեք ամիս դայակ էր աշխատել, երբ ամուսինը հեռվում էր: Հետո հանկարծ հայտնվեց սկեսուրը եւ պնդեց, որ նա տուն գա: Թվում էր՝ սկեսուրն անհանգստացել է այն բանի համար, որ լսել է, թե հողային բարեփոխումից հետո աշխատուճակ կանանց ուղարկելու են Սանջուրիա:

Այդ անհանգիստ ժամանակ էր, որ Բեն Սին-վուն մի փոքրիկ կապոց ստացավ, որն ըստ երեւոյթին ինչ-որ մեկն էր նետել պատի վրայով: Բացելով այն՝ նա տեսավ բամբակե գնդի մեջ փաթաթված մի գրություն. «Մի Բենը չի ուզում մյուս Բենի գլուխը վրայից թոցնել: Թող սա նախագուշացում լինի քեզ համար, որ չափից դուրս վեր-վեր չթռչես»:

Ասեկոսները բզզում էին եւ այս ու այն կողմ թռչում մոծակների պես, եւ մոծակների պես էլ դժվար էր նրանց մեկ զարկով սպանելը: Գյուղի ակտիվիստները փորձում էին դրանք բացահայտել ու հերքել: Բամբասանքն անցնում էր տնից տուն: Երբեմն հետքը մեկ այլ գյուղ էր տանում: Շատ գյուղացիներ զգուշավոր էին: Հրաժարվում էին ասել, թե որտեղից են լսել լուրերը: «Չգիտենք», - ասում էին եւ գլուխներն աջուձախ շարժում կամ էլ պնդում էին, որ այլեւս չեն կարող հիշել, թե որտեղից են լսել:

Նահանգի ղեկավարը հաճախ հավաքներ էր հրավիրում: Ուզում էին փաստացի վկաներ եւ ապացույցներ ստանալ, նախքան ինչ-որ մեկին կբանտարկեին սուտ լուրեր տարածելու համար: Որոշ բաներ պարզվեցին: Լո դաստակերտի Մեծ Տանը գտնվող կալվածատեր Լո Բեյ-ժունի տունը եւ Բեն եղբայրների տունը կարծես թե բամբասանքների տարածման երկու հիմնական աղբյուրն էին: Լո Բեյ-ժունն իր դաստակերտի առաջադեմ անդամներին անվանել էր «նոր ոճի շորթողներ»: Նա նաեւ շշուկներ էր տա-

ԱՅՊՈՑԱՆ

րաձեւ, թե ծաղիկ հիվանդության դեմ պատվաստանյութը, որ կառավարութիւնը բերել էր Հենյանից, թույլ է պարունակում: Բեն Երկրորդ Վագրը առանց վախենալու պոկել մի կողմ էր նետել Գյուղացիական ընկերության պատրաստած պաստառը, որի վրա գրված էր. «Ով վարուցանք է անում, նաեւ բերք կհավաքի»: Հին եւ օգտագործված մի թղթադրամ, որի վրա գրված էր «ավելի աղքատ կդառնանք ամեն բարեփոխման հետ», ընկած էր դրա մոտ՝ փողոցում: Հետքերը տանում էին դեպի Սե Չժանի խանութ, որտեղ էլ պարզվեց, որ դա Բեն Երկրորդ Վագրի սարքած գործն է:

Նոյեմբերի 23-ի առավոտյան գյուղի նախագահը եւ փոքր խմբերի երկու առաջնորդ ընկարկում էին, թե արդյո՞ք երեք սրիկաներին բռնեն եւ հարցաքննեն, երբ Բեն Երկրորդ Վագրի կինը ներս խուժեց գրասենյակ: Դեմքն արցունքներով էր ծածկված: Ուղքերով դոփում էր գետնին եւ կուրծք ծեծելով ողբում:

«Ախ, սրիկա, գո՛հ,- անիծում էր նա:- Այն օրվանից, ինչ բերել է այդ փողոցային քաճին, իրար հետ չենք խոսել: Անցած գիշեր լույսերը երկար վառվում էին նրա սենյակում: Միայն այսօր տեսանք, թե ինչ էր արել, երբ Յուե-յանն առավոտյան ներս մտավ սենյակը մաքրելու: Նա փախել էր այդ կեղտոտ փոքրիկ դուրսընկածի հետ՝ տանելով ճամպուրակը, որի մեջ էր նաեւ իմ օժիտը»:

Բոլորն իսկույն վեր ցատկեցին: Հատկապէս Սին-վուն այնքան էր կատաղած, որ ուզում էր անմիջապէս սկսել հետապնդումը:

Գյուղի նախագահն այս լուրն շտապ հեռախոսով հայտնեց նահանգի՝ սյանի ղեկավարին: Ապա մի քանի հոգու ուղարկեց տիկին Բենի հետ՝ տանը հետաքննություն կատարելու համար:

Կեսօրին Շրջանային կառավարությունից ետ զանգեցին՝ կարգադրելով Լո Բեյ-ժունին եւ Բեն Ին-դինին երկուսին էլ ձերբակալել՝ որպէս սուտ լուրերի տարածողների:

Երկու հանցագործ կալվածատերերը, փոքր խմբի ուղեկցորդ պահակների հետ, Աղավազետի երկայնքով դաշտային արահետով ճանապարհ ընկան դեպի հյուսիս՝ Շրջանային կառավարություն: Պահակներից մեկի՝ Սին-վուի ձեռքին հրացան կար...

Երկու օր էլ, եւ հողային բարեփոխման աշխատանքային խումբը գյուղ էր ժամանելու:

2. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ

Թեև Բեն գերդաստանի նախնիների տաճարը կառուցվել էր միայն 90 տարի առաջ, Դուն Չժիի երկրորդ տարում, ասում էին, որ դրա առջեւ կիսաշրջանաձեւ աճած կարմրաձառերից մի քանիսը 500 տարեկան են: Անկասկած էր, սակայն, որ ո՛չ ծառերը, ո՛չ տաճարը երբեւէ ավելի կարետոր իրադարձության ականատես չէին եղել, քան այն, ինչ տեղի ունեցավ 1950 թվականի նոյեմբերի 26-ին:

Դա մի իրադարձություն էր, որը փլուզեց Ֆեոդալական սևահավատության այս ամբողջում ամրագրված ավանդույթները: Հարյուրավոր մարդիկ էին հավաքվել բաց տարածության մեջ, տաճարի քարե աստիճանների առջեւ՝ Հոլլունի սյանի հողային բարեփոխման առաջին զանգվածային հանդիպման համար:

Սյանի կառավարության հրամանով աշխատանքային խմբի ժամանման նախորդ օրը տաճարի սանդղավանդի վրա հարթակ էր կառուցվել, եւ ազդեցիկ մուտքի վերելում երկու ազգային դրոշ էր կախված: Դրանք ամբողջովին ծածկում էին դռան լայն աչքերով աստվածներին՝ Չժուն Չժունին եւ Յզին Դեին, որոնց պատկերները զարդարում էին դարպասի երկու թեւերը, բայց անհեթեթ տեսք ունեին, ասես անցյալի գյուղացիներին էին հիշեցնում: Հարթակի ետեւում կարելի էր տեսնել ատամնավոր դաժան մի ճաղաշար, որոնք կավածատերերի կողմից օգտագործվել էին, որպեսզի կանխեն բանտարկված գյուղացիների փախուստը:

Դրոշների մեջ նախագահ Մաո Յզե-դունի նկարն էր: Նրա խոհեմ, բարի դեմքը ժպտում էր ներքեւում հավաքված գյուղացիներին:

Տաճարի կողքերից երկու փորագրված պատեր էին: Մեկի վրա գրված էր՝ «Բարեհաճ արարողության դարպաս», մյուսի վրա՝ «Ճանապարհ դեպի արդարակեցություն»: Այժմ դրանց վրա նշաններ էին, որ ցույց էին տալիս Գյուղացիների ընկերության եւ Արիեստագործական աշխատողների միության ու Առեւտրաարդյունաբերական պալատի անդամների տեղերը...

Հավաքվածներից ոմանք թղթե դրոշներ էին բռնել, որոնց վրա գրված էր՝ «Բարի գալուստ, Հողային բարեփոխման աշխատանքային խումբ»։ Ժամանեցին Յոթ աստղի գառիթափի մոտ գտնվող փողոցի ներկայացուցիչները: Ոմանք՝ կասկածներով, ոմանք՝ խնդիրներով մտահոգ...

Արիեստագործներն ու փողոցի առեւտրականները թմբուկներ զարկելով միացան հանրահավաքին: Բայց, ընդհանուր առմամբ, մթնոլորտը լարված էր: Իհարկե, բնական էր, որ Լի Այգու ներկայացուցիչ Լի Չժաո-չ-

ԱՅՊՈՑՆԵՐ

ժու՛ն՝ տխրահո՛շակ մի կալվածատեր, ձեռքերը թեւքերի մեջ՝ պետք է անկյունում մենակ կանգներ դողալով, ինչպես վերջնական դատավճռին սպասող մի կալանավոր: Բայց գյուղացիների մի հատված կար, որի ներկայացուցիչները խռովված էին կալվածատիրոջ տարածած ասեկոսներից եւ, չնայած շատ փոքրիկ հողակտոր ունեին, մտահոգված էին «վերաբաշխման խնդիրներով», որոնք, ինչպես լսել էին, պետք է այդ օրվա հավաքում վճռվեին: Հու Բին-ցզանը, որ փողոցում մեծ խանութ ուներ, ցուցադրաբար՝ ցնցոտի դարձած մի բաճկոն էր հագել: Աշխատանքային խմբի ժամանումից ի վեր նա հրաժարվել էր սեփական խանութի վաճառատեղանի ետեւում հայտնվելուց:

«Գիտուն» Չժու Յաո-սյանը համակված էր ամենաբարդ ու հակասական տանջալից զգացումներով: Սա մեծ իրադարձություն էր, եւ դրան պատշաճ ներկայանալու համար նա եւս մեկ անգամ հագել էր իր հավատարիմ կարմիր մետաքսե տարբերանշաններով զգեստը, որ իրեն տրվել էր, երբ մի անգամ մասնակցել էր գյուղացիական պատվիրակների հավաքին: Այժմ նա հրմշտելով իր համար ճանապարհի էր հարթում ամբոխի միջով՝ այնպիսի մի հանդիսավոր եւ կարեւոր տեսք տալով իրեն, ասես ինքն էր ղեկավարում ամբողջ գործը: Այնուամենայնիվ, նա չէր կարող մոռացության տալ այն փաստը, որ ընդամենը մեկ տարի առաջ նա հայտնի էր որպես երկու մշակի վարձակալ եւ շահով փող տվաղ վաշխառու: Նա աղոտ կերպով գիտակցում էր այն փաստը, որ դա «վարձավճարի նվազեցման եւ ավանդների վերադարձման» նախաձեռնության նման մի բան չի լինելու: Նրա անհանգստությունը չնվազեց, երբ իմացավ, որ նախորդ երեկոյան աշխատանքային խումբը հավաքել էր մի խումբ գյուղացիների՝ խորհրդակցության համար, որը տեսել էր մինչեւ ուշ գիշեր, իսկ իրեն չէին հրավիրել:

Արտաքնապես նա դեմքին տվել էր համապատասխանաբար ուրախ արտահայտություն: Բայց հոգու խորքում վախենում էր, եւ նախանձի անբացատրելի զգացումը շարունակաբար կրճում էր սիրտը:

Տասն անց տասնհինգին սյանի նախագահ Գու Յույ-չժանը, կապույտ կտորից նոր բաճկոն հագած, իր տեղը զբաղեցրեց հարթակին: Արդեն այնտեղ էին Կոմունիստական կուսակցության շրջանային մասնաճյուղի քարտուղար Սյուն Բենը, Արիեստագործական աշխատողների միության, Գյուղացիական ընկերության եւ Առեւտրի պալատների նախագահները, Յոթ աստղի զառիթափի մոտ գտնվող տարրական դպրոցի տնօրեն Սյույ Յզի-ցզանը եւ աշխատանքային խմբի մի քանի ընկերներ: Գու Յույ-չժանը կարգուկանոնի կոչ արեց, եւ քննարկումների ու խոսակցության զվկու-

ցը մարտեց: Նա հայտարարեց հավաքի եռակողմ նպատակը՝ ողջունել աշխատանքային խմբի ընկերներին, որ նոր էին ժամանել Հոյունի սյանի բոլոր գյուղացիների կես ամիս հուզումնալից սպասումից հետո, լսել ընթացիկ գործերի մասին Սյուն Բենի՝ Կոմունիստական կուսակցության շրջանային մասնաճյուղի քարտուղարի զեկույցը, որպեսզի վերջնականապես վերացվեն ամեն տեսակի բամբասանքներն ու խժոժությունները, եւ խնդրել աշխատանքային խմբից ընկեր Չժաո Յգե-մինին՝ բացատրել ժողովրդական կառավարության հողային բարեփոխման քաղաքականությունը:

Սյուն Բենը ոտքի ելավ: Նա Սյանիկից էր, կարճ հասակ ուներ, սովորաբար մեղմախոս էր, բայց աղմուկը նրան բնական էր թվում, երբ խոսում էր հավաքին:

«Ընկեր գյուղացիներ: Մենք պատրաստվում ենք հողային բարեփոխում անցկացնել: Բոլոր բարեփոխումներն էլ նոր մի բան են բերում, եւ ես գիտեմ՝ բնական բան է, որ որոշակի անվստահություն պետք է ունենանք նորի հանդեպ, քանզի դեռ լավ ծանոթ չենք դրա հետ: Այս դեպքում, սակայն, անվստահությունը ո՛չ անհրաժեշտ է, ո՛չ էլ արդարացված: Բայց ոչ ոք չպիտի գյուղացուն մեղադրի այսպիսի վերաբերմունքի համար: Հազարավոր տարիներ անգութ ու ազահ ֆեոդալական կալվածատիրական համակարգը կողոպտել է ձեզ եւ զրկել ապրուստի միջոցից ու կրթություն ստանալու հնարավորությունից: Հիմա, օգտվելով այն բանից, որ անկարող եք թերթերը կարդալ եւ ավելի լավ ճանաչել ժողովրդական կառավարության քաղաքականությունը, կալվածատերերը փորձում են մոլորեցնել ձեզ, խաթարել ձեր հանգիստը, ձեր միտքը պղտորել՝ տարածելով ամենավրդովեցուցիչ լուրերը, որպեսզի խանգարեն ձեզ պատշաճ կերպով անցկացնելու հողային բարեփոխումը:

Ես գիտեմ, որ նրանք լուր են տարածում, թե Չան Կայ-շին վերադառնում է: Բայց նման բան պատկերացնելը հիմարություն է: Ընկերներ, Գոմինդանը, որ ծծել է մեր արյունը եւ թալանել մեր երեխաներին ավելի քան քսան տարի, մեկ տարի առաջ մեր ժողովրդական բանակի կողմից ծովն է նետվել: Մենք ոչնչացրել ենք ութ միլիոն մարդուց բաղկացած այդ ավազակային բանակը: Այժմ չկա գեթ մեկ գոմինդանյան զինվոր մեր երկրում՝ Հյուսիս-Արեւելքից մինչեւ Հայնան, Շանհայից մինչեւ Սինցզյան: Չան Կայ-շին իր մի քանի կողմնակիցների հետ դեռ Թայվանում է, բայց ո՛վ կարող է կասկածել, որ նրանց օրերը հաշված են: Կհամարձակվե՞ն նրանք նորից ետ գալ բուն երկիր: Այդժամ մենք նրանց ավելի արագ ու շուտափույթ

ԱՅԱՈ ՑՅԱՆ

վերջ տալու հաճույքը կունենանք» :

Գյուղացիները ծիծաղեցին: Նրանք հիշեցին ևահանջող գոմիկանյան բանակի խղճուկ տեսքը:

Սյուն Բենն ուղղակի ու վճռական կերպով խոսեց գյուղական վայրերում ամենուր տարածվող բոլոր ասեկոսների մասին: Նա նշեց, որ ամերիկացիներն ուզում են օգնել Չան Կայ-շիին: Բայց արդյո՞ք ևսխկիսում չէին օգնել: Եվ իրենք ամերիկացիներ՞ը: Մեր ժողովրդական կամավորները եւ Կորեական ժողովրդական բանակը, որ ամերիկացի իմպերիալիստներին մի լավ ջարդ էին տվել Կորեայում, կարող էին ճշգրիտ ասել, թե որքան արժեքավ ամերիկյան օգնությունը Չան Կայ-շիի համար:

«Կալվաճատերերն ասում են, որ Չան Կայ-շին Հանկոու է վերադարձել,- շարունակեց Սյուն Բենը:- Բայց եթե նա չկարողացավ ուժ միլիոն մարդով Նանկինը գրավել, ինչպե՞ս կարող էր այժմ Հանկոու հասնել իր մնացորդներով, երբ իր ամերիկյան ընկերները ջարդ են ուտում Կորեայում»:

Գյուղացիները ևորից ծիծաղեցին, քանի որ տրամաբանությունն անհերքելի էր:

«Նետեաբար, երբ մենք իրականացնում ենք այս հողային բարեփոխումը, եկեք դա անենք միակամայն հստակ մտքով: Կալվաճատերերը նույնպես լավ կանեին իրաժարվեին իրենց անհիմն երազանքներից: Ձեր Չան Կայ-շին դուրս է վռնդվել, որպեսզի այլևս չվերադառնա: Ցած դրեք ձեր գեներները հանձնվեք ժողովրդին: Այդպես ավելի լավ կլինի ձեզ համար: Իսկ դուք, ընկեր գյուղացիներ: Հիմա, երբ իրավիճակի տերն եք, ի՞նչ ունեք վախենալու»: Գյուղացիները որոտընդոստ ծափահարեցին, երբ Սյուն Բենը նստեց: Սին-վուն վեր պարզեց ձեռքը եւ ոտքի ցատկելով բարձրածայն բացականչեց. «Կորչի՛ ֆեոդալական կալվաճատիրական դասակարգը»: Եվ գյուղացիները միածայն արծազանքեցին նրան:

Ամբոխի միջի մի քանի կալվաճատերերն արդեն իրենց մեկուսացած էին զգում: Այս մտքերը դժվար էր ընդունել: Բայց նրանք նույնպես փորձում էին ծափահարել: Միայն թե նրանց ափերը պարզապես իրար չէին դիպչում:

Հաջորդը աշխատանքային խմբից ընկեր Չժանն էր: Նա ցատկեց հովազի ճարպկությամբ, իսկական չափահաս պատրաստի գյուղական կադր: Նա շատ էր ճամփորդել եւ շրջել էր աշխարհը: Մաշված գորշ համազգեստի կրծքի վրայի գրպանից երեւում էին մի ինքնահոս գրիչ եւ ատամի խոզանակ: Դեմքն արեահարված էր, իսկ ճակատին սպի կար՝

հուշանվեր ճապոնական ագրեսիայի օրերից: Վիրավորվել էր ճակատամարտում, Ուտայում՝ Շանսիի պարտիզանական տարածքում դատավորի տեղակալ ծառայելու ժամանակ, երբ ընդամենը 23 տարեկան էր:

«Ընկերներ, ես բնիկ Շանսիից եմ: Այնպես որ, գուցե չհասկանաք այն ամենն, ինչ ասում եմ: Կփորձեմ յուրաքանչյուր բառն ասել դանդաղ եւ հասկանալի: Եթե էլի չկարողանաք հասկանալ, ապա չվարանեք հետո հարցեր տալ: Աշխատանքային խմբի իմ ընկերները եւ ես այստեղ ենք, որպեսզի ձեզ հետ ամեն օր աշխատանք տանենք ձեր լիակատար ազատագրության համար, քանի դեռ Հոյլունգի սյանի հողային բարեփոխումը չի ավարտվել: Մենք կփորձենք ձեզ համար հասկանալի դարձնել այն ամենն, ինչ հիմա գուցե դեռ չեք հասկանում:

Ընկեր գյուղացիներ: Դուք ձեր ամբողջ կյանքում հող եք մշակել: Ձեզ համար շատ ավելի պարզ է, քան ուրիշ որեւէ մեկի համար, թե որքան կարեւոր է հողը տալ հողագործին: Ֆեոդալական հողային համակարգը աննկարագրելիորեն դաժան եւ ստորացուցիչ է: Հողը մշակողները փոխարենը ոչինչ չեն ստացել: Ամեն ինչ բաժին է հասել տանը շքեղության մեջ պարապ ևստած կալվածատիրոջը: Մի՞թե զարմանալի չէ, որ արտադրությունը ցածր էր: Իսկ գները բարձր:

Վերցնենք, օրինակ, բամբակը՝ արդյունաբերության մեջ շատ անհրաժեշտ մի բան: Զանի դեռ մենք բավարար քանակությամբ բամբակ չէինք արտադրում, արդյունաբերությունը չէր կարողանում զարգանալ: Դրա համար էլ գործվածքն ու հագուստը թանկ էին, եւ մենք միշտ ստիպված էինք ցնցոտիներով ման գալ: Կտորեղենի առետրականների եւ գործվածք արտադրողների գործը լավ չէր, քանի որ այն պետք է կախված լիներ միայն հարուստ հաճախորդների շատ փոքր քանակից: Երբ հողային բարեփոխումից հետո գյուղացիներն ավելի շատ բամբակ արտադրեց, արդյունաբերությունը կբարգավաճի, նույնը նաեւ վաճառողների հետ կլինի, որով հետեւ որպես հաճախորդներ կունենան ապահովված գյուղացիական զանգվածներին»:

Ամբոխի միջից շատերը գլխով արեցին ի նշան համաձայնության:

«Երբ մեկն օր ու գիշեր պայքարում է միմիայն ուսելու ինչ-որ բան ճարելու համար, քիչ ժամանակ է մնում, որպեսզի մտածի կրթություն ստանալու մասին: Մեր ժողովրդի ութսուն տոկոսը գյուղացիներ են, եւ նրանց մեծ մասն անգրագետ է: Նրանք երբեք չեն կարող դառնալ երկրի իսկական եւ լիարժեք տերեր, եթե դեռ ապրում են ֆեոդալական շահագործման ներքո: Եթե ինքներս մեզ չազատենք ֆեոդալական հողատիրական հա-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

մակարգից, ինչպե՞ս կարող ենք մտածել իրոք ազատ, հզոր եւ բարգավաճ երկիր կառուցելու մասին:

Ֆեոդալական այդ հողային սեփականատիրությունն է մեր ազգի դժբախտությունների արմատը: Դա մեզ դարձրել է աղքատ, հետամնաց եւ թույլ, հեշտ զոհ իմպերիալիստների համար: Այժմ պետք է ընդմիջտ վերջ տրվի դրան:

1927 թվականից սկսած՝ հողային բարեփոխում է տեղի ունեցել Յանցզի գետի հյուսիսային եւ հարավային ազատագրված տարածքներում: Ամբողջ փորձառությունը, որ ձեռք բերեցինք այդ 23 տարվա ընթացքում թե որն է ճիշտ եւ որն է սխալ միջոց, գրված է «Ագրարային բարեփոխման օրենքում», որը մեր Կենտրոնական ժողովրդական կառավարությունն ընդունեց այս տարի: Ահա ինչու պետք է հետեւենք «Ագրարային բարեփոխման օրենքին»՝ ազատության համար տարվող մեր աշխատանքում: Հողային բարեփոխումը կարող է կոչվել նաեւ ցնցող իրադարձություն: Նրանք, ովքեր նախկինում իշխում էին գյուղում, կալվածատերերի դասակարգը, որ հազարավոր տարիներ նստել էր ժողովրդի վզին, այժմ պետք է ենթարկվեն ժողովրդի դեմոկրատական դիկտատուրային՝ ժողովրդի կամքին: Նրանք, ում նախկինում իշխել են, մշակները եւ աղքատ գյուղացիները, ամենաշահագործված խմբերը, այժմ պետք է իշխանության գան: Հողային բարեփոխումը բարելավելու է նրանց կյանքը եւ բարձրացնելու է նրանց հեղինակությունը: Ահա թե ինչ նկատի ունենք ազատություն ասելով:

Յուրաքանչյուր ոք, ով աջակցում է հողային բարեփոխումներին, պետք է, ըստ այդմ, առաջին հերթին սովորի հարգել գյուղացիների կարծիքները եւ հաշվի առնել նրանց շահերը: Մշակների, աղքատ եւ միջին խավի գյուղացիների միջեւ միասնությունը, հողային բարեփոխման ընթացքում եւ դրանից հետո, գյուղում ապրող ժողովրդի դեմոկրատական դիկտատուրայի լավագույն պաշտպանությունն է: Մշակներն ու աղքատ գյուղացիները հատկապես պետք է լինեն գյուղի ամբողջ հեղափոխության հիմքը: Նրանք պետք է ոտքի՛ կանգնեն:

Առաջ համարձակ կերպով: Հզոր ուժերն աջակցում են ձեզ՝ բանվորները, Կոմունիստական կուսակցությունը, ժողովրդական բանակը, ժողովրդական կառավարությունը: Բոլորը պատրաստ են պայքարելու ձեզ համար, պատրաստ են օգնելու ձեզ: Եվ Նախագահ Մաո Ցզե-դունն առաջնորդում է ձեզ»:

Այսքանը հստակ ցույց տվեց, որ Չժաո Ցզե-մինը շարունակում է նկա-

րագրել հողային բարեփոխման տարբեր կողմերը այն կարծիքների հիման վրա, որ ինքը, գյուղի նախագահը եւ Գյուղացիական ընկերության ներկայացուցիչները փոխանակել էին նախորդ գիշեր: Նա հատուկ ուշադրություն հրավիրեց այն բանի վրա, որ ժողովրդական բանակի տղամարդիկ, հեղափոխական նահատակներից, բանվորներից, ծառայողներից, այլ մասնագետներից, չարչիներից եւ ուրիշներից բաղկացած անծինք, ուժքեր դաշտերում չեն աշխատում, այլ զբաղմունք ունեն, կամ նրանք, ուժքեր չունեն աշխատուժ, չեն դասակարգվի որպես կալվածատերեր, եթե վարձակալում են միայն փոքր հողակտորներ: Նա նաեւ բացատրեց աղքատ գյուղացիների տեսանկյունից, թե ինչու է դեռ անհրաժեշտ պահպանել հարուստ գյուղացիական տնտեսությունը: Սա, ինչպես նա նշեց, ավելի լավ սկիզբ կլինի եւ կխթանի արտադրության բարձրացման աշխատանքները, ավելի լավ կպաշտպանի միջին խավի գյուղացիների շահերը, կմեկուսացնի կալվածատերերի դասակարգը՝ գլխավոր թշնամուն, եւ այդպիսով հողային բարեփոխումն ավելի սահուն ընթաց կունենա:

Նա պարզորոշ բացատրեց նոր ժողովրդավարական հեղափոխության բնույթը: Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես քաղաքի եւ գյուղի միջեւ ապրանքի ազատ հոսքը գյուղացիներին ձեռնտու կլիներ, նա բացատրեց, թե ինչու պետք է պաշտպանված լինեն արդյունաբերությունը եւ առեւտուրը:

Այն արդյունաբերողներին եւ առեւտրականներին, որոնք միաժամանակ կալվածատերեր էին, նա ասաց. «Կենտրոնացեք քաղաքում ձեր գործարարության զարգացման վրա եւ մի՛ շարունակեք շահագործել գյուղացիներին՝ հողերը, տները կամ գյուղատնտեսական տեխնիկական մենաշնորհացնելով»: Կրկին անգամ հիշեցրեց նրանց. «Նախկինում կալվածատերերն ու հարուստ գյուղացիները ձեր միակ հաճախորդներն էին: Կալվածատերերի դասը ամբողջ բնակչության 10 տոկոսից էլ պակաս է: Երբ գյուղացիներն իրոք սկսեն գնել, կտեսնեք, թե որն է ավելի մեծ գևորդը»:

Կալվածատերերի հետ նա նորից խոսեց սառն ու վճռական ձայնով: Նախ, հասկացրեց, որ կալվածատերերը գրկվելու են իրենց ֆեոդալական հողատարածքներից եւ վերանալու են որպես սոցիալական դաս, բայց ֆիզիկական բռնության չեն ենթարկվի: Այնուամենայնիվ, հետեւյալ նախազգուշացումն արեց.

«Երկու ճանապարհ է բաց ձեզ համար: Մեկը տանում է դեպի պայծառ ապագա, եւ դա զղջումն է ու բարեփոխումը: Պահպանեք ձեր հողը, բեռնակիր կենդանիներին, գյուղատնտեսական գործիքներն ու տեխնիկան,

ԱՅՁՈ ՑՅՁՆ

ավելցուկային սննդամթերքն ու տները եւ ամեն ինչ հանձնե՞ք՝ համաձայն կանոնների, երբ բռնագրավման պահը գա: Այդ դեպքում գյուղացիներն, անշուշտ, ներողամիտ կլինեն ձեր հանդեպ: Ձեզ կտրվեն նմանատիպ հող եւ բնակարան, այնպես որ դուք նույնպես կունենաք հնարավորություն բարեփոխվելու միջոցով իրականում մասնակցելու աշխատանքին:

Մյուս ճանապարհն այն է, որը կարող է ձեզ համար միայն վատ լինել: Դա Բեն Ին-դինի եւ Լո Բեյ-ժունի ճանապարհն է: Նրանք դավադրություն կազմակերպեցին եւ խառնաշփոթ առաջացրին: Այժմ սպասում են դատավարությանը: Այս տիպի կալվածատերերը չեն կարող խուսափել ժողովրդի արդարադատության երկար բազկից...»:

Նախքան խոսելը Չժաո Յգե-մինը փոքր-ինչ անհանգստանում էր իր Շանսիի առոգանության համար: Բայց նա հունանում էր 1949-ի ամռանից, երբ եկել էր Ազատագրության բանակի հետ: Նրա հյուսիսային կոպտությունը մեղմվել էր: Դատելով գյուղացիների դեմքերի ժպիտներից եւ Յոթ աստղի գառիթափի գործարարների հանգիստ դեմքերից՝ ունկնդիրներն, անկասկած, ըմբռնել էին նրա խոսքի էությունը:

Հաջորդը խոսելու էր Բան Չժի-չժանոն՝ Հոյլունի սյանի Արիեստագործական աշխատողների միության նախագահը: Նրա խոսքի էությունն այն էր, որ բանվորներն ու գյուղացիներն ընկերներ են, որոնք նույն գործն են անում: Բանվորները մեծապես օգնելու են գյուղացիներին ազատության համար նրանց պայքարում: Միայն երբ գյուղացիներն ամբողջությամբ կազատագրվեն, այդ ժամանակ կարող է նոր Չինաստանը ամրապնդվել բանվորների եւ գյուղացիների միության հիմքի վրա:

Բան Չժի-չժանոն դարբին էր: Նա առաջարկում էր կոնկրետ օգնությամբ արագացնել զենքերի պատրաստումը աշխարհագորայինների համար հողային բարեփոխման ընթացքում, եւ ազատագրված գյուղացիների համար ավելի կատարելագործված գյուղատնտեսական գործիքներ ստեղծել:

Հաջորդը Յան Շու-չժենն էր՝ Հոյլունի սյանի Գյուղացիական ընկերության նախագահը, որը խոսեց բոլոր գյուղացիների անունից: Նա բոլորին կոչ էր անում կազմ ու պատրաստ ոտքի կանգնել եւ Կենտրոնական ժողովրդական կառավարության սահմանած քաղաքականության ու կանոնակարգերի համաձայն՝ ֆեոդալ կալվածատերերից ետ խլել իրենց հողը, որ մշակել էին դարերով: Այնուհետեւ նա նույնպես շեշտեց, որ կալվածատերերի կողմից ղեկավարվող արդյունաբերական եւ առևտրային ձեռնարկություններին, ինչպես նաեւ հողին ու այլ գույքի, որ անմիջականորեն

օգտագործվել են կալվածատերերի կողմից՝ արդյունաբերությունն ու առևտուրը գործարկելու համար, չպետք է ձեռք տան:

Ուղքի ելավ ծերունի Դու Յույ-չժունը: Նա առևտրի պալատի նախագահն էր եւ Կայկուոյի դեղաբյուսերի խանութի գլխավոր սեփականատերը: Որպես այդ միջոցառման հանդեպ հատուկ հարգանքի նշան՝ նա հանեց իր եղջյուրե շրջանակով ակնոցը: Ապա սկսեց խոսել փոքր-ինչ շփոթված:

«Վերջին մի քանի օրվա ընթացքում մենք՝ փողոցի մարդիկ, չափազանց անհանգստացած էինք: Որ հողային բարեփոխումը նշանակում է օգնել գյուղական տնտեսության զարգացմանը, դա միանգամայն պարզ է, բայց մեզնից՝ առևտրականներիցս ոմանք պնդում էին, որ պետք է զգուշանալ: Ոմանք նույնիսկ հրաժարվեցին զնել ավելի շատ ապրանքներ»: Այդ պահին Չժոու ժույ-սյանը՝ Յզյան Սյան հանրախանութի տերը, զգաց, որ ինքն այնքան ուժգին է կարմրում, որ ականջները նույնպես կարմրել են:

«Այն, ինչ հենց նոր ասացին մյուս ընկերները,, մեզ մեծ թեթևություն բերեց,- շարունակեց նա:- Ասես առևտրականներիս ու արդյունաբերողներիս մի տեսակ հակաթույն տվեցին, որը չեզոքացրեց մեր ներսում մեզ տանջող դառն թույլը:

Ես նույնպես իմ ներսում որոշակի թույն էի զգում: Ես ոռոգվող մի հողակտոր ունեմ Մեծ գերեզմանոցի մոտ... Թույլ տվեք ազնիվ լինեմ: Իմ բուրդը փողերը ձեռք եմ բերել գյուղացիների աշխատանքը շահագործելով: Իմ երկու որդիները հեղափոխական աշխատանք են կատարում Չանշայում: Ինչ-որ առումով՝ սա ժողովրդի պարտքի ետ վճարում է: Մի՞թե չօգտագործեցի գյուղացիներից յուրացրած կեղտոտ փողերը նրանց կրթության համար վճարելով: Միևչեւ հիմա գյուղացիներն այնքան բարի գտնվեցին, որ չխանգարեցին դեղաբույսերի իմ գործարքին, որ իմ սեփականության մեծ մասն է կազմում, այնպես որ ես կարող եմ շարունակել յոթ հոգուց բաղկացած ընտանիքս պահել եւ իմ փոքր ներդրումն ունենալ Հնույունի սյանի բարգավաճման համար: Ես իմ հերթին, իհարկե, հետեւելու եմ նաեւ կառավարության օրենքին: Վաղն առավոտյան ես պատրաստվում եմ դիմել սյանի կառավարությանը այդ հողակտորի գործերով՝ հանձնելով դրանք, նաեւ՝ զույքն ու գյուղատնտեսական գործիքները»:

Դու Յույ-չժունի անկեղծ խոսքը դիմավորեցին երկարատեւ ծափահարություններով: Կեսօրին հանրահավաքը մոտեցավ ավարտին: Դաշտի արահետով բոլորը գնում էին խոսելով ու բանավիճելով, ի տարբերություն այն բանի, որ մինչ այդ հանրահավաքի էին եկել անխոս ու լուռ:

ԱՅԱՌ ՑՅԱՆ

Քանի որ իրեն չէին թողել վեր կենալ եւ խոսել, «գիտուն» Չժու Յան-սյանը շատ վիրավորված էր զգում: Խառնվելով տուն գնացող ամբոխին՝ նա փորձում էր կատակներ անել:

«Ընկեր Չժան լավ էլ հնարամիտն է,- ասաց նա:- Տեսե՞ք թե ոնց էր փառաբանում ժողովրդի արդարության երկար բազուկը՝ միայն Բեն Ինդինին եւ Լո Բեյ-ժունին հիշատակելով: Բայց ինչ-որ բան ասա՞ց այն մեկի մասին, որ արդեն խուսափել է օրինական պատժից, հենց նրա՝ Բեն Երկրորդ Վագրի մասին»:

Դա լսեց Սին-վուն, որը արհամարհական հայացք զցեց նրա վրա եւ ասաց. «Մի՛ անհանգստանա: Մի օր կբռնենք նրան, այն ժամանակ կտեսնես»:

Ընկեր Չժաո Յզե-մինը՝ աշխատանքային խմբի ղեկավարը, պնդում էր, որ խումբն իր բոլոր հանդիպումները՝ նվիրված ամբողջ սյանի հետազոտմանը, ավարտի երկու օրում, որպեսզի բոլոր կադրերն արագ կարողանան գնալ առանձին գյուղեր եւ սկսել հողային բարեփոխման բուն աշխատանքը: Այդ հանդիպումները նաեւ ծառայելու էին Հոյլունի սյանի տարբեր շրջանակներին կառավարության քաղաքականության մասին հստակ պատկերացում տալու գործին:

Սկզբում կադրերի հանդիպումը եղավ: Աշխատանքային խմբի տասն անդամներ շարքով նստել էին երկար մի նստարանի՝ նախնիների հուշատախտակի ներքո, որի վրա գրված էր՝ «Արմատները խորն են գնում», եւ արագ նշումներ էին կատարում իրենց նոթատետրերում՝ լսելով սյանի նախագահ Գու Յույ-չժանին, որը հայտնում էր տեղանքի մասին, տվյալներ տալիս դրա պատմության եւ քաղաքական վիճակի վերաբերյալ...

Երբ նախագահն ավարտեց զեկույցը, Աշխատանքային Խմբի անդամները մի քանի հարցեր տվեցին: Նրանց մեջ էր ընկեր Լու Յանը, որին հանձնարարված էր գնալ Սինլու գյուղ: Լյույանի շրջանի բնակիչ, սկզբում դարոցի ուսուցիչ՝ ընկեր Լուն ծագումով միջին խավի վարձակալ գյուղացիական ընտանիքից էր եւ Հունանի ազատագրումից հետո չորս ամիս սովորել էր Շինարարական ակադեմիայում, Սյանտանի կադրերի համար դարոցում: Նա մասնակցել էր վարձավճարի նվազեցման քարոզարշավին եւ իրավասու համարվել: Սակայն Սինլուի նման բարդ տեղանք ունեցող գյուղի հետ առնչվելու հեռանկարն անհանգստացնում էր նրան: Յոթ աստղի զառիթափն, իր կրպակներով եւ արհեստանոցներով, բարդացնող գործոն էր: Բացի այդ, «ամենահետադիմական կալվածատերերը» Սինլու գյուղի բնակիչներ էին: Դրա համար էլ նա շարունակում էր հարցնել այս ու

այն բաների մասին, մինչև որ ի վերջո Չժառ Ցզե-մինը խոհեմաբար առաջարկեց. «Պայմանավորվենք, որ մենք երեքս՝ դուք, ծերունի Բենը՝ գյուղի նախագահը, եւ ես որոշ ժամանակ անց կգրադվենք Սիլյու գյուղի հետ կապված խնդիրներով»:

Ընթրիքից հետո հանդիպումը շարունակվեց տաճարի գլխավոր հեծանից կախված՝ գազի վառվող լամպի ներքո: Չեկուցում էր Գյուղացիական ընկերության նախագահ Յանը:

«Հուլյունի սյանի Գյուղացիական ընկերությունը,- ասաց նա,- առաջին անգամ կազմակերպվել է «վարձավճարի նվազեցման եւ ավանդի փոխհատուցման» քարոզարշավի ընթացքում: Դրա համար էլ այստեղ հարաբերականորեն բարձր է միջին խավի գյուղացիների տոկոսը: Այդուհանդերձ, որոշակի թվեր չեն կարող տրվել, քանի դեռ դասակարգային կարգավիճակի վերջնական տարբերակում չի արվել: Ընկերությունն ունի երեք ստորաբաժանում, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է երեք գյուղ: Սիլյուն, Շի-ցզյանն եւ Յունհուն, օրինակ, կազմում են առաջին ստորաբաժանումը: Անդամների ընդհանուր թիվը 957 է: Բայց սա գյուղացիների դասակարգային գիտակցության աստիճանի լիովին հուսալի ուղեցույց չէ, քանի որ անդամներից շատերը ցուցակագրվեցին միայն այն ժամանակ, երբ ընկերության աշխատակիցները գնացին նրանց տները նախնական անդամագրման: Անդամներից 534-ը տղամարդ են, 423-ը կին: Ներկայումս ընկերությունն ունի գործող 15 աշխատակից: Դրանցից ութը մշակներ կամ աղքատ գյուղացիներ են: Յոթը՝ միջին խավի գյուղացիներ: Դուք՝ կադրերդ, լավ պետք է իմանաք մեր ընկերությունը, որովհետեւ սա այն զանգվածային կազմակերպությունն է, որը հնարավորություն է տալիս գյուղացիներին պաշտպանել սեփական շահերը ինչպես հողային բարեփոխման ընթացքում, այնպես էլ դրանից հետո: Մենք էլ մեր հերթին աշխատելու ենք Գյուղացիների ներկայացուցչական համաժողովի՝ ժողովրդի տեղական ինքնակառավարման մարմնի հետ սերտ կապի մեջ: Մեր ընկերության միջոցով է, որ գյուղացիները բարձրացնում են իրենց դասակարգային գիտակցությունը, զարգացնում կոլեկտիվ աշխատանքի ավանդույթը եւ գիտելիքների միավորումը, որպեսզի հաղթահարեն տարբեր տեսակի կառուցողական աշխատանքները: Համաժողովի միջոցով գյուղացիները կազմակերպում են փոխադարձ օգնության միջոցառումներ եւ համագործակցում, որպեսզի զարգացնեն գյուղատնտեսությունը եւ բարելավեն իրենց կենսամակարդակը: Սա հատկապես կարեւոր աշխատանք է:

Քանի որ Հուլյունի սյանի Գյուղացիական ներկա ընկերությունը հան-

ԱՅՊՈ ՑՅՊՆ

դիսանում է «վարձավճարի նվազեցման եւ ավանդի փոխհատուցման» քարոզչության արդյունքը, քարոզարշավ, որ իրականացվել է ավելի նեղ զանգվածային հիմունքներով, այն դեռ չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել՝ այնպիսի մի հսկայական աշխատանք սկսելու, ինչպիսին հողային բարեփոխումն է: Հետեւաբար մենք պետք է սովորենք, թե ինչպես ամրապնդենք եւ ընդլայնենք այդ աշխատանքը՝ պայքարի ընթացքում, ազատվենք այն կալվածատերերից ու հարուստ գյուղացիներից կամ նրանց գործակալներից, որոնք կարող էին ներթափանցած լինել դրա մեջ, կրթենք քաղաքականապես հետամնաց տարրերին եւ կոր ակտիվ անդամներ առաջ քաշենք գյուղացիների միջից»:

Հաջորդ առավոտ, Նախքան Նույնիսկ կադրերը ժամանակ կունենային լվացվելու, մարդիկ սկսեցին գալ: Հանդիպումն անցկացվեց համատեղ՝ աշխատանքային խմբի եւ տեղական մտավորականության կողմից: Չժառ Յգի-մինը բացատրեց ճիշտ դիրքորոշումը, որ մտավորականները պետք է ունենային հողային բարեփոխումների եւ մտավորականության նկատմամբ կառավարության քաղաքականության հանդեպ, ինչպես նշված էր «Ագրարային բարեփոխումների մասին» օրենքում: Ապա սկսեցին քննարկել, թե ինչպես կարող են Հույունի սյանի մտավորականները լավագույնս համագործակցել Աշխատանքային խմբի հետ՝ օգնելու գյուղացիներին ազատագրվել:

Դպրոցի բոլոր ուսուցիչները խոսեցին: Ոմանք խոստովանեցին, որ իրենք կալվածատիրական ծագում ունեն, բայց քաղաքական ուսուցման ընթացքում գիտակցեցին հողային բարեփոխումների արդարացիությունն ու բացարձակ անհրաժեշտությունը: Ուստի նրանք պատրաստ էին վճռականորեն գյուղացիների կողմն անցնելու՝ վերացնելու համար այն դասակարգը, որին իրենք էին պատկանում: Ոմանք խոստացան ստանձնել պատի թերթեր գրելու եւ կարգախոսային պաստառներ պատրաստելու աշխատանքը: Ոմանք ասում էին, որ իրենք քարոզչական աշխատանքներ կկատարեն ընթացիկ գործերի հետ կապված: Սյունները համաձայնեցին օգնել հրապարակելու այն, ինչ կատարում էր աշխատանքային խումբը եւ տեղեկացնելու նրա քաղաքականության մասին: Յոթ աստղի գառիթափի տարրական դպրոցի աշխատակիցները առաջարկեցին ստեղծել թատերախմբեր եւ օգտագործել թատերախաղերը գյուղացիներին կրթելու համար: Բոլորը խոստացան ուսումնասիրել «Ագրարային բարեփոխումների մասին» օրենքը եւ գյուղական դասակարգային կարգավիճակի տարբերությունների վերաբերյալ փաստաթղթերը, որ հրապարակվել էին Կենտ-

րոնական ժողովրդական կառավարության կողմից: Նախապատրաստական աշխատանքները տարվեցին նաև գիշերային դպրոցներ բացելու համար, որտեղ գյուղացիները սովորելու էին, թե ինչպես տարբերակեն դասակարգերը եւ գյուղացիների տարաբնույթ խմբերը, ինչպես գնահատեն շահագործման տարբեր աստիճանները:

Լու Յանը լսեց այդ ուսուցիչների արտահայտած կարծիքները, ապա սկսեց կարգավորել նախորդ գիշերը կատարած իր նշումները: Գյուղի նախագահի զեկույցը նրան հատկապես կարեւոր էր թվում: Իր նոթատետրում նա գյուղացիների անունները գրեց իրար ետեւից՝ հնարավորինս ըստ նրանց կարգավիճակի, ապա նաև՝ կալվածատերերի անունները: Նա աստղանշաններ դրեց բոլոր այն մարդկանց անունների մոտ, որոնք միաժամանակ արդյունաբերողներ էին կամ առետրականներ, եւ հարցականներ՝ նրանց անվան կողքին, որոնք կարող էին լինել հարուստ գյուղացիներ կամ հողի մանր վարձակալներ: Մեկ այլ էջում նա գրեց այն մարդկանց անունների ամբողջական ցանկը, որոնք, անկասկած, մշակներ կամ աղքատ գյուղացիներ էին: Մշտապես նրա մտքում էր կադրերի հանդիպման ժամանակ Կոմունիստական կուսակցության շրջանային կոմիտեի քարտուղարության կողմից տրված հրահանգը. «Ակտիվիստներին ընտրելիս ընտրեք նրանց, ովքեր միշտ եղել են ամենաաղքատն ու առավել շահագործվածները եւ ամենաշատն են աշխատել, իսկ կալվածատերերի նկատմամբ աչալուրջ եղեք»:

Այժմ Լու Յանի կատարելիք աշխատանքը լիովին պարզ էր: Նա պետք է ոգեշնչեր ու կազմակերպեր ամենաաղքատներին, առավել շահագործվածներին ու միեւնոյն ժամանակ ամենաշատ աշխատող գյուղացիներին եւ ուշադիր հետեւեր ամենահամառ, ամենից հետադեմ ու ամենաչարամիտ կալվածատերերին:

Եվ նա գիտեր, որ երկու խնդիրները սերտորեն փոխկապակցված էին: Չես կարող արդյունավետ կերպով հետեւել կալվածատերերին, քանի դեռ գյուղացիները գիտակցության չեն եկել:

3. ՀԱՂԱՔԱՐԵԼՈՎ ՑԱՎԸ ՈՒ ՎԻՇՏԸ ԵՎ ՈՒԺ ՀՎԱԿՔԵԼՈՎ

Բեն Էր-հուի փախուստով եւ նրա եղբայր Բեն Ին-դիսի ծերբակալումով Բեն դաստակերտը, որ երբեւէ անվերջանալի աղմուկի թատերաբեմ էր, անմիջապէս ամառի տաճարի սգացող տեսք ստացավ: Նրա քսաներկուսից ավելի սենյակների մեծ մասը կնքվել էր սյանի կառավարության կողմից: Իսկ այն մեկի դռները, որտեղ զենքի թաքստոց էին գտել, Լույսիսկ մեխել էին: Սգավոր վիճակում էին եւ՛ Բեն Էր-հուի կինը, եւ՛ Յուե-յանը՝ ծառայող աղջիկը: Ֆու-չժուանը Լույսպէս իր տեղը չէր գտնում:

Յուե-յանը մտածում էր՝ իր տերը՝ Բենը անսիրտ մի գազան էր, որ այդպէս լքել էր կնոջը: Բեն Ֆու-չժուանը շարունակում էր անհանգստանալ իր տիրոջ կողմից որպէս «նվեր» տրված հողակտորի համար: Մի՞թե դա էլ էր բաժանվելու հողային բարեփոխման ժամանակ:

Նոյեմբերի 28-ի երեկոյան Ֆու-չժուանը ևս էր վերադարձել այնտեղից, որտեղ իր ջրի դուլերն էր լցնում, երբ տեսավ, որ աշխատանքային խմբից ընկեր Լուս իրեն է սպասում հենց այդտեղ՝ խոհանոցում:

Ֆու-չժուանն անմիջապէս համակվեց մտքերով. համազգեստավոր ինչ-որ մեկն է եկել, միգուցէ ևս ծերբակալություն է լինելու:

«Քանի՞ դույլ ջուր ես բերել, Ֆու-չժուան», - հարցրեց ընկեր Լուս ժպտալով: Նա խոսում էր այնպէս, ասես իրենք հին ընկերներ էին, եւ նրա ձայնն արտահայտում էր թե՛ մտերմություն, թե՛ մտահոգություն: Ֆու-չժուանը դեռ լարված էր, բայց հոգու խորքում սկսեց ավելի քիչ անհանգստանալ:

«Միայն մեզնից երեքի համար այս օրերին չորս կամ վեց դույլը բավական է», - ասաց Ֆու-չժուանը՝ պարանը դուլերից քանդելով:

«Ո՞ր ես ստիպված գնալ՝ ջուր բերելու համար», - այս ասելով՝ ընկեր Լուս օգնեց Ֆու-չժուանին դուլերը տեղափոխելու եւ ծողը հենեց խոհանոցի սեւացած պատին:

«Երեք լի հեռու գտնվող ջրամբարից: Հոսող ջուր է: Լյանցզյան է գնում»: Այս ասելով՝ Ֆու-չժուանը փոքր-ինչ համարձակություն ձեռք բերեց: Նա բարձրացրեց գլուխը եւ ուղիղ նայեց անձանոթին: Լույսը բավականին աղոտ էր, եւ նա աչքերը կկոցեց՝ վերից վար նայելով Լու Յանին:

«Երեք լի», - Լու Յանը նայում էր զարմացած: - Քանի՞ դույլ ջուր էիր ստիպված կրել նախքան ազատությունը»:

Նախքան ազատությունը: Այն ժամանակ չորս մշակ էին, մեկ կառավարիչ եւ խոհարար, եւ հյուրերի մշտական հոսք կար: Դիվիզիայի հրամանատարներ, զննապետներ եւ էլ ով ասես: Սովորաբար տասից ավելի մարդ:

Նա հստակ հիշում էր խոհանոցում ափսեների քանակը, որոնք պետք է օգներ լվանալ:

«Դրանք դժվար ժամանակներ էին: Տասնչորս, երբեմն էլ տասնվեց դույլ, երկու անգամ, պետք է բերեի»,- հառաչեց Ֆու-չժուանը: Ապա մտածեց, որ ջուր պետք է եռացնի, դրա համար էլ մի քիչ ջուր լցրեց կաթսայի մեջ և գնաց մի գիրկ վառելափայտ բերեց անկյունում գտնվող կոյտի վրայից:

«Դա նշանակում է յոթ կամ ութ անգամ գնալ-գալ: Ամեն անգամ երեք լի,- հաշվեց Լու Յանը:- Ուրեմն օրական քսան լիից ավելի ստիպված ես եղել գնալ-գալ հենց միայն ջուր բերելու համար: Ուրիշ գործեր էլ ես արել»:

«Իհարկե, շատ»: Որ այսքան թեթև բեռ պիտի ունենար, այժմ Ֆու-չժուանին գրեթե հրաշք էր թվում: «Ես պետք է կերակրեի խոզերին, կովերին, արտասահմանյան ցեղատեսակի շանը: Պետք է նաև պարարտանյութ շաղ տայի և հող մշակեի»:

«Որքա՞ն հող պետք է մշակեիր»:

Վառարանում ճարճատող փայտերի կրակը կարմիր ցուր էր զգել Ֆու-չժուանի դեմքին: Նա բթացած հայացքը հառել էր թռչկոտող կրակին: Հաշվելով ասաց. «Մեկ դան և ութ դոռ»:

Լու Յանին, որ օգնել էր դաշտում աշխատողներին տարբեր գործեր կատարելու, բայց երբեք ինքնուրույն հող չէր մշակել, մեկ մարդու համար այդքան հողը հսկայական բան թվաց...

Կաթսայից գոլորշի էր բարձրանում: Ֆու-չժուանը մի տաշտ վերցրեց և նստեց, որ ոտքերը լվանա...

«Ինչքա՞ն էր քեզ տալիս Բեն Էր-հուն»:

«Տարուց էր կախված,- ասաց Ֆու-չժուանը՝ աղմուկով լվացվելով:- Երբեմն տասը պիկուլ (մեկ պիկուլը 50 կգ է): Երբեմն յոթ կամ ութ: Ես լրիվ չեմ ստացել մինչև 20 տարեկանս:

«Ասացիր ընդամենը տասը պիկո՞ւլ»,- Լու Յանը վրդովված վեր ելավ: «Իսկ վարձավճար հավաքելիս նույնպե՞ս հաշվի էր առնում տարին»,- հարցրեց հեգնանքով:

Ֆու-չժուանը չգիտեր ինչ ասեր: Այդ մասին չէր էլ մտածել:

«Ինչքա՞ն ժամանակ ես աշխատել նրա համար»,- շարունակեց Լու Յանը:

«Վեց տարեկանից նախրապան եմ եղել»: Դառն հիշողություններից սկսեց ծանր շնչել:

ԱՅՊՈՑԱՆ

«Հետո սկսեցի հազար ու մի գործ անել: Երբ 14 տարեկան էի, հայրս մեռավ: Եվ ես դարձա հիմնական մշակ: Հիմա 24 տարեկան եմ»:

«24 տարեկան ես,- կրկնեց Լու Յանը:- Պետք է կին ունենայիր»:

«Ես չունեմ հատուկ շնորհք ու հմտություն: Ինչպե՞ս կարող եմ նրան պահել», - հառաչեց Ֆու-չժուանը...

«Դու օրական 14-ից 16 դույլ ջուր ես բերել: 20 լի հող ես մշակել, կերակրել ես խոզերին ու կովերին: Մշակել ես մեկ դառ եւ ութ դուռ հող՝ տարեկան 60-70 պիկուլ հացահատիկ ստանալով: Եվ խոսում ես շնորհք չունե՛նալու մասին»:

«Ոչ շնորհք, ոչ էլ բախտ»: Իրոք, չի ստացել իր հասանելիքը, աղոտ կերպով անցավ Ֆու-չժուանի մտքով: «Վերցնենք Երկրորդ տիրոջը: Նա գիտեր գրել, գիտեր թվաբանություն: Դրա համար էլ ամեն տարի ուտում ու խմում էր առանց Լույնիսկ շեմից դուրս ելնելու»:

«Եղբայր, դու իսկապես հիմար ես», - բացականչեց Լու Յանը՝ դառնության ու համակրանքի խառն զգացողությամբ: Նա կայեց Ֆու-չժուանի ոտքերին, ոտքեր, որ այդքան շատ ծանր աշխատանք էին կատարել՝ ցեխ ու կեղտի մեջ, եւ տեսավ դրանց տրոփող կապույտ երակները: «Դա նրա շնորհքի կամ «բախտի» պատճառով չէր, ինչպես ասացիր: Հողն ու ֆեոդալական ազդեցությունն են պատճառը: Նա շահագործել է քեզ»:

«Շահագործել», - Ֆու-չժուանին շփոթեցրեց այս բառը:

«Այո, շահագործել: Բացեիբաց կողոպուտի եւ գրպանահատության խառնուրդ,- բացատրեց Լու Յանը՝ իր խոսքերին ուղեկցող համապատասխան ժեստերով: - Դու, օրինակ, 70 պիկուլ ես ստացել: Նա քեզ տվել է միայն տասը: Նշանակում է քեզնից 60 պիկուլը յուրացրել է: Դու նրա համար աշխատել ես տասնութ տարի: Ասենք թե քեզ ամեն տարի տասը պիկուլ է տվել (իրականում դու հաճախ ավելի քիչ ես ստացել), եւ մենք ունենում ենք 1080 պիկուլ հացահատիկի հսկայական գումար՝ այն գումարը, որ քեզ շահագործելով յուրացրել է»:

«Բայց,- թույլ ձայնով ասաց Ֆու-չժուանը,- հողը նրանն էր»:

"Իսկապե՞ս: Հիմա ասա ինձ: Ինչպե՞ս ես ձեռք բերեց իր հողն սկզբում»: Լու Յանը եւ Ֆու-չժուանը միաժամանակ ոտքի կանգնեցին այդ պահին:

«Հողը նրա պապից է մնացել: Առաջին տերը եւ Երկրորդ տերը յուրաքանչյուրը մի բաժին ստացան»: - Ֆու-չժուանը փորձում էր պաշտպանել Բեներին, բայց չէր կարողանում զսպել այն զգացողությունը, որ, թերեւս, իր հանդեպ ճիշտ չէն վերաբերվել ի վերջո:

«Իսկ պա՞պն ինչպես էր հողը ձեռք բերել: Ասա տեսնեմ»:- Լու Յանի ձայնն ասես պողպատից լիներ:

Խաչածեւ հարցաքննությունը շատ բան էր ապացուցում Ֆու-չժուանի համար:

«Դե, նրա պապը մանջուրների ժամանակ դատավոր էր»,- սա կարողացավ միայն ասել Ֆու-չժուանը:

«Ճիշտ ես»: Պատասխանը, կարծես թե, Լու Յանի փաստարկի մի լրացուցիչ ապացույց էր: «Եվ այն ամենը, ինչ սիրում էր դատավորը, փողի զևզոցն էր: Փողը քո պապից շորթել է Բեն Էր-հուի պապը, ապա դրանով հող է զնել, այնպես որ դու էլ կարող էիր քո հերթին շահագործվել»:

Ֆու-չժուանը չէր կարողանում բառ իսկ ասել: Ասես մի սառը թաց սրբիչ պարուրել էր նրա ուղեղը: Վառարանին հենվելով՝ նա խորհում էր այդ ինչորի շուրջ եւ այդպես մնաց երկար, երկար ժամանակ:

Այդ երեկո Լու Յանը վերադարձավ իր մզոցակաձ վերմակով: Ֆու-չժուանը սիրահոժար համաձայնել էր, որ նա այդտեղ մնա, եւ նրանք երկուսով գիշերն անցկացրին սրտակից զրույցով՝ բամբուկե նեղ մահճակալին կողք կողքի պառկած:

Լու Յանն այժմ ասես Ֆու-չժուանի ավագ եղբայրը լիներ, եւ վերջինս նրան ամեն բան պատմեց: Երբ Ֆու-չժուանը վեց տարեկան էր, նրա մայրը, որ արդեն յոթ ամսական հղիություն ուներ, Բեն Էր-հուի կնոջ հրամանով բարձրացավ փայտե սանդուղքով՝ ձեղնահարկից վառելափայտ բերելու: Նա սայթաքեց, ընկավ եւ կորցրեց երեխային: Իսկ երկու օր անց մահացավ ահավոր տառապանքներից հետո: Իսկ հայրը, երբ Բեն Էր-հուի համար հացահատիկ էր կրում, հանդիպել էր ճապոնացիների, եւ նրանք սառնասրտորեն սպանել էին հորը Յոթ աստղի գառիթափի մոտ գտնվող ամբարտակի կողքին ու վերցրել ամբողջ հացահատիկը:

Իրենց զրույցի ընթացքում Ֆու-չժուանը ճարպկորեն ներկայացրեց այն հարցը, որը մտատանջում էր նրան: Արդյո՞ք բաժանվելու է այն հողը, որ կալվածատերը տվել է մշակին:

«Սիրելի կրտսեր եղբայր,- ասաց Լու Յանը,- չե՞ս ուզում ասել, որ Բեն Էր-հուն քեզ հող է տվել»:

«Հա, տվել է՝ հինգ դոու եւ յոթ շեն»,- ամենայն ազնվությամբ ասաց Ֆու-չժուանը:

«Այժմ ենթադրենք, - շարունակեց Լու Յանը՝ վերմակը հրելով,- թե իմ այս վերմակը ի սկզբանե պատկանել է քեզ, եւ ես այն ուժով վերցրել եմ քեզնից: Երախտապա՞րտ ես լինելու, եթե, իմանալով, որ դու այն ետ ես ու-

ԱՅՊՈՑԱՆ

զում, ես պարզապես նրա միջից մի բուռ բամբակ հանեմ եւ քեզ ասեմ ահա, սա քեզ»:

«Իհարկե չէ»: Ֆու Չժուանի ուղեղում թրթռաց ինչ-որ բան, որ մի քանի օր առաջ իրեն ստորագրել էր տվել Բեն Էր-հուն:

«Ուրեմն,- ասաց Լու Յանը՝ դառնալով դեպի Ֆու-չժուանը եւ արմունկին հենվելով:- Բեն Էր-հուի հողը վաղուց է դադարել իրենը լինելուց: Դա պատկանում է նրան, ով մշակում է: Ի՞նչ ես կարծում ի՞նչ է նշանակում հողային բարեփոխումը: Մի՞թե դա չի նշանակում, որ գյուղացիներն պետք է ետ ստանան իրենց հողերը՝ մշակելու համար: Դու, Ֆու-չժուան, բոլոր գյուղացիների մեջ ամենաշատն իրավունք ունես մի կտոր հող ստանալ, որովհետեւ դու պատկանում ամենաաղքատ, առավել շահագործված եւ աշխատասեր գյուղացիների թվին ես պատկանում: Հողը բաժանելիս հենց ձեզ նման մարդկանց էլ, որոնք սեփական հողաշերտ իսկ չունեն, առաջնահերթություն կտրվի: Հինգ դուր եւ յոթ շեն: Դա քոն է եղել՝ սկզբի համար, հիմարի մեկը»:

Ֆու-չժուանը տեղում նստեց:

«Ախ այդ շանորդի Բեն Էր-հուն,- հայհոյեց՝ գրեթե արտասվալից:- Ինձ խաբել է, հիմարացրել: Պետք է գնամ եւ ետ ուզեմ»: Սոռանալով, որ Բեն Էր-հուն փախած է, ազատության մեջ, նա ուզում էր հազնել հազուստը, որ գնա եւ գտնի խարդախ սրիկային:

«Ի՞նչը ետ ուզես», - հարցրեց Լու Յանը հետաքրքրվելով:

«Այն թղթի կտորը»: Առաջին անգամ Ֆու-չժուանն զգաց, որ այդ հարցում ինչ-որ մեկին վստահում է: «Բեն Էր-հուն մի գործարք ստորագրել տվեց ինձ: Ասաց, որ իրեն չպետք է վճարեմ: Բայց նաեւ ինձ ստիպեց մատնահետքերս դնել մի թղթի տակ, որն ասում էր, թե հողը ետ է տրվելու իրեն, երբ Չան Կայ-չին վերադառնա»:

«Ախ, այդ շան որդին»: Նույնիսկ Լու Յանը վրդովվեց, բայց Ֆու-չժուանին ցած հրեց եւ հուսադրելով ասաց. «Մի՛ անհանգստանա: Չան Կայ-չին երբեք չի վերադառնա: Այնուամենայնիվ, դա պարզապես ցույց է տալիս, թե ինչ տեսակ սիրտ ունի կալվածատերը»:

Հաջորդ առավոտյան, երբ Յուե-յանը խոհանոց եկավ ջուր վերցնելու, Ֆու-չժուանը նրան պատմեց նախորդ գիշերվա խոսակցության մասին, եւ նրանք երկուսով պայմանավորվեցին ընթրիքից հետո գնալ Սին-վուի տուն:

Այդ երեկո Սին-վուի՝ կիսախարխուլ տեսք ունեցող երկու սենյակները լեփեցուն էին: Խենթ տատիկ Լին, Ֆու-չժուանը, հորեղբայր Գուանլինը,

ավելի քան տասը հոգի, հավաքվել էին այդտեղ: Վերջում բազմությանը միացավ Յուե-յանը: «Գիտուն» Չժու Յաո-սյանը, ինչպես միշտ՝ մտահոգ, որ ուշադրության կենտրոնում լինի, ևույնպես փորձում էր ճանապարհ բացել եւ ներս մտնել, երբ լսեց, որ ընկեր Լուս հավաքի է կանչում: Բայց կիսաճամփին նրան կանգնեցրեց Սին-վուն, որը կտրուկ եւ հոգնանքով ասաց. «Այսօր ուզում ենք քննարկել, թե ինչպես կենդանի բռնենք Բեն Էր-հուին: Մեկ էլ արի, երբ նրան բռնած կլինենք»:

Երբ բոլորն եկել էին, հավաքն սկսվեց, եւ Սին-վուն ստանձնեց նախաձեռնությունը:

«Ես այնքան լավ վիճակում էի, ասես արդեն թողանոթի բերանի մեջ էի խցկված Բեն Էր-հուի կողմից,- ասաց Սին-վուն:- Եթե կոմունիստները չլիներին, ես ևույնպես այն աճյունի մի մասը կլիների, որ քամին քշում է հանրային գերեզմանոցում: Մենք սկսեցինք՝ հինգ դուստրոս հող ունենալով: Երկու որդի էինք տանը՝ եղբայրս եւ ես: Սիայն երկուսս: Բայց երեք անգամ մեզ կանչեցին ծառայելու: 1938-ին եղբայրս զինակոչիկներից մեկն էր: Բեն Յին-դինն այն ժամանակ գյուղի ավագն էր եւ պնդեց, որ եղբայրս գնա: Պառլի դեկավարն ամեն օր գալիս էր մեզ վրա ճնշում գործադրելու: Նույնն էլ՝ զիջերը, բայց այլ բան էին ասում մի քիչ փողով կարելի էր հարց լուծել: Սի խոսքով՝ մենք վաճառեցինք երեք դուստրոս հող 200 արծաթե դոլարից մի փոքր ավելի գնով եւ վճարեցինք, որպեսզի մեկ ուրիշը գնար եղբորս փոխարեն: Սինչ նրանք այդպես ընկել էին եղբորս տոեւից, Բեն Էր-հուն ինձ ստիպեց անվճար աշխատել իր համար: Թե չէ, ասաց, կասի իր եղբորը, որ գա եւ ինձ էլ զոռով հավաքագրի: Ստիպված էի նրա համար աշխատել երկու ամիս:

Շուտով, սակայն, նորից եղբորս գնալու հերթը եկավ: Վիճակահանությունն ասես կախարդական մի բան էր: Սիայն աղքատներն էին այդ գործում: Մոտակա մեծ ընտանիքները, ինչպես Լո Բեյ-ժունի ընտանիքը, որն ուներ չորս մեծ ամրակազմ որդիներ, անձեռնմխելի էին: Լի Չժաո-չժուի երեք որդիներն էլ չգորակոչվեցին երբեք, բայց Դե-մինը՝ Խենթ տատիկի միակ որդին, վիճակ հանաձներից առաջիններից մեկն էր: Երբ եկավ 1945 թվականը, Բեն Էր-հուն դարձավ գյուղի ավագ: Այդ ժամանակ ընտանիքս մեկ շեն հող անգամ չունեի, այնպես որ, երբ ինձ կանչեցին, ոչինչ չէի կարող անել: Ինձ տարան՝ մի կտոր պարանով կապած:

Սինչ կտրորեի, թե ինչպես է գենքը կրակում, ինձ ուղարկեցին Գոմին-դանի 75-րդ դիվիզիա, եւ իմացածս առաջին բանն այն էր, որ ուղարկում են ճակատային զիծ: Իհարկե, այն ժամանակ չէի գիտակցում, որ կոմունիստ-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

ները պայքարում են գյուղացիներին համար, բայց, այնուամենայնիվ, դժվար էր միասին համախմբվել, պայքարելու այն մարդկանց դեմ, որոնց դեմ ունեցեցին Առաջին անգամ Ցզինանում էր: Մենք նահանջեցինք մեր առջեւ գտնվող բանակի հետ՝ առանց մեկ կրակոց իսկ արձակելու: Երկրորդ անգամ Սուկոնում էր: Այդ շատորդին՝ Գոմիկոսի հրամանատար Չժեն Չժենը, մեզ՝ զինվորներին գցեց կրակի բոցերի մեջ: Գնդակը խոցեց կողքս, այստեղ (Նա ցույց տվեց կողերը): Ամառ էր: Երեք օր մեռածի պես ընկած էի ծառի տակ, եւ թարախակալած վերքս սարսափելի տանջում էր ինձ: Բարեբախտաբար, Գոմիկոսի բանակը շուտ ոչնչացավ: Ազատագրական բանակի երկու բուժակ գտան ինձ եւ տեղափոխեցին ռազմաճակատի հիվանդանոց: Այդտեղ գնդակը հանեցին եւ վերքս բուժեցին: Երբ հոսպիտալում էի, ինձ գրել ու կարդալ սովորեցրին, եւ ես սկսեցի հասկանալ, թե ինչու է հեղափոխությունը լավ, իսկ հետադիմականներն ինչու են վատ:

Երբ վերքս ապաքինվեց, ինդրեցի լորից ինձ ուղարկել ճակատային գիծ՝ այս անգամ կռվելու Գոմիկոսի հետադիմականների դեմ: Իմ հին ընկերներից շատերն էին այդպես արել: Սի բժիշկ բերեցին, որ ինձ նայի, եւ նա ասաց, որ դեռ պիտանի չեմ առաջին գծում ծառայելու, քանի որ չափազանց շատ արյուն էի կորցրել: Դրա համար էլ կայագորային պարտակալություններ էի կատարում թիկունքում: Հետագայում ինդրեցի միանալ այն բանակին, որը պատրաստվում էր ազատագրել Հայնան կղզին: Բայց նրանք ինձ լորից նայեցին եւ վերջապես որոշեցին ինձ պատվավոր կերպով զորացրել՝ քաղաքացիական կյանքի վերադառնալու համար (Այստեղ նա ցույց տվեց վետերանի իր վկայականը):

Պեկինից եկող գնացքում ինձ նման ուրիշ վետերաններ էլ կային: Ճանապարհին, բոլոր կանգառներում մեզ դիմավորող մարդիկ կային: Եվ ամեն մեկին մի գույգ կոշիկ ու գուլպա էին տալիս, շոր ու փող...»:

Նախքան Սին-վուն խոսքը կավարտեր՝ Խենթ տատիկը հեկեկալով արտասվեց: Եթե Դե-մինն էլ կարողանար ետ գալ՝ լոր կոշիկներով ու գուլպաներով ու լոր շորով...

«Ես ծեր կին եմ,- ասաց արցունքների միջից եւ վեր կացավ՝ ձեռնափայտի օգնությամբ:- Բայց ես էլ ուզում եմ իմ վշտի մասին պատմել: Ես դեռ չգիտեմ, թե որտեղ են թաղված իմ որդի Դե-մինի ոսկորները, բայց գիտեմ, որ Բեն Էր-հուն է դրա պատասխանատուն: Չորս աղջիկ ունեի եւ երկու որդի: Հիմա մնացել է միայն Չժուն-սինը: Պատճառն այն չէ, թե ես չգիտեի ինչպես պահեմ իմ երեխաներին, եւ դրա համար մահացան: Չորսը

մահացան սովից ու ցրտից: Մի անգամ շորի կտոր էլ չունեի, որ փաթաթեի երեխայիս: Հարեալներն ինձ ծղոտ էին տալիս, որ ծածկեի կորածներին:

Ես անգործ չեմ եղել: Տարին բոլոր աշխատել եմ կալվածատիրոջ համար, եւ փոխարենը միայն տառապանք ու թշվառություն եմ ստացել: Ինչպե՞ս կարող էի ուժեղ մնալ, երբ ուտելու բան չեմ ունեցել: Եվ ի՞նչ կա գարմանալու, որ կուրծքս թուլացել է ու թորշումել, եւ երեխաներս մեկը մյուսի ետեւից մահացել են: Երրորդին ես ինքս եմ խեղդել: Իմ միս ու արյունը, ինչպե՞ս կարող էի դիմանալ արագացնելով կրակ վաղաժամ մահը»: Նա կորից սկսեց բարձրաձայն արտասվել: «Բայց դա ավելի լավ էր, քան տեսնելը, թե նա ինչպես է մեռնում դանդաղ սովամահ լինելով: Ի վերջո ինձ մոտ մնացին մի որդի եւ մի դուստր: Եվ անիծյալ Բեն Էր-հուն պիտի գար ու ինձնից խլեր իմ Դե-մինին, 19 տարեկան իմ Դե-մինին, որին պահել եմ այն մի բուռ բրնձով, որ կարողացել եմ մուրալ ուրիշներից: Նա գնաց՝ թողնելով մեզ երկուսիս՝ մոր ու աղջկա, եւ երբեք էլ ետ չեկավ...»:

Խենթ տատիկը ցնցվելով հեկեկում էր: Մին-վուի հղի կինը փորձեց օգնել նրան նստել եւ շունչը ետ բերել: Բայց ոչ, նա պետք է շարունակեր:

«Կյանքիս 53 տարվա մեջ երբեք երջանկության մեկ օր չեմ ունեցել: Մայրս մեռավ, երբ ընդամենը երկու տարեկան էի, իսկ ութ տարեկանում ինձ, որպես երեխա հարսնացուի, ամուսնացրին: Սկզբում անընդհատ ծեծ էի ուտում սկեսրոջիցս: Հետո արդեն, երբ աշխատում էի կալվածատիրոջ ընտանիքում, կալվածատիրոջ կինն էլ էր ինձ ծեծում: Ամեն տարի երեք ամիս ապրում էի վայրի բանջարեղենով, տարվա երկրորդ կեսին էլ իմ միակ ուտելիքը չորացրած կարտոֆիլն էր: Ինչ վերաբերում է մսին կամ յուղին, տարիներ շարունակ բախտ չեմ ունեցել կույրիս հոտ քաշել դրանցից:

20 տարվա ծանր աշխատանքից հետո ամուսինս ու ես բավականին փող էինք ետ գցել, որպեսզի ճահճոտ մի հողամաս գնեինք: Ամուսինս՝ Լի Սանը, ազնիվ ու վստահելի մարդ էր, բայց ամուր առողջություն չունեցավ: Մի օր շոգ եղանակին կալվածատիրոջ ջրի անիվն էր պտտում, երբ ուշագնաց ընկավ: Կալվածատերը ցույց տվեց, որ դա առանց իր գիտության է եղել, եւ ես հողիս մեկ դոուն պիտի վաճառեի, որպեսզի դեղորայք գնեի:

Հետո ճապոնացիք եկան: Այդ ափիոնի չարքը՝ Բեն Ին-դինը, օգնում էր նրանց հավաքագրելու գործունակ տղամարդկանց եւ միտք հղացավ, որ Լի Սանը նրանց համար փամփուշտներ կրի ու խրամատներ փորի: Մի օր անհայտ պատճառով սաստիկ ծեծի էին ենթարկել իմ Լի Սանին. նա հազիվ սողալով տուն հասավ: Շորերն ամբողջովին արյան մեջ թաթախված

ԱՅԱՌ ՑՅԱՆ

Էին: Հետո նրա վերքերն սկսեցին թարախոտվել, եւ նա անընդհատ արևահոսում էր: Ես էլի հող վաճառեցի, բայց այս անգամ ոչինչ չկարողացավ փրկել նրան: Չժուռ-սինն ընդամենը յոթ տարեկան էր, երբ նա մահացավ: Լի Սանին պատշաճ կերպով հուղարկավորելու համար էլ հող վաճառեցի:

Մայր ու աղջիկ շատ ծանր ժամանակ անցկացրինք՝ ապրելով մեկ դուռ հողակտորի վրա: Հաջորդ տարին բերքն ուշ եղավ, եւ ստիպված էինք Լո Բեյ-ժուռնից պարտքով հինգ շեն բրինձ եւ մեկ դուռ լոբի վերցնել՝ ծայրը ծայրին հասցնելու համար: Երկու ամիս անց նա ինձ ասաց, որ մեր պարտք վերցրածը տոկոսի հետ քսան անգամ ավելին է: Եվ այսպես վերջին հողակտորս էլ կորցրի:

Չժուռ-սինն ինձ հետ երեք տարի շարունակ մուրացկանությամբ զբաղվեց: Չգիտեիք, թե որտեղից կարող ենք հաջորդ անգամ ուտելիք ճարել: Հետո այլեւս չկարողացա դիմանալ եւ նրան որպես երեխա հարսնացուի ամուսնացրի: Ես էլ եմ երեխա հարսնացու եղել: Շատ լավ գիտեի, թե դա ինչ է նշանակում: Սին-վու, ես անսիրտ մեկը չեմ: Ես խենթ չեմ: Պարզապես այնքան շատ եմ տառապել, եւ միևնույն հիմա չի եղել մեկը, որին այդ մասին կարողանայի պատմել»:

Լու Յանը շտապեց խոսել: «Լի տատիկ, ոչ ոք այլեւս նրան «խենթ» տատիկ չասի՛, Լի տատիկ, դու, իհարկե, խենթ չես: Տէ՛ս,- Լու Յանը սկսեց հաշվել մատների վրա՝ մյուսներին որպես դաս:- Որպես երեխա հարսնացու, դու շատ վատ վերաբերմունք ես տեսել: Դա նշանակում է, որ տառապել ես ֆեոդալական ընտանիքում ապրելուց: Ամուսինդ շահագործվել է կալվածատիրոջ կողմից եւ մյուս կողմից էլ՝ ծեծվել օտարերկրյա իմպերիալիստներից: Կրկնակի տառապանք, որ սովորական բան է բոլոր գյուղացիներին համար: Նաեւ՝ մեր երկու գլխավոր թշնամիների կողմից մեզ հասցված: Բեն Ին-դինը, Լո Բեյ-ժուռը, երկուսն էլ հիմա փակի տակ են: Ուզում ենք նույնն էլ Բեն Էր-հուին անել, նաեւ մյուս բոլոր սրիկաներին: Դա մեր գործն է, եւ մենք բոլորս պետք է օգնենք այդ գործին: Կառավարությունն, անշուշտ, կաջակցի մեզ այս հարցում»:

«Կալվածատերերն այնպիսի չարագործներ են,- ասաց Դու Յույ-չժենը՝ արցունքները սրբելով:- Կգան եւ կաթսադ կխլեն, հենց տեսնեն, որ ծխնելույզը ծխում է: Ամուսինս մի քիչ հող ուներ իր անունով: Սկեսրայրիս մահից հետո Բեն Էր-հուն առանց ամոթի հայտարարեց, թե իրեն պարտք ենք 80 արծաթ դոլար: Եթե իրեն չենք հավատում, ասաց նա, ապա կարող ենք գնալ շրջանային դատարան եւ դատական հայց ներկայացնել: Դատական հա՞յց: Նրա դեմ, ով ելումուտ էր անում շրջանային դատարան, ինչպես սե-

փական խոհանոց: Բնականաբար չհամարձակվեցինք: Եվ հողը ծեռքներիցս գնաց:

Ազատագրությունից մեկ օր առաջ Լո Բեյ-ժուները խնդրեց ամուսնուս օգնել իրեն բերքը կախելու: Բայց շահագործելուց հետո ոչինչ էլ չվճարեց...

Ամուսինս այնքան էր կատաղել, որ որոշեց էլ գյուղացի չլինել: Դրա համար էլ գնաց Դուևտին լճում նավակի թիավար աշխատելու: Իսկ ինձ վիճակված էր կրծքով կերակրել ուրիշի երեխայի, մինչդեռ իմ երեխան անվերջ նվում էր կաթի պակասությունից: Սկեսուրս եկավ մի քանի օր առաջ եւ պնդեց, որ վերադառնամ իմ ընտանիք, բայց ես անսասան էի: Չգիտեմ, թե ինչպիսին է ևոր կառավարությունը, բայց հաստատ չի կարող Գոմինդանից ավելի վատը լինել»:

Երբ Դու Յույ-չժենը խոսքն ավարտեց, Լու Յանը նկատեց, որ լավ է, որ նա տուն չի գնացել, որովհետեւ կարող է մնալ եւ իր սեփական աչքերով տեսնել, թե ինչպիսին է Ժողովրդի կառավարությունը: Նոր կառավարությունը ոչ միայն մարդկանց չի թալանում, այլ նաեւ քննարկում էր այն բռնակալներին վերացնելու հարցը, որ թալանում էին այլոց:

«Մի՞թե ճշմարտությունը չեմ ասում»;

«Լիովին ճշմարիտ է», - միաձայն բացականչեցին սենյակում գտնվող բոլոր մարդիկ՝ տղամարդ թե կին, ծեր թե երեխա: Յուև-յանը եւ Դու Յույ չժենը՝ այն աղջիկը, որ որպես ստնտու դայակ էր աշխատել Չժու Յաու-սյանի տանը, երկուսն էլ սկսեցին լաց լինել: Դու Յույ-չժենը մնացել էր հանրահավաքին եւ տուն չէր գնացել՝ հակառակ սկեսրոջ պնդման:

«Բայց,- շարունակեց Լու Յանը՝ զգալով, որ նրանք հիմա իր հետ են,- դուք եք վճռելու վեր կենալ եւ տեսնել, որ արդարությունն իրականացվել է: Դուք գիտեք բոլոր չարագործ կալվածատերերին եւ ունեք նրանց նախկին հանցագործությունների բոլոր ապացույցները: Կառավարությունը որեւէ մեկին սխալ կերպով չի դատապարտելու: Այսպիսով, ձեզանից բոլորը, ովքեր ունեն ապացույցներ, որոնք կարող են օգտակար լինել, պետք է ներկայացնեն »:

Հաջորդ խոսողը Չժու Գուան-լին էր, որ նրբորեն մորուքն էր շոյում:

«Ես ծեր եմ, այնպես որ՝ հին հաշիվներ շատ ունեմ Լո Բեյ-ժուների հետ: Նախկինում երեք սենյականոց տնակ ունեի Հուանգկույիցի մոտակայքում, նաեւ երեք դան ճահճոտ հողամաս, որ վարձակալել էի Հու Բին-ցզանից: Դա 1939-ին էր: Հետո Հուն հանկարծ մտածեց քաղաքում աշխատելու մասին եւ վաճառեց գյուղի իր սեփականությունը, ներառյալ իմ երեք դան հողամասը, Լո Բեյ-ժուին: Երբ հողի սեփականատերը փոխվեց, Հու

ԱՅՊՈ ՑՅՊՆ

Բին-ցզանը երաշխավորեց, որ իմ վարձակալածին ձեռք չեն տա հաջորդ հիևզ տարիների ընթացքում:

Որքան մեծ եղավ զարմանքս, երբ գործարքն ավարտվելու պահին Լո Բեյ-ժունս ինձ իր մոտ կանչեց եւ երեք պայման Լշեց, այլապես, ասաց Լա, հողս կվերցնի ինձնից: Այդ պայմաններն էին՝ առաջին՝ վարձավճարի 30 տոկոս աճ, երկրորդ՝ երեք տարի ինձ չէր թույլատրվելու իր բլուրներում վառելափայտ կտրել, եւ երրորդ՝ ես չպետք է ձուկ պահեի իր լճակում: Ես պարզապես ցնցված էի, բայց խնդրեցի որոշ չափով թեթեւացնել պայմանները: Շատ խնդրեցի, բայց Լա միայն ատամների արանքից Լետեց. «Ովքեր պայմանները հարմար չեն համարում, ազատ են, կարող են գնալ»:

Այնքան զայրացած էի, որ վճռեցի Լրա հետ հարցերս մաքրել մեկընդմիջտ: Բայց, ինչպես ընտանիքս եւ հարեւաններիցս մի քանիսը Լշեցին, ի՞նչ կարող ես ստանալ անհավասար պայքարից...

1942 թվականին Հունանը մեծ վնաս կրեց մորեխներից: Ես խնջույք կազմակերպեցի, մի քանի տեղացի մարդկանց առաջարկեցի, որ Լո Բեյ-ժունսին դիմենք, որպեսզի Լա փոքր-ինչ պակասեցնի վարձավճարները: Իսկ Լա պարզապես ասաց. «Ինչպես որ վարձակալների համար միջատներն են վատ, այնպես էլ հողատիրոջ համար՝ երաշտը»...

Երբ Գոմիկանը ետ եկավ, Լրանց կարգախոսը բավականին խոստումնալից էր հնչում՝ «Վարձավճարի 25 տոկոս իջեցում»: Ես՝ տխմարս, հավատացի դրան... Բայց էլ ավելի վատ եղավ..

Անհնար է պատմել, թե որքան եմ տուժել...»

Յուե-յանի աչքերն արցունքից կարմրել էին: Լու Յանը փորձեց Լրան շեմի մոտից Լերս բերել, որպեսզի Լա պատմի իր կրած տառապանքների մասին:

«Առաջ գնա, պատմիր Լրանց, թե ոնց էր Երկրորդ տիրուհին քեզ ձեծում», - ասաց Ֆու-չժունսը՝ թեթեւակի առաջ հրելով Լրան:

Բերանը փակ՝ Յուե-յանը անորոշ ու ցրված հայացքով Լայում էր Ֆու-չժունսին եւ մյուսներին: Արցունքները շարունակում էին հոսել այտերն ի վար: Եվ արցունքների տետում կարելի էր տեսնել սկիզբ առնող բոցավառ զայրույթը:

Նմանատիպ հավաքները, որոնց ժամանակ մեղադրանք էր հնչում կալվածատերերի հասցեին, շարունակվեցին հիևզ երեկո: Առաջին հավաքների ժամանակ մարդկանց մեծ մասը Բեն-չժու դաստակերտից էր, բայց աստիճանաբար մարդկանց քանակն ավելացավ, արդեն գալիս էին Լաեւ այլ դաստակերտներից եւս, ինչպես Լաեւ փողոցից: Լու Յանը սովորաբար մի

քանի խոսք էր ասում սկզբում՝ բացատրելով ինչև-ինչոց է, եւ յուրաքանչ-յուր նման հավաքից հետո խրախուսում էր մարդկանց: Դառն ու դաժան փաստերը գյուղացիների համար պերճախոս ապացույց էին, թե ով է տը-նել ազնիվ աշխատանք կատարելով եւ ով է յուրացրել նրանց աշխատանքի պտուղները:

Դատապարտելի էր գյուղացիների այն մտածողությունը, երբ ասում էին. «Ես միայն իմ ճակատագրի կշաններին կարող եմ մեղադրել, որ դժբախտ եղա»: Յույց տալու համար, թե որքան սխալ ու անընդունելի մոտեցում է դա, Լու Յանը բերեց աշխատանքային խմբի ներկայացուցիչ Չժան Յզե-մինի օրինակը:

«Ծերունի Չժանն ախիկիում Շանսիից էր: Նա նույնպես տարբեր աշխատանքներ է կատարել՝ առանց մի կտոր հող ունենալու, եւ գրել-կարդալ չգիտեր: Տասը տարի առաջ, այն բանից հետո, երբ ճապոնացի չարագործները ներխուժել էին Հյուսիսային Չինաստան, Ութերորդ ճակատի բանակը, ինչպես այն ժամանակ կոչվում էր Ժողովրդական ազատագրական բանակը, նրան իր շարքերն ընդգրկեց, երբ Շանսիում էր: Բոլորո՞ղ գիտե՞ք, որ Ութերորդ ճակատի բանակն օգնում էր աղքատներին, որտեղ էլ լինեք: Նրանք ծերունի Չժանյին սովորեցրին կարդալ, օգնեցին հասկանալու, թե ինչպես է ինքը շահագործվել, եւ նրան դարձրին կալվածատերերի դասակարգի դեմ պայքարող աննկուն մարտիկ: Հետագայում նա ընտրվեց Գյուղացիական ընկերության պաշտնյա: Նա լավ կատարեց իր աշխատանքը եւ դարձավ գյուղի ավագ, իսկ հետո Ուտայի շրջանի փոխքաղաքապետ:

Այսօր նա կարող է կարդալ, գրել, ելույթ ունենալ եւ վարչական աշխատանք կատարել: Նրա ընտանիքին որոշակի հողատարածք է հատկացվել, եւ նա այստեղ է, որպեսզի աշխատի ժողովրդի համար: Չասե՞ք հանկարծ, թե այս ամենը նրա «ճակատագրի» պատճառով է: Եթե նա հլու-հնազանդ հաշտվեր եւ ընդուներ, որ ինքն այն է, ինչ կա, ապա հաստատ կդառնար բախտագուշակի անհեթեթության գոհ»:

Այսպես հիմնադրվեց Սինլու գյուղի մշակների եւ աղքատ գյուղացիների փոքր խումբը, եւ Սին-վուն ընտրվեց խմբի ղեկավար:

Մյուս օրը կեսօրին բոլոր տղամարդիկ բերեցին իրենց մայրերին եւ կանանց, իսկ կանայք իրենց սկեսուրներին եւ տալերին: Դա Լու Յանի մտահղացումն էր...

Հավաքը բացվեց Լի տատիկի, Դու Յույ-չժենի եւ տիկին Բեն Սին-վուի ներկայացրած մեղադրանքներով: Նույնիսկ Յուն-յանը կարողացավ խո-

ԱՅՊՈ ՑՑՊՆ

սել: Նա բացատրեց, թե ինչպես են իրեն ուժով խլել ծնողներից, քանի որ իր ընտանիքը Բեն Էր-հուին երկու պիկուլ հացահատիկ է պարտք եղել: Նրա ցավալի պատմությունը, թե ինչպես են իր հանդեպ անգթորեն վերաբերվել Բեն ընտանիքի երկու կանայք, լսողներից շատերին ստիպեց կարեկցանքից արտասվել:

Արհեստավոր Սյույ Ցզուն-յանի կինը վեր կացավ եւ պատմեց, թե ինչպես է սկեսուրն իր կյանքը դժոխք դարձրել: Լու Յանն սպասեց, մինչեւ նա ավարտի, ապա ասաց.

«Մեր՝ գյուղացիական դասին պատկանող բոլորիս մեջ եղած վիճաբանությունները, չպետք է շփոթել կալվածատերերի ճնշման հետ: Հազարավոր տարիներ կալվածատերերը մշտապես ճնշել են մեզ: Ոչ մի բացառություն չի եղել: Հետեւաբար, կալվածատերերը, որպես դասակարգ, պետք է տապալվեն: Ինչ վերաբերում է ընտանիքի անդամների միջեւ վեճուկովին, անկասկած կլինեն եւ՛ լավ բնավորության, եւ՛ վատ բնավորության տեր անձինք: Այնուամենայնիվ, մեզանից շատերը ոյուրագրգիռ են դառնում, քանի որ ստիպված ենք պայքարել այդպիսի դժվարին կյանքի դեմ՝ կալվածատերերի շահագործման պատճառով: Վեճն ու կռիվն ինքնըստինքյան են առաջանում, երբ մարդիկ չգիտեն, թե որտեղից ուտելիք հայթայթեն:

«Սպասեք, մինչեւ հողը բաժանվի ինչպես հարկն է, մինչեւ այլեւս ոչ ոք քաղցից չտառապի, եւ բոլոր տղամարդիկ ու կանայք կարողալ իմանան, այնժամ կտեսնեք: Ես համոզված եմ, որ սկեսուրների ու հարսների միջեւ հարաբերություններն անհամեմատ ավելի կլավանան, եւ նույնը կլինեն ամուսինների ու կանանց միջեւ հարաբերությունները: Բոլորս պետք է հասկանանք, որ հողային հին համակարգն է բոլոր քանդված օջախների բուն պատճառը: Երբ հողային բարեփոխումը կիրառվի, գյուղացիները ոչ միայն հարուստ կլինեն, այլև նրանց ընտանեկան կյանքն ավելի ներդաշնակ կլինի»:

Բոլոր կանայք, մասնավորապես սկեսուրները, խորապես տպավորված էին այս խոսքերից: Լուն շարունակեց.

«Հետեւաբար, հարցն այն է, որ կանայք նույնպես, ինչպես տղամարդիկ, պետք է մասնակցեն կալվածատերերի դասակարգի տապալման պայքարին: Ոչ միայն այն պատճառով, որ կանայք, ինչպես տղամարդիկ, իրավունք ունեն հողաբաշխումից իրենց մասնաբաժինն ունենալ, այլ նաեւ այն պատճառով, որ կանայք կազմում են այս աշխարհի կեսը: Առանց կանանց հնարավոր չէ տապալել կալվածատերերի դասակարգը, իսկ քանի դեռ կալվածատերերը չեն տապալվել, ոչ մի գյուղացի, տղամարդ թե կին չի

կարող ազատ շնչել»:

Նմանատիպ երկու-երեք հանդիպում անցկացնելուց հետո Սիլվիոյի գյուղի կանայք նույնպես կազմակերպեցին իրենց փոքր խումբը՝ Լու Մեծ Տան ակտիվիստ Լու Շու-միսի գլխավորությամբ:

Մի օր, հավաքույթի վերջում, երբ բոլոր կանայք տուն էին գնում, Յուեյանն արմունկներով ճանապարհի բացեց ամբոխի միջով և մոտեցավ Լու Յանին: Քաշելով կրա թելքից, որպեսզի ուշադրություն գրավի, նա ասաց. «Նայեք սրան, ընկեր Լու»: Եվ ցույց տվեց հագուստի մեջ թաքցրած խնամքով ծալված մի նամակ: Նամակը հանձնելով՝ նա քրթմնջալով բացատրեց, որ «հենց նոր է ուղարկվել, տիրուհին դեռ չի տեսել», և որ «այդ ամենը Ֆու-չժուանի մտահղացումն է»:

Լու Յանն ամբողջովին տարակուսանքի մեջ էր, թե ինչի մասին կարող է դա լինել: Նա նայեց ծրարին, որի վրա գրված էր. «Բարի եղեք հանձնել կնոջս», ու նաև նկատեց, որ փոխանակ ծրարի վրա իր անունը գրելու, ինչպես սովորաբար արվում է, նամակագիրը պարզապես նշել էր. «Կարդա ներսում գրվածը»:

Ծրարը բացելով՝ նա ներսից մի կտոր թուղթ հանեց, որի վրա խզբզված էին հետեյալ բառերը.

«Ես հիմա մնում եմ հորեղբայր Յունի հետ քաղաքում: Ամեն ինչ լավ է: Մի անհանգստանա »:

Ներքեում գրված էր. «Նրա կողմից, ում դու գիտես»

Լույ Յանի ուղեղը փայլատակեց: Բեն Էր-հուն էր, անկասկած: Ուրիշ էլ ո՞վ կարող էր լինել:

Առանց հապաղելու Լու Յանը մի գրություն ուղարկեց Ֆու-չժուանին, որ գա տաճար:

«Գիտե՞ս, որ Բեն Էր-հուն հորեղբայր Յուն ունի քաղաքում», - հարցրեց Լուն: Ստածելով այդ հարցի շուրջ՝ Ֆու-չժուանը հանկարծ հիշեց, որ մի անգամ, երբ ստիպված էր գնալ քաղաք, որպեսզի Բեն Էր-հուի բերքի վճարը տա, իրեն ասացին, որ մի զույգ հավ և մի կապ հնդկեղեգի տնկիներ տանի քաղաք՝ Բեն Էր-հուի հորեղբորը: Դա երկաթուղային կայարանին մոտ գտնվող ինչ-որ տեղում էր, Վանչոուի կամրջից ոչ հեռու:

«Լավ, պատրաստ եղիր, - ասաց Լու Յանը՝ Ֆու-չժուանին: - Քեզ կարող է քաղաք ուղարկենք, այս անգամ առանց բեռ ու զամբյուղի, բայց երբ վերադառնաս, չմոռանաս կենդանի ետ բերել Բեն Էր-հուին»:

4. ԹՈՒՆԱՎՈՐ ՆԻԶԱԿԻ ՀԵՌԱՅՈՒՄԸ

Տեսնելով, որ մշակների եւ աղքատ գյուղացիների կազմակերպումն այդպիսի ընթացք ստացավ, Չժու Յաո-սյանը, որը նախնական քննության ժամանակ համարվեց հարուստ գյուղացի, դառնություն ապրեց: Նա ծամածոճված ժպիտով ասում էր. «Մի՞թե ես այն մարդը չեմ, որը պետք է զնար քաղաք, որպեսզի հոգար աշնան հարկերի գանձման գործը: Այդ անգրագետ դոդմները, ի՞նչ գիտեն դրանք, բացի ցեխի հետ խաղալուց»: Ակնարկը լիովին պարզ էր. հողային բարեփոխումն առանց նրա չէր կարող հաջողություն ունենալ: Երբ սա մշակների եւ աղքատ գյուղացիների ականջն ընկավ, վերջիններս, բնականաբար, վրդովվեցին:

Դու Յույ-չժենը, որ ստնտու դայակ էր աշխատում Չժու ընտանիքում, ասաց. «Նա հոգում էր աշնան հարկերի գանձումը, այնպես չէ՞: Նա ներկայացուցիչ է եղել, բայց խաբել է՝ չհայտնելով հինգ դուր հողի մասին, որ ուներ գետի ափին, եւ հացահատիկի հարկը վճարել է երեք կամ չորս պիկուլ պակաս, քան պետք է վճարեր: Իհարկե, նյարդայնացել է, եւ դեռ շարունակում է մեծ-մեծ խոսել իր արածի մասին»:

Դեռեւս իրենց մտքերում թարմ հիշողությամբ՝ թե ինչպես էր Չժու Յաո-սյանը միշտ նույն երգը երգում «ժողովրդի կառավարությանն աջակցելու» մասին, ամբողջ խումբը խիստ զայրացավ: Ոմանք ասում էին, որ նրան անմիջապես պետք է ձերբակալեն:

«Չմոռանանք, որ Բեն Էր-հուն, այլ ոչ թե նա է մեր փնտրած մարդը, շեշտեց Լու Յանը: Չժու Յաո-սյանը բորբոքված է պարզապես, որովհետեւ ուզում է իր մանր խանդի համար ելք գտնել: Եթե նա իրականում ինչ-որ բան արած լիներ, որպեսզի խանգարի մեր հողային բարեփոխմանը, ինչպես ասեկոսեներ տարածելը կամ այլոց ունեցվածքը խլելը, ապա մենք անկասկած կկալանավորեինք նրան» :

Երեկոյի ընթացքում փոքր խմբում երկու խնդիր քննարկվեց՝ ժողովրդական աշխարհագրի կազմակերպումը եւ միջին խավի գյուղացիների հետ ավելի սերտ միասնությունը, որպեսզի ընդլայնվեն կալվածատերերի դեմ պայքարելու համար:

Վերջին մի քանի օրվա ընթացքում շուրջ 30 մարդ էր գրանցվել ժողովրդական աշխարհագրին միանալու համար: Նրանց, ովքեր 18 տարեկանից ցածր էին կամ 30-ից բարձր, ստիպված էին մերժել: Ըստ կանոնակարգերի՝ 30-ից բարձր՝ մինչեւ 60 տարեկան մարդկանց թույլատրվում էր միանալ աշխարհագրին միայն հողային բարեփոխումն ավարտելուց հե-

տո: Դա կապված էր այն բանի հետ, որ հողային բարեփոխման ընթացքում աշխարհագրայինը բավականին լարված աշխատանք է կատարում, որը պահանջում է ֆիզիկական ուժ եւ տոկոսություն:

Հետեւելով մշակների եւ աղքատ գյուղացիների փոքր խմբի կազմավորմանը՝ մի շարք միջին գյուղացիներ, որոնք քաջություն էին ցուցաբերել կալվածատերերի բանասարկությունները բացահայտելու գործում, նույնպես ընդգրկվեցին պայքարի մեջ: Սկզբում դա որոշ թյուրիմացությունների տեղիք տվեց աղքատ գյուղացիների մի մասի մոտ, որոնք վախենում էին, որ նոր անդամներ ընդգրկելը կարող էր նշանակել իրենց հողերի ապագա մասնաբաժնի կրճատում:

Լու Յանը, սակայն, հասկացրեց նրանց, որ հողերի բաշխումը հողային բարեփոխման միակ նպատակը չէ, եւ որ քաղաքական ազատագրումը, կալվածատերերի դասակարգի ամբողջական տապալմամբ, գյուղացիների համար նույնքան կարեւոր է: Դրան հասնելու համար մշակներն ու աղքատ գյուղացիները պետք է միավորվեն միջին խավի գյուղացիների հետ եւ միասին աշխատանք տանեն ու սկզբնական հիմք հանդիսանան:

Բայց այդ միասնական ճակատում Չժու Յաո-սյանի նման հարուստ գյուղացիներ չէր կարողանում հենակետ ունենալ Գյուղացիական ընկերությունում: Ավելի ու ավելի շատ միջին գյուղացիների՝ ընկերությանը միանալու փաստը, երբ իրեն մերժել էին ընդունել, տանջում էր նրան: Նա իրեն սկսեց կասկածելի ու տարօրինակ պահել: Օրինակ, եթե կնոջը պատվիրում էր իր համար ուտելու մի լավ բան պատրաստել, ասում էր. «Այսպիսի ժամանակներում պարզապես հիմարություն կլինի չուտել այն ամենն, ինչ ձեռքդ կընկնի: Ի վերջո, ով գիտե, թե երբ այստեղ կլինի Երրորդ համաշխարհային պատերազմը, եւ ատոմային ռումբերը կընկնեն»:

Հազիվ թե իմանար, որ մոտիկ ինչ-որ մեկն արդեն հսկայական քայլեր է արել կնոջ քաղաքականապես արթնացման գործում: Դու Յույ-չժենը կրծքով երեխային էր կերակրում, երբ ականջովն ընկավ այդ արտահայտությունը, եւ նա խոսեց որոշակի կրքոտությամբ. «Ճիշտ չէ այդպիսի բաներ ասել»:

«Ինչո՞ւ ես կարծում, թե ճիշտ չէ», - Չժու Յաո-սյանն իսկապես չգիտեր, թե ինչպիսին է դարձել աշխարհը: Պատկերացրեք, որ Դու Յույ-չժենն այդպիսի տոնով էր խոսում իր հետ:

«Որովհետեւ ասեկոսներ ես տարածում», - նկատեց Յույ-չժենը խստորեն:

Չժու Յաո-սյանն այսպես մտածեց. Դու Յույ-չժեն, ես քեզ վճարում եմ

ԱՅԱՈ ՑՅԱՆ

եւ կերակրում, իսկ դու համարձակվում ես ինձ մեղադրել ասեկոսներ տարածելու համար: Շատ լավ, ուրեմն կորի՛ր աչքիցս:

Բաճկոնը կոճկելով՝ Յույ-չժենը հեռացավ առանց մի խոսքի: Նա գիտեր՝ ում է ուզում գտնել՝ Սին-վուին եւ Լու Յանին:

Հաջորդ առավոտյան Ֆու-չժուանը եւ սյանի Գյուղացիական ընկերության քարտուղարը միասին քաղաք գնացին: Նրանք իրենց հետ պաշտոնական մի սամակ ունեին՝ գրված Հոյլունի սյանի կառավարության կողմից եւ հասցեագրված քաղաքի Հանրային անվտանգության բյուրոյին, որ ներկայացնում էր նրանց եւ բացատրում, թե որն է քաղաքում նրանց առաքելությունը: Մեկ այլ սամակ էլ կար, մեղադրական սամակ, ստորագրված սյանի Գյուղացիական ընկերության կողմից, որտեղ թվարկված էին կալվածատեր Բեն Էր-հուի հանցագործությունները: Այն ավարտվում էր հետեւյալ նախադասությամբ. «Մենք՝ գյուղացիներս, ուզում ենք դիմել Հանրային անվտանգության բյուրոյին՝ ակնկալելով, որ արդարադատությունը կիրականանա»:

Շուտով, Ֆու-չժուանի եւ իր գործընկերոջ հեռանալուց հետո, Սին-վուին, աշխարհագորի անդամների հետ միասին, ուղեորվեց ձերբակալելու Չժու Յաո-սյանին եւ ուղեկցելու նրան Շրջանային կառավարություն: Կեսօրին ժամը երկուսին մոտ վերադառնալով՝ Սին-վուին այսպես զեկուցեց սյանի նախագահին. «Շրջանային ներկայացուցչին ես ասացի Չժու Յաո-սյանի կասկածելի վարքագծի մասին, թե ինչպես էր նա զանազան ասեկոսներ տարածում հողային բարեփոխման մասին եւ խանգարում մեզ՝ գյուղացիներին: «Խնդրում եմ ուշադիր եղե՞ք նրա հանդեպ եւ մի թողե՞ք որեւէ մեկը երաշխավորի նրան առանց մեր համաձայնության», - ասացի ես» :

Չժու Յաո-սյանի կինն իսկապես կատաղած էր: Ի վերջո նա գտավ գյուղի ութ «բարձր դասի ազնվականի», որ իր համար ինդրագիր գրեւ: Նամակը պատշաճ ձեւով գրված էր, բայց ինչ-որ մեկը պետք է անձամբ այն հանձներ Շրջանային կառավարությանը: Այդ տիպի պարտականությունը բոլոր երաշխավորները հրաժարվեցին կատարել: Ի վերջո դա արեց հիսունամյա Լո Չժաո-ժենը, որն առաջարկեց իր ծառայությունը:

Նա զնաց եւ ետ եկավ, իսկ Չժու Յաո-սյանը դեռ նրա հետ չէր: Գլուխը տխուր շարժելով՝ նա Չժու Յաո-սյանի կնոջն ասաց. «Տա Սաո (մե՞ծ հարս), երաշխավորը պետք է որոշակի որակավորում ունենա: Լավ կանես իմ անունը ջնջես ցուցակից: Ես այդ որակավորումը չունեմ: Ես ժամանակ առ ժամանակ զումար էի տալիս մարդկանց, եւ տոկոսադրույքն ակնհայտորեն մի փոքր շատ էր բարձր: Դեռ չգիտեմ, թե ինչ են անելու գյուղացիներն

ինձ հետ»:

Դրա վրա՝ մյուս յոթը, բնականաբար, նույնպես հրաժարվեցին իրենց աջակցությունից:

Մինչ այդ Չժու Յաո-սյանի կինը մտածեց մշակների և գյուղացիների փոքր խմբի ղեկավար Բեն Սին-վուի մասին, որը փաստորեն ուղեկցեց իր ամուսնուն Շրջանային կառավարություն՝ վերջինիս ծերբակալվելուց հետո: Կինը գնաց նրա տուն և ներս մտնելով՝ անմիջապես ծնկի իջավ այն մարդու առջև, որը նրա համար տարբեր աշխատանքներ էր կատարում նախքան ազատագրությունը: Սին-վուն ոտքի կանգնեցրեց նրան և ասաց. «Այդ մասին պետք է խոսես Դու Յույ-չժենի հետ»:

Այդ երեկո Չժու Յաո-սյանի խնդիրը մանրամասն քննարկվեց մշակների և գյուղացիների փոքր խմբում: Քննարկում էին, թե ինչպես և ինչ պայմաններում նրան երաշխավորեն: Վերջնական կարծիքը հետեյալն էր. նախ՝ վերադարձի ժամանակ Չժու Յաո-սյանը պետք է հրապարակայնորեն ընդունի իր սխալները զանգվածային հավաքի ժամանակ, երկրորդ՝ նա պետք է պարտավորվի երբեք այլևս ասեկոսներ չտարածել կամ որեւէ կերպ չխանգարել հողային բարեփոխման անցկացմանը, և երրորդ՝ պետք է վերադարձնի բերքի այն ամբողջ վարձավճարը, որ խաբեությամբ յուրացրել էր կառավարությունից աշնանային հարկահավաքման ժամանակ: Յույ-չժենն էր, որ առաջ քաշեց այս երեք գաղափարը, և մյուսները համաձայնեցին:

Երեք օր հետո Չժու Յաո-սյանին բաց թողեցին բանտից: Այդ օրերի ընթացքում բավականին խեղճացել էր: Այդ երեկո, հանրային հավաքի ժամանակ, արդեն հնազանդ Չժուն, որը շատ քիչ էր հիշեցնում հին «գիտունին», գյուղացիների առջև ներողություն խնդրեց: Խոստացավ այլևս բամբասանքներ չտարածել և այնպիսի բաներ չասել, որ կվնասեն հողային բարեփոխմանը: Ինչ վերաբերում է իշխանություններին աշնան հարկման ժամանակ խաբելուն, նա ասաց, որ դա ճիշտ է, և որ հանդիպումից անմիջապես հետո ինքը գնալու է սյանի կառավարություն, հայտնելու է ամբողջ ճշմարտությունն ու վերադարձնելու է ամբողջ գումարը, որ պարտք է:

Ըն Մեծ Տան տարրական դպրոցի ուսուցիչ Բեն Գո-չժանը դաս էր պարապում, երբ լսեց, որ ինչ-որ մեկը գոռում է դաստակերտի ներսում. «Բեն Էր-հուին բռնե՛լ են»:

Դասագիրքը ցած գցելով՝ նա դուրս նետվեց սենյակից և շտապեց այն գյուղացու ետևից, որը հայտնում էր լուրը:

«Դա ճիշտ է», - հարցրեց:

ԱՅԱՈ ՑՅԱՆ

«Լրիվ ճիշտ է,- հպարտությամբ ասաց գյուղացին:- Իմ աչքերով տեսա Շիմայի սյանում: Պարաններով կապկաված էր, իսկ Ֆու-չժուանը, որ ետեւից էր գալիս, ծաղրանքով ժպտում էր՝ բերանը մինչեւ ականջները բացած»:

Երբ Բեն Էր-հուին ետ բերեցին Շրջանային կառավարություն, ժողովրդական դատական ատյանի երկրորդ բաժանմունքի ատյանն անմիջապես որոշեց բաց լսում անցկացնել Հոյլունի սյանի կառավարական վարչությունում: Շրջանային կառավարության նախագահ Շաո Յու-չժանը պետք է հանդես գար որպես դատավոր, իսկ ութ գյուղացիներ հրավիրվել էին, որպեսզի ընդգրկվեին ատենակալների կազմում: Նրանց թվում էին Յուե-յանը, Ֆու-չժուանը եւ Լի Չժեն-նանը, որն աշխատել էր Բեն Ին-դինի համար՝ որպես մշակ:

Այդ ընթացքում Հոյլունի սյանի աշխարհագրորդ կարող էր պարծենալ տարրական զենքերի, այն է՝ նիզակների ձեռքբերմամբ: Իսկապես, դրանք պարզունակ զենք էին, բայց խիստ վճռական տրամադրված գյուղացիների ձեռքին դրանց փայլող ծայրերն այդուհանդերձ կարող էին փշաքաղեցնել կալվածատերերին: Աշխարհագրորդի թիկունքում գյուղի ամբոխներն էին:

Հանդիպելով ժողովրդի իշխանության այդ սարսափելի դրսևորմանը՝ երեք կալվածատերերը դիմում էին բոլոր տեսակի խորամանկ հևարքների: Շատ վատ էր, որ ատենակալների մեջ կային մշակներ, որոնք բանել էին իրենց համար, եւ աղախիներ, որոնք տաքացրել էին իրենց ափիոնները եւ դատարկել իրենց գիշերանոթները: Նրանք պարզապես ստիպված էին ընդունել որոշ մեղադրանքներ:

Բեն Ին-դինն, օրինակ, խոստովանեց, որ հավաքել է 80 պարկ պղնձե մետաղադրամ ճապոնացիների համար, քանի որ ինչպե՞ս կարող էր ժխտել այն ամենը, ինչ կվկայեր Լի Չժեն-նանը: Լի Չժեն-նանն ինքը չէր միթե ստիպված եղել մետաղադրամների մի մասը ձեռնասայակով տեղափոխել եւ վարձակալներ գտել, որպեսզի իրեն օգնեն մյուս մասը բարձելու: Մեկ այլ զագրելի հանցագործության համար էլ էր նա մեղադրվում. ճապոնացիներին դողել էր, որ բռնեն նրանց դեմ պայքարող երկու երիտասարդ պարտիզանի: Նա ներկա էր, երբ «Ճապոնական կայսերական բանակի» զինվորները նրանց գլուխները կտրեցին ու զցցեցին գետնին նախնիների տաճարի առջեւ: Իսկ հետո, իր ճապոնացի տերերի հրամանով, նրանց գլուխները կապել էր բամբուկի ձողերին եւ տնկել Յոթ աստղի գամիթափի մոտ գտնվող ամբարտակի վրա՝ ի ցույց բոլորի, մինչեւ որ փտեցին: Վեր-

ջապես Բեն Ին-դինս ստիպված էր եւս մեկ մեղադրանք ընդունել: Նա խոստովանեց, որ «Շրջանակ» կազմակերպության մնացուկներն իրենց շտաբն ունեին իր տանը: Սակայն «անդամները վաղուց էին ցրվել»: Սկզբում նա հերքեց, թե հրազեն ունի, բայց «Շրջանակի» երկու նախկին անդամ մի ատաղձագործ եւ մի շինարար, որ օգնել էին նրան գաղտնի կրկնակի պատ կառուցել, վկայություն տվեցին եւ ամեն բան հայտնեցին: Թաքստոցից հայտնաբերվեցին երկու վեցկրականոց ատրճանակ, մեկ ռետովեր, 500 փամփուշտ եւ ոսկեղենի ու թանկարժեք զարդերի մի մեծ ճամպրուկ:

Իսկ հիմա խոսենք Լո Բեյ-ժունից: Նա խոստովանեց, որ մինչեւ ազատագրումը գյուղում գյուղացիների հանդեպ որոշակի կոպիտ վերաբերմունք ուներ, քանի որ կարծում էր, թե Գոմինդանի բանակում որպես գումարտակի հրամանատար ծառայող իր փեսայի հետ ինքը վախենալու ոչինչ չունի: Հողային բարեփոխման աշխատանքային խմբի ժամանելուց ոչ շատ առաջ նա երկու անգամ այցելել էր Բեն եղբայրներին: Նրա խոսքերով Բեն Էր-հուն քանիցս փորձել է իր միջոցով կապվել Գոմինդանի գումարտակի հետ: Նա խնդրել էր ինչ-որ մեկին փոխանցել հրամանը, բայց ոչինչ դուրս չեկավ, քանի որ ինչպես հետագայում հայտնեցին՝ նրա փեսան ձերբակալվել էր Կանտոնում: Ինչ վերաբերում է ստահող լուրեր տարածելուն, նա խոստովանեց, որ գուցեւ տարածել էր մի քանիսը, բայց ոչ միտումնավոր:

Սկզբում Բեն Էր-հուն ոչ մի մեղադրանք չէր ընդունում եւ իրեն մեղավոր չէր ճանաչում: Ձեռքերը կրծքին խաչած՝ նա մարտահրավեր նետող հանդուգն կեցվածքով ասաց. «Ինձ ասել են, որ ժողովրդական կառավարությունը ողջամիտ է եւ երբեք չի ահաբեկի մարդկանց: Հիմա կտեսնենք»: Ֆու-չժուանի՝ անմիջապես բացահայտած կեղծ գործարքը նրան հանեց հավասարակշռությունից: Վիճակն ավելի վատացավ, երբ պարզվեց, որ նա գրավոր հավաստագիր ուներ՝ Ֆու-չժուանի մատնահետքով, որտեղ ասված էր, որ հողը պետք է վերադարձվի իր նախկին սեփականատիրոջը, եթե Չան Կայ-շին վերադառնա:

Բեն Էր-հուի լեզուն կապվեց: Նախքան կկարողանար ինքնատիրապետումը վերականգնել, այս ու այն կողմից մեկը մյուսի տեսեից սկսեցին մեղադրանքներ հնչել:

Մեկը նրան մեղադրեց գյուղի ավագ եղած ժամանակ հանրային փողերը ամբարտակի նորոգման պատրվակով յուրացնելու մեջ, ինչը ամեն տարի ջրհեղեղների առաջացման պատճառ էր հանդիսացել: Լսվեց նաեւ Լի

ԱՅՊՈ ՑՅՊՆ

տատիկի սրտակեղեք ծայրը. «Իմ Դե-միսը: Ե՛տ տուր իմ որդուն»: Դպրոցի ուսուցիչ Բեն Գուո-չժանը շունչը կտրվելով ասաց. «Բեն Էր-հու, ինչպե՞ս է հայրս մահացել քո ձեռքերում: Մինչեւ ազատագրում չեղավ, հորաքույրս ինձ չասաց, որ դու ես պատասխանատու նրա մահվան համար, բայց ես դեռ մանրամասները չգիտեմ: Ասա՛ ինձ»:

Տաճարում ժամանակավորապես պահվող երեք հանցագործ կալվածատերերից երկուսի ձեռքերն արյունոտ էին: Բեն Ին-դիսը մեղավոր էր օտարերկրյա իմպերիալիստների հետ համագործակցելու եւ հայրենասեր երիտասարդների մահվան պատճառ դառնալու, ինչպես նաեւ բարեփոխման ընթացքում քայքայիչ գործողությունների իրականացման նպատակով զենք թաքցնելու համար: Բեն Էր-հուն սպանել էր հեղափոխականների 1927 թվականի Առաջին հեղափոխական քաղաքացիական պատերազմի ժամանակ: Ճապոնիայի դեմ տարած հաղթանակից հետո նա, բացի Գոմինդանիսն օգնելուց, բազմաթիվ քայքայիչ ու խարդախ գործեր էր կատարել՝ հարկեր գանձելով եւ աշխատունակ տղամարդկանց ուժով հավաքագրելով: Նա նույնպես զենքեր է թաքցրել հողային բարեփոխման ընթացքում եւ ստահող լուրեր տարածել, որպեսզի խափանի հողային բարեփոխումը:

Լո Բեյ-ժունն ավելի լավը չէր, թեեւ մահվան պատճառ չէր դարձել: Որպես բռնակալ կալվածատեր՝ նա գյուղացիների հանդեպ հետեւողականորեն դաժան ու կամայական վերաբերմունք էր դրսևորել եւ սուտ լուրեր տարածելով՝ նույնպես փորձել էր ձախողել հողային բարեփոխումը:

Երեք դատապարտյալների խոստովանությունները եւ Բաժանմունքի դատարանի առաջարկությունները հեռախոսով հաղորդվում էին Շրջանային ժողովրդական դատարանին: Երեկոյան ստացվեց հեռախոսային պատասխանը. «Ինչ վերաբերում է մինչեւ ազատագրությունը Լո Բեյ-ժունի բռնակալական գործողություններին, գյուղացիներն անպայման պետք է այդ հարցը բարձրացնեն, երբ նրա հետ իրենց հաշիվները կմաքրեն: Բայց քանի որ նա հողային բարեփոխման ընթացքում նաեւ սուտ լուրեր է տարածել, պետք է ինչպես հարկն է պատժվի: Հինգ տարվա ազատազրկման դատավճիռը, որը առաջարկում էր Շրջանային կառավարությունը, շատ թեթեւ պատիժ է այդպիսի հանցանքի համար: Որպեսզի այլ կալվածատերերի համար համապատասխան նախազգուշացում լինի, պետք է ավելի երկար պատժաժամկետ տրվի նրան, որի տեւողությունը կախված է լինելու զանգվածների մեղադրանքներից: Ինչ վերաբերում է Բեն եղբայրներին, այս Դատարանը կարծում է, որ Բաժանմունքային դատարանի

առաջարկված մահվան դատավճիռներն արդար են: Այնուամենայնիվ, հանրային դատավարության համար հավաք պետք է անցկացվի նախքան մահապատիժն ի կատար ածելը, որպեսզի բոլոր գյուղացիները իրենց կարծիքը հայտնելու եւ իրենց բողոքներն արտահայտելու հնարավորություն ունենան: Այնուհետեւ նրանց մահապատժի ենթարկեք տեղում, զանգվածների ներկայությամբ, որպեսզի գյուղացիները կարողանան թոթափվել կալվածատերերից ունեցած ահուսարսափի վերջին հետքերից, իսկ մյուս կալվածատերերն այդպիսով ժամանակին զգուշացվեն»:

Դեկտեմբերի 17: Երկինքն ամպամած էր: Հուլունի սյանի դաշտային արահետներում այս ու այնտեղ կարելի էր տեսնել գորշ ֆոնի վրա փողփողացող կարմիր դրոշներ: Գյուղացիները՝ տղամարդ թե կին, կոչնազանգեր ու թմբուկներ զարկելով, մեկ անգամ էլ լցվել էին բաց հանրահավաքի տարածք՝ Նախնիների տաճարի առջեւ: Դարձյալ դարավանդում պատրաստվեց հարթակ, որի դիմաց տեղադրվեցին երկու քառակուսի սեղան: Տաճարի մոտ հորիզոնական մի տախտակ էր կախված, որի վրա գրված էր՝ «Շրջանային ժողովրդական դատարանի երկրորդ բաժանմունքային դատարան. հավաք հասարակական դատավարության համար»:

Ստավորապես ժամը տասին դատավորը, ատենակալների 16 անդամների հետ, քայլեց դեպի հարթակ՝ զանգվածների երկարատեւ, ոգեւորված ծափահարությունների ներքո: Նրան հետեւում էին երկու հոգի՝ դատավարության արձանագրությունը կազմելու համար: Հավաքը բացվեց ազգային հիմնի կատարմամբ, որ երգում էին տարրական դպրոցի բարձր տարիքի աշակերտները: Ապա բոլորը հանեցին իրենց գլխարկները եւ խոնարհվեցին ազգային դրոշին ու Նախագահ Սառյի դիմանկարին:

«Այսօր,- հայտարարեց դատավորը՝ ոտքի կանգնելով,- մենք պատրաստվում ենք դատելու Հուլունի սյանի երեք հանցավոր կալվածատիրոջ»:

Երեք կալանավորները, որ ձեռնաշղթաներով էին, բարձրացան հարթակի առջեւ գտնվող քառակուսի սեղաններին՝ աշխարհագորի ջոկատի եւ Շրջանային կառավարության վեց պահակների աջալուրջ հսկողության ներքո: Պահակները զինված էին հրացաններով կամ վեցկարակալնոց ատրճանակներով... Բեն Ին-դինն ամբողջովին դողում էր, գլուխը ցած էր խոնարհել: Լո Բեյ-ժունը խոր գլուխ տվեց բոլորին, երբ բարձրացավ: Նրա դեմքը գունատ էր: Բեն Էր-հուն ամուր փակել էր բերանը եւ դաժան, չռված աչքերով, անարտահայտիչ հայացքով նայում էր ներքեւում իրար հրմշտող մարդկանց:

«Մենք բռնել ենք այս սրիկաներին,- շարունակեց դատավորը:- Նրանք

ԱՅՈՒ ՑՅԱՆ

չէին կարող փախչել, եթե անգամ թետեր ունենային, այնպես որ՝ այլևս նրանցից վախենալու պատճառ չունեք: Այժմ ժամանակն է, որ ամեն մեկն արտահայտի տարիներով իր սրտում կուտակված ցավն ու բողոքը, բացահայտելով սպանությունն ու խաբեությունը, բռնաբարությունն ու դաժան վերաբերմունքը, ամեն ինչ: Դատապարտյալների հանդեպ այս դատարանի վերջնական դատավճիռը հիմնված կլինի ձեր վկայությունների ու կարծիքների վրա»:

Առաջինը խոսեց հիսնամյա մի կին:

«Իմ անունը Բեն Շու-մին է,- ասաց նա՝ մատներով խաղալով կրծքին փակցված կարմիր տարբերանշանի հետ: Նա Հոյլունի սյանի առաջին կանանցից մեկն էր, որ միացել էր Գյուղացիական ընկերությանը:- Ես Բեն Գո-չժանի հորաքույրն եմ եւ Բեն Էր-հուին մեղադրում եմ իմ երրորդ եղբոր՝ Բեն Գո-չժանի հայր Բեն Ցզյանի անունից:

Հանրապետության 16-րդ տարում (այսինքն՝ 1927-ին. Ցին գահատոհմը տապալվեց եւ Հանրապետությունը հաստատվեց 1911-ին) իմ երրորդ եղբայրը տեղի Գյուղացիական ընկերության փոխնախագահն էր: Հետադիմականների վերադարձի ժամանակ նա ինձ, իր կնոջը եւ իրենց երեքամյա որդի Գո-չժանին տարավ դեպի բլուրները, որտեղ ինքը դարձավ Կարմիր բանակի անդամ: Իմ ծերունի հայրն այդպիսով տանը մենակ մնաց:

Բեն Էր-հուն Գյուղական լուծարային զորաբանակի զինվորների մի խումբ ուներ, որ տեղավորվել էր մեր տանը: Նրանք ձեռքներն ընկած ամեն բան կերան, խմեցին, ապա այրեցին ու ավերեցին: Ավելին, նրանք իմ հորը, որն այն ժամանակ ութսուն տարեկան էր, քարշ տվեցին տաճար, որտեղ նրան զցեցին գետնին, ծեծեցին, ոտքերով հարվածեցին մեջքին ու վրան ման եկան, որպեսզի նա իրենց տա Գյուղացիական ընկերության անդամների ցուցակը: Հորս ողնաշարը կոտրվեց, բայց նա մահացավ ոչ մի ցուցակ էլ չտալով:

Այդ տարվա 12-րդ ամսին եղբայրս մտադրվեց կերպարանափոխված վերադառնալ տուն եւ հոգ տանել հորս մասին՝ լուսնային Նոր տարին անցկացնելու: Նախքան կկարողանար ոտք դնել դաստակերտ, Բեն Էր-հուն բռնեց նրան: Եղբորս մի քանի անգամ դանակահարեցին եւ թողեցին, որ մեռնի: Նրա մահից հետո մենք Լույնիսկ չէինք համարձակվում մարմինը տանել: Ի վերջո ստիպված էինք խնդրել գյուղի մարդկանցից մի քանիսին՝ մարմինը պարկի մեջ դնել եւ հասցնել բլրի ստորոտ, որպեսզի հուղարկավորեինք: Նախքան հողին հանձնելը՝ մի հայացք զցեցի եղբորս վրա: Նրա տասը մատները ծածկված էին կապտուկներով, որ առաջացել էին, երբ

բամբուկի սուր ծողեր էին մտցրել մսի ու եղունգների արանքը, իսկ վերեւի ու ներքեւի բոլոր ատամները թափված էին...»:

Բեն Շու-միևի դեմքը զայրույթից ճերմակել էր: Նա իր մեղադրող մատն ուղղեց դեպի Բեն Էր-հուև: Կարեկցանքի արցունքները հոսում էին մոտակայքում կանգնած աշխարհագրի անդամների այտերն ի վար: Բռունցքները վեր պարզելով՝ ներքեւում հավաքվածները միաձայն զոչեցին. «Կորչե՛ն հետադիմական կալվածատերերը», «Պահանջում ենք գնդակահարե՛լ Բեն Էր-հուևին»:

Ասես հողի մեջ արմատակալած Բեն Շու-միևը փորձում էր շարունակել, բայց չէր կարողանում, կարծես կոկորդիս մի գունդ էր դեմ առել: Վերջապես կարողացավ հետեւյալ բառերն արտաբերել.

«Երբ մի հավ էին անգամ սպանում, մահու չափ վախենում էի: Բայց հիմա զգում եմ, որ կկարողանայի սպանել Բեն Էր-հուևին իմ մերկ ձեռքերով»:

Հաջորդ խոսողը երիտասարդ մի գյուղացի էր: Խոնարհվելով ներկաների առջեւ՝ նա սկսեց.

«Անունս Դյան Ի-չժե է, Դյանցյալունից եմ, Շիցյաո գյուղից: 1939-ին, երբ զոմինդանցիներն ասում էին, թե կհամագործակցեն կոմունիստների հետ, Նոր չորրորդ բանակը շարժվեց հյուսիս ճապոնացիների դեմ պայքարելու՝ թողնելով ժողովրդի կենսապահովման խումբը, որի կապիտանն էր հայրս՝ Դյան Չժի-չժեևը: Խումբը պետք է համախմբեր գյուղացիներին պարտիզանական միավորումներում պայքարելու ճապոնացիների դեմ:

Տեսնելով կազմակերպված եւ զինված մարդկանց՝ Բեն Իև-դիևն սկսեց նյարդայնանալ, անհանգստանալ գյուղի ավագի իր դիրքի համար, եւ Յանգ Սենի (Գոմինդանի գեներալի) մարդկանց մի ամբողջ զորագնդու ուղարկեց, որը մարտի 23-ի գիշերը հարձակվեց խմբի կենտրոնակայանի վրա՝ տանելով մեր յոթ ընկերներին: Հետո նրանք ընկան կապիտանի՝ հորս հետքի վրա, եւ մինչեւ օրս ես այլևս ոչինչ չեմ լսել նրա մասին:

Ճապոնացիների գալով Բեն Էր-հուի կյանքում ոչինչ չփոխվեց: Նա դեռ շարունակում էր գյուղի ավագ լինել եւ ոչ մի վայրկյան աչքը չկտրեց մեր ընտանիքից: Առանց իրեն նեղություն տալու՝ որեւէ պատրվակ հորինել, նա խլեց մեր եզը: Վերջն այնպես եղավ, որ ստիպված էինք փոխել մեր անունները եւ ապրել տևից հեռու: Չեինք համարձակվում ետ գալ, մինչեւ որ ազատագրումը չեղավ: Այդ դավաճան Բեն Էր-հուև միայն ու միայն մահվան է արժանի»:

Ճարճատեցին թղթե դրոշները, եւ հրապարակը դարձավ վեր պարզված բռունցքների մի անտառ: Ամբոխն աղաղակեց. «Կորչի՛ այդ դավա-

ԱՅԱՌ ՑՅԱՆ

ճան կալվածատերը», «Ոչնչացրե՛ք հետադեմ ուժերին», «Կյանք կյանքի դիմաց»:

Ձանգվածային հուզումը շարունակեց աճել, երբ Ֆու-չժուանը եւ Լի տատիկը հայտնեցին իրենց բողոքն ու ցավը: Նրանց հետեւեց երիտասարդ գյուղացի Լո Յուն-Լյանը: Խոր գլուխ տալով՝ նա ներկայացավ եւ ասաց. « Ես կալվածատեր Լո Բեյ-ժունի եղբորորդին եմ: Նախքան Հողային բարեփոխման աշխատանքային խմբի այստեղ գալը Լո Բեյ-ժունն ինձ մի փոքրիկ գործ տվեց՝ Յոթ աստղի զանազանի մոտի խանութը լուսանկարել: «Որպեսզի որոշակի ապացույցներ ունենամ, երբ հանկարծ ունեցածս այրվի», - ասաց: Նա նաեւ իր ճամպրուկներից երկուսը թաքցրեց իմ տան ձեղնահարկում: Նախկինում մտածում էի՝ դե հորեղբայրս է, ի՞նչ կա որ: Համարձակություն չունեի նրան մերժելու: Հիմա գիտակցում եմ՝ նա կալվածատեր է, իսկ ես աղքատ գյուղացի: Նա ամեն ինչ ունի, կուշտ է մշտապես, իսկ իմ ընտանիքը միայն փտած կարտոֆիլով է սնվել: Ես հիմար էի: Ես չեմ կարող տեսնել Նախագահ Մաոյին, եթե անմիջապես սյանի կառավարությանը չհանձնեմ այն երկու ճամպրուկը, որ նա ինդրեց պահել»:

Ամբոխը կրկին միաձայն գոչեց. «Կորչե՛ն հանցագործ կալվածատերերը, որ թաքցնում են ու բազմացնում իրենց ունեցվածքը», «Կեցցե՛ գյուղացիների միասնությունը»: Սկսել էր անձրեւ գալ: Սակայն լարված մթնոլորտը ոչ մի կերպ չէր հանդարտվում: Մի կին արտասովոր պատմում էր, թե ինչպես է Բեն Էր-հուն բռնաբարել իր 14-ամյա դստերը: Հնչող մեղադրանքները պարզապես խլանում էին ամբոխի զայրագին բացականչություններից: Մարդկանց խռպոտած ձայներից ցնցվում էին անգամ կիսաթաց դաշտերը.

«Գնդակահարե՛լ Բեն Էր-հունին»:

«Գնդակահարե՛լ Բեն Ին-դինին»:

«Պատժե՛լ հանցագործ կալվածատեր Լո Բեյ-ժունին»:

«Տուն չե՛նք գնա, քանի դեռ Բեն եղբայրները չեն գնդակահարվել»:

Ժամը չորսին մոտ ավելի քան 20 մարդ հարթակից հնչեցրին իրենց բողոքներն ու մեղադրանքները

Ձանգվածների տրամադրությունը հասել էր եռման աստիճանի: Միաժամանակ տիրեց սպասողական տարօրինակ մի լռություն: Ոչ ոք չհեռացավ կամ ծածկի տակ չմտավ, չնայած ահավոր տառապարարի էր:

Տաճարի ներսում խորհրդակցության համար որոշ ժամանակ առանձնանալուց հետո դատավորը եւ ատենակալները վերադարձան՝ որոտընդոտ ծափահարությունների ներքո:

Սեղանիկներին կանգնած կալանավորների գունատ դեմքերը հակարձ ձգվեցին ու այլայլվեցին: Մի փոքր կողքի թեքվելով՝ նրանք լսողությունները լարեցին, որպեսզի լսեն դատավորի արտաբերած վերջնական դատավճիռը:

«Ընկե՛ր գյուղացիներ:- Դատավորի ձայնն ազդեցիկ էր:- Քիչ առաջ մենք լսեցինք տեղացի գյուղացիների մեղադրանքներից մի քանիսը: Եվ բոլորի համար պետք է պարզ լինի, թե ինչպես է կալվածատերերի դասակարգը պատրաստակամ ծառայել գյուղացիների թշնամու համար, լինեն դրանք ճապոնացիները թե Գոմինդանը, նրանց հետ ձեռք ձեռքի՝ ճնշել է գյուղացիներին: Շահագործելու նույն շարժառիթն է նրանց մղել ստրկահաճորեն հանդես գալ որպես ամերիկյան իմպերիալիզմի սպասավորներ, քանի որ ամերիկյան իմպերիալիզմը նույնպես ուղղակիորեն հակասում է ժողովրդի շահերին:

Մեր դատավճիռները երեք հանցագործ կալվածատերերի նկատմամբ այսպիսին են՝

Լո Բեյ-ժուն, 40 տարեկան, ծնված Սիկու գյուղում, մեղադրվում է ստահող լուրեր տարածելու եւ սեփականություն յուրացնելու համար: Հիմա դրանք հանցագործություններ են, որոնք ժողովուրդը չի հանդուրժի... Նա դեռ հույսեր է կապում Գոմինդանի հետադիմական ուժերի հետ: Մանրակրկիտ քննությունից հետո դատարանը միաձայն որոշեց նրան դատապարտել յոթ տարվա ազատազրկման: Բոլորը համաձայն ենք»:

Ձևացին ուրախացած զանգվածների ծափահարությունները, եւ Լո Բեյ-ժունին աշխարհագորի անդամների ուղեկցությամբ տարան՝ ժամանակավորապես կալանքի տակ պահելու տաճարի ներսում:

«Բեն Ին-դին, 49 տարեկան, ծնված Սիկու գյուղում, Դիմադրության պատերազմի ժամանակ հայրենասեր երիտասարդների մահվան պատճառ է դարձել: Ազատագրությունից հետո կազմակերպել է սնահավատ ու հետամնաց խավերին եւ ստահող լուրեր է տարածել՝ հասարակությանը խաբելու համար: Ինչպես նաեւ հրազեն է թաքցրել՝ ապստամբություն ծրագրավորելու դիտավորությամբ: Դատավճիռն է՝ մահապատիժ: Բոլորը համաձայն ենք»:

Հարթակի ներքեւից հնչող ծափահարությունների ձայնը խլացուցիչ էր:

«Բեն Դյան-պաո, մականունը՝ Բեն Էր-հու, 47 տարեկան, ծնված Սիկու գյուղում, հակակոմունիստական պարտիզանական խմբի եւ 1927 թվականի Առաջին հեղափոխական քաղաքացիական պատերազմի ժամանակ եղել է Գյուղական լուծարային զորաբանակի հրամանատար: Քանիցս ոչն-

ԱՅՊՈ ՑՅՊՆ

չացրել է գյուղացիական կազմակերպությունները եւ ձերբակալել ու սպանել դրանց առաջնորդներին: Ճապոնացիների պարտությունից հետո Լա, որպես գյուղի կեղծ ավագ, փոխարինել է իր եղբորը եւ ջանքեր չի խնայել տղամարդկանց ճնշման ենթարկելու եւ զոռով հավաքագրելու գործում, Գոմիդականի հետադիմականների համար «ներդրումներ» է կորզել ժողովրդի դեմ պատերազմը շարունակելու նպատակով: Բացի այդ, նրան մեղադրանք է առաջադրվել ամբարտակի կառուցման միջոցները յուրացնելու համար, ինչն աղետալի հետեւանքներ է ունեցել՝ մեծապես ազդելով գյուղացիների բարեկեցության վրա: Նրա համար Լույնպես սահմանվում է մահապատիժ: Բոլորը համաձայն են:

Էլ ավելի ուժգին ծափահարություններ հնչեցին: Աշխարհագորայինները բռնեցին իրենց նիզակները՝ ամբողջ սրտով իրենց աջակցությունն արտահայտելու համար, իսկ ձայներն ավելի ու ավելի բարձր հնչեցին: Սարդիկ Լաեւ կարգախոսներ էին բղավում.

«Վերացնել չարագործ կալվածատերերի դասակարգը»:

«Կեցցե՛ ժողովրդական կառավարությունը, որ գյուղացիների կողքին է նրանց պայքարում»:

Ապա Բեն Ին-դինին եւ Բեն Էր-հուին հարթակից տարան աշխարհագորայինների ու պահակների ուղեկցությամբ: Հավաքվածները ճանապարհ տվեցին, որպեսզի նրանք անցնեն:

Մի ձեռքով արտասվալից դեմքը ծածկելով՝ Բեն Ին-դինն շտապեց հեռանալ: Նրա կիսաբաց բերանից ընդհատ-ընդհատ հեծկլտոցի ձայներ էին լսվում: Բեն Էր-հուի դեմքը մոխրադալուկ էր դարձել, իսկ դուրս ցցված աչքերն անշարժ էին եւ արցունքով լի:

Երբ Լի տատիկն իր ոսկրոտ բռունցքը սեղմած ամբոխի միջով ճամփա բացեց եւ փորձում էր զարկել Բեն Էր-հուի ուսին, պահակներն իսկույն կանգնեցրին նրան: Կալանավորների շուրջն արագ ձեւավորվեց պաշտպանիչ արգելապատ, քանի որ բոլոր կողմերից ավելի շատ հարվածներ էին պատրաստվում հասցնել:

Անձրեւն էլ ավելի էր սաստկացել: Տաճարի սահմաններից դուրս շատ ծառեր չկային, որպեսզի հնարավոր լիներ դրանց տակ պատսպարվել: Բայց տղամարդիկ եւ կանայք անընդմեջ հոսքով հետեւում էին նրանց, ասես ուզում էին համոզվել, որ ոչ մի կալանավոր չի փախչի:

Դատապարտյալներին ուղեկցեցին դեպի տաճարի հարավային գերեզմանատուն: Գերեզմանատան մյուս կողմից կրակոցների ձայներ հնչեցին:

Այդ ձայները խոցեցին Հույլունի սյանը պարուրող խոնավ, թանձր մթ-

ևտրորտը:

Լսվեցին նաև թեթևացած հառաչ-հոգոցներ, քանի որ արդարադատությունն ի կատար ածվեց:

«Կորչե՛ն հետադեմ կալվածատերերը»:

«Կեցցե՛ գյուղացիների ազատագրումը»:

«Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը»:

«Կեցցե՛ Լախագահ Սառ Յգե-դունը»:

Չանգվածները, որ առաջին անգամ ազատագրվել էին սարսափից և ճնշվածությունից, այս կարգախոսներն էին արտաբերում էլ ավելի բարձր ու հզոր ձայնով: Նրանց կուրծքը մխրճված թունավոր նիզակը վերջապես դուրս էր հանվել: Վախի անհետացման հետ ազատության մթնոլորտն սկսեց իշխել, և գյուղացիներն սկսեցին շնչել ազատության օդը, որ Լախկի-Լում երբեք չէին շնչել:

5. ԿԱՐՄԻՐ, ԴԵՂԻՆ ԵՎ ՍՊԻՏԱԿ

Մթնշաղին մոտ անծրեն աստիճանաբար դադարեց:

Հաջորդ առավոտ Հոյունի ևոր սյանը դիմավորեց արեւածագը...

Լճակում կանայք լվացք էին անում, քիչ հեռվում տղամարդիկ, մեջքներին կողովներ, խոտ էին քաղում: Ժամանակ առ ժամանակ նրանցից մեկն ուղղում էր մեջքը եւ նայում տաճարից հարավ՝ գերեզմանատան կողմը: «Ուրեմն բռնակալներն էլ են միս ու արյունից, եւ մի քանի փամփուշտով կարելի է ազատվել նրանցից: Բեն Ին-դին, ինչո՞ւ չես գլուխդ վեր բարձրացնում նորից մեզ ահաբեկելու: Իսկ դո՞ւ, Բեն Էր-հու, ո՞ր ես քո հին հայացքները»...

Դեկտեմբերի 18-ն էր, եւ փոխանակ Լու Յանը գնար մարդկանց այցելելու, նրանք էին եկել Լու Յանին տեսնելու...

Լու Յանը շատ էր զբաղված աշխարհագրի անդամների գրանցմամբ:

«Ընկեր Լու,- նրան դիմեց Լի Դա-մինը՝ Լի Այգու մշակներից մեկը:- Խնդրում եմ քոջս անունն էլ գրեք: Մենք կցանկանայինք միասին գիշերային պարեկություն անել»:

«Ընկեր Լու,- սա արդեն Դու Յույ-չժենն էր, որ ևերս խուժեց սեւյակ:- Սկեսուրս ասում է, որ լավ կլինի ես էլ միանամ»: Սկզբում Դու Յույ-չժենն ուզում էր աշխարհագրին անդամագրվել, չնայած սկեսուրը խիստ դեմ էր: Լու Յանը տարիամոզել էր նրան՝ ասելով, որ այդպիսի գերլարված հարաբերությունները միայն ավելի մեծ դժվարություններ կառաջացնի: Նա խորհուրդ էր տվել. «Կգաս, երբ սկեսուրդ միտքը կփոխի»: Հիմա Դու Յույ-չժենը հասել էր իր ուզածին: Նա Լու Յանին հայտնեց նաեւ, որ լուր է ուղարկել իր լաստավար ամուսնուն, որպեսզի վերջինս թողնի իր այդ աշխատանքը եւ վերադառնա՝ իր հողաբաժինն ունենալու համար:

Մին-վուի կինը, որն արդեն ութ ամսական հղի էր, նույնպես ուզում էր անդամագրվել: Լու Յանը գլուխը թափ տվեց:

«Աշխարհագրը շարունակելու է կազմավորվել: Դա միայն մեկ կամ երկու օրվա համար չէ: Հողային բարեփոխումից հետո այն կշարունակի գոյություն ունենալ որպես գյուղացիների սեփական շահերը պաշտպանող կանոնավոր գյուղացիական ռազմական կազմակերպություն: Շատ ժամանակ կա»:

Չժուև-սինը նույնպես միացավ, եւ դա մեծ իրադարձություն էր: Այն օրից, ինչ դարձել էր կանանց փոքր խմբի անդամ, նա համառորեն մերժում էր վերադառնալ Լու Մեծ Տուն: Լու ընտանիքին նա այս ուներ ասելու.

«Ինձ համար՝ երեխա-հարսնացու լինելու մասին խոսք լինել չի կարող: Դուք ուզում եք, որ վճարեմ իմ հինգ տարվա կերածի համար, այնպես չէ՞: Լավ, շատ լավ: Նախ դուք պետք է ինձ վճարեք իմ հինգ տարվա աշխատանքի վարձը: Անցած հինգ տարվա ընթացքում կերակրել եմ խոզերին ու կովերին, օրը երեք ունցիա թել եմ մանել եւ չգիտեմ քանի հարյուր յարդ կտոր եմ գործել ձեզ համար: Վճարեք իմ աշխատանքի վարձը, եւ ես կվճարեմ իմ սննդի գինը»:

Իր այս փայլուն հնարքի համար նա պարտական էր տիկին Բեն Սինվուի խորհուրդներին: Ինչպես եւ շատ կամ քիչ սպասելի էր, Լո ընտանիքն էլ էր դատական հայց ներկայացրել, բայց ավելի լավ մտածեց այդ մասին:

Աշխարհագորի բոլոր անդամները, լինելով գյուղի ակտիվիստները, հազիվ մի գիշեր էր անցել նրանց պարեկությունից, զինվեցին նիզակներով, որպեսզի հսկեին կալվածատերերին: Իսկ ազատ ժամանակ հաճախում էին գիշերային դպրոցներ, որտեղ սովորում էին ինչպես տարբերել դասակարգերը: Դպրոցը, որը հովանավորվում էր սյանի Գյուղացիական ընկերության կողմից, գտնվում էր Լո ընտանիքի տարրական դպրոցում, Լո Մեծ Տանը: Գյուղացի աշակերտներն այդտեղ նստում էին երկար նստարանների վրա, եւ դասարանը հեշտությամբ լցվում էր: Լի տատիկը, Ֆու-չ-ժուանը, Չժուն-սինը, Դու Յու-չժենը, բոլորը կանոնավոր հաճախում էին դասերին եւ հոգով-սրտով նվիրվել էին այդ գործին, որ շատ կարեւոր էր հողային բարեփոխման համար:

Գիշերային դպրոցում Լու Յանը նախ բացատրեց դասակարգային այդ տարբերակման նպատակը՝ հստակ սահմանագիծ դնել գյուղացիների եւ կալվածատերերի միջեւ, բարեկամների եւ թշնամիների միջեւ: Նա ընդգծում էր, թե որքան անհրաժեշտ է դա գյուղական հասարակության հետագա վերափոխման նախապատրաստական աշխատանքների համար: Իսկ թե ինչպես պետք է արվեր փաստացի տարբերակումը, Լու Յանի մոտեցումն էր՝ առաջին հերթին հասնել կարեւոր կետերին եւ խուսափել տեխնիկական մանրամասներից: Օրինակ՝ նա նշում էր, որ հարուստ գյուղացին կալվածատիրոջից տարբերվում է աշխատանքին մասնակցելով, եւ թե ինչպես պետք է մարդը դասակարգվի որպես հարուստ կամ միջին գյուղացի, կախված է այն բանից, թե շահագործումից նրա եկամուտը գերազանցել է արդյոք տարեկան ընդհանուր եկամտի 25 տոկոսը: Միջին գյուղացիները գլխավորապես կախված էին իրենց սեփական ապրուստի համար կատարած աշխատանքից եւ սովորաբար վարձու աշխատանք չէին կատարում: Նրանք, ովքեր միայն թեթեւ շահագործման էին ենթարկվել մյուս-

ԱՅՊՈՑԱՆ

ներին, առանց գերազանցելու 25 տոկոսի սահմանը, պետք է համարվեն ունեւոր միջին գյուղացիներ: Աղքատ էին այն գյուղացիները, որոնք ստիպված էին հող մշակել, ինչպես նաև վաճառել իրենց աշխատուժը: Մշակները հիմնականում չունեին ոչ հող, ոչ էլ հողը մշակող գործիքներ եւ գլխավորապես ապրուստի միջոց էին հայթայթում իրենց աշխատուժը վաճառելով:

Ապա, որպես ուղեկցորդներ ունենալով գյուղի նախագահին եւ Գյուղացիական ընկերության նախագահին, գյուղացիները Սիւլու գյուղի երեք դասակերտներից ընտրեցին մի քանի կալվածատերերի ու հարուստ գյուղացիների եւ քննեցին յուրաքանչյուրի անհատական գործը:

Մինչ գիշերային դպրոցում ուսուցանվում էր դասակարգերի տարբերակումը, մշակների եւ աղքատ գյուղացիների փոքր խմբի անդամներն իրենց սովորածի հիման վրա սկսեցին նախնական դասակարգումներ կատարել: Փոքր խմբի ղեկավար Բեն Սին-վուն բանակից գորացրվելուց անմիջապես հետո քաղաքում անցել էր հողային բարեփոխումների եռամսյա դասընթաց: «Ետեւաբար, նա առաջնորդեց մյուսներին դասակարգումներ կատարելու՝ սկսելով մեծ ընտանիքներից: Այդ ընթացքում նրանք հնարավորություն ունեցան քննելու կալվածատերերին կամ հարուստ գյուղացիներին վերաբերող բոլոր հարակից խնդիրները...

Լո Մեծ Տան բնակիչ մի կին կար, որը վեց տարեկան տղա ուներ: Նրա ամուսնուց, որը նախկինում Գոմինդանի բանակի զումարտակի հրամանատար էր եղել, 1945 թվականից ի վեր լուր չկար: Այդ կնոջ հողն ամբողջությամբ վարձակալվել էր, իսկ նա տոկոսով փող էր տալիս: Ֆու-չժուանը եւ Լի Դա-մինը երկուսն էլ քվեարկեցին, որ նա համարվի կալվածատեր: Սին-վուն ուզում էր իմանալ, թե ինչու, եւ Ֆու-չժուանը պատասխանեց. «Նա երբեք չի աշխատել: Եվ դա ամենը չէ: Մի՞թե նրա ամուսինը չի օգնել մեր դեմ պայքարողներին: Ուրիշ էլ ի՞նչ կարող էր նա լինել, եթե ոչ կալվածատեր»:

Չժուն-սինը, որը Լո Մեծ Տանը երեխա-հարսնացու լինելու փորձ ուներ եւ որակավորվել էր որպես դատավոր, նույն կարծիքն ուներ, եւ հիմնավորեց իր կարծիքը՝ նշելով, որ այդ կինը «դաժան ու նողկալի» էր:

Բարեհոգի Սին-վուն անցավ մանրամասն բացատրության: «Շահագործման աստիճանը,- նշեց նա,- մեր գլխավոր նկատառումը պետք է լինի դասկարգային տարբերակման ժամանակ: Մենք չպետք է շփոթենք դասակարգային կարգավիճակը եւ քաղաքական նախադրյալը: Ինչ վերաբերում է անձնական համակրանք-հակակրանքներին, գործը քննելիս դրանք

չպետք է հիմք հանդիսանալ: Այդ ամենը դեռ չի նշանակում, թե նա հակահեղափոխական է եղել, ինչը կնշանակեր, որ անպայման պետք է ձերբակալվի: Նա իր ընտանիքում աշխատուժ չունի, եւ վարձակալության տրված հողն այնքան էլ մեծ չէ: «Ետեւաբար ճիշտ կլինի, որ դասակարգվի որպես փոքր հողակտորի վարձատու»:

Այս ամենը շարունակվեց շուրջ տասն օր...

Մշակների եւ աղքատ գյուղացիների փոքր խումբը կազմեց տեղական կալվածատերերի եւ հարուստ գյուղացիների նախնական ցուցակը եւ այն ներկայացրեց Գյուղացիական ընկերությանը: Երկու օր քննություն կատարվեց, որպեսզի պարզվի, թե արդյո՞ք հարուստ գյուղացիներից որեւէ մեկը սխալմամբ չի դասակարգվել որպես կալվածատեր: Ապա տեղի ունեցավ դասակարգային տարբերակման առաջին հավաքը, այս անգամ տաճարի ներսում, մեծ սրահում:

Նախորդ օրը բոլոր նրանք, ովքեր դասակարգվել էին որպես կալվածատերեր, Գյուղացիական ընկերության կողմից ծանուցվեցին, որ առավոտյան ժամը 8-ին պետք է գրանցվեն:

Հավաքի վայրը պարզ կահավորված էր քառակուսի սեղանով եւ Նախագահ Մաոյի նկարի տակ տեղադրված մի քանի նստարանով: Մինչ կալվածատերերի գալը՝ դահլիճն արդեն լցվել էր գյուղացիներով: Դու Յուչ-ժենի երբեմնի լաստավար ամուսինը, գրկին մի գեր երեխա, ամբոխի միջով ուրախ ճանապարհ հարթեց՝ դեմքին հեզակական լայն մի ժպիտ: «Էլ երբեք դրսերում չեմ թափառի,- ասաց նա,- երբ կարողանամ տանը մի կտոր հող ձեռք բերել»:

Երբ կալվածատերերը եկան, գյուղացիները տեսան, որ նրանց հետեւում է ժողովրդի աշխարհագորի մի խումբ, այդ թվում Ֆու-չժուանը, Լի Դա-մինը եւ Չժուն-սինը, որոնք զինված էին նիզակներով եւ զգոն ու աչալուրջ էին: Կալվածատերերի մեծ մասը, ընդհակառակը, խղճուկ ու վախեցած տեսք ուներ: Նրանցից ոմանք փոքրիկ բամբուկե զամբյուղներ էին բերել, որոնցում ավազի մեջ վառվող ածուխներ էին՝ ձեռքերը ջերմացնելու համար:

Ութ անց կեսին մոտ գյուղի եւ Գյուղացիական ընկերության նախագահը եւ գյուղի կառավարության քարտուղարը, թղթապանակներով, հաշվառման գրքերով ու թելերի տակ դրած հաշվիչներով, տեղ գրավեցին քառակուսի սեղանի շուրջ, եւ Լու Յանը ոտքի կանգնեց ու կոչ արեց սկսել:

«Մեր Միևու գյուղը,- ասաց նա,- այսօր սկսելու է դասակարգային մեր տարբերակումը: Նախապատրաստման եւ քննարկման համար մենք կես

ԱՅՊՈ ՑՅՊՆ

ամիս ժամանակ ունեինք: Հիմա այստեղ կանգնած մարդկանց մենք համարում ենք կալվածատերեր: Մեր որոշումը բնականաբար հիմնված է անհերքելի փաստացի տվյալների եւ ապացույցների վրա: Մենք կսկսենք այն բանից, որ նրանց կիսողրենք հայտնել իրենց նյութական վիճակի մասին: Նկատի ունեցե՞ք՝ մենք բացարձակ ազնվություն ենք ուզում: Եթե մեկնումեկը կբռնացնի նրանց ստի կամ կեղծիքի վրա, չտատանվեք ասել հենց երեսներին: Իհարկե, նրանք նույնպես իրավունք ունեն իրենց պաշտպանելու, եթե կարծում են, թե մեր որոշումն անարդար է»:

Առաջին կալվածատերը Լի Չժան-չժուն էր, որ ոտքի կանգնեց: Համարվելով կրթված մարդ, քանի որ նորմալ դպրոցական կրթություն էր ստացել Չանշայում, նա մանրակրկիտ ուսումնասիրել էր «Ագրարային բարեփոխման մասին» օրենքի յուրաքանչյուր հոդված, որպեսզի պատրաստ լիներ հենց այս հանդիպմանը...

Իր նյութական վիճակի մասին հակիրճ իրազեկելուց հետո նա արհամարհական մի հայացք գցելով գյուղացիների կողմը՝ ասաց սառցե, հատու տոնով.

«Ինձ կալվածատեր համարեք, եթե ուզում եք: Հիշեք, սակայն, որ ես այն դատարկապորտերից մեկը չեմ, որ հավաքում են ուրիշների ցանած բերքը: Ես նույնպես աշխատել եմ: Դրա համար էլ, եթե օրենքով շարժվեք, ինձ պետք է դասակարգեք որպես հարուստ գյուղացի»:

«Ի՞նչ կերպ ես աշխատել», - հարցրեց Լի Դա-մինը՝ զսպված զայրույթով: Նա հինգ տարի Լի Չժան-չժունի համար մշակ էր աշխատել:

«Երբ դաշտերում եռուն աշխատանք էր, մի՞թե ես էլ չէի անկողնուց ելնում նախքան լույսը բացվելը», - պատասխանեց Լի Չժան-չժուն:

«Իհարկե, - հուզված Լի Դա-մինը վեր կացավ եւ մատը մեկնեց դեպի Լի Չժան-չժուն: - Դու անկողնուց ելնում էիր, որպեսզի ստիպես մեզ՝ մշակներին, աշխատել: Իսկ հետո նորից քնում էիր: Շատ անգամ եմ վեց դույլ ջուր բերելուց հետո լսել, թե ինչպես ես խռմվում»:

«Բայց, - ասաց Լի Չժան-չժուն թույլ ձայնով՝ ինքնավստահությունն արագ կորցնելով: - Ես դաշտ էի իջնում նույնիսկ այն ժամանակ, երբ անձրեւ էր գալիս: Եթե դա աշխատանք չէ, ի՞նչ է հապա»:

«Դեռ լկտիություն ունես հիշատակելո՞ւ այդ մասին, - Լի Դա-մինն աղմուկով թքեց հատակին՝ ցույց տալու համար իր արհամարհանքը: - Երբ եզիպտացորեն էինք կախում, դու ծուկորեն դաշտի արահետում կանգնած՝ մեզ «ուղղություն» էիր ցույց տալիս: Սա՛ է եղել քո արածը: Ուզում էիր, որ լավ աշխատենք: Չէիր ուզում, որ մի հատիկ անգամ կորչեր: Մեր աշխատանքը:

քը պետք է լինի ե՛լ արագ, ե՛լ խնամքով: Հիմա ինձ նայիր: Ես վաղ գարնանն էի դաշտն սկսում վարել, երբ հողը դեռ սառած էր: Ուտքերս ծածկվում էին կտրվածքներով ու կապտուկերով, եւ ցավը, երբ երեկոյան լվանում էի դրանք, ահավոր էր: Հետո ջրանիվն էի պտտում հունիսին՝ կիզիչ արեւի տակ, մինչեւ ուժասպառ էի լինում: Դա էլ չէս հասկանա, թե ինչ է: Աշնանը, երբ խոտ էի բերում, մինչեւ գիշեր զբաղված էի լինում աշխատելով: Իսկ երբ վերջապես փլվում էի չոր խոտի կոյտի վրա, շան պես հոգնած քուն էի մտնում եւ արթնանում էի ու տեսնում, որ ամբողջովին ցողով եմ ծածկված: Սրանք, եւ էլի շատուշատ այլ գործեր, բաներ են, որոնք դու չգիտես: Ես աշխատել եմ հինգ կալվածատիրոջ համար: Բոլորդ էլ հավասարապես վատն եք: Բոլորդ շատ եք ուտում, բայց ծեղ ներդրումն չեք տալիս: Եվ դեռ աշխատանքի մասին ես խոսում»:

Հորեղբայր Գուան-լին՝ Լի Չժան-չժուի ծեր վարձակալներից մեկը, նույնպես չէր կարողանում այլեւս զսպել իրեն: Հուզմունքից դողացող ծայրով նա ասաց. «Ես էլ եմ շատ տուժել Լի Չժան-չժուից: Մի քանի դրու հող էի ընդամենը վարձակալել նրանից, իսկ ի՛նչ վերաբերմունքի հետ ստիպված եղա համակերպվել: Յուրաքանչյուր դրու հողի համար նա պետք է որպես «լրացուցիչ» մի հավ վերցներ: Մի տարի նրա կինն աղջիկ ունեցավ: Նա հիասթափվեց եւ մեղքն ինձ վրա գցեց՝ ասելով, թե դա նրանից է, որ ես իրեն հավեր եմ ուղարկել: Այդ օրվանից նա պարտադրում էր միայն աքաղաղներ ուղարկել: Բայց աքաղաղները ծու չեն ածում: Ուրեմն պարտավոր էինք նրան նաեւ ծու ուղարկել, հարյուրավոր ձվեր:

Երբ վարձավճարը հավաքելու ժամանակն էր լինում, ասում էր, որ հացահատիկի երեք տեսակ կա, որոնցից բացարձակապես հրաժարվում է՝ թաց հացահատիկ, տափակ հացահատիկ եւ կարմրավուն հացահատիկ: Հացահատիկի որակը ստուգելու նրա անփոփոխ կանոնն էր՝ նախ մի բուռ վերցնել եւ շաղ տալ սեղանի վրա: Հետո փչում էր դրանց վրա՝ ինչքան ուժ ուներ: Եթե բրնձահատիկները մնում էին տեղում, գոհ էր լինում: Եթե չէ՝ ասում էր, որ վատն են, չէր ընդունում»:

Երիտասարդ մի գյուղացի վեր կացավ եւ, Լի Չժան-չժուին մատնացույց անելով, ասաց. «Անունս Լի Ժի-չժան է: Ես նրա քրոջ որդին եմ եղել, բայց նա ընտանիքի մեր ճյուղին այնպես էր վերաբերվում, ասես կեղտ լինեիր: Ազատագրումից մեկ տարի առաջ մայրս դեղնախոտ ընկավ, եւ մենք փողի կարիք ունեինք նրան բուժելու համար: Լի Չժան-չժուից 15 արծաթ դոլար պարտք վերցրինք եւ երկու ամիս նրան տոկոսներ էինք վճարում: Հացահատիկն այն ժամանակ էժան էր, եւ նա վարկը հացահատիկով էր հաշվում

ԱՅԱՌ ՑՅԱՆ

ու ասաց, որ դա կանի 20 դան: Չորս ամիս տոկոս չէր ուզում: Ի՛նչ մեծահոգի տեր է, կասե՞ք, չէ՞: Հետո եկավ մի ժամանակ, երբ հացահատիկի գինը բարձրացավ, քանի որ բերքահավաքին քիչ ժամանակ էր մնացել: Եվ դրա համար ևս նորից վարկը փողի վերածեց: Աշևան բերքից հետո նորից այն հացահատիկի վերածեց: Արդյունքն այն եղավ, որ ութ ամիս հետո տեսանք, որ նրան 58 դան հացահատիկ ենք պարտք: Ահա ինչո՛ւ ես ծմուսն հագուստ չունեմ: Ինչ վերաբերում է նրան,- Լի Ժի-չժանը քաշեց-բացեց Լի Չժան-չժուի հագուստը, որպեսզի մարդիկ լավ տեսնեն մորթին,- տեսնում եք ահա աղվեսի մորթուց հագուստը: Ինձ համար մեկ է՝ քեռիս ես, թե ոչ: Սի բան գիտեմ միայն. դու այդ անգույթ կալվածատերերից մեկն ես»:

Տեսնելով, որ սեփական քրոջ որդին այսպես իր դեմ դուրս եկավ, Լի Չժան-չժուի դիմադրողականությունն սկսեց տեղի տալ: Ժամանակ առ ժամանակ փորձում էր մի բառ ասել: «Լավ, լավ: Ինձ կալվածատեր համարեք»: Բայց գյուղացիների մեղադրանքները շարունակվում էին անդադար: Ակնհայտորեն, նրանցից շատերի համար զսպված գայրույթն ու բողոքն արտահայտելը առկազն նույնքան կարեւոր էր, որքան դասակարգային տարբերակումը, հնարավոր է՝ նույնիսկ ավելի շատ: Ուստի, թեեւ կալվածատերերը հերթագրվել էին՝ սպասելով, որ իրենք էլ խոսեն, Լու Յանը գյուղացիների մեղադրանքներն ընդհատելու կամ դադարեցնելու նշաններ ցույց չէր տալիս: Ընդհակառակը, երբ մեղադրանքներ էին հնչում, ևս դրանք գրի էր առնում: Երբ հասնում էր որոշ հանցագործությունների, խոր ատելությամբ լի հայացք էր զցում կալվածատիրոջ կողմը՝ երբեմն անգամ քրթմնջալով՝ «շուն շան որդի» կամ նմանատիպ բառեր: Յուրաքանչյուր մեղադրանքի վերջում ևս շրջվում էր՝ ակնկալիքով նայելով զանգվածներին, կարծես ասելիս լիներ. «Ո՛չ ոք էլ ասելու բան չունի՞: Եկե՞ք ոչինչ չթաքցնենք»:

Ամբոխից հեռու կանգնած էր անսովոր տեսքով մի գյուղացի: Սի ծեռքը կողքին, մյուսը Լի Չժան-չժուի կողմը մեկնելով՝ ևս ասաց. «Ես Սիպուից եմ գալիս, Սյուեհու գյուղից: Մեր տեղը բարձրադիր է, եւ ջրամատակարարումը միշտ դժվարին խնդիր է եղել: Ամեն տարի մենք պետք է անցնենք նրա դաշտերով, որպեսզի գործի զցենք ջրանիվները, եւ փոխարենը նրան պետք է վճարենք օրական յոթ դոու հացահատիկ: Եթե ամռեռն հացահատիկ չի լինում, պետք է նրան վճարենք տարվա երկրորդ կեսին՝ գումարած նաեւ մեկ դան տոկոսը: Դրանից բացի նրա համար պետք է անվճար այնքան ջուր ստանանք, որ բավարարի երեք դոու հողամասի: Եթե մենք դրա համար վճարվեինք, աշխատավարձը կկազմեր մոտ մեկ դան հացահա-

տիկ: 1936 թվականին ևս ավելի քան 100 դան հացահատիկ ստացավ այս սիսեմայով, եւ մի քանի տարում գնեց եւս 20 դանի չափ հողամաս: Մի անգամ, ևախքան ազատագրումը, մեր գյուղը մտածեց նրանից հող գնել: Բայց ևս աչքերը պտտեց եւ ասաց, որ հողն իր ևախնիներից է ստացել, ուրեմն այն սուրբ է: Հարյուր կամ հազար տարի էլ այն մնալու է Լի գերդաստանինը, ասաց»:

Հինգ օր ու գիշեր անդադար մեղադրանքներից եւ պայքարից հետո կազմվեց Սիսլու գյուղի կալվածատերերի առաջին ցուցակը...

Ապա երեք օր տեւեց հարուստ գյուղացիների դասակարգումը:

Երբ կալվածատերերի եւ հարուստ գյուղացիների ցուցակները պատրաստ էին, դրանք հանձնվեցին Գյուղացիական ընկերությանը եւ մշակների ու աղքատ գյուղացիների խմբին՝ վերանայելու: Միայն մեկ սխալ գտնվեց. ունեւոր միջին գյուղացին ընդգրկվել էր հարուստ գյուղացիների ցանկում: Այդ սխալը շատ արագ ուղղվեց:

Այդպիսով, Սիսլու գյուղի բնակչության առաջին «դասակարգային ցուցակը» փակցվեց Բեն գերդաստանի ևախնիների տաճարի պատին: Սպիտակ թղթին կալվածատերերի անուններն էին, իսկ դեղին թղթին՝ հարուստ գյուղացիների անունները:

Երբ դասակարգման գործընթացն անցավ մշակներին, աղքատ գյուղացիներին եւ միջին գյուղացիներին տարբերակելուն, մթնոլորտն ամբողջությամբ փոխվեց...

Բոլոր ներկաներն արդեն թեթեւացած էին, առանց լարումի: Գիտեին, որ յուրայինների մեջ են, որ բոլորն էլ պատկանում էին շահագործված դասակարգին, որը ճզմվել է ֆեոդալական հասարակության աղացի քարի տակ...

Նախ սկսեցին նրանցից, որոնց կյանքը համեմատաբար քիչ դառն էր եղել, այսինքն՝ միջին գյուղացիներից: Բնականաբար, այդ խմբում հայտնվողները փորձում էին ավելի ցածրերի ցուցակում հայտնվել: Հորեղբայր Գուան-լինը համարվել էր «վարձակալ-միջին գյուղացի»: Թեւեւ նրա հողը վարձակալվել էր Լի Չժան-չժուից, եւ ևս ինքն էր աշխատել, այդուհանդերձ ևս հողագործական գործիքներ ուներ եւ երբեք ստիպված չէր եղել վաճառելու իր աշխատուժը: Ընդհանուր առմամբ, նրա կյանքն այնքան էլ դժվարին չէր եղել: Բայց եւայնպէս, ևս դժգոհ էր եւ մորուքը շոյելով քրթմնջում էր. «Ինչո՞ւ չեմ կարող դասակարգվել որպէս աղքատ գյուղացի: Մի՞թե սեփական հողակտոր ունեմ: Բոլորի պէս ես էլ չե՞մ տարեկան վարձ վճարել կալվածատիրոջը»:

ԱՅԱՌ ՑՅԱՆ

Լու Յանը շտապ բացատրեց. «Նախկինում հողը քունը չէր: Հողային բարեփոխումից հետո դու քո սեփական հողը կունենաս»: Ապա ավելացրեց՝ միջին գյուղացիներին հանգստացնելու համար. «Դասակարգային տարբերակման գլխավոր նպատակը կալվածատերերից մեզ բաժանող սահման գծելն է: Բոլոր գյուղացիներս մեկ խմբում ենք: Բոլորս մեր գյուղի տերերն ենք: Այսօրվա մշակներն ու աղքատ գյուղացիները շուտով նույնպես կդառնան միջին գյուղացիներ, քանի որ իրենց սեփական հողն ունենալուց հետո նրանց հարստությունը կավելանա»:

Մշակների եւ աղքատ գյուղացիների դասակարգումը նույնպես հիմնված էր յուրաքանչյուրի նյութական պայմանների մասին տեղեկություն ստանալու վրա:

Քանիցս մտաբերվում էին ողբերգական դեպքեր: Լի տատիկը հեկեկաց, երբ արտաբերեց «ոչ մի աշխատուժ» բառերը, որոնք դարձյալ հիշեցրին նրան իր վաղուց կորած որդու մասին: Երբ պատմում էր, թե ինչպես է Չժուն-սինին մուրացկանության համար իր հետ շրջագայության տարել, հանկարծ ջղածիգ ցնցման մեջ ընկավ: Բերանը լայն բացած եւ սեւեռուն աչքերը չռած՝ նա երկար ժամանակ կանգնած էր անխոս: Չժուն-սինը բացատրեց պատճառը. «Մի օր կալվածատերերից մեկը մոնղոլական մի մեծ շուն բաց թողեց մեզ վրա, որը կծեց մորս կոնքը: Դեռ միևնչյե հիմա մեծ սպի կա այդտեղ»:

Յոթ աստղի գառիթափի մոտ գտնվող փողոցի՝ փայլաթիթեղ, խունկ ու մոմ արտադրողները խնդրում էին իրենց էլ աղքատ գյուղացի համարել: Թվում էր՝ ազատագրումից հետո նրանց գործը կտրուկ անկում է ապրել: Հողային բարեփոխումից հետո, ասում էին նրանք, գյուղացիների կոլտուրական մակարդակը կբարձրանա, եւ ոչ ոք այլևս չի ուզի գնել սնահավատության այդ պարագաները: Հետեւաբար, իրենց առեւտուրն էլ դատապարտված էր վերանալու: Նրանց թվում էր, թե հողային բարեփոխումն իրենց քաղաքավարի ու մեղմ «դուրս» է հրավիրում, եւ ցանկություն էին հայտնում թողնել իրենց առեւտուրն ու դառնալ գյուղացի: Լու Յանը պատասխանեց, որ նրանք դեռ արհեստավորներ են իրենց դասակարգային կարգավիճակով, սակայն հողահատկացման ժամանակ նրանց խնդիրն էլ անպայման հաշվի կառնեն:

Երբ ամբողջն ավարտվեց, մի թղթապանակ, բոլոր անհրաժեշտ տեղեկություններով՝ անուն, տարիք, սեփական հողակտոր եւ հողագործական գործիքներ, այլոց շահագործելու կամ շահագործված լինելու հանգամանք,- ներկայացվեց սյանի կառավարությանը եւ սյանի Գյուղացիական

ընկերությանը՝ վերանայման եւ վավերացման համար:

Արդյունքում որոշ գյուղացիների կարգավիճակը փոխվեց...

Սինլու գյուղի երկրորդ դասակարգման ցուցակը կարմիր թղթի վրա էր: Այն փակցվեց առաջին ցուցակից հետո: Դրա վրա գրված էին բոլոր մշակների, աղքատ գյուղացիների եւ միջին գյուղացիների անունները: Գյուղի բոլոր գյուղացիները, երեխաների եւ ծերերի հետ միասին, առաջ նետվեցին՝ «ցուցակին նայելու»...

Ամբոխի մեջ էին Ֆու-չժուանը եւ Չժու-սինը՝ սիզակներին կարմիր փնջիկներ կապած: Երկուսն էլ գիշերային դպրոց էին հաճախել, այնպես որ կարող էին իրենց անունները կարդալ...

«Ուրախ չե՛ս, Ֆու-չժուան,- հարցրեց Չժու-սինը,- որ քեզ մշակ են համարել»:

«Ե՛ս,- Ֆու-չժուանը նորից նայեց ցուցակին:- Դա միակ բանը չէ, որի համար ուրախ եմ ինձ զգում»:

Սին-վու, որ օգնում էր մարդկանց իրենց անունները կարդալ, շրջվեց այդ խոսքի վրա:

«Ուրիշ էլ ինչի՞ համար ես ուրախ, Ֆու-չժուան»:

Պատին փակցված ցուցակը մատնանշելով՝ Ֆու-չժուանը պատասխանեց. «Ուրախ եմ, որովհետեւ շատերս ենք կարմիր ցուցակի վրա»:

Սին-վու գլխով արեց. «Ճիշտ է: Ամեն մեկը պետք է հաշվի առնի այն փաստը, որ մենք շատ ենք, եւ մեր սրտերը մեկ են: Բացի այդ՝ մեր առաջնորդներն են Նախագահ Մաոն եւ Կոմունիստական կուսակցությունը: Երբեք, էլ երբե՛ք կալվածատերերը չեն կարողանա վերականգնել իրենց հին դիրքը»:

Հաջորդ օրը Լու Յանը եւ Գյուղացիական ընկերության պատասխանատու ղեկավարը բոլոր կալվածատերերին տաճար կանչեցին խոսելու համար: Նրանց հայտնեցին, որ եթե կարծում են, թե իրենց անարդար են դասակարգել որպես կալվածատերերի, ապա կարող են բողոքարկել Շրջանի ժողովրդական դատարանին հաջորդ 15 օրվա ընթացքում: Այնուհետեւ նրանց ասացին, որ երրորդ ցուցակից հետո, որը պետք է լինի վերջնական, կալվածատերերը պետք է վերադարձնեն իրենց ամբողջ հողը, գյուղատնտեսական միջոցներն ու տեխնիկան, ավելցուկային տները եւ սևնդամբերքը: Հողը վարձակալած գյուղացիների կողմից կանխավճար տրված գումարը պետք է վերադարձվեր: Գյուղացիների՝ մինչեւ ազատագրումը կալվածատերերին ունեցած բոլոր պարտքերը պետք է վերացվեին: Այն դեպքում, երբ կալվածատերը հող կամ բեռնակիր անասուն էր վաճառել ուրիշ-

ԱՅԱՌ ՑՅԱՆ

ներին՝ ազատագրումից հետո, պետք է կամ փորձի ետ ստանալ, կամ վճարել դրանց համարժեք կանխիկ գինը...

Հաջորդը հրավիրվեցին հարուստ գյուղացիները: Նրանց նույնպես ասացին, որ կարող են բողոքարկել՝ ժողովրդական դատարանին դիմելով: Հետո Լու Յանը քանիցս կրկնեց հարուստ գյուղացիական տնտեսությունը պահպանելու կառավարության քաղաքականության մասին՝ հավելելով, որ վարձակալության տված նրանց հողը պիտի բռնագրավվի, իսկ իրենց մշակած հողը եւ սեփականությունը մնալու են անձեռնմխելի: Ի վերջո Լու Յանը կոչ արեց նրանց աշխատել արտադրության մեջ եւ ասեկոսներին ականջ չդնել: «Դուք կարող եք ապավինել ժողովրդի կառավարությանը, - ասաց նա,- որը երբեք իր խոսքից ետ չի կանգնում»:

Սիկու գյուղի դասակարգային տարբերակման փաստաթղթերի ամբողջական թղթապանակը կազմվեց եւ ի մի բերվեց գյուղի նախագահ Բեն Յույ-չժանի կողմից եւ ուղարկվեց Շրջանային կառավարություն...

Վերջնական ցուցակը Շրջանային կառավարությունը պատշաճ կերպով վավերացրեց եւ ետ ուղարկեց՝ փակցնելու...

Նշանավոր օր էր... Կարգախոսներ էին ամենուր՝ «Ընդմիջտ Կոմունիստական կուսակցության հետ», «Կեցցե՛ գյուղացիների միասնությունը», «Տնչե՛նք Ֆեոդալ կալվածատերերի դասակարգը»: Ամեն մեկը Սիկու գյուղում դուրս էր ելել՝ հաճախելու հանրահավաքին եւ կարդալու վերջին որոշումը՝ իր դասակարգային կարգավիճակի մասին, որն իր հերթին որոշելու էր նրա տնտեսական եւ քաղաքական կարգավիճակը:

Ամպամած օր էր: Երբեմն ձյան սպիտակ փաթիլներ էին երեւում: Լի Չժաո-չժուն կանգնած դողում էր, երբ իր անունը կարդաց սպիտակ ցուցակում՝ կալվածատերերի ցուցակում: Հագին միայն պատառոտված մի բաճկոն էր եւ ճմոթված գլխարկ էր գլխին, որը քաշել էր ցած՝ մինչեւ հոնքերը: Նա չէր համարձակվում այնպես հագնվել, որ մարդիկ դարձյալ մատնացույց անեին իր մորթե հագուստը: Նրա ետեւում մի քանի այլ կալվածատերեր էին կանգնած: Բոլորն էլ՝ ճնշված, զգուշավոր, հոնքերը կիտած եւ գլխահակ:

Հարուստ գյուղացիներն այլ կերպ էին: Նրանց քանակն էլ քիչ էր: Չժու Յաո-սյանն այդտեղ էր՝ գլխին մի տաք գլխարկ, որի միջից միայն աչքերն ու քիթն էին երեւում: Վզին բրդե շարֆ էր, եւ հանգիստ տեսք ուներ: Մյուսներն էլ հանգիստ իրենց ծխամորճերն էին ծխում...

Մշակների, աղքատ գյուղացիների եւ միջին գյուղացիների երկար, աշխույժ ու ցնձացող խումբը հանրահավաքի վայր մտավ միասին, շարքե-

րով:

Առջեւից գալիս Էր Լի Դա-մինը՝ բերելով մի մեծ կարմիր դրոշ, որի վրա գրված էր՝ «Հոլլոնի սյանի Գյուղացիական ընկերության առաջին բաժանմունք»: Նրա ետեւից թմբուկներով ու կոչնազանգերով մարդիկ էին եւ աշխարհագորի շարքեր՝ զինված փայլուն սիզակներով: Ապա հետեւում էին կանայք, երիտասարդներն ու երեխաները, որոնք բոլորը հակաֆեոդալական կարգախոսներ կրող դրոշներ էին թափահարում: Մի ակնթարթում ամբողջ տարածքը մարդկանցով լցվեց, իսկ շարժվող թափորի վերջը դեռ չէր երեւում: Սակավաթիվ կալվածատերերին ու հարուստ գյուղացիներին խնդրեցին մի կողմ քաշվել եւ նրանց համար տեղ բացել: Բայց գյուղացիների մի մասն այդուհանդերձ հանրահավաքի վայրից դուրս մնաց:

Պետական օրհներգից հետո խոսեց ընկեր Չժաո Յզե-մինը. «Ի՛նչի համար է ի վերջո հողային բարեփոխումը: Վերացնելու այն բոլոր արտոնությունները, որ այս մի բուռ մարդիկ,- նա մատնացույց արեց կալվածատերերին,- ստանձնել են, որպեսզի շահագործեն ձեզ բոլորիդ»: Եվ նա ձեռքի շարժումով հավաքվածների բազմությունը ցույց տվեց: «Քանի դեռ գյուղացիների ուժեղ խումբը մնում է կազմակերպված եւ արտադրությամբ, կրթությամբ ու ինքնապաշտպանությամբ սերտորեն միավորված, ոչ մի կասկած չկա, որ մենք կկարողանանք արմատախիլ անել ֆեոդալիզմի վերջին մնացուկները ... »:

6. ՓՈԹՈՐԿԻՑ ՀԵՏՈ ՊԱՅԾԱՌ ԵՂԱՆԱԿ

Պասակարգերի վերջնական տարբերակումից մի քանի օր անց Հոյլունի սյանի գյուղացիները հրաժեշտ տվեցին 1950 թվականին: Սովորաբար արեւային նոր տարվա հանդեպ նրանք բացարձակ անտարբեր էին եղել, բայց այս տարի գարնանային պարուրազարդեր էին փակցվել դռներին, եւ մշակներն ու աղքատ գյուղացիները համատեղ հսկայական մի հավաք էին կազմակերպել: Այո, 1950-ն աննախադեպ մի տարի էր, մի տարի, որը գյուղացիները կհիշեն սերունդների համար:

Հավաքի ժամանակ էր, որ քննարկվեց Գյուղացիական ընկերության վերակազմակերպման խնդիրը:

Քննվում էր, թե ազատագրումից հետո որքանով են կարողացել գյուղացիները դառնալ իրենց գլխի տերը: Արդյո՞ք ամբողջովին վերացվել է կալվածատերերի դասակարգի ազդեցությունը: Ինքը՝ ընկերությունը, բավականաչափ ուժե՞ղ է: Կա՞ն, արդյոք ընկերությունից դուրս մարդիկ, որ պետք է ներգրավվեն: Մյուս կողմից տեսնում էին՝ արդյո՞ք անպատասխանատու եւ անգործ մարդիկ, որ թաքուն համակրանք են ունեցել կալվածատերերի նկատմամբ, չեն ներթափանցել կազմակերպություն: Ղեկավարների հարցն էր քննվելու, կադրերի ակտիվ լինելու հարցը նույնպես: Արդյո՞ք հաստատուն են իրենց պայքարում: Արդյո՞ք եղել են եսասիրության կամ կալվածատերերի պաշտպանության դեպքեր: Այդպիսի մանրակրկիտ քննությունը հրաշալի հիմք էր դնում ներկայացուցիչների ընտրության համար:

Հոյլունի սյանի Գյուղացիական ընկերությունը բաժանվեց ինը «մեծ խմբի»՝ ամեն մեկը կենտրոնացած մեկ գյուղում: Երեք մեծ խումբը ձեւավորում էին մեկ «ստորաբաժանում»: Յուրաքանչյուր մեծ խումբ իր հերթին բաժանվում էր փոքր խմբերի՝ ըստ աշխարհագրության, սովորույթների եւ աշխատանքի բնույթի: Հոյլունի սյանն, օրինակ, ուներ չորս փոքր խումբ: Յուրաքանչյուր փոքր խումբ կարող էր Գյուղացիական ընկերության երեք ներկայացուցիչ անուն տալ, որոնցից մեկը պետք է լիներ կին: Վերջնարդյունքում ամբողջ գյուղի Գյուղացիական ընկերության ներկայացուցիչները պետք է լինեին ոչ պակաս, քան երկու երրորդով՝ մշակներից եւ աղքատ գյուղացիներից բաղկացած մեծամասնություն: Պա նշանակում է, որ միջին գյուղացիների թիվը չպետք է գերազանցեր ընդհանուրի մեկ երրորդը:

Նախքան ընտրությունների սկսվելը Լու Յանն ընդգծեց հետևյալ հատ-

կանիչները, որ պետք է ունենային բոլոր թեկնածուները. մաքուր գրանցում, ազնվություն, ջանասիրություն, աշխատանքի մեջ ակտիվություն և պայքարում հաստատակամություն, ինչպես նաև անաչառություն՝ որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր թեկնածու պետք է հրապարակային ինքնաքննադատություն ներկայացնի ընտրություններից առաջ, և ապա գյուղացիները կարող են հայտնել իրենց կարծիքը...

Ընտրվեցին 12 ներկայացուցիչներ, իսկ նախագահ ընտրվեց Բեն Սինվուն, որը հրապարակայնորեն ճանաչվեց մարտնչող, քաղաքականապես զարգացած և բանիմաց կրթված... Նա ղեկավարելու էր չորս բաժին՝ աշխարհագոր, կազմակերպություն, մշակույթ ու հրապարակայնություն և կանանց խումբ: Ստեղծվեց նաև ժամանակավոր՝ «Վերագրանցման, բռնագրավման, պահառության և բաշխման կոմիտե»՝ հողային բարեփոխման իրականացմանը նպաստելու համար:

Սանրազնիս այս գործընթացից հետո Սինլու գյուղի Գյուղացիական ընկերությունը հանդես եկավ որպես նոր մարմին՝ ընտրված և որոշակի պարտականություններ ստանձնած բոլոր ակտիվիստներով: Լո Մեծ Տնից Լո Շու-մինը, որը միաժամանակ ղեկավարում էր կանանց փոքր խումբը, և Բեն Գո-չժանը՝ Լո տարրական դպրոցի ուսուցիչը, երկուսն էլ հայտնվեցին վերագրանցման բաժնում: Ֆու-չժուանը և Չժուն-սինը բռնագրավման բաժնում էին, իսկ Լի Դա-մինին և Յուե-յանին վստահվեցին տեղափոխման և փոխադրելու բաժինները: Որպես կանոն՝ յուրաքանչյուր ստորաբաժանում ուներ չորս մարդ: Բաշխման ստորաբաժանումը, սակայն, կարող էր ունենալ 16-ը՝ յոթ մշակ, հինգ աղքատ գյուղացի և չորս միջին գյուղացի, որոնք բոլորն էլ ընտրվել էին փոքր խմբերից, քանի որ բաշխումը հողային բարեփոխման ամենադժվարին և բարդ գործընթացն է...

Գյուղացիների նոր ուժեղացված խմբի լիարժեք աջակցությամբ, այդպիսով, Հույունի սյանում հողային բարեփոխման աշխատանքներն առաջ էին գնում: Գյուղացիների վերջնական գրոհին հանդիպելով՝ կալվածատերերը, չնայած զրկված էին իրենց հին փառք ու հեղինակությունից, այդուհանդերձ չէին ուզում հնազանդորեն տեղի տալ...

Գրեթե բոլոր կալվածատերերը փորձում էին խորամանկ հնարքներ բանեցնել՝ դիտավորությամբ որոշակի վնասներ հասցնելուց բացի... Բայց և պատասխանատվության էին ենթարկվում...

Կալվածատեր Լո Բեյ-ժունի եղբորորդի Լո Մեյ-սյունի տուն գնալուց առաջ Ֆու-չժուանը նախ այցելեց Յոթ աստղի գառիթափ և հանդիպեց ատաղձագործ Լյաո Սանին: Վերջինս նրան արժեքավոր տեղեկություն

ԱՅՈՒՆ ԳՅՈՒՆ

տվեց: Երեւում էր, որ Լոն նրան պատվիրել էր իր համար երկու դագաղ պատրաստել, ինչպես նաեւ՝ կրկնակի պատ: Այս տեղեկություններով նրանք մտան Լոյի տուն: Համաձայն մանրակրկիտ ծրագրի՝ բռնագրավող խմբի ներկայացուցիչները բաժանվեցին մասերի: Ոմանք դրսում պահակ կանգնեցին: Ոմանք խուզարկեցին սենյակները, ոմանք էլ գույքագրեցին տարբեր իրեր: Չժուռ-սիւնիս հանձնարարվել էր Լո Մեն-սյունի կնոջից ստիպողաբար ստանալ ամուսնու սեփականության իրավունքի փաստաթղթերը:

Գործն արվեց, եւ գործիքները, տեխնիկան ու կենդանիները ճշգրիտ գույքագրվեցին: Ապա, ձեռքերը կողքերին դնելով, Ֆու-չժուանը հարցրեց Լո Մեն-սյունին. «Ուրիշ էլ ի՞նչ կա»:

«Վերցրել եք համարյա ամեն ինչ, որ նախնիներս թողել են ինձ: Դեռ դժգոհ եմ», - փնթփնթաց կալվածատերը: Ապա ցույց տալով կնոջ գրկի երեխային՝ ավելացրեց. «Երդվում եմ նրանով՝ իմ միակ թանկ ու հարազատ ժառանգով, որ իմ ամբողջ ունեցվածքն այստեղ ձեր առջեւ է»:

«Շատ լավ», - ասաց Ֆու-չժուանը՝ թեթեւակի գլխով անելով աշխարհագորի անդամներին: Վերջիններս ուղիղ գնացին դեպի տան անկյունում գտնվող հավի թառը: Լո Մեն-սյունի դեմքը զուլատվեց, երբ տեսավ, որ թառը մի կողմ են քաշում: Հետո բակում հնչեց Ֆու-չժուանի բերած քլունգի ձայնը: Կալվածատիրոջ ընտանիքը ցնցվեց, իսկ աշխարհագորայինները, սիզակներին հենված, ապշած հայացքները հառել էին պատին: Աղյուսներից մի քանիսն ամրացված չէին, իսկ դրանց ետեւում տախտակ էր երեւում: Երբ այն ջարդելով բացեցին, վերջապես երեւաց փայտե հսկա սև-դուրյի վրա ամրացված մի կախովի փայլուն կողպեք...

Այդ ճգնաժամային շրջանում էր, որ Սինլու գյուղի բնակիչները գնացին Շիցզյաո գյուղ՝ ցուցմունքներ տալու հրապարակային դատաքննության համար: Կային որոշակի բարդություններ, քանի որ այդ գյուղի հետամնաց գյուղացիներից ոմանք թշնամացել էին իրար հետ՝ դասակարգային տարբերակման հետեւանքով առաջացած փոքրիկ թյուրիմացության պատճառով: Մի խումբը՝ Յույ դաստակերտից, մեղադրել էր մեկ այլ խմբի՝ Յզեն դաստակերտից, իրենց կալվածատիրոջ՝ Յզեն Գուան-վենի դեմ պայքարում չափազանց մեղմ լինելու համար: Խոսվում էր նաեւ այն ազդեցության մասին, որ իրենց հավելյալ սննդամթերքի համար ոսկով վճարելիս, Յզեն Գուան-վենին եւ Յույ դաստակերտի կալվածատեր Յույ Յզի-վենին անհավասար վերաբերմունք է ցուցաբերվել... Իրականում այդ ամենը սուտ էր, որ ծածուկ ինչ-որ մեկի կողմից էր հորինվել՝ վնաս տալու նպատակով:

Դրա համար էլ, երբ Երրորդ ստորաբաժանմանը պատկանող երեք գյուղերը միասնական հանրահավաք անցկացրեցին կալվածատեր Յույ Յզի-վե-նի դեմ պայքարելու, Յույ Դաստակերտից մի դատարկապորտ, Յույ Ֆենց-զին անունով, հանկարծ ոտքի կանգնեց և բղավեց. «Յզենի մարդիկ անարդար են: Ինչո՞ւ նրանք նույնքան եռանդով չէին պայքարում իրենց սեփական կալվածատիրոջ դեմ»: Սթնոլորտն իսկույն լարվեց, և մի կարճ ժամանակահատված անորոշ ու չարագույժ վիճակ էր, թե գյուղացիները կմոռանան իրենց իսկական թշնամուն, այն է՝ կալվածատեր Յույ Յզի-վե-նին, որն ինքնագոհ կանգնած էր հարթակի դիմաց և սպասում էր մեղադրանքի, ու կվերադառնան ընտանեկան թշնամանքի իրենց հին սովորույթին: Բարեբախտաբար, Երրորդ ստորաբաժանման նախագահը բավարար չափով խելք ուներ: Սթնոլորտը խիստ լարված էր: Նա կարգադրեց, որ հավաքը հետաձգվի, քանի որ «մենք բավականաչափ պատրաստված չենք»: Հավաքից հետո մանրակրկիտ քննությունը բացահայտեց, որ Յույ Յզի-վենն իսկական քաղաքական ինտրիգան է: Այդ նա էր, որ կաշառել էր դատարկապորտին, որպեսզի վերջինս դուրս գա և իրարանցում ստեղծի, նախընտրելի կլինե՞ր՝ զինված բախում:

Յույ Յզի-վենը դատապարտվեց գնդակահարության և տեղում մահապատժի ենթարկվեց: Դա կարելու դաս էր Սինլու գյուղի գյուղացիների համար, որոնք այդպիսով սովորեցին առավել զգոն լինել: Հետեւաբար, երբ Լի Չժաո-չժուն փորձեց դուր գալ Լի Դա-մինին, հաճոյանալու համար ասելով. «Դա-մին, ներողություն եմ խնդրում, որ նախկինում քո հանդեպ շատ վատ վերաբերմունք եմ ունեցել: Հույս ունեմ՝ երբ հողը բաշխվի, կթողնեք Սիբինի մոտ գտնվող բերրի, բարձրադիր, լճակի մոտի իմ հողակտորը», Դա-մինն անմիջապես լարվեց, և շրջվեց դեպի Լի Չժաո-չժուն. «Հողի բաշխումը մեր՝ գյուղացիներիս գործն է: Կարիք չկա, որ դու խառնվես: Թող Յույ Յզի-վենի վախճանն օրինակ լինի քեզ, եթե դու էլ ես մտածում մեզ պառակտելու մասին»:

Սինլու գյուղի գույքագրման ամբողջական ցուցակը կազմվեց ու ստուգվեց բռնագրավման բաժնի կողմից և հանձնվեց համապատասխան մարդկանց: Այնուհետև Լի Դա-մինը և Յույ-յանն ու մյուսները պետք է տեսնեին տեղափոխումը: Գյուղատնտեսական պարագաները և սևնդամթերքը կենտրոնացած էին տարբեր դաստակերտներում, որտեղ կալվածատերերից բռնագրավված մի քանի սենյակ հատուկ առանձնացված էին դրանք պահելու համար: Բեռնակիր կենդանիները ժամանակավորապես պահվում էին անհատ գյուղացիների կողմից, ապահովելու

ԱՅՈՒ ՑՅԱՆ

դրանց անվտանգությունը: Այնուհետև ամբողջական գույքագրումը, մանրամասն բացատրություններով, թե որտեղ ինչ է պահվում, հանձնվեց բաշխման բաժին՝ ընդհանուր հաշվարկի համար:

Որոշ կալվածատերեր առաջարկեցին սննդամթերքի փոխարեն վճարել այլ «շարժական գույքով»: Ընկերությունը նրանց թույլ տվեց դա անել, եւ կարճ ժամանակում Բեն գերդաստանի նախնիների տաճարը վերածվեց յուրօրինակ մի հանրախանութի, ուր ինչ ասես որ չկար... Նայելով եղածին՝ Սին-վուն հեզնական մեկնաբանություն արեց՝ ցուցահանդեսի համար բավականաչափ կյուրթեր կան, որոնք ցույց են տալիս «թե կալվածատերերն ինչպես են ապրել»:

Առաջին աշխատանքը, որով զբաղված էր բաշխիչ բաժինը, «սեւ հողերի» (թաքցրած հողերի) հայտնաբերումն էր... Ինչ վերաբերում է կալվածատերերին, ապա դասակարգային տարբերակման ժամանակ նրանց ունեցվածքն ամբողջությամբ բացահայտվել էր: Այդտեղ գրեթե ոչ մի խնդիր չկար: Բայց որոշ միջին գյուղացիներ, հատկապես հողի վարձակալ միջին գյուղացիները, դեռեւս դժվարությամբ էին ենթարկվում: Այդ պատճառով էր, որ Լու Յանը որոշեց ոչ պաշտոնական կոնֆերանս հրավիրել վարձակալ միջին գյուղացիների համար:

«Հողի բարեփոխման մասին եք խոսում: Այն ինձ թողեց ավելի վատ վիճակում, քան նախկինում էր,- տրտնջում էր հորեղբայր Գուան-լինը:- Նրանք բաժանում են իմ հողը եւ պայքարում են իմ դեմ»:

Հորեղբայր Գուան-լինն ամենեւին միակ մարդը չէր, որ այդպես էր տրամադրված: Վարձակալներից մի քանիսը, որոնք իրենց դրսևորել էին որպես անսովոր քաջության տեր մարդիկ եւ ակտիվ պայքար էին մղել կալվածատերերի դեմ, նույնպես սկսեցին նեղվել ու վրդովվել, երբ տեսան, որ տարիներ շարունակ իրենց մշակած հողը վերաբաշխման պիտի ենթարկեին:

Լու Յանը համբերատար լսեց վարձակալներին՝ թողնելով, որ ելնի նրանց «տաք գոլորշին», ապա նրանց ցույց տվեց այն անվիճելի ճշմարտությունը, որ քանի դեռ կալվածատերերը չեն տապալվել, եւ հողի վարձակալության ու վաշխառության հսկա աղացքարը թափ չի տրվել, գյուղացիներից որեւէ մեկի համար հնարավոր չէ լավ կյանք ու ապրելակերպ: Առայժմ բոլորը դեռ համաձայն էին: Այնուհետև նա բացատրեց «հեռուն նայելու» անհրաժեշտությունը: Գյուղացիների միասնությունը պետք է ընդունվի որպես հիմք ամեն ինչի համար: Սխալ է անձնական ինչ-որ անհապաղ հարցերի պատճառով սակարկության ենթարկել բոլորի ապագա բա-

րեկեցությունը: Դա նույնպես միաձայն ընդունվեց: Այնուհետև Լու Յանն անցավ բուն կյուֆին եւ որոշ կոնկրետ բաներ ասաց վարձակալների համար: Հողերի բաշխման արդյունքում նրանցից յուրաքանչյուրը կունենա իր սեփական հողը, եւ ոչ ոքի համար այլեւ անհրաժեշտ չի լինի չափից դուրս շատ վարձ վճարել (արտադրանքի 50-ից 90 տոկոսը): Բացի կառավարությանը բերքի վարձ մուծելուց, մնացած ամեն ինչ իրենցն է լինելու: Սիենույն ժամանակ, բաշխման ենթակա իրենց հողի մի մասը հանձնելիս, նաեւ մարդկային եւ կենդանիների աշխատանքի ու պարարտանյութի խնայողություն կկատարվի: Նրանք կարող են ավելի մեծ խնամքով մշակել իրենց ունեցած հողերը եւ ժամանակ կունենան արտադրության այլ ձեւերով զբաղվելու:

Վերջապես, Լու Յանն ընդգծեց «Ագրարային բարեփոխման մասին» օրենքում վերապահված կետը՝ բաշխում փաստացի մշակման հիման վրա: Այլ կերպ ասած՝ վերապահումն արվում է բաշխումից առաջ: Վարձակալներին նախապես առաջնահերթություն էր տրվում որոշակի քանակի լավ հող կամ հեշտ ձեռք բերվող հող ունենալ: Ավելին, բաշխման ավարտից հետո գյուղի հանրային հողերի երկու տոկոսը կարող էր նաեւ վարձով տրվել այն իսկական հողագործներին, որոնք առաջինն էին պահանջ ներկայացրել: Վարձակալների համար մշակելի հողի մեկ այլ աղբյուր կարելի էր գտնել այնպիսի ընտանիքներում, որոնք չունեին աշխատուժ կամ կախված էին իրենց փոքրիկ հողամասերը ապրուստի համար վարձով տալուց:

Այսպիսով, կարելու էր կետերը պարզաբանված էին, եւ Գյուղացիական ընկերության աշխատանքային խումբը շարունակեց քարոզչական աշխատանքը ավելի լայն ծավալով, որպեսզի վերացվեին որոշ գյուղացիների մոտ դեռեւս առկա եսասիրության վերջին մնացուկները:

Սին-վուն վերցրեց փայտիկների մի խուրձ, որից մի փայտիկ հանեց եւ հեշտությամբ կոտրեց, ապա երկուսը կոտրեց, հետո փորձեց կոտրել ամբողջ խուրձը, ինչը, բնականաբար, չստացվեց: Նա ցույց էր տալիս դրանով, որ «միասնությունը ուժ է», եւ որ «մեկ գյուղացու համար բարգավաճելն անհնար է», հետեւաբար՝ «բոլորս միասին պետք է ձգտենք համատեղ լավ կյանքի»: Հետո նա ընդգծեց, որ նրանք, ովքեր աղքատ են կամ անօգնական, ինչպես Էի տատիկը, եւ նրանք, ովքեր Ֆու-չժուանի նման մեծ աշխատուժ ունեն, պետք է երկու հարյուր տոկոս ավելին ստանան:

Ինչ-որ մեկը փորձեց բարկացնել Ֆու-չժուանին. «Իհարկե, երկու հարյուր տոկոսով ավելի հող ստանալով նա կարող էր կին եւ երեխաներ ունե-

ԱՅՊՈՑԱՆ

նալ»: Բոլորը ժպտացին եւ նայեցին Չժուն-սինին: Աղջիկը շիկնեց եւ առանց մի բառ ասելու դուրս գնաց:

Դու Յույ-չժենը կերակրում էր երեխային, երբ մի միտք հղացավ: Դիմելով Սին-վուին՝ նա ասաց. «Շուտով դու էլ երեխա կունենաս: Առաջարկում եմ նրա համար մի հողակտոր պահենք»: Սին-վուն, սակայն, հաստատակամ էր իր մերժման մեջ: Սյուններն էլ հաստատակամորեն պնդում էին, որ ապագա երեխան հող ունենա: Վերջապես Լու Յանը ոտքի կանգնեց.

«Տեսականորեն հողերի բաշխումը կատարվում է՝ գլխաքանակը հաշվի առնելով: Ենթադրենք՝ մարդը շատ հիվանդ է եւ մահանում է: Այդուհանդերձ նա ստանում է իր բաժինը, եթե հողի բաշխման օրը դեռ չնշում է: Նույն կանոնը վերաբերում է երեխային: Եթե նա հողի բաշխման օրը դեռ աշխարհ չի եկել, մենք նրան չպիտի հաշվենք: Հետեւաբար, հող կստանա թե ոչ՝ կախված է նրանից, թե որքան արագ նա լույս աշխարհի կգա եւ կհասնի մեզ ու իր հողը կուզի»:

Բոլորը ծիծաղեցին:

Ապա քննարկվեց արհեստագործների խնդիրը... Նրանք խնդրել էին իրենց հող տալ, որպեսզի գյուղացի դառնան: Խնդրանքը բավարարվեց:

Հետո հերթը հասավ հողային բարեփոխումից հետո արտադրության խնդրին...

Ճիշտ ընթացակարգը՝ յուրաքանչյուր գյուղացու համար դրոշի վրա իր հողամասի յուրաքանչյուր բաժնի արտադրողականության մասին գրելն էր: Գյուղացու ունեցած սեփական հողը նշվում էր կարմիր դրոշակով, իսկ կալվածատերերից կամ հարուստ գյուղացիներից վարձակալած հողը՝ սպիտակով: Բաշխման ստորաբաժանման աշխատակիցները գնալու էին եւ տալու իրենց վերջնական գնահատականը:

Դրոշակները տեղադրելու նախօրեին գյուղացիները բոլորը ընտանեկան հավաքներ անցկացրին: Յուրաքանչյուրը լարել էր իր հիշողությունը եւ փորձում էր հիշել, թե որքան հող ուներ անցյալում: Ամեն բան գրվում էր թղթե դրոշակի վրա: Հողագուրկ գյուղացիները նույնպես շատ աշխատանք ունեին անելու: Նրանք բամբուկի ծողեր եւ թղթե դրոշակներ էին դնում մյուսների համար: Հաջորդ առավոտյան քամուց ծածանվող անթիվ փոքր դրոշակներ հայտնվեցին Սինլու գյուղի դաշտային ճանապարհների վրա...

Ժամը ինին մոտ Սինլու գյուղի չորս փոքր խմբերը եւ հատուկ այդ նպատակով հրավիրված մի քանի գնահատող աշխատակից հայտնվեցին՝ տեղում փաստացի քննություն կատարելու: Յուրաքանչյուր խմբում մի քար-

տուղար կար՝ գրքով եւ պղնձե թանաքամանով: Վերջնական արդյունքները գրվում էին դրոշակի վրա եւ մուտքագրվում գրքում: Պնահատող աշխատակիցների մեծ մասը գյուղացիներ էին՝ հիսուսից վաթսուս տարեկան: Այդտեղ՝ դաշտային ճանապարհների վրա կանգնած, նրանք փորձառու հայացքով նայում էին իրենց ոտքերի տակ ընկած հողին այնպես, ինչպես ծեր ու փորձառու նախրապաններն են նայում կովերի ատամներին եւ որոշում նրանց տարիքը:

Գրեթե բոլոր գյուղացիները բավականին արդար եւ անկողմնակալ էին սեփական հողը գնահատելիս: Ավնհայտ էր, որ Լու Յանի եւ նրա ընկերների քարոզչական աշխատանքն իր լավ արդյունքներն էր տալիս...

Միաժամանակ ընկերությունը մի ցուցահանդես բացեց՝ ցուցադրելով կալվածատերերից բռնագրավված «պայքարի պտուղները»: Բեն Ին-դինի հին առանձնատունը, որ նույնպես բռնագրավվել էր, ժամանակավորապես ծառայեցվեց այդ նպատակի համար: Կարմիր շորի մի կտոր, որի վրա գրված էր «Ցուցահանդես, որ պատկերում է, թե ինչպես էին ապրում կալվածատերերը», կախված էր հսկայական, շքեղ ձեւավորված հյուրասենյակի մուտքի մոտ, որտեղ Բեն Ին-դինը սովորաբար ընդունում եւ հյուրասիրում էր ճապոնացի սպաներին, այդ թվում բրիգադի զեներալ Շիրակավային:

Սենյակի ներսում, փեղկերը փակած լուսամուտների տակ, երկար սպասքասեղանների վրա ցուցադրված էին մանջուրական վարչակարգի ոսկե ու արծաթե ձուլակտորներ, բուդդաներ ու ոսկե ապարանջաններ, փորագրված փղոսկրյա հովիարներ, այլ պարագաներ... Գյուղացիները չգիտեին այդ ամենի անուններն ու օգտագործման ձեւերը: Սակայն դրանք համեմատելով եւ հակադրելով իրենց ունեցածի հետ՝ չէին կարողանում զսպել զայրույթն ու դառնության զգացումը: Նրանց կուրծքն ուռչում էր ատելությունից: Այդտեղ էր նաեւ Յուե-յանը: Նրա համար այդ ամենը ծանոթ բաներ էին, բայց ինքն էլ կանգ առավ եւ հիշեց, թե այդ գեղեցիկ իրերի տերն ինչպիսի վերաբերմունք ուներ իր հանդեպ...

Արդեն շուրջ հիսուն օր էր անցել, ինչ սկսվել էր հողային բարեփոխումը: Հույունի սյանի գյուղացիները վաղ էին արթնացել եւ ուշ պառկել քնելու, այդ ընթացքում մեկը մյուսի ետեւից տապալել էին կալվածատերերին...

Անկասկած, վերջին ամիսը շատ բուռն ու փոթորկուն ժամանակ էր:

Հողերի բաշխման նախօրեին թվում էր, թե ողջ Հյուսիսի սյանը շողում է:

Փոթորիկն ավարտվել էր, արեւը դուրս էր եկել, ու ամեն սիրտ ուրախու-

ԱՅԱՈ ՑՅԱՆ

թյամբ էր լցված: Գյուղացին արդեն կարող էր լիովին վայելել իր սեփական աշխատանքի պտուղները: Կարող էր շտկել ուսերը եւ ձեռքով անելով այն հողին, որ մշակում էր, ազնիվ հպարտությամբ ասել. «Սա իմ հողն է»: Հառնում էր մի կողմ, ողջամիտ իրավիճակ, ասես թարմ ու ոսկեգօծ արշալույսն էր ծագել հորիզոնի վրա: Եվ երեք օր ու երեք գիշեր Բեն գերդաստանի նախնիների տաճարի գլխավոր դահլիճը լիքն էր մարդկանցով, մարդիկ, որոնց դեմքերն արտահայտում էին երջանիկ սպասումներ:

Բեն Յույ-չժանը, Լու Յանը, Սին-վուն եւ Ընկերության բաշխման ստորաբաժանման մյուս ներկայացուցիչները խմբվել էին քառակուսի սեղանի շուրջ՝ Նախագահ Սաոյի դիմակարի ներքո: Արդեն մոտենում էր 1951 թվականի հունվարը, եւ Ֆեոդալական համակարգն արդեն ամբողջությամբ տապալվել էր: Ֆեոդալական տաճարի մեջ սառցե քամին սուլելով փչում էր մարդկանց պարանոցներին: Գյուղացիներից մի քանիսն իրենց տներից ծղոտի կապուկներ էին բերել եւ վիթխարի մի խարույկ էին վառել սրահի մեջտեղում: Ֆու-չժուանը եւ Լի Դա-մինը նստել էին դարմանի կապուկների մոտ եւ կրակն էին գցում դրանք, երբ այն թուփանում էր: Բրնձի չոր ծղոտները ճարճատում էին, եւ բոցը վերուվար էր թռչկոտում: Ստվերները խաղում էին գյուղացիների ժպտացող դեմքերին, եւ ջերմություն, ներդաշնակություն ու խոր ապրված ուրախություն էր տիրում շուրջբոլորը:

Գյուղացիներից ամեն մեկը մոտենում էր կրակին եւ հայտնում իր ընտանիքի անդամների թիվը (որոնցից շատերը նույնպես այդտեղ էին): Հետո ասում էին, թե որքան հող եւ գյուղատնտեսական գործիքներ ունեին եւ այլն...

Երբ Ֆու-չժուանի հերթը հասավ, նա ծղոտի իր կապուկը մեկնեց Չժուն-սինին:

Ընտանի՞քը: «Մեկ մարդ է՝ ես ինքս»: Հո՞ղը: «Հող չունեմ»: Գործիքներ՞: «Ոչ մի գործիք»: Ամբոխը պնդեց, որ նրան երկու բաժին տրվի: Նրան տվեցին զութան, թոխր, մի մեծ հողակտոր Մեծ գերեզմանատան մոտ եւ նախկինում Բեն Էր-հուին պատկանող երեք տարեկան մի երինջ, որ պատկանելու էր երեք այլ ընտանիքի եւ նրան: Որպես բնակարան՝ նրան տվեցին Բեն Էր-հուի աշխատասենյակը:

Մինչ մարդիկ ծափահարում էին եւ ոտքի ելան, որպեսզի սեղմեն փոքրինչ ապշահար Ֆու-չժուանի ձեռքը, Յուն-յանը ներս խուժեց սենյակ՝ ուսերից ու թեւքերից ձյան փաթիլները թափ տալով: «Եղբայ՛ր Սին-վու: Եղբայ՛ր Սին-վու»: Սին-վուն, որ սեղանին թեքված՝ գրանցելով էր գբաղված, գլուխը վեր բարձրացրեց:

«Տո՛ւն գևա արագ,- գոչեց աղջիկը՝ բերանը բաց, ձեռքերը շարժելով:- Շտապի՛ր եւ հետդ մանկաբարձուհի տար: Կինդ ցավերի մեջ է»:

Սին-վուն անմիջապես թղթերը հրեց բաշխիչ հարցերով զբաղվող մյուս պատասխանատուի առջեւ եւ դուրս եկավ՝ մարդկանց միջով ճանապարհի հարթելով:

Դու Յույ-չժենը նույնպես ոտքի կանգնեց: Պահի տակ մոռանալով հողի բաշխման իր հերթը՝ նա իր երեխային սկեսրոջ գիրկը դրեց եւ հետեւեց Սին-վուին, որպեսզի օգնի:

Գիշերը ժամը երկուսին մոտ հողերի բաշխման աշխատանքները դեռ ամբողջ թափով շարունակվում էին, երբ ներս մտավ Չժուն-սինը՝ բրնձի մածուցիկ շիլայով լի գոլորշի արծակող կաթսան ձեռքին: Կաթսան դնելով քառակուսի սեղանին՝ նա ասաց. «Բոլորդ պետք է որ շատ հոգևած լինեք: Սի բան կերեք»:

Աշխատակիցները չէին կարծում, թե պիտի ուտեն, քանի որ գիտեին՝ Լի տատիկն այնքան էլ լավ վիճակում չէ, որ մի բան էլ ուրիշներին հյուրասիրի, բայց ձեր կինն ինքը սկսեց պնդել. «Կերե՛ք, թե չէ մենք էլ լավ չենք զգա: Սա այն բրինձն է, որ նախապես պահել էինք լուսնային Նոր տարվա համար: Բայց հիմա, աշխարհի սկբից ի վեր առաջին անգամ, աղքատ մարդիկ ունեն իրենց սեփական հողը: Դա հարյուր, հազար Նոր տարուց ավելի լավ չէ՞»:

Տղամարդիկ տեղի տվեցին: Ինչ-որ մեկը գևաց եւ տաճարի ետեւի մասից թասեր բերեց, իսկ Չժուն-սինը սկսեց բրինձը լցնել: Այս աղմուկի ու խառնաշփոթի մեջ նորից հայտնվեց Դու Յույ-չժենը՝ մի փոքր շնչակտուր: Կանգնելով ուղիղ սեղանի առջեւ՝ բացականչեց.

«Ուշադրությո՛ւն, լսեք բոլորդ: Սին-վու Սաոն (եղբոր կինը) հենց նոր երկվորյակ է ունեցել: Տղա եւ աղջիկ»:

Հայտարարությանը հետեւեց խլացուցիչ ծափահարությունը: Դու Յույ-չժենն իսկույն շրջապատվեց հետաքրքրասերների ամբոխով: Շատերն էին ուզում մանրամասներ իմանալ:

Ապա երեսաց շողշողացող Սին-վուն, որ այց ու ծախ էր խոնարհվում մարդկանց շնորհավորանքներին ի պատասխան: Քիչ անց նա գրավեց իր տեղը եւ կրկին թաղվեց գրանցման խրթին աշխատանքի մեջ:

Հաջորդ առավոտյան բոլոր գյուղացիները վաղ վեր կացան եւ ձյան միջով քայլելով՝ գևացին տեսնելու իրենց նոր ձեռք բերած հողը...

Ազատագրության հանրահավաքը՝ հողային բարեփոխման գազաթնալետը եւ գյուղացիների համար աննախադեպ ուրախ մի իրադարձություն,

ԱՅԱՈ ՑՅԱՆ

տեղի ունեցավ հենց այդ նույն օրը, կեսօրից հետո ժամը 2-ին...

Վառ կարմիր ժապավենների վրա գրված էին՝ «Երկիրն ու երկինքը շրջվեցին, եւ ֆեոդալիզմը տապալվեց», «Դիմակայե՛նք Ամերիկային եւ օգնե՛նք Կորեային: Պաշտպանե՛նք մեր տունը եւ երկիրը»: Հորիզոնական մի տախտակի վրա գրված էր. «Բոլոր գյուղացիներն ամենուր եղբայրներ են»:

Տոնակատարությունն սկսվեց հաջորդ առավոտյան, ժամը տասին մոտ: Նիզակակիր եւ կոչնագանգեր ու թմբուկներ հնչեցնող գյուղացիների ջոկատները դաշտային արահետների լաբիրինթոսներով ճանապարհ էին հարթում դեպի Բեն-չժու դաստակերտ: Տարրական դպրոցի աշակերտները գլխավորում էին երթը: Նրանցից ոմանք բազմագույն հագուստներով էին, գլուխների շուրջ սրբիչներ կապած, եւ բերքահավաքի պար էին պարում: Ոմանք երիտասարդ պիոներների խմբի անդամ էին՝ փողփողացող կարմիր վզկապներով: Սի քանիսն էլ, դեմքներին կարմրաներկ քսած, ցատկոտում էին երթի մեջ՝ փայտե սրերը թափահարելով:

Յոթ աստղի զառիթափի արհեստավորները երկու ծածկապատգարակ էին պատրաստել, բամբուկե ձողերով կապել իրար եւ փաթաթել կարմիր մետաքսով: Յուրաքանչյուր ծածկապատգարակի վրա չորս նկար կար՝ շրջանակված եւ գունագեղ դիպակին փակցված: Առաջինի վրա Նախագահ Մաոյի, Գլխավոր հրամանատար Չժուի, Փոխնախագահ Լյու Շաո-ցիի եւ Վարչապետ Չժոու Էն-լայի դիմանկարներն էին: Սյուսի վրա՝ Մարքսի, Էնգելսի, Լենինի եւ Ստալինի դիմանկարները...

Լսվում էին ճայթռուկների ձայները: Կոչնագանգերի ու թմբուկների թնոյունն ավելի բարձր էր լսվում, քանի որ մարդկանց հոսքն ավելի ու ավելի էր շատանում: Թատերական ներկայացումներ էին ցուցադրվում...

Երգեցին ազգային հիմնը: Ապա բոլորը խոնարհվեցին ազգային դրոշմի եւ Նախագահ Մաոյի դիմանկարի առջեւ: Այնուհետեւ ստեղծվեց կանանց ընկերության նախագահից, աշխարհագործի հրամանատարից, մշակների եւ աղքատ գյուղացիների փոքր խմբի առաջնորդից եւ երեք գյուղերի նախագահներից բաղկացած նախագահություն, որը հարթակ էլավ, եւ հանրահավաքն սկսվեց:

Հանրահավաքի ընթացքում մեծ խոստումներ ու հանդիսավոր հայտարարություններ արվեցին գյուղացիների կողմից, որոնք նախկինում երբեք իրենց կյանքում չէին խոսել հանրության առջեւ: Լի Չժեն-նանը խոստացավ, որ կաշխատի արտադրության մեջ եւ ամբարտակներ կնորոգի: Լո Շու-մինը պահանջեց, որ կանանց էլ թույլատրեն հավասարաչափ մաս-

նակցելու ամբարտակների նորոգման աշխատանքին, քանի որ հողերի բաշխման ժամանակ կանանց հանդեպ տղամարդկանց հավասար վերաբերմունք են ցուցաբերել:

Ի վերջո Ֆու-չժուանը նույնպես պատրաստվեց եւ հարթակ ելավ: Գլխարկը մի ձեռքով նյարդայնորեն ճմռթելով՝ նա խոր գլուխ տվեց բոլորին եւ սկսեց. «Ես միայն գիտեմ, թե ինչպես խառնվել ցեխի հետ, եւ չեմ կարող խոսել: Բայց երբ խմում եմք, չենք մոռանում ջրհոր փորողին. ազատագրության գործում եկեք չմոռանանք Կոմունիստական կուսակցությանը: Առանց Նախագահ Մաոյի, առանց Կոմունիստական կուսակցության որտե՞ղ կլինեի ես այսօր: Չէի՞ լինի արդյոք Բեն Էր-հուի ոտքերի տակ տրորված»:

Ձեռքերն առաջ պարզած՝ գյուղացիները որոտացին.

«Կեցցե՛ Կոմունիստական կուսակցությունը»:

«Կեցցե՛ նախագահ Մաոն՝ գյուղացիների փրկիչը»:

Երբ կարգախոսների ձայնն աստիճանաբար ցածրացավ, Ֆու-չժուանը շարունակեց.

«Ես հիմա շատ լավ հասկանում եմ, որ կալվածատերերը եւ իմպերիալիզմը չեն կարող առանձին լինել: Նայեք Բեն ընտանիքին, Բեն Ին-դինին եւ Բեն Էր-հուին: Մի՞թե իմ հայրը նրանց ձեռքերով չի մահացել: Բայց բոլորս կույր էինք, քանի դեռ կոմունիստները չէին եկել օգնելու, որ բացենք մեր աչքերը: Հիմա ամեն բան ուրիշ է: Եթե Ամերիկյան ցանկանում է անել այն, ինչ արեց Ճապոնիան, եւ փորձում է մեզ մի կողմ վանել, մենք ոտքի կկանգնենք եւ կջախջախենք բոլոր ամերիկացի իմպերիալիստներին, ինչպես նաեւ Թայվանի բոլոր դավաճաններին»:

Բացականչությունները եւ ծափահարությունները խռովեցին Սիւլու գյուղի անդորրը՝ արծազանքելով Չինաստանի նոր գյուղացիության վերելքին:

Ապա ճարճատյունի ձայն լսվեց: Ճայթուկների ձայնն էր, որոնք մեկը մյուսի ետեւից պայթում էին: Դրանք գյուղացիների արյունը ծծող կալվածատերերի դասակարգի զենքերն էին եղել: Այժմ այդ ամենը ձվեններ ու մոխիր էր, եւ քամին դեսուդեն էր ցրում դրանք:

7. ԵՐՏԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՏԻՆ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՃԱՇԱԿՈՒՄԸ

Նոր ազատագրված Բեն-չժու դաստակերտում լսելի էր քնքշածուսի մի ծայն՝ սրտի բաբախի պես կանոնավոր ու ռիթմիկ: Սին-վուի երկվորյակների լացի ծայնն էր:

Երեխաները պառկած էին երկու հյուսկեն զամբյուղի մեջ եւ ճշում էին իրենց թոքերի ողջ հզորությամբ՝ երբեմն հերթով, երբեմն՝ միաձայն: Ոտիկներով քացի-քացի էին անում եւ թափահարում փոքրիկ ձեռքերը՝ կարծես ամեն ինչ անելով, որպեսզի աշխարհին ավետեն բարի լուրը՝ նոր Չինաստանում այլեւս Ֆեոդալական շահագործում չի՛ լինի, նոր Չինաստանը մե՛րն է:

Սին-վուի կինը, զգգզված մազերով, պետք է կրծքով կերակրեր նորածիններին (օգտագործում էին նաեւ պահածոյացված կաթը եւ Դու Յույ-չ-ժենի կաթը), ինչպես նաեւ տնային մյուս գործերը հոգար...

Գյուղացիները շարունակում էին ելումուտ անել սենյակ: Ոմանք ուտելիք եւ քաղցրավենիք էին բերում: Ոմանք պարզապես ուզում էին «ձեռք մեկնել»: Ոմանք էլ հետաքրքրասիրությունից էին գալիս՝ տեսնելու, թե ինչպիսին են այդ խելացի երեխաները: Իսկ նրանք, անշուշտ, խելացի էին, քանի որ ամենահարմար պահն էին ընտրել ծնվելու համար:

Փոխանակ փոքր-ինչ հանգիստ վայելել հիմա, երբ հողն արդեն բաշխվել էր, Սին-վուն, այդուհանդերձ, առաջվանից ավելի զբաղված էր: Ամեն առավոտ շուտ էր արթնանում եւ վերարկուն կոճկելով դուրս գալիս տանից: Այս կամ այն փոքր խմբի հետ ամբողջ օրը քննարկումներ անցկացնելուց հետո նա գիշերն ուշ էր վերադառնում տուն:

Պայքարի պտուղներից ոգետրված՝ թե՛ Չժուն-սինը, թե՛ Յուե-յանը սկսել էին մտածել իրենց «օժիտի» մասին: Չժուն-սինի եւ Ֆու-չժուանի միջեւ եղած սիրավեպը վաղուց արդեն սովորական բան էր բոլորի համար, եւ մարդիկ աստիճանաբար դադարել էին այդ մասին խոսել ու ակնարկել: Բայց առաջին թեթեւ կասկածը, որ «ինչ-որ բան» կա Յուե-յանի եւ Լի Դամինի միջեւ, մարդիկ ունեցան ազատագրության հանրահավաքի օրը, երբ այդ երկուսը միացան, զույգ կազմեցին բերքի պարը պարելիս՝ այլոց վրա ընդհանրապես ուշադրություն չդարձնելով: Երիտասարդ զույգերը աշխարհագորի ներկայացուցիչ էին: Դա էր պատճառը, որ Սին-վուն կատակով նշեց, թե նրանց համատեղ հարսանիքը պետք է կայանա աշխարհագորի կենտրոնակայանում:

Դստեր սպասվող ամուսնությանը Լի տատիկի առաջին արձագանքը՝

անխառն ուրախությունն էր: Նա հպարտ էր Ֆու-չժուանով, որը ոչ մի վատ սովորություն չունեւ, ինչպէս, ասենք, խաղամոլությունը կամ հայիոյելը: Շատ էր աշխատում եւ հուսալի անձնավորություն էր: Սակայն հետո արցունքներն սկսեցին հոսել Լի տատիկի այտերով: Եթէ Չժու-սինն ամուսնանար, ինքը շատ միայնակ կլինէր:

Չժու-սինը հիանալի հասկանում էր, թէ ինչն է անհանգստացնում մորը, եւ վստահեցնում էր, որ Ֆու-չժուանը խոստացել է նրան մենակ չթողնել: Քանի որ նախագահ Սաոյի շնորհիվ էինք բոլորս ազատագրվել, Լի տատիկի նման անձնավորությունն, անկասկած, լավ օրեր վայելելու իրավունք ունէր: Ֆու-չժուանն անձամբ էր հոգալու, որ սենյակներն այնպէս վերադասավորէին, որպէսզի մայրն ու աղջիկը չբաժանվէին:

Ազատագրության հանրահավաքի անցկացման օրը, երեկոյան, տաճարում կազմակերպվեց «Կարծիքների փոխանակում»: Այդտեղ էին աշխատանքային խմբի կադրերը եւ Գյուղացիական ընկերության տարբեր ներկայացուցիչներ: Նպատակն էր՝ գյուղացիներին հորդորել՝ նշելու հողային բարեփոխում անցկացնող կադրերի սխալները եւ հողային բարեփոխում անցկացնելիս նրանց աշխատանքային բացթողումները, նաեւ՝ թերությունները նրանց վերաբերմունքում: Հաջորդ առավոտյան ամբողջ Հոյլունի սյանի գյուղերում ցրված՝ աշխատանքային խմբի ընկերները հանդիպեցին նախ Շրջանային կառավարության գրասենյակում, եւ այդտեղից Չժաո Յգե-մինի գլխավորությամբ ուղեորվեցին տարածաշրջանային նստավայր՝ մասնակցելու կադրերի ընդլայնված հավաքին: Այստեղ նրանք պետք է ամփոփէին իրենց ձեռք բերած փորձառությունները եւ կարծիքներ փոխանակէին: Այնուհետեւ գնալու էին մեկ այլ սյան՝ մասնակցելու հողային բարեփոխման հետագա աշխատանքներին: Այսպիսով, գյուղացիների ազատագրման բարեհաջող ընթացքը համախմբելու կարեւոր աշխատանքն ընկած էր Բեն Սին-վուի նման մարդկանց ուսերին՝ ակտիվիստներ, որ գյուղացիների շարքերից էին ելել:

Հունվարի 26-ի առավոտյան, երբ Լու Յանը նախատեսում էր հեռանալ, Սինլու գյուղի բոլոր գյուղացիները հավաքվեցին մեկտեղ՝ կոչնագանգերի ու թմբուկների երաժշտության ուղեկցությամբ, որպէսզի նրան ջերմորեն ճանապարհ դնեն: Այդտեղ էին աշխարհագորի տղամարդիկ եւ կանայք, բերքի պարը պարողներ, առջեւում՝ կարմիր վզկապներ կապած եւ ծաղիկները ձեռքներին պիտներներ, Ֆու-չժուանը՝ կարմիր դրոշով, որի վրա նախշազարդ գրված էր՝ «Հաղթանակ՝ հողային բարեփոխման գործում»: Գյուղացիների այս հզոր, լավ կազմակերպված եւ կարգապահ երթը ճա-

ԱՅՊՈ ՑՑԱՆ

Նապարհի բռնեց հեռախոսասայուների երկայնքով եւ ուղղվեց դեպի Յոթ աստղի գառիթափը:

Նավակը, որ Շուան-չժուանն էր ձողով թիավարում, դանդաղ սահեց Աղավազետի մյուս կողմում գտնվող Շիմայի սյանի ուղղությամբ: Դեկի մոտ կանգնած՝ Լու Յանը նախ մատնացույց արեց հողամբարտակը, ապա ձեռքերը շեփորանման բերանին մոտ պահելով՝ ձայն տվեց գյուղացիներին, որոնք եկել էին իրեն ճանապարհելու. «Աշխատե՛ք այս հողամբարտակների վրա եւ լավ տարի անցկացրեք: Հիշե՛ք՝ այս տարի դուք ձեր սեփական բերքն եք ստանալու»:

Շատ գյուղացիներ, արծագանքելով, ասացին, որ այդպես էլ կանեն, իսկ Բեն Շու-մինն, անկասկած, արտահայտում էր մեծամասնության վերաբերմունքը, երբ թեթեւակի խզված ձայնով գոչեց, «Ետ եկեք Աշան փառատունին, ընկեր Լու, եւ ճաշակեք մեր տոբ բրինձը»:

Նավակը գրեթե մոտեցել էր մյուս ափին: Տեսնելով, որ գյուղացիները դեռ չեն ցանկանում ետ դառնալ, Լու Յանը կրկին ձայն տվեց, եւ նրա ձայնը թույլ արծագանքով անդրադարձավ սառցե գետից. «Չմոռանա՛ք հզորացնել ձեր կազմակերպությունը»:

Նույն երեկոյան Սին-վուն եւ Սինլու գյուղի նախագահ Բեն Յույ-դանը հրավիրեցին Գյուղացիական ընկերության աշխատակիցների եւ ակտիվիստների հավաք: Քննարկվում էր մեկ թեմա, որի հետ կապված՝ հորեղբայր Գուան-լինը, Դու Յույ-չժենը եւ Լու Յուն-նյանը բոլորն էլ փաստացի մանրամասներ ներկայացրին, - ջրի բերած չարիքները: Հորեղբայր Գուան-լինը պերճախոս կերպով վերհիշեց, թե ինչպես է իր ամբողջ ընտանիքը տարիներ շարունակ տառապել «ջրի բռնությունից»: Հացահատիկը տոբ փոսի հասկակալեր, երբ սոսկալի ջրհեղեղ էր սկսվում: Ամբարտակը փլուզվում էր, եւ ամեն ինչ սուզվում էր ջրի տակ: Լու Յուն-նյանի հողամասը տեղակայված էր բարձր լանջի վրա, որի ջրամատակարարումը վերահսկվում էր կավածատիրոջ՝ նրա հորեղբայր Լու Բեյ-ժունի կողմից: Երաշտի տարիներին նա ստիպված էր վերջինիցս ջուր գնել՝ իր համար որպես երաշխիք օգտագործելով «կանաչ ծիւրը»: Այն, ինչ հաճախ պատահում էր, տոկոսը բարձրանում էր, եւ արդյունքն այն էր լինում, որ երբ աշունը գալիս էր, նրա ամբողջ բերքը, որի վրա մեկ տարի քրտինք էր թափել, գնում էր Լու Բեյ-ժունի ամբարը:

Ապա գյուղի նախագահը զեկուցեց ձմեռային արտադրության ծրագրերի մասին ամբողջ տարածաշրջանի համար: Կարեւորագույն աշխատանքն այն էր, որ պատնեշներ եւ ամբարտակներ կառուցվեին ու դրանք

պատրաստ լինեին նախքան գարնան մշակումներն սկսվելը: Նա բացատրեց նաեւ, թե ինչպէս մյուս շրջաններում, որոնք արդէն անցել էին հողաշին բարեփոխումը, յուրաքանչյուր ընտանիք մշակել էր իր սեփական արտադրական ծրագիրը: Ապա քննարկվեց, թե ինչպէս պետք է սեփական արտադրական ծրագիր մշակել...

Գյուղում 33 տարբեր չափի ջրամբարներ կային, եւ դրանց մեծ մասը նորոգման խիստ կարիք ուներ: Որոշվեց, որ այս տարի նորոգումը կկատարվի ընտրողաբար, եւ կնորոգվեն միայն առավել խարխիւլած ու առավել մեծ տարողություն ունեցող ջրամբարները, որպէսզի շատ ջուր պահվի ոռոգման համար: Եթէ ժամանակ մնար, կբացվեին նաեւ նոր ջրամբարներ: Օրինակ, այդ գյուղի ամենաընդարձակ տարածքը ոռոգող ջրամբարը Մեծ գերեզմանի մոտ գտնվող «Ձիու պարանոց» ջրամբարն էր, բայց այն վաղուց մադի պէս ծակ էր...

Ահա թե որտեղ պետք է անհապաղ աշխատանք տարվեր:

Դպրոցի ուսուցիչ Բեն Գո-չժանը հաջորդ գեկուցողն էր: Դասկարգերի տարբերակման ավարտից ի վեր նա ամեն շաբաթ երեք երեկո «տառածանաչության» դաս էր վարում Լո Մեծ տան գյուղացիների համար: Աշակերտների թիվը, ինչպէս նա էր ասում, այնքան էր աճել, որ նույնիսկ կանգնելու համար տեղ չկար, էլ ուր մնաց՝ նստարան դնելու եւ նստելու: Լի տատիկի նման ծեր մարդիկ էլ էին գրանցված: Ի՞նչ խորհուրդ կտար Ընկերությունը: Սին-վուն ասաց, որ լավագույնը նրանց համար այն կլինի, որ խնդիրը դասարանում լուծվի: Եթէ հանրային պահանջն իսկապէս հրատապ լիներ, ապա ինչ-որ կերպ լուծում կգտնվեր:

Հաջորդ օրը վաղ առավոտյան, երբ դաշտերը դեռ մշուշով էին պատված, Սինլու գյուղի գյուղացիները, ծեր եւ երիտասարդ, փոքր խմբի ներկայացուցիչների առաջնորդությամբ, ուղեւորվեցին դեպի գառիթափի մոտի ամբարտակը: Ոմանք քլունգներ ու թիեր էին տանում, ոմանք զամբյուղներ, ոմանք էլ ձեռնասայլակներ էին հրում: Չմռան արեւը ջերմորեն ժպտում էր արծաթապատ Հոյլունի սյանի վերեւում: Չյան մեջ երեւում էին կաչաղակների ոտնահետքերը: Չյունապատ արահետով քայլելով՝ գյուղացիները գրուցում էին, ծիծաղում եւ երգում:

«Լի տատիկ, քո տարիքում, անշուշտ, կարող էիր մնալ եւ թողնել , որ Չժուն-սինը մենակ գնա »:

Սա ասվեց՝ որպէս ակնհայտ հիացում տատիկի «ակտիվությունից», ոչ թէ նրան ետ պահելու մտադրությամբ:

Լի տատիկը, թեից կախված ուտելիքի զամբյուղով, շրջվեց. «Չժուսիսն ստացել է հողի իր բաժինը, ես էլ իմն եմ ստացել, չէ՞: Ուրեմն ինչպե՞ս կարող է նա գնալ իմ փոխարեն: Ես ապրել եմ ավելի քան հիսուն տարի, ես սա առաջին անգամն է, որ ամբարտակը նորոգում եմ «իմ սեփական օգուտի համար»: Ի՞նչ սրտով կարող էի տանը մնալ»...

Գյուղացիների ժամանման պահին Սին-Վուն հավաքեց փոքր խմբի դեկավարներին եւ աշխատանքը բաժանեց «գոտիների»: Գյուղացիներից ոմանք սկսեցին հողը փորել ամբարտակի ստորոտում: Ոմանք զամբյուղներով հողն սկսեցին կրել սանդղածեւ գառիթափն ի վեր: Ե՛վ վերելում, ե՛լ ցածում կարելի էր տեսնել եռանդուն աշխատող գյուղացիների, որ քրտնել էին, չնայած խիստ ցուրտ եղանակին: Հենց որ տարբեր չափի «քառակուսիներն» ավելի խորացան, բահով ամբարտակի վրա ավելացվեցին ձմեռային հողի ծանր, ամուր շերտեր: Այսպես աստիճանաբար ամբարտակն սկսեց բարձրանալ սառն ու կապույտ երկնքի ներքո:

Աշխատանքն այնքան շարունակվեց, մինչեւ արեն իջավ բլուրների ետեւը: Փոքր խմբերի դեկավարներն ստիպված էին երեք անգամ կոչնագանգերին զարկել, նախքան գյուղացիները դժկամորեն կհեռանային:

«Հիմա, երբ տեղական բռնակալները տապալվել են, թվում է, թե բավականին հեշտ է լուծել բռնակալ ջրի հարցերը»:

Սա հորեղբայր Գուան-իսնն ասաց, երբ քլունգն ինքնագոհ ուսին էր դնում: Ապա ամեն մեկը գնաց իր խումբը, եւ գյուղացիները քայլեցին դեպի տուն: Թանձրացող մթնշաղի մեջ շատերը ժամանակ առ ժամանակ հպարտությամբ ու հիացմունքով ետ էին նայում՝ դեպի նկատելիորեն բարձրացած ամբարտակը:

Ճանապարհին քննարկում էին նաեւ մրցակցություն կազմակերպելու հարցը, որպեսզի աշխատանքի արդյունավետությունը բարձրանա:

Այդ երեկո Լո տարրական դպրոցում դասասենյակը շատ ավելի մարդաշատ էր, քան երբեւէ: Յոթ-ութ երեխա արմունկներով հրմշտվում էին իրենցից ավագների հետ: Միտքը գործնական ու բարդ խնդիրներով զբաղված՝ Բեն Գո-ժժանը լիովին տեղյակ էր, որ Սինլու գյուղի գյուղացիների մշակութային ազատագրման մեջ խիստ կարեւոր, հիշարժան օր է լինելու: Երբ Լի Ղա-մինը դժգոհեց, որ տեղական Սինհուա գրախանութում այլեւս «Բանվորների եւ գյուղացիների տարրական ընթերցարանի» ոչ մի օրինակ չի մնացել, նա կարեկցաբար գլխով արեց, բայց նրա շարժումներից եւնթաղվում էր, որ «ամեն ինչ լավ է լինելու»:

«Ընկեր գյուղացիներ,- Բեն Գո-չժանի այս խոսքերի վրա աղմուկը լռեց:- Դուք ամբողջ օրը ծանր աշխատանք եք կատարել ամբարտակի մոտ, եւ պետք է որ շատ հոգևած լինեք: Կարո՞ղ է ինչ-որ մեկն ասել, թե ինչու եք այդուհանդերձ դեռ այդքան ուսումով տարված»:

Նրանք կարող էին բազմաթիվ պատճառներ բերել: Մեկն ասաց, որ Նախկինում իրեն խաբել են աշխատավարձ վճարելիս, երբ աշխատում էր կալվածատիրոջ համար, եւ ինքը չի ուզում որ դա կրկնվի: Մեկ ուրիշն ասաց, որ կուզեր կարդալ իմանալ եւ նորությունները կարդալ : Ինչ-որ մեկն էլ արմունկով հրեց Լի տատիկին. «Իսկ դո՞ւ ինչու ես ուզում սովորել, դու, որ մի ոտքդ գերեզմանում է»:

Սմբած այտերն ուռեցնելով՝ Լի տատիկը պատասխանեց. «Երբ ես թափառում էի Չժուն-սինի հետ եւ մուրացկանությամբ զբաղվում, շատ անգամ եմ կանգ առել մասնավոր դպրոցի մոտ եւ թաքուն նայել ներսում ուսում առնող՝ կալվածատերերի երեխաներին, որոնք ամեն տեսակ բաներ էին սովորում: Այդ օրերը կալվածատերերի համար էին: Հիմա աշխարհը պատկանում է մեզ՝ գյուղացիներին, եւ մենք էլ պետք է ուսում առնենք ու սովորենք: Ճիշտ չե՞մ ասում»:

Նրա խոսքին հետեւեց բուն ծափահարությունը: Մյուս գյուղացիներն էլ խոսեցին, թե ինչ տառապանքներ են կրել «կրթություն չունենալու պատճառով»...

Խոսեց նաեւ Ֆու-չժուանը. «Եթե չկարողանանք կարդալ, չենք կարող նայել թերթերին ու չենք կարող ասել ճշմարտությունը եւ այն տարբերել ասեկոսեներին: Մենք պետք է իմանանք, թե ինչ են ասում հետադիմականները եւ ինչ է ասում Նախագահ Ման»:

Տեսնելով, որ զանգվածներն այդքան շահագրգռված են սովորելու, Բեն Գո-չժանն ասաց. «Ընկեր գյուղացիներ, զրագետ լինելու ձեր պահանջը բնական է եւ օրինական: Դժվարությունը, սակայն, այն է, որ դասասենյակների եւ ուսուցիչների պակաս կա: Մեր գյուղը բավականին մեծ է, յոթուրեք հարյուր մարդ, եւ միայն երկու տարրական դպրոց ունենք: Անշուշտ, մոտ ժամանակներս կառավարության կողմից բոլորին անվճար ուսուցման հնարավորություն կտրվի: Բայց խնդիրն այն է, թե ինչ պետք է անենք հիմա»:

Մի պահ լռություն տիրեց, եւ բոլորն սկսեցին մտածել:

«Ես պատրաստ եմ հողի բաշխումից ստացած իմ հացահատիկից հիևզ դուռ ներդնել, որպեսզի մենք էլ կարողանանք դպրոց ունենալ Բեն-չժու»

ԱՅՈՒ ՑՅԱՆ

դաստակերտում»:

Նա, ով սա ասաց, Ղու Յույ-չժենն էր, որ երեխային էր կերակրում, ինչպես միշտ: Նա գլուխը փոքր-ինչ թեքեց եւ արտահայտիչ հայացքով կայեց նախկին լաստանավորդ իր ամուսնու կողմը, որն անմիջապես բարձրացրեց ձեռքը՝ առաջարկությունը պաշտպանելու համար, քանի որ ինքն էլ տառապել էր անգրագետ լինելուց: Ձևագունդն սկսեց պտտվել: Մեկ դուռ հորեղբայր Գուան-լինից եւ մի այդքան էլ Լի տատիկից եւ Ֆու-չժուանից: Ամենակարճ ժամանակում ավելի քան քսան դան առաջարկվեց հավաքել-Բեն-չժու դաստակերտի բոլոր գյուղացիների կողմից: Նույնքան էլ՝ Լի Այգու բնակիչների կողմից:

Լո Յուն-սյանի առաջարկին Լո Մեծ տան եւ Յոթ աստղի գառիթափի գյուղացիները, որ արդեն ունեին իրենց դպրոցները, նույնպես մասնակցեցին եւ օգնություն ցուցաբերեցին ոչ մեծ քանակության հացահատիկով:

Այդ պահին կանանց փոքր խմբի ղեկավար Լո Շու-մինը փայլուն միտք հղացավ: Գյուղերում եղել է բավականին շատ «դպրոցական հող», բայց կալվածատերերն այդ ամենը զավթել են: Նրանք վարձավճար են հավաքել, բայց ոչ մի դպրոց չեն կառուցել: Հողաբաշխման ժամանակ բոլոր «հանրային հողերը» անցել էին ընդհանուր հաշվեկշռին, բայց Ուկերությունը «հանրային հողերի» երկու տոկոսը պահպանել էր, իսկ հետագայում կալվածատերերից բռնագրավել էր բավականին շատ փայտանյութ եւ դազաղներ: Հենց գյուղում նրանք ունեին ատաղձագործներ եւ շինարարներ: Ինչո՞ւ չէր կարող ընկերությունն աջակցել հողով եւ շինանյութով, իսկ գյուղացիները՝ աշխատուժով: Այդ դեպքում շատ հեշտ կկարողանային դպրոցի շենք կառուցել:

Բոլորը ողջունեցին այդ փայլուն գաղափարը:

Տուն գնալով աստղերի լույսի ներքո՝ երկու դաստակերտների գյուղացիները տաքացած քննարկում էին ապագա դպրոցի ճարտարապետության եւ տեղի հետ կապված հարցերը:

Թվում էր, թե շենքն արդեն կանգուն է եւ տեսանելի է նրանց աչքերին, այլ ոչ թե նրանց երազանքներում է պարզապես:

Երբ Ֆու-չժուանի ու Չժուն-սինի եւ Լի Ղա-մինի ու Յուն-յանի ապագա ամուսնությունը կազմակերպվեց աշխարհագրորի հավաքի ժամանակ, բոլորը համաձայնեցին, որ այս երկու զույգերը խորհրդանշում են Սիկուի գյուղի գյուղացիների իրական ազատագրումը: Երկու փեսացուներն էլ մշակ էին եղել, կալվածատերերը ոտքերով հարվածել էին նրանց ու ստո-

րացրել, երկու հարսնացուներից մեկը Բեն Էր-հուի համար աշխատել էր որպես աղախին, իսկ մյուսը քիչ էր մնում ֆեոդալական հասարակության անմիջական զոհ դառնալու։ պարզվեց, որ թոքախտավոր այն տղան, որի հետ նախապես նշանել էին Չժուն-սինին, վերջերս մահացել էր։ Կրկնակի հարսանիքը նախատեսված էր տասներկուերորդ ամսի 29-ին, համաձայն լուսնային օրացույցի, եւ պետք է տեղի ունենար սյանի կառավարության գրասենյակում։ Աշխարհագրի կազմը պատրաստ էր իր ուժն ու միջոցները ներդնելու եւ այն իսկապես մեծ իրադարձություն դարձնելու։

Երկու զույգն էլ չափազանց հուզված էին, երբ հավաքը ցրվեց։ Հին հասարակությունում նրանք միայն մեկ բան կարող էին ակնկալել՝ ծեծ, թուք ու ոտնահարում, իսկ հիմա նոր կյանք էր բացվել նրանց առջեւ։ Գիտեին, որ դա հնարավոր չէր առանց Նախագահ Մաոյի եւ Կոմունիստական կուսակցության։ Դրա համար էլ պատրաստվում էին նամակ գրել Նախագահ-բարերար Մաոյին, որով, բացի նրան շնորհակալություն հայտնելուց, որ օգնել է իրենց պայքարին, կհայտնեին նաեւ ապագա այն ծրագրերը, որ իրենք չորսով կազմել էին։ Դա, բնականաբար, համարձակ գործ էր, բայց նրանք զգում էին, որ պետք է դա անեն։

Այդ ընթացքում Լի տատիկը եւ Չժուն-սինն արդեն տեղափոխվել էին նաեւ Բեն Էր հու-ի տան սենյակներից մեկը, ինչպես որ նախատեսել էին։ Նրանք երեքն էլ արթնանում էին լուսաբացից առաջ եւ դաշտ էին գնում՝ մոլախոտը քաղհանելու, ինչպես նաեւ պարարտանյութ շաղ տալու եւ վերականգնելու բրնձի դաշտերի եզրերը, որոնք ուղիղ ու փայլուն էին դարձել ռելսերի նման։ Այդ ամենն անելուց հետո աշխատելու էին ամբարտակի վրա։

«Խոհանոցի աստծո» օրը Ընկերությունը որոշեց երկու զույգերին ազատ օր տալ, որպեսզի կարողանային գնալ խանութ եւ գնել այն ամենն, ինչ անհրաժեշտ է «հարսանյաց սրահներում»։ Չժուն-սինը եւ Ֆու-չժու-անն արդեն հողի բաշխման արդյունքում ձեռք բերած որոշ «պտուղներ» գումարի էին վերածել, եւ ուրախ տրամադրությամբ ուղևորվեցին դեպի Յոթ աստղի գառիթափ։

Փողոցն, անկասկած, այլ տեսք էր ստացել։ Նախկինում գյուղացիներն այդտեղ միայն վաճառելու համար էին գալիս, իսկ հիմա նրանցից շատերին կարելի էր տեսնել զամբյուղները ձեռքներին՝ Ամանորի ձկան եւ խոզապուխտի գնի համար սակարկելիս։ «Գարնան տուն» ռեստորանը, որը նախկինում միայն կալվածատերերին էր սպասարկում, այժմ գովազդում

ԱՅՊՈ ՑՑՊՆ

Եր իր «խնայողական ուտեստները»՝ գյուղացիներին գրավելու համար: Դարբինների արհեստանոցներում նոր պատրաստված գործիքներ էին դրված, որոնց վրա փակցված էին դրանք պատվիրած մարդկանց անունները: Բամբակագործական չորս արհեստանոցներում գործում էին Սյանտանից բերված վեց նոր բամբակագործական մեքենաներ: Փողոցում անկաշկանդ ու բարեկեցիկ մթնոլորտ էր տիրում: Երբ Ֆու-չժուանն ու Չժուն-սինը մտան Չժոու ժույ-սյանի հանրախանութ՝ սրբիչներ եւ լվացարան գնելու, այլ գյուղերից եկած բավականին շատ մարդիկ տեսան, որոնք նույնպես եկել էին գանազան բաներ գնելու: «Տարօրինակ է, մի՞թե բոլորն էլ ամուսնանալու են», - մտածեց Չժուն-սինը:

Փողոցի արեւմտյան ծայրում նոր կրպակ էր բացվել, որ շատ բաներով տարբեր էր մյուս կրպակներից: Ազդավահանակն անցորդներին տեղեկացնում էր, որ դա «Հունանի առետրային ընկերության շարժական բաժին» է: Այս պետական ձեռնարկության աշխատակիցները բաց կապույտ համազգեստներով էին: Գյուղացիների համար դա հաճելի անակնկալ էր: Նախկինում գյուղացիները ստիպված էին իրենց արտադրած ապրանքներն աննկարագրելի ցածր գնով վաճառել առետրականներին, որոնցից կրկին ստիպված էին արդյունաբերական ապրանքներ գնել բարձր գնով: Շարժական բաժինը գնում էր խոզի մազ, ձու, թեյ եւ ծխախոտի տերեւներ: Միջնորդ վերավաճառողներից գերծ լինելով՝ այն ավելի լավ գներ էր առաջարկում, հաճախ 30-40 տոկոսով ավելի բարձր, քան գյուղացիները կարող էին ստանալ խանութներից: Միեւնույն ժամանակ գյուղացիներին ցածր գնով վաճառում էր բոլոր տեսակի սարքավորումներ՝ արտադրության համար, ներառյալ՝ պարարտանյութեր...

Ֆու-չժուանին եւ Չժուն-սինին շատ հաճելի էր, որ վերջապես ձեռք բերեցին խիստ փնտրված «Տարրական ընթերցարանի» մի օրինակ, որը գտան Մինհուայի գրախանութի գյուղական մասնաճյուղում: Ի թիվս այլ բաների՝ նրանք գնեցին նաեւ տետրեր ու մատիտներ, ապա նաեւ ամենազիջավորը՝ Նախագահ Մաոյի գունավոր դիմանկարը:

Էի Դա-մինը եւ Յուե-յանը, որ գնացել էին Շիչժայոյի գյուղական խանութ, նույնպես վերադարձան կապոցներով բեռնավորված: Բացի այդ, նրանք բերեցին նաեւ մի քանի կոոպերատիվների գովազդային բրոշյուրներ: Գյուղացիներն այդ բրոշյուրներից իմացան, որ արդեն 2000-ից ավելի մշակներ, աղքատ եւ միջին գյուղացիներ միացել են կոոպերատիվներին, եւ որ հողային բարեփոխման ավարտից հետո դրանք կշարունակեն զար-

զանալ ու ընդգրկել սյանի բոլոր ինը գյուղերը: Կալվածատերերը եւ հարուստ գյուղացիները, սակայն, բացառվում էին...

«Կոռպերատիվն այն վայրն է, որտեղ գնում եք, երբ ուզում եք ստանալ լավ եւ էժան բաներ», - մեկնաբանում էին գյուղացիներից ոմանք...

Թերթը տեղեկացրեց Սիկու գյուղի տարբեր ընտանիքների կողմից կազմված «արտադրական ծրագրերի» մասին: Երիտասարդները, ովքեր ուժեղ էին, նորոգելու էին ամբարտակը եւ մշակելու էին սեփական հողը: Եթե դեռ ժամանակ մնար, գնալու էին հեռու բլուրները՝ խոպան հողերը հերկելու: Ծերունիները քաղհանելու էին, տերեւներն էին ավելու եւ պարարտանյութ էին շաղ տալու, իսկ ծեր կանայք կարող էին թել մանել, կոշիկներ ու սանդալներ պատրաստել եւ հավերհն ու խոզերին պահել:

Գյուղացիների շրջանում մի բան մեծ հետաքրքրություն էր առաջացրել. մինչ այդ Ֆու-չժուանի եւ Լի Դա-մինի՝ այդ երկու ամենահիսանալի ակտիվիստների արտադրական ծրագրերի ոչ մի նշույլ չէր եղել:

Շատ գյուղացիներ, խորհելով իրենց արտադրական ծրագրերի շուրջ, մի միտք հղացան՝ իսկ ինչո՞ւ մենք էլ չենք կարող գրել Նախագահ Մաոյին եւ պատմել նրան մեր ազատագրման մասին, ճիշտ այնպես, ինչպես երկու զույգերն էին անում...

Ուսուցիչ Բեն Գո-չժանն այն մարդն էր, որին դիմում էին շատերը: Ամեն օր տասնյակից ավելի նամակներ էին հանձնվում նրան, որոնցից շատերը, ըստ էության, գրված էին թղթի պատառիկների վրա եւ մեկ-երկու հազիվ հասկանալի նախադասություն էին, իսկ որոշ նամակներ էլ ավելի ընթերցելի էին ու բազմաբնույթ: Որոշ նամակներում մանրամասն նկարագրված էին ընտանեկան տեղեկություններ, օրինակ՝ այն մասին, թե ինչ էին տնկելու իրենց նոր ձեռք բերված հողում, կամ ընտանիքի տարածայնությունների (հատկապես հարս-սկեսուր հարաբերությունների) մասին, որ հարթվել էին հողի բաշխումից հետո:

Հորեղբայր Գուան-լինն էր, որն իմաստուն կերպով նշեց, որ իրենք պետք է խնդրեն Բեն Գո-չժանին՝ բոլորի ասածներն ընդգրկել մեկ ամբողջական նամակի մեջ: Հայացք գցելով սեղանի վրայի նամակների կույտին՝ նա ասաց. «Չինաստանում մեր գյուղի նման հարյուր հազարավոր գյուղեր կան, այնպես չէ՞: Եթե դու մի նամակ գրես, ես մի նամակ գրեմ, ամեն մեկը մի նամակ գրի, Նախագահ Մաոն չի՞ հոգևի այդքանը կարդալուց»:

Նրա միտքը համընդհանուր հավանության արժանացավ: Ամեն մեկն իր առաջարկությունն էր անում, որպեսզի նամակում գրվեր...

ԱՅՈՒ ՑՅԱՆ

Փետրվարի 4-ի առավոտյան (տասներկուերորդ ամսի 28-ին՝ ըստ հին օրացույցի) երկու զուգերը, գյուղի նախագահ Բեն Յույ-դանի ուղեկցությամբ, գնացին Շրջանային կառավարություն՝ դիմելու իրենց ամուսնության թույլտվության համար:

Շրջանային նախագահ Շաո Յզու-չժանի գրասենյակում փայտածուխի կրակն էր բոցկլտում: Նախագահ Մաոյի, Գլխավոր հրամանատար Չժուի, Փոխնախագահ Լյու Շաո-ցիի եւ Վարչապետ Չժոուի դիմանկարները զարդարում էին պատերը:

Քանի որ Շրջանի ղեկավարը ներսում հանդիպում ուներ, Բեն Յույ-դանը պահն օգտագործեց այդ ազգային առաջնորդներին ներկայացնելու չորս երիտասարդներին, որոնք երկար ժամանակ կանգնած էին դիմանկարների տակ , եւ անթաքույց հետաքրքրությամբ ու հիացմունքով դրանց էին նայում:

Վերջապես Շրջանային նախագահը դուրս եկավ եւ լսեց, թե ինչպես է Բեն Յույ-դանը ներկայացնում երիտասարդ զուգերի դժբախտ անցյալը եւ պայքարում ցուցաբերած նրանց քաջությունը: Բեն Յույ-դանը ուշադրություն հրավիրեց նաեւ այն բանի վրա, որ հողային բարեփոխման ժամանակ նրանց սերը մեկմեկու հանդեպ առավել խորացավ:

Շաո Յզու-չժանն այնուհետ մի քանի հարց տվեց նրանց անձնական կյանքի վերաբերյալ եւ համոզվեց, որ ամուսնանում են իրենց ազատ կամքով: Ապա նա զգրոցից դիմումի ձեւեր հանեց, որոնք երիտասարդները լրացրեցին՝ դրանց վրա նշելով իրենց անունները, տարիքը եւ բնակավայրը: «Մասնագիտություն» խորագիրը լրացնելիս Բեն Յույ-դանը նրանց օգնության հասավ: Տղամարդկանց համար նշվեց «հողի մշակում», աղջիկների համար՝ «ջուլհակուհի»: Այդ ձեւերը հետո փոխանցվեցին գրասենյակային բաժին, որտեղ ձեւակերպվեցին թույլտվությունները:

Այդ պահին ժամանեց նաեւ Կոմունիստական կուսակցության շրջանային բաժանմունքի քարտուղար Սյուն Բենը: Նա շնորհավորեց զուգերին եւ սկսեց հարցուփորձ անել ամուսնությունից հետո նրանց հետագա ծրագրերի մասին:

«Չժու-սինն ու ես արդեն որոշել ենք,- առաջինը խոսեց Ֆու-չժուանը: - Երկուսս էլ երիտասարդ ենք : Ես ընտանիք չունեմ, իսկ նա միայն մայր ունի: Նրանք երկուսով կարող են աշխատելով իրենց պահել: Ուստի խնդրում եմ թույլ տալ ինձ միանալու ժողովրդի ազատագրության բանակին»

«Մենք նույնպես որոշել ենք,- ասաց Լի Դա-մինը՝ տեղից վեր կենալով:-

Եթե ժողովրդի ազատագրության բանակը կցանկանա, որ ես, որպես զինվոր կամ խոհարար կամ ինչ էլ որ կուզե լինի, ծառայեմ իրեն, պատրաստ եմ»:

«Դուք չորսդ արդեն աշխարհագրորի անդամներ չե՞ք»,- հարցրեց Սյուն Բենը:

«Այո,- պատասխանեց Ֆու-չժուանը:- Մենք միացանք աշխարհագրորին, որպեսզի հսկենք կալվածատերերին: Հիմա, երբ հողային բարեփոխումն ավարտվել է, Գյուղացիական ընկերությունը կարող է այդ մասին հոգալ: Մենք գիտենք, որ Չան Կայ-շին կալվածատերերի տերն է, իսկ ամերիկյան իմպերիալիզմը Չան Կայ-շիի տերն է: Քանի դեռ նրանց տերերը չեն տապալվել, կալվածատերերը երբեք իրենց կարգին չեն պահի»:

Երբ Շրջանային Նախագահը եւ Սյուն Բենը սա լսեցին, երկուսն էլ սեղմեցին չորս երիտասարդ մարդկանց ձեռքը: Սյունը նկատեց. «Համոզված եմ, այն ինչ անհրաժեշտ է ժողովրդի ազատագրության բանակին, հենց ձեզ նման ազատագրված գյուղացիներն ես, ինչպես ձեզ՝ համարձակ, հավատարիմ եւ քաղաքական գիտակցության բարձր մակարդակով»:

Երբ երիտասարդ զույգերը վերադարձան, լաստանավի վրա նրանց դիմավորեց աշխարհագրորի ամբողջ կազմը: Ամբարտակ նորոգողները նույնպես շուտ էին ավարտել գործը եւ, գործիքներն ուտերին, երկու զույգերի ետեւից նավարկում էին դեպի Բեն-չժու դաստակերտ: Ճանապարհին բոլորը երգեր էին երգում:

Տաճարի դիմաց մեկ անգամ էլ հարթակ կանգնեցվեց: Երկու կողմերի կարմիր ժապավեններին գրված էր՝ «Ազատություն՝ ամուսնության մեջ» եւ «Զինակից ընկերներ՝ հեղափոխության մեջ»: Նույնիսկ ծեր ծառերի վրա բաց հրապարակում մետաքսե կարմիր դրոշներ էին փաթաթված: Թեքվող արեւը դալուկ ոսկեգույն քող էր նետել Նախագահ Սաոյի դիմանկարի վրա:

Կոչնազանգերի ու թմբուկների երաժշտության եւ բերքահավաքի երգերի ելեւէջի ներքո՝ զույգերը բեմ բարձրացան: Զժուկ-սիւնը եւ Յուե-յանը նոր կարված վառ նախշազարդ զգեստներով էին: Լի տատիկը կալվածատերերից բռնագրավված՝ ներսից մորթի ունեցող կապույտ մետաքսե զգեստ էր հագել: Ե՛վ Ֆու-չժուանը, ե՛ւ Լի Դա-մինը նույնպես նոր կապույտ համազգեստներով էին:

Բեն Յույ-դանի հսկողության ներքո երիտասարդները իրենց կնիքները դրեցին ամուսնության վկայագրերի վրա: Գյուղացիներն այս ու այն կող-

ԱՅՊՈՑԱՆ

մից գոչեցին. «Ապա՛, փեսաներ, ձեր խոսքը»:

Ֆու-չժուանը եւ Լի Դա-մինը կանգնեցին եւ մեկը մյուսի ետեւից հայտարարեցին, որ իրենք ամուսնանալուց հետո պատրաստվում են միանալ բանակին, եւ որ իրենց կանայք համաձայնել են: Այդ հայտարարությունը ողջունող բարձր ծափահարությունների մեջ լավեց Լի Չժեն-սյանի ձայնը. «Նախագահ, ես էլ եմ ուզում միանալ»: Եվ ձեռքերի մի անտառ վեր խոյացավ՝ արտահայտելու համար այդ նույն մտադրությունը:

Սին-վուն զգաց, որ բացատրությունն անհրաժեշտ է, ուստի հարթակ բարձրացավ, եւ ժողովուրդը հանդարտվեց:

«Ընկեր գյուղացիներ: Լավ է, որ այդքան շատ մարդիկ կուզեին միանալ Ազատագրության բանակին՝ հողային բարեփոխման շնորհիվ ազատագրվելուց հետո: Դա ցույց է տալիս, որ հողային բարեփոխումը ոչ միայն խորտակել է մեր՝ գյուղացիներին տնտեսական շղթաները, այլ նաեւ խթանել է մեր հայրենասիրությունը: Դա ցույց տվեց, որ հայրենիքը պատկանում է մեզ բոլորիս, եւ բոլորս ենք պարտավոր այն պաշտպանել:

Այդուհանդերձ, Ազատագրության բանակին հանկարծական մղումով, առանց կշռադատելու միանալը նույնպես ճիշտ չէ: Կուզեի խնդրել նրանց, ովքեր պահանջում են, որ իրենց էլ ընդգրկեն Ազատագրության բանակի կազմում, ուսումնասիրեին այս երկու նորապսակ զույգերի օրինակը: Նրանք սա քննարկել են Ազատագրության հանրահավաքի օրվանից եւ ամեն ինչ վերջնականապես որոշել են: Նրանք գիտեն, թե ինչպես պետք է իրենց ապրուստի եւ արտադրանք տալու հարցերը լուծեն կամավոր զին-ծառայության հետ համատեղ, քանի որ արտադրական աշխատանքը նույնքան կարեւոր է, որքան ազգային պաշտպանությունը:

Այս հարցն ամբողջովին քննարկելուց հետո, եթե դեռ կարծում եք, որ պետք է միանաք բանակին, ապա Ընկերությունը եւ գյուղի կառավարությունն, անշուշտ, կառաջադրեն ձեզ, եթե առողջական խնդիրներ չունեք, եւ ձեր ընտանիքը համաձայն է»:

Ծափահարությունների նոր ալիք բարձրացավ:

Հերթը Բեն Գո-չժանինն էր: Չեռքի թուղթը խնմքով հարթելուց հետո նա դիմեց ներկաներին. «Վերջին տասն օրվա ընթացքում շատերը մեր գյուղում, ինչպես ձերերը, այնպես էլ երիտասարդները, առաջարկել են նամակ գրել Նախագահ Մաոյին: Այժմ ես հավաքել եմ ձեր բոլոր գաղափարները եւ դրանք ի մի բերել մեկ նամակում: Փորձել եմ պահել ձեր իսկ խոսքերը, սակայն խուսափել եմ կրկնություններից: Թույլ տվեք օգտվել

այս պատեհ հնարավորությունից եւ այն բարձրաձայն կարդալ ձեզ համար: Եթե կան բաներ, որոնց հավանություն չեք տա, ասացեք, եւ մենք փոխենք դրանք: Եթե ամեն ինչ տեղը տեղին կլինի, ծրարը կկնքենք ու հասցեն կգրենք, եւ հինգ-վեց օրվա ընթացքում Նախագահ Մանո այն կստանա Պեկինում»:

Բոլորն անմիջապես լուռ եւ ուշադիր դարձան: Սա նրանց կամակն էր, հետեւաբար, խիստ կարեւոր էր: Պարզ եւ հնչեղ ձայնով Բեն Գո-չժանը սկսեց կարդալ՝ հստակ արտաբերելով յուրաքանչյուր բառը.

«Մեր սիրելի Նախագահ Ման, չին ժողովրդի փրկիչ.

Մենք Հուլյունի սյանի Սինլու գյուղի գյուղացիներ ենք: Գրում ենք Ձեզ, որպեսզի մեր շնորհակալությունը հայտնենք ազատության համար, որ օգնեցիք մեզ ձեռք բերել, ինչպես նաեւ տեղեկացնելու Ձեզ մեր ապագա ծրագրերի մասին:

Մեր գյուղում դեռեւս կան մարդիկ, որոնք կարող են հիշել 1927 թվականը, երբ Դուք մեզ անողորմ պայքարի առաջնորդեցիք հետադեմ գորահիւմանատարների եւ կալվածատերերի դեմ: Հետագայում ստիպված էիք հեռանալ, քանի որ կեղտոտ խոզը՝ Չան Կայ-շին, դավաճանեց հեղափոխությանը, եւ մեզ համար լիակատար խավարի ժամանակաշրջան տիրեց: Մի կողմից՝ կալվածատերերը մեզանից ապշեցուցիչ վարձավճարներ էին վերցնում, մյուս կողմից՝ ստիպված էինք վճարել հարկեր եւ մարդկային աշխատուժ տրամադրել, որպեսզի բավարարեինք հետադիմական կառավարության բոլոր տեսակի անհնարին պահանջները: Ավելի քան 20 տարի մենք, որ բրինձ ենք աճեցնում, չկարողացանք բրնձի մեկ հացահատիկ համտեսել: Մենք գոյատևում էինք բացառապես չորացրած կարտոֆիլի շերտերով: Մեր հագուստը ծակծկված էր, իսկ մի գույգ սանդալն անգամ մեծ շքեղություն էր մեզ համար: Գիշերը քնում էինք բեռնակիր անասունների հետ խոնավ ու կեղտոտ ախոռներում: Մեր կյանքը համեմատելի չէր նույնիսկ որոշ կենդանիների կյանքի հետ, եւ մշտապես ենթակա էինք Չան Կայ-շիի սպառնալիքներին:

1949 թվականի օգոստոսին Դուք վերադարձաք: Այսինքն՝ բանակը եւ Ձեր ղեկավարած ու պատրաստած կադրերը վերադարձան: Գյուղացիների համար դա նման էր անապատում օազիս գտնելուն կամ չորացած ծառի ծաղկելուն: Ավելորդ է ասել, որ կալվածատերերը դեռ երազում էին մեկ այլ «վերադարձի» մասին, եւ որ մեր մեջ չկային հետամուտ տարրեր, որոնք հեռացել էին կալվածատերերի դեմ պայքարից ու ամեն ինչում մե-

ղաղրում էին «ճակատագրին»: Վերջապես, սակայն, բոլորս արթնացանք, իսկ երբ մենք արթնանում ենք, գիտենք, թե ինչպես պայքարել անողոք եւ անխնա:

Վերջին 30 տարիների ընթացքում Դուք եւ Ձեր ղեկավարության ներքո գտնվողները առաջնորդել եք չին ժողովրդին ազատ Չինաստանի համար իր վճռական պայքարում՝ ազատելու համար Չինաստանն իր կիսազաղութային շղթաներից, եւ այժմ մենք ճաշակում ենք երջանկության մեր առաջին պտուղները: Այս ամենի համար բացառապես Ձեզ ենք պարտական: Մեր առջեւ ունենալով Ձեր պայծառ օրինակը եւ Կոմունիստական կուսակցության օրինակը՝ հանգել ենք այն եզրակացության, որ «ճակատագրի» եւ «բախտագուշակի» մասին բոլոր խոսակցությունները ճշմարտությունից հեռու փուչ բաներ են: Ձեր ուղեցույց հրահանգներն օգնել են մեզ փոխելու մեր ճակատագիրը: Մեր գյուղն այժմ հողային բարեփոխում է իրականացրել, հիմնահատակ ոչնչացրել է շահագործման ֆեոդալական համակարգը եւ խորտակել է ստրկության շղթաները: Մենք հիմա կարող ենք ուղիղ կանգնել եւ լինել մեր գյուղի տերերը:

Մենք ուզում ենք հատկապես Ձեզ պատմել երկու ամուսնության մասին՝ Ֆու-չժուանի ու Չժուն-սինի եւ Լի Դա-մինի ու Յուն-յանի: Չորսն էլ աշխարհագորի անդամ են: Փեսաները երկուսն էլ մշակ են եղել՝ առանց մի կտոր սեփական հողի եւ առանց զլովների վերեւ տանիք ունենալու: Հիմա նրանք ե՛լ հող ունեն, ե՛լ տուն, ե՛լ կին: Չժուն-սինը երեխա հարսնացու է եղել, իսկ Յուն-յանը՝ աղախին: Երկուսն էլ ֆեոդալական հասարակության ուղղակի զոհեր էին: Իսկ հիմա երկուսն էլ ե՛լ հող ունեն, ե՛լ տուն ունեն, ե՛լ իրենց ազատ կամքով ընտրել են իրենց կյանքի ընկերներին:

Մեր գյուղում ընդամենը 192 ընտանիք կա, որից 115-ը հողային բարեփոխումից առաջ հողագուրկ կամ գրեթե հողագուրկ մշակների ու աղքատ գյուղացիների ընտանիքներ էին... Նախկինում մեր ոտքերի տակի հողը եւ մեր գլխավերեւի տանիքը պատկանում էին ուրիշներին, մենք չէինք համարձակվում դժգոհել կամ արցունք թափել: Այժմ մենք ունենք մեր սեփական տներն ու սեփական հողը, եւ բարգավաճ ապագան լավ տեսանելի է:

Այժմ, երբ կարողանում ենք խնայել մեր ազատ ժամանակը, մտածում ենք նաեւ մշակույթ սովորելու մասին: Դասակարգային տարբերակումն սկսվելուց ի վեր մեր գյուղում բոլորը սկսել են կարդալ սովորել: Այժմ հպարտությամբ կարող ենք ասել, որ բացառությամբ հիևզ տարեկանից ցածր երեխաների՝ մեր գյուղում բոլորը կարող են գոնե սեփական անունը

գրել...

Եվ անընդհատ անշեղորեն առաջ ենք զնալու, սահմանը երկինքն է:

Մենք հասկանում ենք, որ այդ փոփոխությունները հնարավոր են դարձել միայն ամբողջ ժողովրդի ազատագրմամբ: Գիտակցում ենք, որ ազգի ապագա հաջողությունը գլխավորապես կախված է արտադրության մեջ ներդրած մեր ջանքերից և գյուղական շրջաններում ժողովրդի իշխանությունը պաշտպանելուց: Գիտակցում ենք նաև, որ ազգային անվտանգության ամրապնդումը պարտադիր է դժվարությամբ ձեռք բերված մեր հաղթանակի արդյունավետ պաշտպանության համար:

Դրա համար էլ որոշել ենք մեր բոլոր ուժերը կլիրել ամբարտակներ և ջրամբարներ նորոգելու, հողը մշակելու և պարարտացնելու գործին, որպեսզի առաջիկա աշնանը կարողանանք առատ բերք ստանալ՝ հատուցելով Ձեր բարության դիմաց և օգնելով մեր ժողովրդին տնտեսապես հզորանալու:

Ազգային պաշտպանության մեջ ես մենք մեր ներդրումը կունենանք՝ որպես տեղական աշխարհագրի անդամներ, կամավորներ կամ Ազատագրության բանակի մարտիկներ: Մենք լիովին գիտակցում ենք, որ ազգային պաշտպանությունն առաջին պայմանն է՝ մեր հակաֆեոդալական պայքարի պտուղները պահպանելու և մեր հաղթանակն ամրապնդելու համար:

Շատ ուրիշ բաներ կարող էինք Ձեզ ասել: Մենք մտադիր ենք կառուցել մեր սեփական դպրոցը: Շուտով կունենանք մեր սեփական կոոպերատիվը: Յոթ աստղի զառիթափի մոտ շուտով կստեղծվի բժշկական կլինիկա: Լսել ենք նաև, որ քաղաքի անասնաբույժները շուտով բժշկական աշխատողների մի ամբողջ խմբով գալու են օգնելու մեզ՝ մեր անասուններին հիվանդությունների դեմ պատվաստելու:

Աշնանային բերքահավաքից հետո գյուղի կանայք կախատեսում են բացել մանվածքային գործարան՝ կոոպերատիվի ֆինանսական աջակցությամբ: Մենք համոզված ենք, որ ավելի ու ավելի լավ օրեր են գալու: Այսօրը միայն վաղվա առավել փառապանծ օրվա սկիզբն է:

Գիտենք, որ եթե իսկապես փայփայենք մեր երջանկությունը, ապա կհաղթենք «Դիմակայենք Ամերիկային և օգնենք Կորեային» քարոզարշավում, մինչև որ լիովին կտապալենք մեր երջանկության թշնամիներին՝ ամերիկյան իմպերիալիզմը և նրա սպասավոր Չան Կայ-չիին:

Այսպիսով, մենք՝ Սիկու գյուղի գյուղացիներս, հանդիսավորապես

ԱՅՈՒ ՑՅԱՆ

ստանձել ենք հետեւյալ անելիքերը.

Առաջին՝ նորոգել բոլոր ամբարտակներն ու ջրամբարները, ավելացնել զարևան մշակաբույսերի ցանքսը եւ բարձրացնել սննդամթերքի արտադրությունը:

Երկրորդ՝ ընդլայնել ու հզորացնել Գյուղացիական ընկերության եւ աշխարհագորի կազմակերպությունը: Բարձրացնել հակահեղափոխական տարրերի դեմ մեր զգոնությունը եւ ամրապնդել հանրային անվտանգությունը:

Երրորդ՝ ամբողջ սրտով աջակցել Ամերիկային դիմակայելու քարոզարշավին, օգնել Կորեային նյութապէս ու մարդկային ուժերով եւ հեղափոխությունը հասցնել իր հաղթական ավարտին:

Մենք Ձեզ մաղթում ենք՝

Ժայռի պէս ամուր եւ անսասան առողջություն,

Արեւի պէս հավերժ պայծառություն:

(Ստորագրություններ)

Ստորագրված է Սիւնու գյուղի բոլոր գյուղացիների կողմից:

Հունվարի 28, 1951 թվական

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՄՅԱՌ ՅՅԱՆ
(1910-1999)



Չին հայտնի էստեխտ, գրող, խմբագիր, լրագրող եւ թարգմանիչ Սյառ Յյանի կյանքն ընդգրկում է Չինական Ժողովրդական Հանրապետությանը ևախորդող եւ ՉԺՀ-ի հաստատումից հետո ընկած ժամանակաշրջանը: Գրողը, որ սկզբում կրել է Սյառ Բինքյան անունը եւ հայտնի է ևաե Ռուտային գրական կեղծանունով, ծնվել է 1910 թվականին, չինացած մոնղոլական ընտանիքում: Հայրը մահացել է որդու ծնվելուց առաջ, իսկ մայրը՝ երբ ևա յոթ տարեկան էր: Տղան ապրել է զարմիկների հետ: Յոթ տարեկանում սովորել է եվրոպացի միսիոներների եկեղեցական դպրոցում: Ուսման վարձը վճարելու համար

ստիպված է եղել գիշերներն աշխատել: 1924 թվականին, միջնակարգ դպրոցն ավարտելուց կես տարի առաջ աշխատել է գրախանութում, ինչը նրա մեջ հետաքրքրություն է առաջացրել գրականության հանդեպ: Նույն թվականին ընդունվել է Կոմունիստական երիտասարդական միության շարքերը: 1931-ին ընդունվել է Ֆու ժեն կաթոլիկ համալսարանը: Ամերիկացի երիտասարդ Ուիլյամ Ալենի հետ հրատարակել է անգլալեզու «Չինաստանի մասին՝ համառոտ» հանդեսը, որտեղ ներկայացվել են այնպիսի հանրահայտ հեղինակների գործեր, ինչպիսիք են՝ Լու Սինը, Մաո Դունը, Գո Սոժոն, Վեն Իդոն, Յույ Դաֆուն: Այդ տարիներին եղել է Շեն Յունվենի ուսանողը, որի ազդեցությունն են կրում իր վաղ շրջանի գործերը:

1933-ին Սյառ Յյանն ընդունվել է Յանցզիսի համալսարան՝ որպես անգլերենի ֆակուլտետի ուսանող, իսկ նույն թվականի աշնանը տեղափոխվել է Ժուռնալիստիկայի ֆակուլտետ: Ավարտելով համալսարանը՝ 1936 թ. ուսումը շարունակել է Քեմբրիջի համալսարանի ասպիրանտուրա-

ԱՅԱՌ ՑՑԱՆ

յում: Այնուհետ աշխատել է որպես Լոնդոնի համալսարանական քոլեջի դասախոս, ապա՝ ժամանակակից չինարենի տեսուչ՝ Լոնդոնի համալսարանի Արեւելյան եւ աֆրիկյան հետազոտությունների դպրոցում:

Քաղաքական ակտիվ գործունեություն է ծավալել, հանդես է եկել Ճապոնիայի զավթողական քաղաքականության դեմ:

Մշակութային հեղափոխության ժամանակ (1966-1976) Սյաո Ցյանը համարվում էր Չինաստանի կոմունիստական կուսակցության աջ թեւի ներկայացուցիչ եւ արքայազն գյուղ: 1968-ին նա ինքնասպանության փորձ է կատարել: 1978-ին փոխհատուցում է ստացել՝ որպես ցավալի թյուրիմացության զոհ: 1979-ին Այովայի նահանգային համալսարանում Միջազգային գրական ծրագրի լիազոր ներկայացուցիչ էր:

Հեղինակ է բազմաթիվ հոդվածների, էսսեների, գրական գործերի: Անգլերենից չինարեն է թարգմանել Շեքսպիրի, Իբսենի, Սթիվեն Լիքոքի գործերից: Կնոջ՝ Վեն Ցզերոույի օգնությամբ չինարեն է թարգմանել Ջ.Ջոյսի «Ուլիսեսը», որը շատ բարձր է գնահատվել Չինաստանում:

Մահացել է Պեկինում, կյանքի 90-րդ տարում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՏԱՌԱՊԱԼԻՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐ.
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՉԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ**

1. Սևաս բարով, հնությունների կրպակ.....	5
2. Վիպասանները՝ որպես բարեփոխիչներ.....	10
3. Պոեզիա. խաչողիներում.....	20
4. Դրամա. խոսափող.....	26
5. Էսսե. հատիչ կամ թուր.....	34
6. Թարգմանություն. անփոփոխ ժողովրդայնություն.....	41

**ՎԻՇԱՊԻ ՍՈՐՈՒՔՆԵՐՆ ԸՆԴՊԵՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ.
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Սի քանի անդրադարձ մեքենային. դրա պատկերումը անգլիական վեպում եւ ազդեցությունը ժամանակակից չին մտավորականների վրա....	46
2. Իբսենը Չինաստանում.....	65
3. Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի.....	73
4. Գրականությունը եւ զանգվածները.....	86

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՑ ԵՎԱՃՈՒՄ ԻՐԵՆՑ ՀՈՂԸ

1. Փոփոխություններ հորիզոնին.....	94
2. Գործողության շեմին.....	107
3. Հաղթահարելով ցավն ու վիշտը եւ ուժ հավաքելով.....	120
4. Թունավոր սիգակի հեռացումը.....	134
5. Կարմիր, դեղին եւ սպիտակ.....	148
6. Փոթորկից հետո պայծառ եղանակ.....	160
7. Երջանկության առաջին պտուղների ճաշակումը.....	172
<i>Հեղինակի մասին.....</i>	<i>189</i>

ՍՅԱՈ ՑՅԱՆ

**ՎԻՇԱՊԻ ՄՈՐՈՒՔՆԵՐՆ
ԸՆԴԴԵՄ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ԷՍՍԵՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՉԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Թարգմանիչ՝
Խոորեն ԳԱՄՊԱՐՅԱՆ

Ստեփանակերտ 2017

Խմբագիր՝ Յ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Վ. Սարգսյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 12.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Յ. Հակոբյան

«ԳԵՂarm» հանդեսի մապրենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010

Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011

Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012

«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,

Վ.Խոդասեւիչ/ - 2012

Սերգեյ Գովլաթով. «Միայնակների երթը» - 2012

Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012

Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012

Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013

Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014

Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Գ.Պրիգով, Վ.Նեկրասով,

Լ.Ռուբինշտեյն/ - 2014

Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014

Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014

«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015

Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015

Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրբ. Պատմվածքներ» - 2015

Արդի ռուսական վերլիբռ (անթրոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոնմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս ալլախոհական պոեզիա (անթրոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016
Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշենկայա. «Մեր. երջանկություն. ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների սպաստան» (անթրոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթրոլոգիա) - 2016

Իճյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ
(հատոր 2 եւ 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգերորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017



Ոգի-Նաիրի

Vogi-Nairi

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru

հեռ.։ +37497252323